

ԵՆ ԶԵՄ ԿԱՐՈՂ ՎԱՐՏՎԵԼ,  
և ԵՆ ԶԵՄ ԽԱՆՃՆՎԻ

Գրոհով նվաճել ապագան

A person is running away from the viewer on a long wooden pier that extends into the ocean. The scene is captured with a motion blur effect, suggesting speed and movement. The sky and water are a soft, hazy blue, creating a serene and aspirational atmosphere.

Ջենեթ Ու. Հեգին

Մենք գիտենք, թե որքան խորդուբուրդ կլինի  
ճանապարհը, որքան ծանր կլինի բեռը,  
մենք գիտենք այն արգելքների մասին, որոնք սպասում  
են մեր ճանապարհին, բայց մենք լցված ենք  
վճռականությամբ՝ առաջ շարժվելու դեպի  
նպատակը, և դժոխքից մինչև երկինք չկա մի բան,  
որ մեզ երբևէ հեղ դարձնի:

Վինս Լոմբարդի





Ես չեմ կարող պարտվել,
և ես չեմ հանձնվի

Գրոհով նվաճել ապագան

Ջենեթ Ու. Հեգին

**I Cannot Be Defeated, and I Will Not Quit!, Armenian, Kenneth E. Hagin**

Copyright © 2001, 2005 Rhema Bible Church aka Kenneth Hagin Ministries, Inc. All rights reserved. First edition 2001.

Second edition 2005 Printed in USA

**Ես չեմ կարող պարտվել, և ես չեմ հանձնվի, հայերեն, Քենեթ Ու. Հեգին**

Թարգմանված է անգլերենից, 2001 թ.

Հեղինակային իրավունքները պատկանում են «Rhema Bible Church»-ին, նաև հայտնի որպես «Kenneth Hagin Ministries, Inc»

Հեղինակային իրավունք © 2001, 2005 «Ռեմա» աստվածաշնչյան եկեղեցի

Հայտնի է նաև որպես Քենեթ Հեգինի ծառայություններ, ԲԸ

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Առաջին հրատարակություն, 2001:

Երկրորդ հրատարակություն, 2005:

Տպագրված է ԱՄՆ-ում:

Միացյալ Նահանգներում կապ հաստատելու համար գրե՛ք.

Քենեթ Հեգինի ծառայություններ, ԲԸ

Փ/Ա 50126

Թալսա, Օկլահոմա 74150-0126

1-888-28-FAITH

[www.rhema.org](http://www.rhema.org)

Կանադայում կապ հաստատելու համար գրե՛ք.

Կանադա, Քենեթ Հեգինի ծառայություններ, ԲԸ

Փ/Ա 335, Կայարան Դ

Էտոբիկոկ (Տորոնտո), Օնտարիո

Կանադա M9A 4X3

1-866-70-RHEMA

[www.rhemacanada.org](http://www.rhemacanada.org)

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի հատված չի կարող

օգտագործվել կամ կրկնօրինակվել որևէ կերպ՝ առանց գրավոր թույլտվության:

Աստվածաշնչյան մեջբերումները «Արարատ» թարգմանությունից են, եթե չկան այլ

նշումներ:

## ՔՐՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Նախաբան</i> . . . . .	7
1. Գրոհով նվաճել ապագան . . . . .	9
2. Ապրել հաջողության մեջ . . . . .	21
3. Վաղը սկսվում է այսօր . . . . .	31
4. Ինչի՞ն եք նայում . . . . .	49
5. Ինչպիսի՞ վերաբերմունք ունեք . . . . .	57
6. Նպատակ դրեք . . . . .	71
7. Համբերության կարևորությունը . . . . .	79
8. Ակնկալեք լավագույնը . . . . .	89
9. Ի՞նչ է դուրս գալիս ճնշում գործադրելիս . . . . .	101
10. Կրակին դեմ հանդիման . . . . .	111
11. Շարունակեք զարկել գետնին . . . . .	123
12. Տիրել նրան, ինչը քեզ է պատկանում . . . . .	135
13. Մնացեք «Երիցրովի քայլերթում» . . . . .	147
14. Ինչպե՞ս հաջողության հասնել . . . . .	161
15. Ի՞նչ անել, երբ չգիտես ինչ անել . . . . .	175
16. Ո՞րն է ձեր կոչումը . . . . .	185



# Նախաբան

Ժամանակը թռչում է: Բոլորս բազմիցս լսել ենք այս արտահայտությունը, որ նշանակում է՝ ժամանակն արագ է ընթանում: Սա պարզապես մարդկային գաղափար չէ. Աստվածաշնչում ասվում է, որ այս կյանքը երկրի վրա «մի շոգի» է: Քանի որ ժամանակն այդքան արագ է անցնում, և քանի որ մենք ապրում ենք վերջին օրերում՝ Հիսուսի վերադարձին ընդառաջ, կենսական անհրաժեշտություն է դառնում կարևորել կյանքի ամեն վայրկյանը:

Յուրաքանչյուր օր մենք պետք է ապրենք այն ամենով, ինչ ունենք մեր ներսում՝ մեր ողջ սրտով և «երբեք չհանձնվելու» վերաբերմունքով: Իմ կարգախոսը մշտապես եղել է. «Ես չեմ կարող պարտվել, և ես չեմ հանձնվի»: Սա լավ կարգախոս է, որով կարող է ապրել ցանկացած մարդ՝ թե՛ ֆիզիկական, թե՛ հոգևոր առումով:

Մենք ավելի քան հաղթող ենք Հիսուս Քրիստոսում և կարող ենք հաղթական կյանք ունենալ՝ իրականացնելով այն ամենը, ինչ Աստված նախասահմանել է մեզ համար: Փոխանակ անհանգստանալու, թե ինչ կբերի մեզ ապագան, մենք պետք է գրոհով նվաճենք այն:

Ես աղոթում եմ, որ դուք, կարդալով այս գիրքը, սովորեք հենց այդպես էլ անել:





# Գլուխ 1

## Գրոհով նվաճել ապագան

*Այս ժամանակը, ինչպես նաև մյուս բոլոր  
ժամանակները, շատ լավ ժամանակ է, միայն  
թե իմանանք ինչ անել դրա հետ:  
Ռալֆ Ուալդո Էմերսոն*



«Գետնանուշ» կոմիքսում Լինուսը խոսում է Չարլի Բրաունի հետ երազանքների և ապագայի մասին: Նա ասում է. «Երբ մեծանամ, իսկական մոլեռանդ եմ լինելու»:

Չարլի Բրաունը պատասխանում է. «Ինչո՞ւ ես մոլեռանդ լինելու, Լինո՞ւս»:

Լինուսը դեմքի անորոշ արտահայտությամբ պատասխանում է. «Օ՛հ, չգիտեմ: Դա իրականում կարևոր չէ: Ես մի տեսակ անվճռական, թույլ մոլեռանդ կլինեմ»:

Թեև ծաղրանկարում դա կարող է ծիծաղելի թվալ, սակայն անվճռական կամ թույլ մոլեռանդ գոյություն չունի: Ու մենք նույնպես, որպես քրիստոնյաներ, չենք կարող անվճռական լինել, եթե ցանկանում ենք հաջողակ լինել: Եթե ուզում ենք գրոհով նվաճել մեր ապագան կամ հաղթական կյանք ունենալ, ապա չենք կարող մեզ թույլ տալ, որ անվճռական լինենք այն բանում, ինչին հավատում ենք, կամ այն կենսակերպում, որով ապրում ենք:

Մի մարդ, որը հեռու էր անվճռական լինելուց, Հեսուն էր՝ Իսրայելի հզոր առաջնորդներից մեկը: Նա առաջնորդում էր մարդկանց մի խմբի, որը լավ գիտեր անվճռական լինելու գինը: Իսրայելցիներ-

րի նախորդ սերունդը ցանկանում էր ազատվել եգիպտական գերությանից: Սակայն ազատվելուց հետո նրանք սկսեցին տրտնջալ առաջնորդ Մովսեսի դեմ և ցանկացան վերադառնալ Եգիպտոս: Իրենց անվճռական վերաբերմունքի պատճառով նրանք քառասուն տարի թափառեցին անապատում ու այդպես էլ չմտան Խոստմունքի երկիր:

Սակայն Հեսուի գրքի առաջին գլխից սկսած՝ մենք կարդում ենք իսրայելցիների մի սերնդի մասին, որը նվիրվեց իր ապագան նվաճելու գործին:

### **ՀԵՍՈՒ 1.1-11**

- 1 Եվ եղավ, որ Տիրոջ ծառա Մովսեսի մեռնելուց հետո Տերը խոսեց Մովսեսի սպասավոր Նավեի որդի Հեսուի հետ՝ ասելով.**
- 2 «Իմ ծառա Մովսեսը մեռավ, և հիմա վեր կաց, անցիր այդ Հորդանանով, դ՛ուր և այս բոլոր ժողովուրդը, այն երկիրը, որ ես տալիս եմ Իսրայելի որդիներին:**
- 3 Բոլոր տեղերը, որ կոխեն ձեր ոտքի թաթերը, ձեզ պիտի տամ, ինչպես որ Մովսեսին ասել եմ:**
- 4 Անապատից և այս Լիբանանից մինչև մեծ Գետը, այսինքն՝ Եփրատ գետը, քետացիների ամբողջ երկիրը մինչև արևմտյան կողմի մեծ ծովը ձեր սահմանը լինի:**
- 5 Ոչ մի մարդ չկարողանա քեզ քո կյանքի բոլոր օրերում դեմ կանգնել. ինչպես որ Մովսեսի հետ էի, քեզ հետ կլինեմ. քեզ չեմ թողնի և քեզ անտես չեմ անի:**
- 6 Զորացի՛ր և քաջ եղի՛ր, որովհետև այս ժողովրդին դու պիտի ժառանգեցնես այն երկիրը, որի համար սրանց հայրերին երդում արեցի՝ սրանց տալու համար:**
- 7 Միայն թե զորացի՛ր և շատ քաջ եղի՛ր, որ պահես և անես այն ամեն օրենքի պես, որ իմ ծառա Մովսեսը քեզ պատվիրել է. նրանից չխոտորվես աջ կամ ձախ, որ ամենում էլ խելամիտ լինես, ուր որ գնում ես:**
- 8 Այս օրենքի գիրքը քո բերանից չհեռանա, այլ գիշեր և ցերեկ նրա վրա մտածես, որ պահես և կատարես բոլոր նրա միջի գրվածի պես, որովհետև այն ժամանակ ճանապարհները հաջողակ կանես և այն ժամանակ խելամուտ կլինես:**
- 9 Ահա քեզ պատվիրում եմ, զորացի՛ր և քաջ եղի՛ր, մի՛ վա-**

**խեցիր և մի՛ զարհուրիր, որովհետև քո Տեր Աստվածը քեզ հետ է ամեն *տեղ*, ուր որ գնաս»:**

**10 Եվ Հեսուն, ժողովրդի ոստիկաններին պատվիրելով, ասաց.**

**11 «Քանակի միջով անցկացե՛ք և պատվիրե՛ք ժողովրդին՝ ասելով. «Ձեզ համար պաշար պատրաստեք, որովհետև երեք օր հետո դուք այս Հորդանանով կանցնեք, որ գնաք ժառանգեք այն երկիրը, որ ձեր Տեր Աստվածը ձեզ տալիս է իբրև ժառանգություն»:**

Առջևում Խոստմունքի երկիրն էր. իսրայելցիների համար անվճռական լինելու ժամանակը չէր: Այսօր էլ, երբ մենք կանգնած ենք Տիրոջ վերադարձի նախաշեմին, մեզ համար նույնպես անվճռական լինելու ժամանակը չէ:

Հասկանում եք, իսրայելցիների այս խումբը, որի մասին գրված է Հեսուի գրքի 1-ին գլխում, քառասուն տարի առաջ կանգնած էր այս նույն տեղում կամ մոտակայքում: Դա մի սրտառույ տեսարան էր:

Թվոց 13-րդ գլխում կարդում ենք, որ Մովսեսը տասներկու տղամարդու ուղարկեց՝ Քանանը՝ Խոստմունքի երկիրը լրտեսելու: Լրտեսներից տասը վերադարձան վախեցած ու ասացին. «Մենք չենք կարող գրավել այդ երկիրը»: Նրանք անվճռական էին: Միայն երկուսը՝ Քաղեբն ու Հեսուն, վերադարձան հավատքով և ասացին. «Եկե՛ք անմիջապես գնանք և տիրենք այդ երկրին, որովհետև մենք կարող ենք նվաճել այն»:

## **Անվճռական լինելու գինը**

Յավոք, շատերը նման են «Գետնանուշ» ծաղրանկարի հերոս Լինուսին. նրանք սկսում են ինչ-որ բան անել, սակայն վճռական չեն այն իրականացնելու գործում: Այլ խոսքով՝ նրանք ունեն այսպիսի վերաբերմունք. եթե ամեն բան լավ ընթանա, ապա կշարունակեն իրենց ջանքերը, բայց եթե լավ չընթանա, կհանձնվեն:

Մեր քրիստոնեական կյանքում նման անվճռական վերաբերմունքով մենք չենք կարող հաջողակ լինել: Եթե պատրաստվում ենք հաջողությամբ որևէ բան իրականացնելու, ապա պետք է հանձն առնենք ոչ միայն սկսել, այլև շարունակել և ավարտին հասցնել այն:

Ցանկացած ջանքում դուք հակառակության կհանդիպեք: Եթե նախապես հաստատուն որոշում կայացրած չլինեք, ապա հեշտու-

թյամբ կհանձնվեք, երբ բախվեք հակառակության: Հաջողությունը լիարժեք նվիրում է պահանջում:

Ուսումնասիրելով Հեսուի գիրքը՝ կհայտնաբերեք, որ յուրաքանչ-յուր միջադեպ առնչություն ունի այս սկզբունքի հետ. հնազանդությունը բերեց հաղթանակ, անհնազանդությունը՝ պարտություն: Իսրայելի նվիրվածությունը կամ հնազանդությունն այն բանին, ինչ Աստված ասաց, հաղթանակ բերեց նրան: Իսրայելի անհնազանդությունն այն բանին, ինչ Աստված ասաց, պարտություն բերեց նրան:

Միտումնավոր անհնազանդությունը, որի մասին գրված է Հեսուի գրքի 7-րդ գլխում, բերեց պարտություն Գայիի մոտ: Իսկ Աստծուն հնազանդվելու լիակատար նվիրվածությունը, որի մասին կարդում ենք Հեսուի գրքի 8-րդ գլխում, բերեց լիարժեք հաղթանակ հաջորդ անգամ Գայիի դեմ պայքարում (տե՛ս Հեսու 8.1-28):

Մեր նվիրվածությունն այնպիսին պետք է լինի, որ ստիպի մեզ լիովին անձնատուր լինել Աստծուն: Շատ մարդիկ ցանկանում են նվիրվել Աստծուն այնքան ժամանակ, քանի դեռ կարող են իրենցից մի մաս վերապահել իրենց ցանկությունների համար: Աստծո հետ այդպես չի լինում: Աստված ձեզ ամբողջությամբ է ցանկանում. Նա ուզում է, որ ամբողջովին անձնատուր լինեք Իրեն և հնազանդվեք Իր Խոսքին:

Անդրադառնալով Աստվածաշնչում գրված որևէ խոսքի՝ ինչ-որ մեկը կարող է ասել. «Միգուցե Աստված հենց դա նկատի չուներ»: Եթե Աստված դա նկատի չուներ, ապա ինչո՞ւ ասաց: Մենք պետք է ունենանք այսպիսի վերաբերմունք, որ եթե Աստվածաշնչում դա է ասվում, ապա մենք կհավատանք դրան, և հարցը փակված է: Մենք լիովին անձնատուր պետք է լինենք Աստծուն, որպեսզի նվաճենք ապագան: Երբ լիովին անձնատուր լինեք Աստծուն, ձեր կյանքը կողողվի Նրա զորության այնպիսի հեղեղով, որը կանցկացնի ձեզ ցանկացած բանի միջով, ինչին կբախվեք: Աստծո զորությունը հասանելի է, և այն ձերն է: Սակայն դուք չեք կարող անվճռական լինել այդ հարցում: Դուք պետք է շարժվեք և անեք այն, ինչ Աստված ասում է ձեզ:

## **Երկրորդ հնարավորություն**

Վերադառնալով Թվոց 13-րդ գլխին՝ տեսնում ենք, որ Իսրայելը կանգնած էր Աստծո խոստացածը ստանալու շեմին: Սակայն վախի, հոռետեսության և բացասական վերաբերմունքի պատճառով իսրա-

յեցիները չկարողացան տիրանալ այն երկրին, որ Աստված խոստացել էր նրանց: Աստված ասել էր՝ «Այն ձերն է», սակայն իսրայելցիները քառասուն տարի թափառեցին անապատում, պատճառը նրանց անվճռականությունն ու անհավատությունն էր:

Այնուամենայնիվ, Հեսուի գրքի 1-ին գլխում տեսնում ենք, որ քառասուն տարի անց իսրայելցիները հնարավորություն ունեցան վերագրավելու իրենց հայրերի կորցրածը:

Կյանքում հաճախ չէ, որ երկրորդ հնարավորություն ենք ստանում: Երբեմն հնարավորությունները, որ մարդիկ չեն օգտագործում վախի, անվստահության կամ հոռետեսության պատճառով, այլևս չեն ընձեռվում:

Սակայն իսրայելցիների այս նոր սերնդին, որն անապատում հասունացավ, ընձեռվեց ևս մեկ հնարավորություն՝ նվաճելու Խոստմունքի երկիրը: Տերը խոսեց Հեսուի հետ՝ ասելով. «...և հիմա վերկաց, անցիր այդ Հորդանանով, դու և այս բոլոր ժողովուրդը, այն երկիրը, որ Ես տալիս եմ Իսրայելի որդիներին: Բոլոր տեղերը, որ կոխեն ձեր ոտքի թաթերը, ձեզ պիտի տամ...» (Հեսու 1.2-3):

«Վեր կենալու և երկրին տիրելու» մարտահրավերը, որ տրվեց նրանց, այնքան էլ չի տարբերվում այն մարտահրավերից, որն այսօր ծառացած է մեր առջև: Տեր Հիսուս Քրիստոսի եկեղեցին՝ էկլեսիան՝ կանչվածները, այսպես ասած, կանգնած է Խոստմունքի երկրի սահմանին: Ավետարանի հանդեպ մարդիկ երբեք այնքան բաց չեն եղել, որքան այսօր: Եթե մարդկանց հետ զրույցի բռնվեք, երևի թե միշտ կխոսեք Աստծո մասին: Մենք նաև տեսնում ենք, թե ինչպես են աշխարհի տարբեր մասերում արթնություններ բռնկվում: Անցյալում երբեք չենք ունեցել այսպիսի տեխնոլոգիաներ և միջոցներ Ավետարանի ուղերձը մինչև երկրի ծայրերը հռչակելու համար:

Համարձակ միսիոներական հարված հասցնելու ճիշտ ժամանակն է: Եվ ինչպես Հեսուն ասաց իսրայելցիներին՝ վեր կացեք և անցեք այդ Հորդանանով, այնպես էլ Աստված այսօր մեզ է ասում. «Վեր կացեք, վերցրեք այն ծրագիրը, որ Ես ունեմ ձեր կյանքի համար: Վերցրեք այն ծրագիրը, որ Ես ունեմ Իմ Եկեղեցու համար: Ընդունեք մարտահրավերը, վեր կացեք, առանց գնացեք և արեք այն, ինչ Ես կանչել եմ ձեզ անելու»:

Անշուշտ, Աստված ցանկանում է, որ մենք ինչ-որ բան անենք, որն օգտակար է մեր օրերում և մեր դարաշրջանում: Բազմաթիվ են դեպքերը, երբ շատ բան, ինչ արվում է, այդքան էլ օգտակար չէ: Շատ

գումար, ժամանակ և եռանդ են ծախսվում, սակայն դա իրականում չի օգնում որևէ մեկին: Մենք պետք է համոզված լինենք, որ այն, ինչ անում ենք, օգտակար է ուրիշներին, մեզ և Աստծո Արքայությանը:

Եկեք ուսումնասիրենք Իսրայելի զավակներին և սովորենք որոշ բաներ, որոնք շատ օգտակար կլինեն մեզ, երբ ճամփա ընկնենք՝ գրոհով նվաճելու մեր ապագան:

## **Համար մեկ. պատշաճ նախապատրաստում**

Դուք պատրաստ եք գրոհով նվաճելու ապագան: Պատրաստ եք առաջ շարժվելու և վերցնելու այն, ինչ Աստված ունի ձեր կյանքի համար:

Շատ մարդիկ երբեք լիովին ձեռնամուխ չեն լինում իրենց կյանքի ճանապարհորդությանը, որովհետև ապագան նրանց համար առեղծված է, ինչը նրանց ուղին որոշ չափով անհայտ է դարձնում: Բայց անգամ երբ չենք կարողանում տեսնել մեր հաջորդ քայլը, պատրաստ պետք է լինենք ոտք դնելու անհայտի մեջ: Ապագան անհայտ է. ոչ ոք հստակ չգիտի, թե ինչ է սպասվում, կամ ինչ կլինի վաղը:

Կարևոր է հիշել, որ թեև չգիտեք, թե ինչ կա ձեր առջևում, դուք կարող եք հաջողության հասնել, քանի դեռ ծրագրում և նախապատրաստվում եք: Առաջին բանը, որ մեզ անհրաժեշտ է ապագան գրոհով նվաճելու համար, *պատշաճ նախապատրաստումն է*:

Մարդկանց մեծ մասը կյանքում ձախողվում է, նույնիսկ հոգևոր առումով, պատրաստված չլինելու պատճառով: Եթե կարդաք Հեսուի գիրքը, առաջին երեք գլուխներում կնկատեք, որ Հեսուն մանրամասն մշակեց մի քանի ծրագրեր, նախքան ինքը և ժողովուրդը երբևէ կանեին առաջին քայլը:

Առաջին՝ Հեսուն հրամայեց, որ իսրայելցիները բավարար սնունդ նախապատրաստեն: Երկրորդ՝ նա մարդկանց ուղարկեց Երիքով՝ երկիրը լրտեսելու: Երրորդ՝ նա հրահանգներ տվեց քահանաներին և ասաց, թե ինչ պետք է նրանք անեին: Չորրորդ՝ Հեսուն ժողովրդին մարտահրավեր նետեց (տե՛ս Հեսու 1-3):

Շատ մարդկանց մարտահրավեր պետք է նետել, մինչ նրանք կարճազանքեն: Դե ինչ, ես ուզում եմ այսօր ձեզ մարտահրավեր նետել: Մեր առջև այսօր մարտահրավեր կա:

Աշխարհը փրկության կարիք ունի, իսկ փրկվածները՝ եկեղեցի գալու: Աշխարհը կարիք ունի լսելու Հիսուս Քրիստոսի Բարի լուրը:

Ես ասել եմ ու կրկին կասեմ. կառավարության օրենքները չեն վերացնելու մեր խնդիրները: Մենք չենք կարողանալու օրենսդրորեն վերացնել աղքատությունը: Մենք օրենսդրորեն չենք հաշտեցնելու մարդկանց: Հիսուսն է պատասխանը:

Երբ մարդու սրտում Հիսուսն է, նա կարող է գտնել ճշմարտությունը բոլոր տեսակի իրավիճակների վերաբերյալ: Օրինակ, եթե մարդու ֆինանսական վիճակը կամ աշխատանքային կարգավիճակը նրա անառողջ լինելու հետևանք են, ապա նա գիտի, որ Հիսուսով, Ով իր սրտում է, և Խոսքի վրա հիմնված ճիշտ ուսմունքով կարող է առողջանալ: Երբ նա առողջանա, կկարողանա դուրս գալ և ապրուստի միջոց վաստակել:

Բացի այդ, երբ Հիսուսը մեր սրտում է, Աստծո սերը փոխված է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով (Հռոմ. 5.5): Եվ մենք բացահայտում ենք, որ բոլոր ցեղերի ու ռասաների մարդիկ կարող են միասին նստել, միասին երկրպագել, միասին սնվել և միասին հաղորդակցվել:

## **Ինչպես պատրաստվել հաջողության**

Մենք պետք է պատրաստվենք, եթե մտադիր ենք հաջողությամբ իրականացնել այն, ինչ Աստված ծրագրել է, որ անենք ապագայում: Նախևառաջ մենք պետք է վերլուծենք կարիքը: Ձեզ ընդամենը հարկավոր է լսել լուրերի թողարկում, կարդալ լրագիր կամ պարզապես մեքենայով անցնել փողոցով, որպեսզի տեսնեք հասարակության կարիքները:

Այնուհետև, մինչ առաջ կշարժվենք և ինչ-որ բան կանենք Քրիստոսի համար, լինի դա քարոզչություն, թե որևէ այլ բան, մենք պետք է նախապատրաստվենք: Օրինակ, եթե պետք է դռնեդուռ վկայություն տաք, ապա ստուգեք այն շրջակայքը, ուր գնալու եք: Այլ խոսքով՝ ընտրեք թիրախ խումբ: Հնարավոր է՝ դուք այդպես էլ ծառայության հինգ պարզևներից որևէ մեկով ծառայելու կանչ չստանաք, բայց, որպես Եկեղեցու անդամ, դուք կարող եք գործել և փոփոխություններ բերել հենց այնտեղ, որտեղ գտնվում եք: Դուք կարող եք ծանոթանալ այն մարդկանց հետ, որոնք գտնվում են ձեր համայնքում, աշխատավայրում, թաղամասում և այլն, ու բերել նրանց Աստծուն:

Հաջորդ բանը, որ պետք է անենք նախապատրաստվելու նպատակով, մեր միջոցներից օգտվելն է: Ինչ ունեք անձնապես Աստծո արքայությանը տալու համար: Յուրաքանչյուր եկեղեցի ունի միջոց-



ներ, որոնց աղքյուրը իր անդամներն են: Մեզնից ոչ ոք հմուտ չէ ամեն ինչում, սակայն երբ հավաքվում ենք միասին՝ որպես հավաքական մարմին, մենք ունենք բոլոր անհրաժեշտ հմտությունները՝ իրականացնելու այն, ինչ պետք է անել:

«Ռեմա» աստվածաշնչյան եկեղեցու համայնքում կան մեքենագետներ, փաստաբաններ, բժիշկներ, գործարարներ, բանկի կառավարիչներ, ուսուցիչներ, շինարարներ, մարզիկներ, երգիչներ, երաժիշտներ և այլն: «Ռեմա» աստվածաշնչյան եկեղեցին հմտությունների պակաս չունի: Տեղական եկեղեցիներն ընդամենը պետք է հավաքեն իրենց միջոցները, թիրախավորեն այն մարդկանց, որոնց կարող են միասին հասնել, և ինչ-որ բան անեն Աստծո համար:

Այժմ եկեք ինչ-որ բան անենք Աստծուն անհատապես հնազանդվելու և մեր միջոցները համախմբելու առումով, որպեսզի առաջ շարժվենք և նվաճենք ապագան Նրա համար: Մենք պետք է աղոթենք այնպես, ասես այն ամենը, ինչ անելու ենք ապագայում, կախված է Աստծուց: Ապա պետք է ծրագիր կազմենք և գործարկենք այդ ծրագիրն այնպես, ասես ամեն բան կախված է մեզնից: Բնականի և գերբնականի միավորումն է, որ պայթյունավտանգ ուժ է ստեղծում Աստծո համար:

Հաջողությունն ամբողջությամբ պայմանավորված չէ գերբնականով, և այն ամբողջությամբ պայմանավորված չէ բնականով: Հաջողությունը գալիս է այն ժամանակ, երբ բնական միջոցները միանում են ի վերուստ տրված գերբնական միջոցներին: Երբ դրանք միացնում եք իրար, դառնում եք պայթյունավտանգ ուժ Աստծո համար, և այդ ժամանակ տեղի կունենա ինչ-որ բան, որն օգուտ կբերի Աստծո արքայությանը:

## **Համար երկու. լիարժեք նվիրվածություն**

Նախապատրաստումն առաջին բանն է, որ պետք է անենք ապագան գրոհով նվաճելու համար: Պատշաճ նախապատրաստումից հետո մեզ անհրաժեշտ է լիարժեք նվիրվածություն: Աստված պատասխանատու չէր նրա համար, որ իսրայելցիները նվաճեին Խոստմունքի երկիրը: Նա ասաց, որ այն տվել է նրանց, սակայն կվերցնեին նրանք Խոստմունքի երկիրը, թե ոչ, որոշվելու էր այն նվիրվածությամբ, որ նրանք պատրաստ էին ցուցաբերելու:

Եթե մենք պատրաստվում ենք հաջողությամբ անելու այն, ինչ Աստված ուզում է, որ անենք, ապա պետք է նվիրվենք դրան: Մեզ-

նից պահանջվում է այնպիսի նվիրում, որն ասում է. «Հաջողեմ, թե ձախողվեմ, ինչ էլ պատահի, ես շարունակելու եմ հետևել Աստծուն»:

Ինչպես ավելի վաղ ասացի, իմ կարգախոսն է. «Ես չեմ կարող պարտվել, և ես չեմ հանձնվի»: Դա այն դիրքորոշումն է, որ մենք՝ քրիստոնյաներս, պետք է ունենանք, եթե պատրաստվում ենք գրոհով նվաճելու ապագան:

Իմ կարգախոսը հիշեցնում է ինձ այն ժամանակը, երբ քեռի Փեթի հետ գոտեմարտի էի բռնվել: Նա ամուր պահել էր ինձ՝ թևս հետ ծալելով, ու շարունակ ասում էր. «Հանձնվիր, ու քեզ բաց կթողնեն»։ Ես նրան ասում էի. «Քեռի՛ Փեթ, Դուք կարող եք կոտրել իմ թևը, բայց ես չեմ պատրաստվում հանձնվելու: Կամ ինձ բաց թողեք, կամ կոտրեք թևս, ու կգնանք հիվանդանոց, բայց ես չեմ հանձնվելու»:

Սա կոչվում է ցլաշան համառություն: Եվ ես այդպիսին եմ: Ինձ մի՛ ասեք, որ ինչ-որ բան հնարավոր չէ անել: Ես հավատում եմ, որ միշտ ճանապարհ կա: Օրինակ՝ «Ռեմա» աստվածաշնչյան եկեղեցու դահլիճի կառուցման ժամանակ ես շինարարներին ասացի, որ ցանկանում եմ՝ բեմի վերևում՝ առաստաղի մեջ, մի անցք բացվի, որի միջով կիջնի մի հսկայական գլոբուս: Ես ուզում էի, որ գլոբուսն առաստաղից իջներ և դանդաղ պտտվեր՝ լույսեր արձակելով այն բոլոր քաղաքների վրա, որտեղ ծառայում են «Ռեմայի» միսիոներները: Շենքի նախագծողներն ասացին. «Մենք երբեք նման բան չենք լսել: Այդպիսի բան երբևէ չի արվել»:

Ես նրանց ասացի. «Ինձ չի հետաքրքրում, որ այդպիսի բան նախկինում չի արվել: Դա հնարավոր է անել: Պարզեք, թե ինչպես կարելի է դա անել»:

Նրանցից բավականին ժամանակ պահանջվեց, մինչև հասկացան, թե ինչպես պետք է դա անել: Եվ հիմա՝ «Ռեմա» աստվածաշնչյան եկեղեցում բազմաթիվ կիրակնօրյա ծառայությունների ընթացքում, գլոբուսն իջնում է, և լույսեր են արձակվում «Ռեմայի» միսիոներական և ուսումնական տարածքների վրա: Հետո մենք՝ որպես եկեղեցի, աղոթում ենք այդ միսիոներների, դպրոցների և ազգերի համար:

## **Համար երեք. լիակատար միասնություն**

Մինչ այժմ մենք տեսանք պատշաճ նախապատրաստման և լիարժեք նվիրվածության դերը ապագայի նվաճման գործում: Երրորդ բանը, որ մեզ անհրաժեշտ է, *լիակատար միասնությունն է*: Եթե դուք պատրաստվում եք որևէ բան իրականացնելու որպես

բնական ընտանիք, և եթե Քրիստոսի Մարմինը պատրաստվում է որևէ բան իրականացնելու որպես հոգևոր ընտանիք, ապա պետք է լինի լիակատար միասնություն: Այլ կերպ ասած՝ դուք միաբան պետք է լինեք: Հնարավոր չէ որևէ բան իրականացնել, երբ մեկն ուզում է մի, իսկ մյուսը՝ մեկ այլ բան:

Երբևէ ուշադրություն դարձրե՞լ եք, որ միասին լծված երկու ձիերին անվանում են «լծվածք» (անգլերենում՝ «թիմ»): Սակայն ձիերը չեն կարող թիմ համարվել, եթե նրանցից մեկը քաշում է մի, իսկ մյուսը՝ այլ ուղղությամբ: Թիմ նշանակում է, որ ներգրավված բոլոր կողմերը միասին քաշում են միևնույն ուղղությամբ՝ մտքում ունենալով միևնույն նպատակը:

Այսօր հենց սա է բազմաթիվ ընտանիքների խնդիրը: Նրանք չեն ապրում միաբանության մեջ: Հայրը մի բան է անում, մինչդեռ մայրն ու երեխաները մեկ այլ բանով են զբաղված: Եթե դուք պատրաստվում եք որևէ բան իրականացնելու, ապա պետք է լինեք ներդաշնակության մեջ, ունենաք լիակատար միասնություն:

## **Միաբանության զորությունը**

Նախքան Իսրայելը կանցնել Հորդանան գետը, Ռուբենի և Գադի ցեղերը և Մանասեի կես ցեղը խնդրեցին մնալ ու բնակվել Հորդանանի այդ կողմում: Մովսեսը համաձայնեց մեկ պայմանով, որ Ռուբենի և Գադի ցեղերը և Մանասեի կես ցեղը մյուս ցեղերի հետ գնալին և մասնակցեին Խոստմունքի երկրի նվաճմանը: Խոստմունքի երկիրը գրավելուց հետո Ռուբենին, Գադին և Մանասեին թույլ կտրվեր վերադառնալ Հորդանանի այն կողմը և բնակություն հաստատել այնտեղ: Մովսեսը գիտակցում էր, որ իրենց առջև դրված խնդիրը պահանջում էր համախմբել բոլոր մարդկանց ջանքերը: Միաբանության մեջ կա զորություն:

Միացյալ Նահանգների բանակի հզորության պատճառներից մեկն այն է, որ մարդիկ հասկանում են միասնության էությունն ու զորությունը: Նրանք հասկանում են, որ եթե ամենաբարձրաստիճան սպան մարտի ժամանակ ընկնում է, հաջորդ բարձրաստիճան անձը բարձրացնում է դրոշը և շարունակում մարտը: Միացյալ Նահանգների ախոյաններից շատերը տարիների ընթացքում այդքան էլ միասնական չեն եղել, ու երբ հրամանատարն ընկել է, զորքը ցրվել է:

Ես սիրում եմ միաբանության զորությունը լուսաբանել հետևյալ կերպ. դուք կարող եք հեշտությամբ կոտրել մեկ փայտը, սակայն

շատ ավելի դժվար է կոտրել իրար կապված մի քանի փայտեր: Մենք՝ քրիստոնյաներս, միաբանությամբ պետք է կապված լինենք իրար՝ առաջ շարժվելով և իրականացնելով այն աշխատանքը, որ Աստված կանչել է մեզ անելու:

Հաշվի առնելով մեր առջև դրված խնդիրը՝ մենք պետք է պատրաստ լինենք թողնելու «իմ ճանապարհները», «քո ճանապարհները» և ամեն բան անելու Աստծո ճանապարհներով: Ես ունեմ իմ ճանապարհները, դու ունես քո ճանապարհները, և կան *Աստծո* ճանապարհները: Երբ Աստծո բանակում ենք, ամեն բան անում ենք *Աստծո* ճանապարհներով:

Հիշում եմ, երբ գիշերը՝ ժամը երկուսին, Միսուրի նահանգի Ֆորտ Լեոնարդ Վուդ քաղաքում մի քանի նորակոչիկների հետ ինձ նստեցրին ավտոբուս: Այնտեղ կանգնած էր մի սերժանտ, որը բարձրաձայն ասաց. «Տղաներ, հենց սկզբից ես ուզում եմ, որ դուք մեկ բան իմանաք. դուք ունեք ձեր գործելակերպը, ես ունեմ իմ գործելակերպը, և կա *Բանակի* գործելակերպ: Ու քանի դեռ դուք *Բանակում* եք, ամեն բան անելու եք *Բանակի* գործելակերպով»:

Նույն կերպ, եթե դուք պատրաստվում եք կյանքում հաջողության հասնելու, ապա ամեն բան պետք է անեք Աստծո ճանապարհով: «Միասին հաղթում ենք, պառակտված՝ պարտվում» ասացվածքը ժամանակավրեպ արտահայտությունն է: Այն մեր հաջողության բանալին է: Այն ապագան նվաճելու բանալին է:

## Մարտահրավեր

Այսօր մենք կանգնած ենք խաչմերուկում: Մեր ապագան պայծառ է: Մոտեցել ենք շեմին: Արդյո՞ք մենք, նախապես պատրաստվելով և լիովին նվիրվելով Աստծուն, կհամախմբվենք և միաբանությամբ ու ներդաշնակությամբ դուրս կգանք և կնվաճենք ապագան Աստծո համար: Դա կախված է մեզնից յուրաքանչյուրից. որոշումը մերն է:

Մեր առջև խնդիր է դրված. անել այն, ինչ Աստված կանչել է մեզ անելու: Ես ձեզ այսօր մարտահրավեր եմ նետում՝ մի աստիճան բարձրանալու և նվաճելու ապագան Աստծո արքայության համար: Միևնույն ժամանակ դուք կարող եք ընդունել այն, ինչ ես ասում եմ, ու կիրառել դա ձեր առօրյա կյանքում և ապագայում:

Իբրև ծառայող՝ ես սիրում եմ քարոզել այնպիսի ուղերձ, որը ոչ միայն կհամախմբի մարդկանց՝ որպես հավաքական մարմնի, և կմղի նրանց առաջ՝ որպես Տեր Հիսուս Քրիստոսի Եկեղեցու, այլև

կօզնի նրանց անհատապես: Նախապատրաստվելով, նվիրվածությամբ և միաբանությամբ մենք կարող ենք իրականացնել ցանկացած բան: Մենք կարող ենք նվաճել ապագան:

Պատրաստ եք ցուցաբերելու այն նվիրվածությունը, որն անհրաժեշտ է հաջողության հասնելու համար: Պատրաստ եք, այսպես ասած, վերցնելու էստաֆետը և վազելու մինչև վերջնակետ: Ինչ վերաբերում է ձեր կյանքին, ապա այն կախված չէ ինձնից, ձեր հարևանից, ձեր կողակցից կամ մեկ ուրիշից: Որոշումը միմիայն ձերն է:

Ես մարտահրավեր եմ նետում ձեզ՝ դուրս գալու ձեր հարմարավետության գոտուց և հասնելու հաջողության՝ ֆիզիկական և հոգևոր առումներով: Աստված ցանկանում է, որ դուք հաջողակ լինեք այստեղ՝ այս կյանքում: Սակայն եկեք նաև միասին հաջողության հասնենք որպես Տեր Հիսուս Քրիստոսի եկեղեցի, որովհետև աշխարհը բազում հարցեր ունի և սպասում է պատասխանի: Իսկ մենք ունենք Պատասխանը: Եկեք Հիսուսին տանենք աշխարհ:

## Գլուխ 2

### Ապրել հաջողության մեջ

*Հաջողությունն առանց պատվի ուրեստ է առանց  
համեմունքի. այն կհազեցնի ձեր քաղցր,  
սակայն համեղ չի լինի:  
Ջո Պատերնո*



Ապագան լի է հնարավորություններով: Դուք կարող եք այդ հնարավորությունները դարձնել իրողություններ՝ հետևելով Աստծուն և իրականացնելով Նրա ծրագիրը ձեր կյանքի համար: Դուք կարող եք վերահսկել ձեր կյանքի ուղին: Երեկն անցել է, բայց վաղը նոր օր է: Այսօրվանից դուք ունեք ձեր կյանքի ապագայի էջերին հաջողված պատմություններ գրելու հնարավորություն: Այն, թե ինչ կգրվի ձեր ապագայի էջերին, կախված է ձեզնից: Ձեր ապագան կլինի այնպիսին, ինչպիսիք *դուք* եք այն դարձնում:

Հետոի գրքի 3-րդ գլխում մենք կարդում ենք իսրայելցիների մասին, որոնք պատրաստվում էին անցնելու Հորդանան գետը:

#### ՀԵՍՈՒ 3.1-4

- 1 Եվ Հեսուն առավոտ վաղ վեր կացավ, և ինքը և բոլոր իսրայելի որդիները չվեցին Սատիմից և եկան մինչև Հորդանան և անցնելուց առաջ այնտեղ իջևան արեցին:
- 2 Եվ երեք օր հետո ոստիկանները բանակի միջով անցան:
- 3 Եվ ժողովրդին պատվիրեցին՝ ասելով. «Երբ որ տեսնեք ձեր Տեր Աստծո ուխտի տապանակը և ղևտացի քահանաներին ու մեր քահանաներին նրան տանելիս, դուք էլ

**ձեր տեղերից չվեք և նրա հետևից գնացեք:**

**4 ...որպեսզի իմանաք ձեր գնալու ճանապարհը, որով-  
հետև այս ճանապարհով անցած չեք երեկվանից և մյուս  
օրվանից»:**

Այս հատվածում կարդում ենք, որ իսրայելցիներն Աստծո առաջ-նորդությամբ և Հետուի հրամանով ճանապարհ ընկան: Սակայն նրանք չգիտեին, թե ուր են գնում: Աստված նրանց ասաց հետևել Ուխտի տապանակին: Այն ժամանակ միայն նրանք կիմանային, թե որ ճանապարհով գնային: Նրանք չպետք է մոտենային Տապանակին. պարզապես պետք է հետևեին նրան (4-րդ խոսք): Ուխտի տապանակը ներկայացնում էր Աստծո զորությունն ու ներկայությունը: Ու եթե իսրայելցիները հետևեին Աստծո ներկայությանը, նրանք կհասնեին իրենց կոչմանը և հաջողություն կգտնեին Նրանում:

Այսօր մենք՝ քրիստոնյաներս, մեր ներսում ունենք Աստծո զորությունն ու ներկայությունը (Հովհ. 14.16-17): Ուստի երբ չգիտենք, թե որ ճանապարհով գնանք, ուղղության համար պետք է նայենք մեր ներսում գտնվող Սուրբ Հոգուն: Անկախ այն բանից, թե ինչ է աշխարհն ասում, կամ ինչպիսին է իրավիճակը՝ մենք պետք է հետևենք Սուրբ Հոգու առաջնորդությանը:

Շատ անգամներ Աստծուն հետևելն անմիտ կամ անտրամաբանական կարող է թվալ, սակայն Աստծո ճանապարհները բարձր են մեր ճանապարհներից (Ես. 55.8-9): Կարող է թվալ, թե դուք սխալ որոշում եք կայացնում կամ սխալ ճանապարհով եք գնում, բայց եթե Աստված է ասել, որ դա անեք, ի վերջո կպարզվի, որ դուք ճիշտ էիք:

Նշանակություն չունի, թե որտեղ կամ ինչ հանգամանքներում եք գտնվում, ապրում եք վրանում, թե առանձնատանը, ունեք մեկ դրամ, թե միլիոն դոլարներ. դրանցից ոչ մեկը չի կարող իշխել ձեզ վրա, եթե դուք թույլ չտաք: Եթե կյանքում բախվել եք անբարենպաստ հանգամանքների, դուք *կարող եք* փոխել ձեր հանգամանքները և ձեր կյանքի ուղին՝ պարզապես հետևելով Աստծուն և իրականացնելով Նրա ծրագիրը ձեր կյանքի համար:

Հնարավոր է՝ ինչ-որ մեկն ասի. «Որքան ժամանակ է՝ ես քայլում եմ Աստծո հետ և հնազանդվում Նրան, բայց կարծես ոչինչ չի փոխվում»: Հնարավոր է՝ ձեր իրավիճակը անմիջապես չփոխվի: Ես անձամբ ճանաչում եմ մի քանի մարդու, որոնք երկու կամ երեք տարի հետևում էին Աստծուն և Նրա առաջնորդությանը նույնիսկ այն ժամանակ, երբ թվում էր, թե նրանց իրավիճակը երբևէ չի փոխվի:

Նրանք հրաժարվում էին նայելուց այն ամենին, ինչ կատարվում էր իրենց շուրջը, որովհետև անհնար կլիներ հետևել Աստծուն՝ միաժամանակ նայելով հանգամանքներին: Եվ նրանք հաղթեցին:

## Վերացրեք խոչընդոտները

Եթե դուք ցանկանում եք իրականացնել Աստծո ծրագիրը ձեր կյանքի համար և գրոհով նվաճել ապագան, պետք է *վերացնեք ցանկացած բան, որ խանգարում է ձեզ՝* հավատքով և հնազանդությամբ քայլելու Աստծո հետ:

Շատերը մշտապես պայքարի մեջ են որոշ բնագավառներում, որովհետև նրանց չի հաջողվում վերացնել խոչընդոտը՝ իրենց խնդրի իրական սկզբնաղբյուրը: Օրինակ՝ դուք ջուրը չէիք դատարկի տաշտից, քանի դեռ ծորակը բաց է, և ջուրը հոսում է տաշտի մեջ: Սակայն շատերը փորձում են «դուրս պրծնել» կյանքի իրավիճակներից՝ երբեք չմտախոգվելով իրենց խնդրի սկզբնաղբյուրը փակելու մասին: Նրանք հուսահատորեն անվերջ պայքար են մղում, քանի որ փորձում են կանգնեցնել խնդրի *հետևանքները՝* երբեք չանդրադառնալով խնդրի *պատճառին*:

Ես խոսում եմ այն մասին, որ եթե դուք ցանկանում եք իրականացնել Աստծո ծրագիրը ձեր կյանքի համար, ապա *նախ* պետք է վերացնեք բոլոր այն խոչընդոտները, որոնք սպառնում են կասեցնել կամ դադարեցնել ձեր առաջընթացը:

Օրինակ՝ հոգևոր առաջընթացի և Աստծուց որևէ բան ստանալու մեծ խոչընդոտներից մեկը *անցյալն* է: Մինչև ձեր անցյալը չթողնեք ձեր հետևում, ապագայում Աստծո լավագույնը ստանալու ճանապարհին կհանդիպեք խոչընդոտների: Այնպես որ մի՛ կենտրոնացեք անցյալի սխալների և ձախողումների վրա: Գիտակցեք, որ եթե Աստծուց մեղքերի թողություն եք խնդրել, Նա հավատարիմ է և արդար՝ ներելու և սրբելու ձեզ ամեն անիրավությունից (Ա Հովհ. 1.9): Հավատացե՛ք դրան և շարժվե՛ք առաջ:

## Աստված ներում է և մոռանում

Երբ Աստված ներում է, Նա մոռանում է: Սակայն որոշ քրիստոնյաներ ասում են. «Ինչպե՞ս կարող եմ ակնկալել, որ Աստծուց որևէ այլ բան կստանամ՝ հաշվի առնելով այն կյանքը, որ ես ունեցել եմ: Ես պարզապես երջանիկ եմ, որ ներված եմ և Աստծո ընտանիքի



մեջ եմ»: Բայց եթե դուք վերստին ծնվել եք, նշանակություն չունի, թե ինչպիսի կյանքով եք մի ժամանակ ապրել: Ձեր անցյալի հարցը լուծված է, և դուք սրբվել եք ու դարձել նոր արարած Տեր Հիսուս Քրիստոսի թափած արյան միջոցով:

Նախքան Հիսուսին որպես Փրկչի ընդունելը հավանաբար միշտ ստիպված եք եղել հետ նայել՝ վախենալով անցյալի հետևանքներից: Սակայն այլևս չպետք է հետ նայել, որովհետև այնտեղ ոչինչ չկա, որ առնչություն ունենա ձեզ հետ: Թույլ մի՛ տվեք, որ սատանան խանգարի ձեզ՝ անցյալից հիշողություններ բերելով: Եթե թույլ տաք, որ անցյալը խանգարի ձեզ, ապա բաց կթողնեք Աստծո օրհնությունները ապագայում: Աստված մոռացել է ձեր բոլոր նախկին սխալներն ու ձախողումները:

**ԵՐԱՅԵՑԻՆԵՐԻ 10.16-17**

**16 Թե՛ «Սա է այն ուխտը, որ կդնեմ նրանց հետ այն օրերից հետո,- ասում է Տերը,- կտամ Իմ օրենքները նրանց սրտերի մեջ և նրանց խորհուրդների վրա կգրեմ նրանց»:**

**17 Եվ ապա ասում է. «Նրանց մեղքերը և նրանց անօրինությունները ԷԼ ՉԵՄ ՀԻՇԻ»:**

Այն բոլոր մեղքերն ու անօրինությունները, որ երբևէ գործել եք, ներվեցին Աստծո կողմից այն պահին, երբ Նրանից մեղքերի թողություն խնդրեցիք: Ուստի մի կոհմ դրեք այն զգացմունքներն ու դիրքորոշումները, որ ունենում եք անցյալում կատարվածի վերաբերյալ: Անցյալն այլևս գոյություն չունի, այնպես որ հանեք այն ձեր մտքից: Նորոգե՛ք ձեր միտքն Աստծո հոսքով (Հռոմ. 12.2):

Մտքի նորոգումը կփոխի ձեր հուզական վիճակը: Այն կարող է նաև օգնել վերականգնելու խաթարված հարաբերությունները: Եթե ձեր սրտում ունեք վատ զգացողություններ այն պատճառով, որ ինչ-որ մեկը ձեզ անցյալում ցավեցրել է, ապա ձեր վերաբերմունքը կարող է զրկել ձեզ Աստծո և ուրիշների հետ հաղորդակցումից:

Մարդիկ, որոնք վիրավորվել են ուրիշներից, հակված են ասելու. «Ես այլևս ոչ ոքի չեմ վստահի»: Սակայն քանի որ նրանց ինչ-որ մեկն անցյալում «մրմռացրել է», դա չի նշանակում, որ բոլորը նույն կերպ կվարվեն նրանց հետ:

Մենք պետք է սովորենք բաց թողնել անցյալի վիրավորանքները, ձախողումներն ու սխալները: Մենք պետք է հետևենք խաղաղության Աստծո և մեր մերձավորների հետ ու սովորենք հաղորդակցվել հավատակիցների հետ:

## Ազատվե՛ք վախից

Մեկ այլ խոչընդոտ է վախը, որը նույնպես պետք է հեռացնել, եթե պատրաստվում եք իրականացնելու Աստծո ծրագիրը: Աստվածաշնչում գրված է, որ վախն Աստծուց չէ:

### Բ ՏԻՄՈԹԵՈՍ 1.7

**7 Որովհետև Աստված չտվեց մեզ երկշտության հոգի, այլ զորության և սիրո և զգաստության:**

Շատ մարդիկ վախենում են, երբ չգիտեն, թե ինչ է տեղի ունենալու ապագայում: Որպես քրիստոնյաներ՝ մենք չպետք է վախենանք անհայտին դեմ առ դեմ կանգնելուց: Ըստ էության, չէ՛ որ Աստված իրայելցիներին ասաց. «Հետևե՛ք Ինձ, որովհետև նախկինում այս ճանապարհով երբեք չեք անցել» (Հեսու 3.3-4): Երբ հետևենք Աստծուն, Նա հոգ կտանի մեզ համար: Միգուցե մենք չենք կարողանում հստակ տեսնել ապագան, սակայն մենք քայլում ենք Նրա հետ, Ով կարող է տեսնել:

Թշնամին անընդհատ փորձում է վախեցնել մեզ: Նա կասի. «Շատ լավ, Տերն անցյալում հոգ է տարել քեզ համար, իսկ հիմա ի՞նչ կասես: Ինչպե՞ս է Նա հոգ տանելու քեզ համար այս իրավիճակում»: Երբ սատանան կամ որևէ մեկը տալիս է մեզ այդ հարցը, մենք պետք է ասենք. «Ես չգիտեմ, բայց Աստված *գիտի*»:

Սատանան կփորձի խանգարել ձեզ վախի միջոցով: Բայց դուք պետք է սովորեք ազատվել այդ խոչընդոտից՝ կարդալով Աստծո Խոսքը և խորհելով դրա շուրջ, ապա հավատքով գործի դնելով այն:

Արարչագործությունից սկսած՝ բոլոր ժամանակներում Աստված հանդարտեցրել է մարդկանց վախերը: Եվ Աստված այսօր էլ մարդուն ասում է. «Մի՛ վախեցիր: Գրված Խոսքը քեզ հետ է: Կենդանի Խոսքը նույնպես բնակվում է քո մեջ: Եվ ավելի մեծ է Նա, որ քո մեջ է, քան նա, որ աշխարհում է» (Ա Հովհ 4.4): Աստված միշտ ավելի մեծ է լինելու, քան սատանան:

Դուք պետք է հիշեք դա, երբ բախվեք մարտահրավերների Աստծո ծրագիրը ձեր կյանքի համար իրականացնելիս:

## Կազմե՛ք ձեր երթուղին

Որպեսզի հասնեք այն հաջողությանը, որ Աստված ցանկանում է, նախ և առաջ պետք է վերացնեք ցանկացած խոչընդոտ, այդ թվում՝ վախը և անցյալի մտքերը, որ թշնամին օգտագործում է՝ փորձելով

խանգարել ձեզ՝ ստանալու այն, ինչ Աստված պատրաստել է ձեզ համար: Երկրորդ բանը, որ պետք է անեք Աստծո լավագույնը ճաշակելու համար, *ձեր երթուղին Աստծո ծրագրի համաձայն կազմելն է*: Ձեր կյանքի համար Աստծո ծրագիրը բացահայտելուց հետո պետք է սկսեք ձեր նպատակները համաձայնեցնել դրա հետ:

Սա լուսաբանեմ հետևյալ օրինակով: Օդաչուի աշխատանքը օդանավ վարելն է: Բայց նա պարզապես չի ասում՝ «Ես Դալլաս եմ թռչելու», ապա բարձրանում օդանավ ու մեկնում: Ո՛չ: Նախքան օդանավ բարձրանալը նա պետք է ուսումնասիրի քարտեզները և կազմի իր երթուղին: Այնուհետև Նա իր թռիչքի ծրագիրը ներկայացնում է համապատասխան մարմիններին, որոնք կարող են կամ թույլատրել, կամ մերժել թռիչքի իրագործումը:

Սակայն միայն այսքանը չէ, որ օդաչուն պետք է անի: Երթուղին կազմելուց հետո նա դեռ պետք է ստուգի եղանակը: Միգուցե եղանակը հրաշալի է այնտեղ, որտեղ ինքն է, սակայն այն ուղղությամբ, ուր նա մեկնում է, կարող են լինել եղանակային այնպիսի պայմաններ, որոնցից պետք է խուսափել: Եթե այդպիսի իրավիճակ է, ապա օդաչուն պետք է փոխի երթուղին: Նա չպետք է պարզապես ասի. «Ես արդեն ներկայացրել եմ իմ թռիչքի ծրագիրը: Ամեն դեպքում ես հետևելու եմ իմ ծրագրին»: Եթե նա սկսի թռչել և անսպասելիորեն բախվի հանդիպակաց ուժգին քամիների կամ մեկ այլ իրավիճակի, որ պատրաստ չէ հաղթահարելու, ապա մղոններով կշեղվի իր երթուղուց:

Օդաչուն հենվում է իր գործիքների վրա, որոնք օգնում են նրան մնալու իր քարտեզագրած երթուղու վրա: Այդպիսի մի գործիք է բարձրաչափը, որը չափում է բարձրությունը: Եթե օդաչուն թռիչքի ընթացքում մշտապես չստուգի իր բարձրաչափը, ապա վերջում կարող է մխրճվել գետնի մեջ: Բարձրաչափը տեղեկություն է տրամադրում այն մասին, թե ինչպես օդաչուն փոխի իր երթուղին, մինչ թռիչքի մեջ է: Եթե օդաչուն անտեսի այս զգուշացումները և խորտակի ինքնաթիռը, վթարը տեղի կունենա «օդաչուի սխալի» հետևանքով:

Երբ խոսքը վերաբերում է հոգևոր բաներին, շատ մարդիկ «օդաչուի սխալն» են թույլ տալիս, որովհետև անտեսում են նախազգուշական այն ազդակները, որ Սուրբ Հոգին ուղարկում է նրանց: Նրանք պետք է գիտակցեն, որ Աստծո հետ քայլելիս հարկավոր է շարունակ զգայուն լինել Սուրբ Հոգու հանդեպ և ճշգրտումներ մտցնել կյան-

քում, հակառակ դեպքում անախորժությունների մեջ կհայտնվեն: Տիրոջ առաջնորդությանը հետևելը և երթուղի կազմելը աստվածային ռազմավարության կարևոր մասերից են, որոնք կօգնեն ձեզ կյանքում առաջ գնալու, երբ ուրիշները կընկնեն ճամփեզրին:

## Մշակել ռազմավարություն

Նույնիսկ աշխարհն ընդունում է ռազմավարության մշակման կարևորությունը: Գործարար աշխարհում կորպորացիաների նախագահները նստում են խորհրդակցական սեղանների շուրջը, որպեսզի ծրագրեն իրենց ընկերությունների ապագան: Թեթև ատլետիկայում մարզիչները նույնպես մշակում են իրենց ռազմավարությունը խաղերում հաղթելու համար: Նախապես մտածելն ու ծրագրելը կենսական կարևորություն ունեն:

Որոշ քրիստոնյաներ կարծում են, որ վերստին ծնվելուց և Սուրբ Հոգով լցվելուց հետո այլևս հարկ չկա օգտագործելու իրենց խելքը: Սակայն մենք պետք է հավաքենք տեղեկություններ, ռացիոնալ մտածենք, ապա կազմենք և իրականացնենք այնպիսի ծրագիր, որը մեզ հաջողակ կդարձնի՝ հոգևոր և ֆիզիկական իմաստներով:

Իրականում, դուք հաջողակ չեք լինի ֆիզիկական ոլորտում, մինչև հաջողակ չլինեք հոգևոր ոլորտում: Դուք կարող եք հարուստ լինել և ունենալ նյութական այն բոլոր բաները, որ ցանկանում եք՝ տներ, հողատարածքներ, մեքենաներ և այլն, և աշխարհը ձեզ հաջողակ կանվանի: Սակայն եթե վերստին ծնված չեք, իրականում ոչինչ չունեք (Մարկ. 8.36): Մինևույն ժամանակ դուք կարող եք վերստին ծնված լինել և չօգտվել Քրիստոսում ունեցած իրավունքներից և արտոնություններից, այլ պարզապես գոյատևել: Դա նույնպես լավ չէ: Հիսուսը եկավ, որ մենք ունենանք լիառատ, հաջողակ, հաղթական կյանք (Հովհ. 10.10): Աստվածաշունչն այն «ուղեցույցն» է, որով կարող ենք ծրագիր կազմել և հետևել Աստծուն հաղթանակ տանող ողջ ճանապարհին:

Չափազանց շատ են այն մարդիկ, որոնք բավարարվում են երկրորդ լավագույնով: Մենք՝ որպես հավատացյալներ, բավարարված պետք է լինենք միայն այն ժամանակ, երբ անցնենք «մարգարտե դարպասներով» և մտնենք մեր երկնային տուն: Մինչ այդ Աստծո հոսքում ասվում է, որ մենք պետք է ձգտենք հասունության: Մենք չենք կարող ձգտել հասունության և միաժամանակ լիովին բավարարված լինել մեր ներկա վիճակով:

Ես չեմ ասում, որ չպետք է վայելեք կյանքն այնտեղ, որտեղ այսօր դուք գտնվում եք, և չեմ ասում, որ միշտ դժգոհ պետք է լինեք, նույնիսկ այն ժամանակ, երբ ճաշակում եք Աստծո օրհնությունները: Ես խոսում եմ այն մասին, որ շնորհակալ պետք է լինեք այն ամենի համար, ինչ Աստված արել է ձեր կյանքում, բայց չպետք է բավարարվեք, որովհետև գիտեք, որ Աստվածաշնչում ասվում է, որ կա ավելին (Եփես. 3.20): Ամեն անգամ, երբ Աստծուց մի բարիք եք ստանում, վայելեք այն և գոհացե՛ք դրա համար, սակայն գիտակցե՛ք, որ ձեզ ավելին է սպասում: Ապա, համաձայն Խոսքի, կազմե՛ք ձեր ծրագիրը և հետևե՛ք դրան:

### **Կառչե՛ք Աստծո ուժից**

Ձեզ խանգարող արգելքները վերացնելուց և ձեր երթուղին կազմելուց հետո վերջին բանը, որ պետք է անեք, *կառչելն է այն ուժից և զորությունից, որ անհրաժեշտ են հաջողության հասնելու համար:*

Շատ մարդիկ զրկվում են հաջողությունից, որովհետև հենվում են իրենց ուժերի վրա: Սակայն հավատացյալի ուժը, զորությունը և կարողությունը Աստծուց են:

#### **ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 4.13**

#### **13 Ամեն բան կարող եմ ինձ զորացնող ՔՐԻՍՏՈՍՈՎ:**

Մենք կարող ենք ամեն բան անել Քրիստոսով, որ զորացնում է մեզ: *Ամեն* բան: Դա նշանակում է, որ մենք կարող ենք իրականացնել ցանկացած բան, ինչ նախատեսել ենք, որովհետև Աստված տալիս է մեզ ուժ դա անելու համար: Մենք ունենք մեզ անհրաժեշտ ներքին ուժը, որովհետև Հիսուս Քրիստոսն է մեր զորության աղբյուրը: Մենք չենք ծառայում Աստծուն մեր զորությամբ կամ կարողությամբ: Մենք ծառայում ենք Աստծուն Սուրբ Հոգու զորությամբ, որ մեր ներսում է:

Այս ճշմարտությունը ցույց տրվեց այն օրինակով, երբ հրեաների մնացորդը Զորաբաբելի գլխավորությամբ սկսեց վերակառուցել Տիրոջ տաճարը, որն ավելի վաղ կործանվել էր բաբելոնացիների կողմից: Թշնամիներն անընդհատ փորձում էին կանգնեցնել իսրայելցիներին, սակայն Աստված նրանց վստահեցրել էր, որ տաճարն ամբողջովին վերականգնվելու էր, որովհետև Սուրբ Հոգին զորացնելու էր նրանց՝ աշխատանքը կատարելու համար:

**ՉԱՔԱՐԻԱ 4.6**

**6 Եվ նա պատասխանեց և ասաց ինձ, թե՛ սա Տիրոջ խոսքն է առ Զորաբարել՝ ասելով. «ՈՉ ԹԵ ԶՈՐՈՒԹՅՈՒՆՈՎ ԵՎ ՈՉ ԹԵ ՈՒԺՈՎ, ԱՅԼ ԻՄ ՀՈԳՈՎ», - ԱՍՈՒՄ Է ԶՈՐԱՑ ՏԵՐԸ:**

Մեր ուժը, զորությունն ու կարողությունը ոչ մի արդյունք չեն տա, մինչև որ չըցվենք ի վերուստ՝ Սուրբ Հոգուց եկող զորությամբ (Բ Կորնթ. 10.4): Ես չեմ ասում, որ մենք չպետք է օգտագործենք այն տաղանդներն ու ունակությունները, որ Աստված տվել է մեզ: Ասելիքս այն է, որ մեր կարողություններն անօգուտ են, եթե չեն միախառնվում Նրա զորությանը, Ով փրկագնեց մեզ:

Բարեկամ, ապագան ձեր առջև է՝ անբիժ և լուսավոր: Ձեր ապագա պատմության էջերը դատարկ են: Սկսեք հենց հիմա վերացնել այն խոչընդոտները, որոնք, հնարավոր է, խանգարել են ձեզ անցյալում: Սկսեք նոր երթուղի կազմել Աստծո հետ հաջողության հասնելու համար: Այնուհետև մտե՛ք Աստծո ուժի և զորության մեջ և իրականացրե՛ք Աստծո ծրագիրը ձեր կյանքի համար: Անկախ հանգամանքներից՝ յուրաքանչյուր օրվա ավարտին կարողացե՛ք հավատքով գրել. «Աստծո շնորհիվ ես այսօր հաջողության հասա»:



## Գլուխ 3

# Վաղը սկսվում է այսօր

*Ապագան ձեռք է բերվում ներկայում:*

*Սամուել Զոնսոն*



Ձեր ապագան հեռվում՝ ինչ-որ տեղում չէ: Այն, ինչ անում եք այսօր, ազդեցություն է թողնում ձեր վաղվա օրվա վրա: Ուստի մենք կարող ենք ասել, որ վաղը, այսինքն՝ ձեր ապագան, սկսվում է այս պահից:

Աստվածաշնչից մենք սովորում ենք, որ Աստված Իր զավակներին միշտ ինչ-որ բան է անել տալիս *այսօր*, որպեսզի նրանց նախապատրաստի *վաղվան*:

### **ՀԵՍՈՒ 3.5**

**5 Եվ Հեսուն ասաց ժողովրդին. «Սրբեք ձեր անձերը, որովհետև Տերը ԷԳՈՒՑ ձեր մեջ հրաշքներ է անելու:**

Հեսուն այս հայտարարությունն արեց իսրայելիցիների՝ Հորդանան գետն անցնելուց և Քանան մտնելուց մեկ օր առաջ: Հեսուի հրամանի համաձայն՝ իսրայելիցիները պիտի սրբեին իրենց անձերը: Այլ խոսքով՝ նրանք պետք է ծիսական կարգով մաքրվեին: Կային բաներ, որ նրանք պետք է բնականում անեին, նախքան պատրաստ կհամարվեին տեղաշարժվելու:

Հարկ չկա, որ մենք ծիսական կարգով մաքրվենք, որովհետև մենք սրբվել ենք Հիսուս Քրիստոսի միջոցով: Այնպես որ մեզ համար այս խոսքը պարզապես նշանակում է, որ կան բաներ, որ պետք



է անենք, որպեսզի պատրաստ լինենք նրան, ինչ վաղը՝ ապագան, կբերի:

Հիմա ես ցանկանում եմ ընթերցել Հեսուի գրքի 3.5-րդ խոսքը Աստվածաշնչի թարգմանության «Նոր միջազգային տարբերակից»:

### **ՀԵՍՈՒ 3.5**

#### **5 Հեսուն ասաց ժողովրդին. «Նվիրաբերեք ձեր անձերը, որովհետև Տերը վաղը ձեր մեջ հրաշքներ է անելու»:**

Արդի ժամանակաշրջանում մենք ավելի լավ ենք հասկանում «նվիրաբերել» բառը, քան «սրբել»-ը: Իսրայելցիների համար «սրբել» կամ «նվիրաբերել» նշանակում էր անցնել մաքրագործման որոշակի գործողությունների միջով: Դա նշանակում էր ֆիզիկապես մաքրվել, որպեսզի հնարավոր լիներ շարժվել Աստծո հետ:

Մեզ՝ քրիստոնյաներիս համար «նվիրաբերում» բառը նշանակում է առանձնանալ աշխարհից և լիովին անձնատուր լինել Աստծուն կյանքի յուրաքանչյուր բնագավառում:

## **Ո՛ր եք ուղևորվում**

Ինչ նկատի ունեմ՝ ասելով, որ վաղը սկսվում է այսօր: Նախևառաջ եկեք ուսումնասիրենք «վաղը» (անգլերենում՝ «tomorrow») բառը և պարզենք, թե ինչ է այն նշանակում: Անգլերենում «to» նախածանցը «շարժում դեպի» իմաստն ունի: Իսկ «morrow» նշանակում է «ապագա կամ այն օրը, որ հաջորդում է ներկային»: Հասկանալով այս սահմանումները՝ մենք կարող ենք հասկանալ «վաղը սկսվում է այսօր» արտահայտությունը, որը նշանակում է՝ մեր ուղևորությունը ներկա պահին պետք է լինի դեպի ապագան:

Հասկանում եք, վաղը սկսվում է այսօր այն իմաստով, որ եթե հոգ չտանեք այն մասին, ինչ պետք է կատարվի այսօր, ապա պատրաստ չեք լինի վաղվան: Իսկ եթե պատրաստ չեք վաղվան, կարող եք բաց թողնել ձեր հնարավորությունը, երբ վաղը դառնա այսօր:

Կրկին, Հեսու 3-րդ գլխի 5-րդ խոսքում Հեսուն իսրայելցիներին ասաց. «Սրբեք (կամ նվիրաբերեք) ձեր անձերը, որովհետև վաղը...»: Հեսուն նրանց ասում էր այսօր պատրաստվել մի բանի համար, որը տեղի էր ունենալու վաղը: Եթե ուսումնասիրեք Հին կտակարանը, կտեսնեք, որ շատ անգամներ նախքան Իսրայելի զավակները կկարողանային ներգրավվել որոշակի տոնակատարություններում կամ զոհաբերություններում, նրանք պետք է կատա-

րեին Օրենքի արարողակարգային ծեսերն ու մաքրագործումները:

Հիշեք, իսրայելցիները լցված չէին Սուրբ Հոգով: Նրանք նույնիսկ ծնված չէին Հոգուց: Հայրը, Որդին և Սուրբ Հոգին չէին բնակվում նրանց մեջ: Իրականում իսրայելցիների մեծ մասն ընդհանրապես կապի մեջ չէր Աստծո հետ: Մարդիկ, որոնք կապի մեջ էին Աստծո հետ, մարգարեներն էին, քահանաները և թագավորները: Նրանք կապի մեջ էին Աստծո հետ, որովհետև նրանք էին օծված:

Աստված այնքան մաքուր է և սուրբ, որ ամեն անգամ, երբ պատրաստվում էր շարժվելու, նախօրոք հայտնում էր Իսրայելին, որպեսզի վերջինս կարողանար պատրաստվել և մաքրվել: Եթե իսրայելցիները չպատրաստվեին, ապա չէին կարողանա գնալ այնտեղ, դեպի ուր շարժվում էր Աստված:

### **Հետ մի՛ մնացեք**

Իրական կյանքում, երբ պատրաստվում եք ուղևորության մեկնելու, գիտեք, որ պետք է սկսեք պատրաստվել ուղևորությունից շատ ավելի վաղ: Օրինակ, եթե ավտոբուս եք նստելու, իսկ ավտոբուսը մեկնելու է հաջորդ առավոտվա 5-ին, խելացի կլինի նախորդ գիշեր ամեն ինչ պատրաստել, որպեսզի բաց չթողնեք ավտոբուսը:

Բայց ենթադրենք՝ գիշերը չեք պատրաստվել և առավոտյան ուշ եք արթնանում: Դուք կփորձեք արագ-արագ պատրաստվել և մինչ կհասնեք կանգառ, ավտոբուսը հնարավոր է արդեն մեկնած լինի:

Մի անգամ նման դեպք պատահեց իմ եկեղեցու անդամներից մի քանիսի հետ, որոնք ծրագրում էին եկեղեցու կազմակերպած զբոսարշավին մասնակցել: Երբ նրանք հետ մնացին ավտոբուսից, զանգահարեցին եկեղեցու գրասենյակ և ասացին. «Հովիվ, ավտոբուսը մեկնել է ու մեզ թողել»:

Ես նրանց հարցրի. «Ո՞ր ժամին էր ավտոբուսը մեկնելու»:

Նրանք ասացին. «Այն պետք է մեկներ առավոտվա 5-ին»:

Ես հարցրի. «Ո՞ր ժամին էիք հասել այնտեղ»:

«5:15»:

Ինչ էին ակնկալում այդ մարդիկ, որոնք հետ էին մնացել: Ավտոբուսը մեկնել էր նախատեսված ժամին. նրանք պարզապես ժամանակին պատրաստ չէին եղել:

Եթե այդ մարդիկ մեկ օր առաջ հոգ տարած լինեին ամեն ինչի համար, ապա պատրաստ կլինեին «վաղվան» և ժամանակին կմեկնեին:

Վաղն իրականում սկսվում է այսօր: Այլ կերպ ասած՝ վաղվա ձեր հաջողությունը կախված է այսօրվա ձեր գործողություններից:

## **Հետևեք ուղեցույցին**

Ես ուզում եմ, որ մենք սովորենք որոշ բաներ այն օրինակից, որին հետևեցին իսրայելցիները: Ուխտի տապանակը գնում էր իսրայելցիների առջևից, երբ նրանք շարժվում էին: Ուխտի տապանակը խորհրդանշում էր Աստծո ներկայությունը: Այն ժամանակաշրջանում կամ դարաշրջանում, որում մենք ապրում ենք, ունենք Սուրբ Հոգուն, որն առաջնորդում և ուղղորդում է մեզ: Իսրայելը՝ որպես ազգ, պետք է հետևեր Ուխտի տապանակին, ուր էլ այն գնար: Եթե Տապանակը գնար ուղիղ, ապա թեքվեր ձախ, իսրայելցիները պետք է թեքվեին ձախ: Նրանք չպետք է շարունակեին ուղիղ գնալ:

Ամեն անգամ, երբ Ուխտի տապանակը կանգ էր առնում, Իսրայելի զավակները կանգնում էին: Երբ Տապանակը շարժվում էր, նրանք շարժվում էին: Իսրայելցիները հետևում էին Տապանակին, որովհետև Աստծո զորությունն այնտեղ էր, որտեղ տապանակն էր: Իսկ նրանք ցանկանում էին հետևել Աստծո զորությանը:

Ուխտի տապանակը իսրայելցիների ուղեցույցն էր և ցուցիչը, որով նրանք իմանում էին երբ և ուր շարժվել: Եթե Իսրայելը չհետևեր Ուխտի տապանակին, ապա կզրկվեր Աստծո պաշտպանությունից: Աստծո պաշտպանությունն այնտեղ է, որտեղ Նրա ներկայությունն է:

Այժմ մենք ունենք օծություն կամ Ուղեցույց՝ Սուրբ Հոգուն, որ մեր ներսում է: Այսօր բազմաթիվ քրիստոնյաներ խնդիրներ են ունենում Սուրբ Հոգուն չհետևելու պատճառով: Նրանք կարող են որոշ ժամանակ հետևել Սուրբ Հոգուն, բայց հետո, երբ Սուրբ Հոգին, այսպես ասած, շրջվում է և գնում այլ ուղղությամբ, նրանք շարունակում են ընթանալ նույն ճանապարհով, որով գնում էին:

Մեզնից շատերն այս կամ այն ժամանակ հայտնվել են այդ իրավիճակում: Մենք պետք է անպայմանորեն հետևենք Սուրբ Հոգուն, երբ Նա առաջնորդում է մեզ այն ճանապարհով, որ Աստված պատրաստել է մեզ համար:

## **Նվիրաբերե՛ք ձեզ Աստծուն**

Ուխտի տապանակն այնպիսի բան չէր, որին կարելի էր թեթևամտորեն վերաբերվել: Դավիթ թագավորի կառավարումից

առաջ Հեղի քահանայի որդիները՝ Ուփնին և Փենեհեսը, ակնհայտորեն վնաս բերեցին Իսրայելին՝ Տապանակն իջեցնելով մարտի դաշտ (Թվոց 4.15, Ա Թագ. 4): Փղշտացիները վերցրին սուրբ Տապանակը և հաղթեցին մարտը:

Ցավոք, փղշտացիները չգիտեին, որ Ուփստի տապանակը սուրբ էր և անձեռնմխելի: Պատմությունը ցույց է տալիս, որ ի վերջո նրանք փորձեցին Տապանակը վերադարձնել Իսրայելին (Ա Թագ. 6.2): Երբ Տապանակը տեղից տեղ էր շարժվում, մարդիկ բացականչում էին և, ըստ էության, ասում. «Հեյ, տարե՞ք սա: Այն մեզ բազում խնդիրներ է պատճառում» (տես Ա Թագ. 4-6 և Բ Թագ. 6): Ի վերջո տապանակը տարվեց Աբդեղոմ անունով մի իսրայելցու տուն (Բ Թագ. 6.10-11):

Աբդեղոմը հասկանում էր Տապանակի կարևորությունը և ծիսական կարգով սրբվում էր ամեն անգամ, երբ պետք է մոտենար դրան: Նրա նվիրաբերման շնորհիվ ամբողջ տունը մեծապես օրհնվում էր: Երբ Աստծո օծությունը կամ զորությունը ձեզ հետ է, դուք օրհնվում եք: Սակայն կարևոր է իմանալ, թե ինչպես պետք է վարվել օծության հետ: Անշուշտ, դա բոլորովին այլ թեմա է, սակայն կարծում եմ, որ անհրաժեշտ է այստեղ հիշատակել այդ մասին:

Երբ Դավիթ թագավորը գնաց, որ Տապանակը վերադարձներ Երուսաղեմ, նա Տապանակի հետ չվարվեց այնպես, ինչպես Աստված կարգադրել էր, և ամեն բան փչացրեց (Ա Մնաց. 13): Դավիթը լավ դիտավորություն ուներ, սակայն նա չարեց այն, ինչ Աստված ասել էր անել Ուփստի տապանակի վերաբերյալ:

Այս խնդիրն այսօր առկա է շատ քրիստոնյաների կյանքում: Նրանք լավ դիտավորություն ունեն, սակայն չեն վարվում այնպես, ինչպես Աստված է ցանկանում: Ինչպես ավելի վաղ ասացի, եթե դուք ուզում եք օրհնվել, ապա ամեն բան պետք է անեք Աստծո ճանապարհով:

Երբ լիովին չեք նվիրաբերվում Աստծուն, սկսում եք շեղվել ճանապարհից՝ մի փոքր այս կողմ, մի փոքր այն կողմ՝ անելով բաներ, որոնք չպետք է անեիք: Հետո խնդիրներ են առաջանում կյանքի շատ բնագավառներում: Ինչո՞ւ: Որովհետև չեք հետևում այն ծրագրին, որ Աստված ունի ձեր կյանքի համար: Երբ չեք հետևում Աստծուն, չեք ունենում Նրա զորությունը ձեր կյանքում, որովհետև Նրա զորությունը կամ օծությունը չի կարող լինել այնտեղ, որտեղ որևէ տեսակի մեղք կա:

## Հաջողություն անձնական կյանքում

Վաղը սկսվում է այսօր նախևառաջ մեր անձնական կյանքում: Այսօր իմ ով լինելը կորոշի, թե ով եմ ես վաղը: Այն, ինչ այսօր անում եմ, կորոշի, թե ուր կարող եմ գնալ վաղը: Այն, ինչ այսօր մտածում եմ և ասում, կորոշի իմ վերաբերմունքը վաղը:

Հաճախ այն, ինչ պատահում է ձեզ հետ վաղը, կախված է նրանից, թե ինչ եք անում այսօր: Շատ մարդիկ ասում են. «Ես պարզապես ապրում եմ ներկայով»: Բայց երբ մենք ապրում ենք ներկայով, չենք մտածում վաղվա մասին, հետևաբար չենք նախապատրաստվում վաղվան:

Ինչ-որ մեկը կարող է ասել, որ վաղվան նախապատրաստվելը մեզ հետ է պահում Հիսուսի վերադարձին սպասելուց: Ո՛չ, այդպես չէ: Ըստ Աստվածաշնչի՝ մենք պետք է «գործածենք», մինչև որ Հիսուսը վերադառնա (Ղուկ. 19.13): «Գործածել»-ը ենթադրում է, որ մենք պետք է հաջողությամբ մասնակցենք կյանքի գործընթացներին այստեղ՝ երկրի վրա: Այո՛, մենք պետք է անհամբեր սպասենք Հիսուսի վերադարձին, սակայն մինչ այդ պետք է շահագրգռված լինենք այն ամենով, ինչ տեղի է ունենում այստեղ:

Շատ քրիստոնյաներ, այսպես ասած, պտտվում են այս ու այն կողմ՝ չունենալով կյանքում որևէ նպատակ կամ կենտրոնացում: Այս մարդիկ փրկված են և մկրտված Սուրբ Հոգով, սակայն մի օր «այստեղ» են, հաջորդ օրն՝ «այնտեղ»: Նրանք կայուն կամ կենտրոնացած չեն: Քանի որ չունեն նպատակ, շատ անգամներ նրանք հոգևոր առումով խնդրահարույց են:

Երբ ունեք նպատակ, գիտեք, թե ուր եք գնում և ինչ եք անելու, այդ ժամանակ սկսում եք *այսօր* պատրաստվել վաղվան: Ցավոք, շատերը հայտնվում են անախորժության մեջ, որովհետև երբեք չեն պատրաստվում վաղվան՝ այսօր ուժեղացնելով իրենց հավատքը: Հնարավոր է՝ նրանց կյանքում ամեն բան հրաշալի է: Ամեն բան կարգին է, ու չկան խնդիրներ: Ուստի այս մարդիկ չեն շարունակում ուսումնասիրել Խոսքը ու չեն շարունակում ուժեղացնել իրենց հավատքը: Ինչ է տեղի ունենում: Երբ վաղը գալիս է, սատանան կարողանում է, այսպես ասած, խփել նրանց գլխին, որովհետև նրանք պատրաստ չեն: Այն մարդիկ, որոնք չեն նախապատրաստվում այսօր, պատրաստ չեն լինի վաղը:

## Ընդունե՞ք ձեր վիտամինները

Վաղվան նախապատրաստվելու այս սկզբունքը կարելի է լուսաբանել վիտամինների օրինակով: Կան որոշակի բաներ, որ ես անում եմ ամեն առավոտ, ինչպես, օրինակ՝ ընդունել վիտամիններ, որոնք պարտադիր չէ, որ օգնեն իմ մարմնին հենց այդ օրը: Ես դա անում եմ, որ իմ ֆիզիկական մարմինն առողջ լինի վաղը, մյուս օրը և հաջորդ օրը:

Ես օգտագործում եմ մի քանի տեսակի վիտամիններ՝ վիտամին A, C, E և այլն, և յուրաքանչյուրից ընդունում եմ մեկական ամեն առավոտ: Ես ընդունում եմ դրանք, որովհետև բժշկական փորձագետներն ասել են, որ խելամիտ է դա անելը, քանի որ այդպիսով լրացնում եմ պակասը այն հիմնական վիտամինների և հանքային աղերի, որոնք ստանում եմ տարբեր կերակուրների միջոցով: Եթե կարդաք Միացյալ Նահանգներում ապրող մարդկանց առողջության մասին, կհայտնաբերեք, որ ընդհանուր առմամբ ամերիկացիները այս վիտամինները բավարար քանակությամբ չեն ստանում, որովհետև նրանք ուտելու ոչ ցանկալի սովորություններ են ձեռք բերել:

Քանի որ մեր մարմնում չի պահպանվում վիտամին C-ն, մենք պետք է ամեն օր ընդունենք այդ վիտամինը: Եթե չենք ընդունում, ուրեմն չենք նախապատրաստվում վաղվան: Այժմ հնարավոր է չափազանց շատ վիտամին A ստանալ, բայց մարդկանց մեծամասնությունը բավարար քանակությամբ էլ սպառում է այն: Սակայն ես չեմ ընդունում վիտամիններ, որպեսզի այսօր օգուտ ստանամ դրանցից: Իրականում, բացի վիտամին C-ից, այն վիտամինները, որ ես այսօր ընդունեցի, շատ օգուտ չեն տա ինձ *այսօր*: Սակայն դրանք օգուտ կտան ինձ վաղը՝ ապագայում:

Մենք գիտենք, որ այս սկզբունքը կիրառելի է նաև մեր կյանքի որոշ բնագավառներում, օրինակ՝ ֆինանսների և առողջության: Մենք հասկանում ենք, որ այն, ինչ այսօր անում ենք ֆիզիկական ոլորտում, ազդում է մեր վաղվա վրա, սակայն այդ նույն սկզբունքը չենք կիրառում հոգևոր ոլորտում: Մենք պետք է հասկանանք, որ այն, ինչ անում ենք այսօր, նաև որոշելու է մեր հոգևոր վիճակը վաղը:

Մենք չենք կարող մեզ թույլ տալ այսօր ապրել անփույթ վերաբերմունքով: Այլ խոսքով՝ մենք չենք կարող այսօր անպարկեշտ անեկդոտներ պատմել և սխալ մարդկանց հետ վազել ու սպասել, որ վաղը հոգևորապես ուժեղ կլինենք: Մենք չենք կարող այսօր թող-

նել հավատակիցների հետ միասին հավաքվելը ու սպասել, որ վաղը ուժեղ կլինենք:

Բավական չէ միայն եկեղեցի գնալ և ակնկալել, որ հոգևորապես ուժեղ կլինեք: Դուք պետք է գնաք եկեղեցի նույն պատվական հավատքն ունեցող մարդկանց հետ: Եթե գնաք այնպիսի եկեղեցի, որտեղ մարդիկ չեն հավատում ձեզ նման՝ համաձայն Աստվածաշնչի, դա նման կլինի մարտկոցի կարճ միացմանը. դուք միայն կարճ միացում կտաք ձեր հոգուն: Եթե դուք շարունակաբար հավաքվեք նրանց հետ, ովքեր կասկած և անհավատություն են տարածում, կգրկվեք Աստծո գործությունից:

Վերստին ծնված, հոգով լցված քրիստոնյան ընկերություն չպետք է անի աշխարհիկների հետ: Ես հասկանում եմ, որ դուք պետք է աշխատեք և, ըստ այդմ, շփվեք նրանց հետ: Սակայն ես խոսում եմ ոչ քրիստոնյաների հետ մտերիմ ընկերներ լինելու և նրանց հետ մշտապես ժամանակ անցկացնելու մասին՝ անելով այն բաները, ինչ նրանք են անում, և գնալով այնտեղ, ուր նրանք են գնում:

Դուք չեք կարող ժամանակ անցկացնել նրանց հետ, ովքեր ծառայում են աշխարհին, և հոգևոր կյանքում չկրել դրա ազդեցությունը: Այն, ինչ անում ենք այսօր, կորոշի մեր վաղվա օրը:

## **Կառուցված՝ հարատևելու համար**

Մտածե՛ք ձեր ապագայի մասին՝ որպես մի շինության, որն ամեն օր ջանք եք գործադրում կառուցելու: Անորակ շինանյութերով կառուցված շենքը շատ երկար կանգուն չի մնա: Դուք կարող եք կառուցել շենք, որն արտաքուստ լավ տեսք ունի, սակայն եթե հիմքը կամ հիմքի շինանյութն անորակ է, շենքը շուտով կփլուզվի:

«Ռեմայի» ուսումնական տարածքի առաջին շենքը մենք գնեցինք մի մարդուց, որի ապրուստի միջոցը գիպասատվարաթուղթ տեղադրելն էր: Քանի որ նախքան շինարարությունն ավարտելը նրա դրամական միջոցները սպառվել էին, առաստաղի մեջ նա օգտագործել էր սովորական գիպասատվարաթուղթ՝ նախատեսված անջրանցիկ գիպասատվարաթղթի փոխարեն: Հետո սովորական գիպասատվարաթուղթը ձեփով էր պատել:

Երբ գնեցինք շենքը, մենք չգիտեինք, թե ինչ էր մեզ սպասում: Մենք պետք է նոր գորգ տեղադրեինք և մի շարք այլ բաներ անեինք՝ պատրաստվելով «Ռեմա» աստվածաշնչյան քոլեջի դասերի սկսվելուն: Այս բարելավումներն անելուց կարճ ժամանակ անց շենքի պա-

տերը սկսեցին ուղղակի փլվել: Ես չէի կարողանում հասկանալ, թե ինչ էր կատարվում: Մենք զննեցինք շենքը և հասկացանք, որ ծեփը քանդվում է: Այդ ժամանակ ես նաև հասկացա, որ ծեփի տակ գտնվող գիպսաստվարաթուղթը ճիշտ, անջրանցիկ տեսակը չէր, որ պետք է օգտագործվեր:

Երբ գիպսաստվարաթուղթը խոնավանում է, այն կլանում է ջուրը և սկսում քանդվել: Եթե գիպսաստվարաթուղթը առաստաղի մաս է կազմում, ի վերջո փլվում է ամբողջ շինությունը: Շենքը արտաքինից լավ տեսք ուներ, սակայն այն ներսից քանդվում էր:

Եթե դուք երբևէ տուն կամ որևէ այլ շինություն եք կառուցել, ապա գիտեք, որ պետք է այնպես կառուցեք, որ շենքը երկար ժամանակ կանգուն մնա: Դուք հետևում եք, որ հիմքը լցնելու ժամանակ բետոնը նախատեսված թանձրության լինի:

Անգամ որոշակի օրերի փորձարկումներ եք անում: Եվ ցեմենտը լցնելուց որոշակի օրեր անց կրկին ու կրկին ստուգում եք, մինչև այն, այսպես կոչված, պինդ լինի: Դա նշանակում է, որ ցեմենտն ամբողջովին չորացել է և կղիմանա տարերքներին ու կպահի նախատեսված ծանրությունը:

Եթե ավտոմայրուղիների վրա աշխատելիս օգտագործեք անորակ բետոն, ապա բետոնը ժամանակից շուտ կսկսի ճաքել, պատռվել և քանդվել: Եթե դրսում համապատասխան ջերմաստիճան չլինի, և դուք բետոն թափեք ու չանեք որոշակի բաներ, ինչպես, օրինակ՝ խառնուրդին որոշակի քիմիական նյութեր ավելացնելը, ապա ձեր արած հիմքը չի պահպանվի: Այն, այսպես ասած, վաղը չի լինի:

Եթե տուն կառուցեք անորակ փայտանյութով կամ այլ անորակ շինանյութով, մոտավորապես վեց ամիս անց տունը կսկսի փլվել: Միգուցե սկզբում այն լավ տեսք է ունեցել: Կան շատ տներ, որոնք արտաքուստ իսկապես լավ տեսք ունեն, սակայն ճիշտ չեն կառուցված ներսից, ինչն ամենից կարևորն է: Բացի այդ՝ արտաքին լավ տեսքը կարող է թաքցնել այն, ինչ կա պատերի և փայտի մեջ, օրինակ՝ սպիտակ մրջյունները:

Ես պատմություն եմ լսել մի ընտանիքի մասին, որը տուն էր գնել: Մի օր դեռահաս տղաները զոտեմարտի են բռնվում և իրար հրում են տան պատի ուղղությամբ: Երբ դիպչում են պատին, ամբողջ տունը սկսում է փուլ գալ նրանց շուրջը: Պարզվում է, որ այն պատը, որին նրանք դիպել էին, հիմնական պատ էր, և տան կեսը փլվել էր:

Սպիտակ մրջյունները ներսից կերել էին գամասեղները, այնպես



որ թեև տունն անվտանգ տեսք ուներ, այն հազիվ էր կանգուն մնում:

Այսօր շատ մարդիկ են ճիշտ բաներ խոսում և նույնիսկ իրենց ճիշտ պահում ուրիշների առաջ, սակայն նրանք ճիշտ չեն ներքուստ: Կան նաև մարդիկ, որոնք գուցե «ճիշտ» չեն երևում արտաքուստ, սակայն նրանք հաստատուն որոշում են կայացրել ճիշտ լինելու ներքուստ: Շատ ժամանակ չի անցնի, մինչև արտաքուստ կդրսևորվի այն լավը, որ կա նրանց ներսում: Նմանապես այն անձը, որ թվացյալ կատարյալ է, բայց լցված է դառնությամբ և ատելությամբ, ի վերջո դուրս կհանի այն, ինչ կա իր ներսում:

Մենք քարից կամ փայտից շինություն չենք կառուցում: Մենք կյանք ենք կառուցում: Իսկ այն կյանքը, որ կառուցված է սխալ գաղափարների և սխալ սկզբունքների վրա, չի դիմանա ժամանակի փորձությանը: Բայց այն կյանքը, որ կառուցված է Աստծո Խոսքի սկզբունքների և արժեքների վրա, կպահպանվի վաղը, մյուս օրը և հաջորդ օրը: Այսպիսի կյանքն անվտանգ կլինի ապագայում, որովհետև այն կառուցվել է պատշաճ կերպով, ճիշտ հիմքի վրա:

Շատերն ասում են. «Օ՛հ, եթե կարողանամ դիմանալ մինչև վաղը, ապա բոլոր խնդիրներս կվերջանան»: Ո՛չ, չեն վերջանա: Եթե այսօր ոչինչ չանեք ձեր խնդիրների լուծման համար, ապա վաղն էլ դրանք ձեզ հետ կլինեն: Եթե ցանկանում եք փոխել ձեր վաղը, ուրեմն փոխեք ձեր այսօրը: Ձեր վաղը սկսվում է այսօր:

## **Նվիրաբերումը՝ որպես հաջողության բանալի**

Հետուի գրքի 3-րդ գլխում մենք տեսանք, որ Հետուի առաջին կոչն այն էր, որ մարդիկ նվիրաբերեին կամ սրբեին իրենց: Նվիրաբերումը վաղը հաջող օր ունենալու առաջին քայլն է: Ինչ է այսօր նվիրաբերումը նշանակում մեզ համար: Այն նշանակում է, որ մենք առանձնանում ենք աշխարհի համակարգից և ընդունված գործելակերպերից: Եթե մենք ճշմարիտ հավատացյալներ ենք, ուրեմն եկեք վարվենք այդպես մեր կենսակերպում, խոսելաձևում և հագուկապում:

Իրականում հեշտ է նվիրվել ինչ-որ բանի, երբ կյանքում ամեն բան հրաշալի է: Մեկ այլ բան է նվիրվել, երբ ամեն բան սխալ է ընթանում, և թվում է, թե ոչ թե առաջ, այլ հետ ես գնում: Բայց եթե մենք ցանկանում ենք հաջող ապագա ունենալ, պետք է նվիրվենք Աստծուն և Նրա Խոսքին՝ անկախ որևէ խոչընդոտից, որին կհանդիպենք:

«Նվիրաբերվել կամ սրբվել» նշանակում է հնազանդվել և նվիրվել Աստծուն: Աստված կկարողանա օգտագործել ձեզ միայն այն ժամա-

նակ, երբ իսկապես հնազանդ եք Նրան: Ինչպես մենք ասում ենք Տեխասում, դու պիտի հնազանդվես *ոչորքից գրուխ*: Դա նշանակում է, որ դուք հնազանդ եք լիովին և ամբողջովին:

Եթե մենք պատրաստվում ենք մեզ նվիրաբերելու Աստծուն, պետք է ազատվենք ավելորդ ուղեբեռից: Մեր կյանքում կան բաներ, որոնք գուցե սխալ չեն այն իմաստով, որ ինքնին մեղք չեն, սակայն դրանք ավելորդ ուղեբեռ են այն իմաստով, որ ծանրացնում են մեզ և թույլ չեն տալիս լիովին անձնատուր լինել Աստծուն և անել այն, ինչ Նա ցանկանում է, որ անենք:

### **Ազատվել ավելորդ ուղեբեռից**

Երբ ԱՄՆ-ի բանակում զինվորական ծառայություն էի անցնում, շատ անգամներ ստիպված էի լինում քայլել՝ մեջքիս զանազան հարմարանքներով լի ուսապարկով: Սակայն երբ զինվորները մեկնում են մարտի դաշտ և կռվի կիզակետում են, նրանք ուսապարկ չեն վերցնում: Նրանք կարող են կրել փամփշտակալ, ունենալ գոտուն ամրացրած տափաշիչ և առաջին օգնության պարագաներ, սակայն նրանք ազատվում են ցանկացած բանից, ինչը անհրաժեշտություն չէ մարտական իրավիճակում:

Դուք փոխնորդ հագուստի և վրանի կարիք չունեք, երբ կռվի կիզակետում եք: Այդ իրերը կրելը վատ չէ, սակայն ոչ ճիշտ պահին դրանք կճնշեն ձեզ և հետ կպահեն ձեր խնդիրն իրականացնելուց: Պատերազմում պետք է ազատվել ամեն ինչից՝ բացառությամբ առաջին անհրաժեշտության իրերի:

Հիշում եմ, երբ զորավարություններ էինք անում և հարձակումներ գործում բլուրների վրա, մեր ուսումնական խումբը դուրս էր գալիս՝ բոլոր իրերը մեջքին, սակայն երբ պատրաստվում էր նմանակելու բլուրը վերցնելու մարտական իրավիճակը, ազատվում էր հնարավոր ամեն ինչից: Ինչո՞ւ: Որովհետև մենք չէինք ցանկանում, որ որևէ բան մեզ դանդաղեցներ: Երբ գետնի վրայով վազում էինք մի գերանից մյուսը, ձգտում էինք, որքան հնարավոր է, արագ շարժվելու: Զորավարության նպատակն էր սովորել վազել և շրջանցել թշնամու կրակը: Մենք պետք է սողայինք փշալարի տակով, մինչ իրական փամփուշտները թռչում էին մեր գլխավերևով: Երբ գալիս էր իմ դուրս գալու ժամանակը, ես հնարավորինս կռանում էի և ուժերիս ներածին չափով վազում դեպի հաջորդ թաքստոցը, որ կարողանում էի գտնել:

Երբ վազում էինք հարձակման գոտիով՝ անցնելով փշալարի տա-

կով, շրջանցելով փամփուշտները և այլն, մենք կրում էինք մեր զինամթերքը և զենքը, բայց ուսապարկերը մեզ հետ չէինք տանում:

Ցավոք, կան քրիստոնյաներ, որոնք փորձում են հաղթել հոգևոր մարտերը՝ միաժամանակ ծանրաբեռնված լինելով ամեն տեսակի ավելորդ, խանգարող ուղեբեռով:

Երբ ես զբաղվում էի վազքով, սովորաբար մարզվում էի՝ ոտքերիս ամրացնելով մարզաքարեր, հագնելով բեյսբոլի կոշիկներ և մարզահագուստ. այդպես ես վազում էի նախնական մրցումներում: Բայց երբ պատրաստ էի մասնակցելու մրցավազքին, հանում էի մարզաքարերը, բեյսբոլի կոշիկները և մարզահագուստը:

Բեյսբոլի կոշիկները մոտ 2 կգ էին կշռում: Մրցավազքի ժամանակ ես հագնում էի վազքի կոշիկներ, որոնք մոտ մի քանի գրամ էին կշռում: Ես հանում էի մարզահագուստը, որը վազելիս և քրտնելիս ավելի էր ծանրանում: Հագնում էի վազքի կարճ տաբատ և շապիկ: Ես ազատվում էի այն ամենից, ինչը կարող էր թուլացնել կամ դանդաղեցնել ինձ:

Դուք չեք կարող հաջողությամբ վազել կամ հաղթել մարտերը՝ ավելորդ ուղեբեռ կրելով: Նույնը վերաբերում է հոգևոր ասպարեզին: Մենք պետք է ազատվենք այն ուղեբեռից, որը մեզ հետ է պահում և ճնշում:

## **Դատենք ինքներս մեզ**

Որոշ քրիստոնյաներ չեն սիրում լսել կամ խոսել «դատաստան» բառի մասին: Սակայն, բարեկամ, Աստվածաշնչում դատաստանի մասին գրված է նույնքան, որքան այլ թեմաների մասին, որոնք մարդիկ սիրում են լսել, ինչպես, օրինակ՝ հավատքի և բարգավաճման: Եվ Աստվածաշնչում ասվում է, որ եթե ինքներս մեզ չդատենք, ի վերջո Աստծո դատաստանը կբերենք մեզ վրա (Ա Կորնթ. 11.31-32):

Այսօր քրիստոնյաների շրջանում տարածված խնդիր է այն, որ նրանք չունեն լավ հավասարակշռված հոգևոր սննդակարգ: Առօրյա կյանքում մարդիկ խոսում են հավասարակշռված, առողջ կերակուրներ ուտելու մասին: Ծնողներն ամեն ինչ անում են, որ իրենց երեխաները, քանի դեռ փոքր են և տանն են, ստանան ճիշտ, հավասարակշռված սնունդ, որը բաղկացած է հիմնական սննդային խմբերից՝ սպիտակուցներ, հացահատիկներ, բանջարեղեն, միրգ և կաթնամթերք: Սակայն հնարավոր է, որ ծնողները չկարողանան վերահսկել իրենց երեխաների սնունդը, երբ նրանք ավելի մեծ են, դպրոցում կամ ընկերների շրջապատում են:

Միշտ չէ, որ երեխաները սիրում են ուտել միոգ կամ բանջարեղեն: Բայց մենք չենք կարող անընդհատ քաղցրավենիք ուտել և ակնկալել, որ կունենանք առողջ մարմին: Ոչ էլ կարող ենք անընդհատ միս ուտել: Չկա որևէ սննդային խումբ, որը պարունակի այն բոլոր վիտամիններն ու հանքային աղերը, որոնք անհրաժեշտ են մարմնին՝ առողջ լինելու համար:

Դպրոցում սննդին վերաբերող դասերին գլխավորապես սովորեցնում են հենց այս հիմնական սննդային խմբերի մասին: Բոլորին հայտնի է, որ եթե մարդը պատշաճ չսնվի, նրա մարմինը (նյութափոխանակություն, իմունային համակարգ և այլն) հավասարակշռությունից դուրս կգա, և նա կհիվանդանա:

Շատ անգամներ մարդիկ, որոնք ճիշտ չեն վարվել իրենց մարմնի հետ, հերթ են կանգնում բժշկության համար, որ ձեռք դնեն և աղոթեն իրենց համար: Նրանց հետ խոսելուց հետո ես հասկանում եմ, որ նրանք, ըստ էության, բժշկության կարիք չունեն. նրանք պարզապես կարիք ունեն ճիշտ սնվելու և պատշաճ հանգստանալու, որից հետո նրանց մարմինը կվերականգնվի:

Որոշ քրիստոնյաներ գրեթե նույն կերպ վատ են վարվում իրենց ներսի հոգևոր մարդու հետ, ինչպես ոմանք՝ իրենց ֆիզիկական մարմնի հետ: Այս քրիստոնյաները չեն սնվում ամբողջ Խոսքով: Նրանց պարզապես դուր է գալիս «քաղցրավենիքը»: Նրանց ականջները, այսպես ասած, «մարմաջում» են, և նրանք միայն լսում են իրենց ուզած ուսմունքը: Երբեմն նրանց նույնիսկ չի հետաքրքրում՝ տվյալ ուսմունքը վարդապետական տեսանկյունից առողջ է, թե ոչ: Նրանք կարող են լավ զգացողություններով հեռանալ ծառայությունից, քանի դեռ լսում են այն ուղերձը, որ ցանկանում են լսել:

Կարծես թե այսօր շատ մարդիկ չեն ցանկանում լսել կամ որևէ բան ասել Հիսուսի արյան, ճիշտ ու սխալի կամ Երկնքի ու դժոխքի մասին: Այլևս ոչ ոք ոչինչ չի ասում դատաստանի մասին: Սակայն մենք պետք է սովորենք դատել ինքներս մեզ. որոշել, թե ինչ կյանքով պիտի ապրենք այսօր, որպեսզի ունենանք այն կյանքը, որ Աստված նախասահմանել է մեզ համար վաղը:

## **Մեղավոր՝ հանցագործի հետ կապ ունենալու հիմքով**

Բոլորն անմիջապես պատրաստ են սխալ համարելու սեռական մեղքն ու սպանությունը, բայց երբ ուսումնասիրում եք Աստծո Խոսքը, հայտնաբերում եք, որ Աստված, առնվազն, հավասարապես

դեմ է այնպիսի մեղքերին, ինչպիսիք են ստելը և խաբելը:

Որոշ մարդիկ, որոնք զբաղվում են սեփական գործով, խաբում են կառավարությանը՝ ապրանք վաճառելիս կամ ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով գործարքներ անելով: Նրանք ասում են. «Վճարեք կանխիկ: Ես չեմ ուզում որևէ գրառում անել այս գործարքի վերաբերյալ»: Ես չեմ սիրում գործ ունենալ այսպիսի մարդկանց հետ: Ես չեմ ցանկանում հանցագործության մասնակից լինել: Երբեմն կապալառուների հետ գործ ունենալիս մինչև նրանց հետ չեք աշխատում, չեք իմանում, որ նրանք այդպես են վարվում: Այսպիսի դեպքերում վճարեք նրանց, որքան պարտական եք, և ճանապարհ դրեք:

Երբեմն մարդն ինքը որևէ սխալ չի անում, սակայն մասնակից է լինում մեկ ուրիշի հանցանքին, և դա նրան դարձնում է մեղավոր՝ հանցագործի հետ կապ ունենալու պատճառով: Օրենքը համարում է, որ նա նույնպես կարող էր այդ արարքը գործած լինել:

Ինչ-որ մեկը, ով խաբում է իր եկամտահարկի հարցում, կարող է վիճել՝ ասելով. «Դե՛, ինձ դուր չի գալիս այս երկրի հարկային համակարգը»:

Բայց երբ խոսքը վերաբերում է հարկեր վճարելուն, Աստվածաշնչում ասվում է՝ «կայսրինը կայսրին տվեք» (Ղուկ. 20.25): Եթե ուսումնասիրեք պատմությունը, կիմանաք, որ կայսրը միշտ չէ, որ ճիշտ էր վարվում: Սակայն Հիսուսն աշակերտներին ասաց, որ կայսրինը կայսրին տան: Այլ խոսքով՝ Հիսուսն ասում էր, որ եթե մենք անենք այն, ինչ ճիշտ է համարվում, Նա հոգ կտանի մեզ համար:

## **Հաջողություն ընտանիքում**

Մենք տեսանք, թե ինչպես է վաղը սկսվում այսօր ձեր անձնական կյանքում: Այժմ եկե՛ք ուսումնասիրենք, թե ինչպես է վաղը սկսվում այսօր ձեր ընտանիքում: Ձեր փոխհարաբերությունները ձեր կողակցի, երեխաների, եղբայրների և քույրերի հետ սկսվում են այսօր, ոչ թե վաղը: Օրինակ՝ արդյո՞ք ձեր տանը տիրում է այն սերը, որ պիտի լինի ամուսնու և կնոջ միջև:

Ինչ-որ մեկը գուցե ասում է. «Մենք վաղվանից շտկելու ենք մեր փոխհարաբերությունները: Մենք վաղվանից քայլելու ենք սիրո մեջ»: Այդ վերաբերմունքով երբեք չես սկսի: Վաղը կդառնա այսօր, և աչքը կթարթես, այն կդառնա երեկ:

Դուք պետք է սկսեք այսօր կառուցել այն, ինչ ցանկանում եք վաղը կանգուն տեսնել: Մենք բոլորս ճանաչում ենք մարդկանց, որոնք

տարիներ շարունակ ասում են. «Ես վաղվանից մարզվելու եմ» կամ «Ես վաղվանից դիետա եմ պահելու»:

Հիշում եմ, մի ժամանակ ես ասում էի, որ պատրաստվում եմ նիհարելու և սկսելու մարզվել: Եվ մի օր ես վերջապես ասացի՝ «Վաղը սկսվում է այսօր», և սկսեցի մարզվել: Առաջին երեք շաբաթում ես կորցրի գրեթե 5.5 կգ:

Ես շարունակ հետաձգում էի մինչև վաղը այն, ինչ պետք է արվեր այսօր: Եթե ես շարունակեի այդպես անել, երբեք չէի սկսի մարզվել ու երբեք էլ չէի նիհարի: Ու դարձյալ կասեի. «Ես պատրաստվում եմ մարզվելու: Ես կանեմ դա *վաղը*»:

Ծնողներ, մենք պետք է մեր երեխաներին մեծացնենք խրատով և Տիրոջ ուսմունքով (Եփես. 6.4): Արդյո՞ք դուք այն ծնողն եք, որ իր երեխաներին դաստիարակում է Աստծո խոսքին համապատասխան: Դուք դաստիարակում եք այսօր, որպեսզի արդյունքները տեսնեք վաղը:

Արդյո՞ք ճիշտ կերպով եք առաջնորդում ձեր ընտանիքին՝ ուսուցանելով և օրինակ ծառայելով: Վաղը սկսվում է այսօր նաև ձեր ընտանիքում: Այն, թե ինչպիսին կլինի ձեր փոքրիկ երեխան, երբ դառնա պատանի և չափահաս, կախված է նրանից, թե ինչ եք նրան սովորեցնում և ինչպես եք ապրում նրա առաջ այսօր:

## Հաջողություն եկեղեցում

Վաղը սկսվում է այսօր ձեր կյանքում, ձեր ընտանիքում և ձեր տեղական եկեղեցում: Ես արդեն խոսել եմ այն մասին, թե ինչ է սա նշանակում ձեր անձնական կյանքում և ձեր ընտանիքում: Այժմ ուզում եմ՝ նայենք, թե ինչպես է սա կիրառվում տեղական եկեղեցում:

Ձեր տեղական եկեղեցու ուժը կախված է նրա անդամների հոգևոր կյանքի ուժից: Դուք լսել եք այն ասացվածքը, որ շղթան ամուր է միայն այնքանով, որքանով ամուր է նրա ամենաթույլ օղակը:

Այդ շղթայի մնացած մասը կարող է այնքան ամուր լինել, որ 31.751 կգ զանգված ունեցող բեռնատար քաշի: Սակայն եթե այս կամ այն պատճառով ընդամենը մեկ օղակը կորցրած լինի այդքան ծանրություն քաշելու իր կարողությունը, ապա շղթան այդ թույլ օղակում կքանդվի՝ անպիտան դարձնելով ամբողջ շղթան: Գրեթե նույն կերպ յուրաքանչյուր քրիստոնյա հավատացյալների տեղական մարմնի, ինչպես նաև, ամբողջությամբ վերցրած, Քրիստոսի Մարմնի մի մաս է: Ամեն մի քրիստոնյա պետք է իր մասն անի, որ-

պեսզի հոգևորապես ուժեղ մնա և քաջի իր բաժին ծանրությունը Տիրոջը ծառայելու գործում: Թե՛ տեղական մարմինը և թե՛ ամբողջական Մարմինը հոգևորապես ուժեղ են միայն այնքան, որքան ուժեղ է ամենաթույլ անհատը:

Դա պատճառներից մեկն է, որը ստիպում է մեզ անհանգստանալ միմյանց համար: Օրինակ՝ ինչ եք անում, երբ երկու կամ երեք ծառայություն է անցնում, և եկեղեցում չեք տեսնում ինչ-որ անձնավորության կամ ընտանիքի: Փորձում եք կապվել նրանց հետ կամ մեկ ուրիշից հարցնել նրանց մասին, թե՛ պարզապես թողնում եք, որ նրանք գնան իրենց ճանապարհով: Հովվական անձնակազմը չի կարող կապ պահպանել բոլորի հետ: Բայց դուք՝ որպես տեղական եկեղեցու անդամ, կարող եք կապ հաստատել այդ մարդկանցից մի քանիսի հետ: Երբեմն նրանց պետք է ընդամենը քաջալերող խոսք ասել. «Հեյ, ես նկատեցի, որ դուք եկեղեցում չեք: Կարո՞ղ եմ ինչ-որ ձևով օգնել ձեզ: Կարո՞ղ եմ աղոթել ձեզ հետ: Միգուցե մեքենայի կարիք ունե՞ք»: Մենք՝ որպես եկեղեցի, պետք է հոգ տանենք մեր մարդկանց համար և օգնենք նրանց՝ հոգևորապես ուժեղ մնալու:

Կան շատ մարդիկ, որոնք եկեղեցում, ինչպես ես եմ անվանում, անվճար ճանապարհորդում են: Այլ խոսքով՝ նրանք ֆինանսապես չեն աջակցում եկեղեցուն, սակայն վայելում են այն օգուտները, որոնք արդյունք են ուրիշների՝ եկեղեցին ֆինանսապես աջակցելու: Այս «անվճար ճանապարհորդները» հնձում են այն, ինչ ցանել են ուրիշները: Նրանք երբեք չեն մասնակցում տեղական եկեղեցուն աջակցելու գործին: Նրանք միայն ցանկանում են օգուտ ստանալ եկեղեցուց:

Միևնույն ժամանակ, երբ այցելուները գալիս են «Ռեմա» աստվածաշնչյան եկեղեցի ու տեսնում այն բոլոր ծառայությունները, որ մենք ունենք, սկսում են հնձել այն, ինչ ժամանակի ընթացքում ուրիշներն են ցանել: Հետո, երբ *նրանք* ներգրավվեն և սկսեն ցանել, նրանցից հետո եկողները կհնձեն *նրանց* նվիրատվության օգուտները: Դա հիասքանչ է, և այդպես էլ պետք է լինի: Խնդիրը սկսվում է այն ժամանակ, երբ չափից շատ մարդիկ պարզապես շարունակում են «անվճար ճանապարհորդել»: Նրանք ճանապարհորդում են մեկ ուրիշի տասանորդի և նվիրատվության հաշվին:

Իրականում մարդը կարող է անվճար ճանապարհորդել միայն այնքան ժամանակ, մինչև որ վարորդը արգելակի մեքենան, բացի դուռը և ասի. «Սրանից ավելի չեք կարող գնալ»: Նույն կերպ Աստված

է գործում. մարդը կարող է «անվճար ճանապարհորդել» միայն այն-  
քան ժամանակ, մինչև որ Աստված պահանջի, որ նա ներդրում անի  
Իր գործի մեջ:

Երբ խոսքը վերաբերում է տեղական եկեղեցուն, մենք պետք է  
հոգանք ապագայի մասին նույնչափ, որչափ հոգ ենք տանում մեր  
վաղվա օրվա համար: Բայց շատերն ապրում են այսօրվա օրով և  
բոլորովին չեն մտածում վաղվա մասին: Նույնպիսի վերաբերմունք  
նրանք ունեն եկեղեցու հանդեպ: Ես լսել եմ, թե ինչպես են եկեղե-  
ցում սովորեցնում. «Մի՛ մտածեք վաղվա մասին: Ապրե՛ք այսօրվա  
կյանքով»: Եթե դուք այսօր չապրեք ձեր կյանքը՝ մտածելով վաղվա  
մասին, ապա հնարավոր է վաղը, այսինքն՝ ապագան, չլինի: Մենք  
պետք է հոգանք վաղվա համար, որովհետև «վաղը» իր մեջ հույս է  
պարունակում: Մենք զոհում ենք, աշխատում, աղոթում, եկեղեցուն  
նվիրատվություն կատարում այսօր, որպեսզի վաղը քաղենք պտուղ-  
ներ մեր ընտանիքի և ուրիշների համար:

Վաղը սկսվում է այսօր: Վաղը սկսվում է այսօր մեր անձնական  
քրիստոնեական կյանքում: Եվ մեր վաղվա ընտանիքները կախված  
են մեր այսօրվա ընտանիքներից: Մեր վաղվա եկեղեցին կլինի այն-  
պիսին, ինչպիսին մենք այն դարձնում ենք այսօր: Հիշե՛ք, մենք պետք  
է այսօր նվիրաբերենք մեզ այն բանի համար, ինչ Տերը կանի վաղը:

Վաղը սկսվում է այսօր: Ամհր բռնեք այդ միտքը և *այսօր* սկսեք  
ինչ-որ բան անել ձեր վաղվա համար:





## Գլուխ 4

### Ինչին եք նայում

*Ունեցե՛ք մեծ խիզախություն:  
Աստված ավելի ուժեղ է, քան սատրանան:  
Մենք հաղթող կողմում ենք:  
Զոն Չեփմեն*



Ապագային դեմ առ դեմ կանգնելիս կյանքի իրավիճակներն ու հանգամանքները կարող են ճնշող թվալ: Բայց դա միայն բնականում է: Եթե բացեք ձեր հոգևոր աչքերը, հստակ կտեսնեք, որ Աստված և ամբողջ Երկինքը ձեր կողմից են:

Դ Թագավորաց 6-րդ գլխում կարդում ենք, որ Եղիսեի ծառա Գեեզիան մի առավոտ դուրս եկավ ու տեսավ, որ ամբողջ քաղաքը շրջապատված էր ասորիների զորքով:

**Դ Թագավորաց 6.14-15**

**14 (Ասորիների թագավորը).... այնտեղ ձիեր և կառքեր և մեծ զորք ուղարկեց, և սրանք գիշերը եկան ու քաղաքը պաշարեցին:**

**15 Եվ Աստծո մարդու ծառան (Գեեզիան) առավոտ կանուխ վեր կացավ և դուրս եկավ, և ահա զորքը պատել էր քաղաքը, նաև ձիերն ու կառքերը: Եվ նրա ծառան ասաց նրան. «Վայ, տեր իմ, ինչ անենք»:**

Գեեզիան կենտրոնացավ այն բանի վրա, ինչ տեղի էր ունենում բնականում, և խուճապահար եղավ: Մենք ունենք *մարմնավոր* կամ

բնական տեսանկյուն: Բայց կա մեկ այլ՝ *հոգևոր* կամ գերբնական տեսանկյուն:

Ուզում եմ ձեզ մի հարց տալ: Երբ կանգնում եք քննության կամ փորձության առաջ, ինչի՞ն եք նայում: Ձեր տեսանկյունը կորոշի ձեր վերաբերմունքը՝ կլինե՞ք վերևում, թե՞ ներքևում, իսկ ձեր վերաբերմունքը կորոշի ձեր արդյունքը՝ կստանան՞ք, թե՞ չե՞ք ստանա այն ամենը, ինչ Աստված ունի ձեզ համար:

Գեեզիան նայում էր այն բանին, ինչ կարող էր տեսնել ֆիզիկական աչքերով, ուստի նա զարհուրեց: Բայց Եղիսեն նրան ասաց՝ մի՛ վախեցիր:

**Դ Թագավորաց 6.16-17**

**16 Նա (Եղիսեն) էլ ասաց. «Մի՛ վախեցիր, որովհետև մեզ հետ եղողները շատ են, քան թե նրանց հետ եղողները»:**

**17 Եվ Եղիսեն աղոթք արեց և ասաց. «Ո՛վ Տեր, բաց նրա աչքերը, որ տեսնի»:** Եվ Տերը բացեց ծառայի աչքերը, և նա տեսավ, և ահա սարը լիքն էր հրեղեն ձիերով և կառքերով Եղիսեի շուրջը:

Եղիսեն ուներ հոգևոր տեսանկյուն: Նա հոգևոր տեսանկյունից նկատեց, որ Աստծո բանակը մոտ էր, ու թեև բնականում այն անտեսանելի, անլսելի և աննկատելի էր, սակայն ավելի զորավոր էր, քան ասորիների զորքը:

Այն տեսանկյունը, որ դուք ունեք, կորոշի՝ գործելու եք վախի ոգով, թե՞ զորության հոգով: *Բնական* տեսանկյունը կստիպի ձեզ գործել *վախի* ոգով, մինչդեռ *գերբնական* տեսանկյունը կստիպի գործել *զորության* հոգով:

**Բ Տիմոթեոս 1.7**

**7 Որովհետև Աստված չտվեց մեզ ԵՐԿՉՈՏՈՒԹՅԱՆ հոգի, այլ ՁՈՐՈՒԹՅԱՆ և սիրո և զգաստության:**

Աստված մեզ չի տվել *վախի* ոգի, այլ *զորության* հոգի: Այս խոսքը մասնավորապես վախի ոգու և զորության հոգու մասին է: Եվ գոհություն Աստծուն, որ մենք ունենք զորության հոգի:

Եթե շարունակեք ձեր իրավիճակին նայել բնական տեսանկյունից, անկասկած տեղիք կտաք վախի ոգուն: Դա կարող է խուճապի, անարժանության, անհամապատասխանության, հուսահատության կամ ընկճվածության զգացումներ առաջացնել՝ վերահսկելով ձեզ և ազդելով ձեր կյանքի վրա: Բայց երբ ձեր իրավիճակին

նայեք *գերբնական* տեսանկյունից, կենթարկվեք զորության, սիրո և զգաստության հոգուն:

Եկեք նայենք Բ Տիմոթեոսի 1.7-րդ խոսքի վերջին կետին, որը խոսում է զգաստության մասին: Աստված տվել է մեզ ոչ թե շփոթության, այլ զգաստության հոգի: Եթե այսօր խոսեք մարդկանց հետ, ապա կհայտնաբերեք, որ շատերը շփոթված են: Նրանք չգիտեն, թե ովքեր են իրենք կամ ուր են գնում: Նրանք խուճապի մեջ են վախի ոգու պատճառով: Նրանք վախենում են, որովհետև չգիտեն, թե ինչ է լինելու վաղը:

Բարեկամ, ուզում եմ ձեզ մի բան ասել: Ես շփոթված չեմ: Ես գիտեմ, թե ով եմ ես Քրիստոսում, և գիտեմ, թե ուր եմ գնում: Ես նույնիսկ գիտեմ, թե ինչ է լինելու վաղը: Ինչ-որ մեկը կարող է հարցնել. «Ինչպե՞ս գիտես, թե ինչ է լինելու վաղը»: Ես գիտեմ, թե ինչ է լինելու, որովհետև գիտեմ, թե ինչ է գրված Աստվածաշնչում: Այնտեղ գրված է, որ Աստված մեզ միշտ հաղթող է անում Քրիստոսում (Բ Կորնթ. 2.14):

Դուք եք որոշում՝ գործելու եք բնական, թե գերբնական ոլորտում, մարմնով, թե հոգով, վախով, թե զորությամբ:

## Ճշմարտությունը կազատի ձեզ

Եղիսեի ծառան ուշադրությունը կենտրոնացրել էր նրանց վրա, ովքեր կանգնել էին իր դեմ: Նմանապես չափազանց շատ քրիստոնյաներ միշտ նայում են նրան, թե ինչ է սատանան անում, կամ խոսում են այն մասին, թե ինչ սատանան ասաց:

Ո՞ւմ են հետաքրքրում սատանայի ասածները: Նա ստախոս է. եթե ցանկանար էլ, նա չէր կարողանա ասել ճշմարտությունը: Սատանան չգիտի ամեն ինչ. նա պարզապես կարծում է, թե գիտի: Նույնիսկ իրական կյանքում մենք չենք ցանկանում լսել որևէ մեկին, ով խոսում է այն մասին, ինչ *կարծում է*, թե գիտի:

Օրինակ՝ դատարանում մարդու կարծիքը կամ այն, ինչ նա *կարծում է*, որևէ նշանակություն չունի: Եթե որևէ մեկը՝ որպես վկա, սկսի հայտնել իր կարծիքը, հակառակորդ փաստաբանը հավանաբար կառարկի: Եվ մեծ մասամբ դատավորը կվճռի, որ վկայի ասածը չի ընդունվում որպես ապացույց: Ինչո՞ւ: Որովհետև նրանք միայն ցանկանում են լսել այն, ինչ մարդիկ *գիտեն*:

Աստված *գիտի*, թե ինչի մասին է Ինքը խոսում: Հովհաննեսի Ավետարանի 8.32-րդ խոսքում գրված է. «Եվ ճշմարտությունը կճանաչեք, և ճշմարտությունը կազատի ձեզ»: Ծշմարտությունը կազա-

տի ձեզ, այլ ոչ թե այն, ինչ ասել է ինչ-որ քարոզիչ, ոչ թե այն, ինչ մտածում կամ կարծում է ինչ-որ մեկը: Ճշմարտությունն իմանալը ձեզ զորություն կտա:

## **Նայե՛ք բնականից այն կողմ**

Ես ընդունում եմ, որ հեշտ է ենթարկվել մարմնի կամ հանգամանքների ազդեցությանը, երբ տեսնում եք այն ամենը, ինչ այսօր կատարվում է աշխարհում: Հաճախ աշխարհն այդքան էլ գրավիչ վայր չէ: Շատ բաներ են դուրս գալիս մեր դեմ՝ որպես հավատացյալների, որովհետև սատանան փորձում է կործանել մեզ:

Սակայն երբ սկսում եք կենտրոնանալ ձեր դեմ դուրս եկող բնական բաների վրա, ընտրում եք պարտության ուղին: Դուք չեք կարող կենտրոնանալ ֆիզիկական երևույթների վրա և պահել ձեր հավատքը: Դուք պետք է դուրս գաք բնականից և մտնեք գերբնականի մեջ: Պետք է ունենաք աչքեր, որոնք նայում են վեր այն ամենից, ինչ կարող եք տեսնել բնականում: Բ Կորնթացիների 4.18-րդ խոսքը հստակեցնում է այս միտքը.

### **Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 4.18**

**18 Որ ԱՅՍ ԵՐԵՎՈՂ ԲԱՆԵՐԻՆ ՉԵՆՔ ՆԱՅՈՒՄ, ԱՅԼ ԱՆԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻՆ, որովհետև երևողները ժԱՄԱ-ՆԱԿԱՎՈՐ են, իսկ չերևողները՝ հավիտենական:**

Սա ճիշտ և ճիշտ համապատասխանում է նրան, ինչ կարդում ենք Դ Թագավորաց 6.16-րդ և 17-րդ խոսքերում: Մենք գիտենք, որ այն, ինչ Եղիսեի ծառա Գեեզիան տեսավ բնականում, ժամանակավոր էր, որովհետև համաձայն Բ Կորնթացիների 4.18-ի՝ «...երևողները ժամանակավոր են, իսկ չերևողները՝ հավիտենական»: Երբ Գեեզիան կարողացավ թափանցել գերբնական ոլորտ, տեսավ Աստծո զորավոր բանակը, որ պատրաստվում էր պարտության մատնելու թշնամուն:

Հաճախ ամենակարևորը հենց այն բաներն են, որոնք չեք կարողանում տեսնել: Այն բաները, որ չեք կարողանում տեսնել՝ Հոգու հավիտենական բաները, հարատև են: Օրինակ՝ դուք չեք կարող տեսնել Աստծուն, սակայն Նա ամենուր է՝ ամեն տեղ ամեն ժամանակ: Նրան չեք կարող տեսնել, սակայն Նա ձեզ հետ է:

Եթե նայեք միայն երևացող բաներին, կպարտվեք, բայց եթե նա-

յեք չերևացող բաներին, կունենաք հաղթանակ և ձեր իրավիճակի մասին կասեք այն, ինչ Աստված է ասում: Հռոմեացիներին ուղղված թղթի 4.17-րդ խոսքում գրված է, որ Աստված չլինող բաները լինողի պես է կանչում:

**ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 4.17**

**17 Ինչպես որ էլ գրված է, թե՛ շատ ազգերի հայր արի քեզ Աստծո առաջ, որին հավատաց, որ մեռելներին կենդանի է անում, ԵՎ ՉԼԻՆՈՂ ԲԱՆԵՐԸ ԼԻՆՈՂԻ ՊԵՍ Է ԿԱՆՉՈՒՄ:**

Երբ հրաժարվում եք բնական երևույթներին նայելուց և սկսում եք ուշադրությունը կենտրոնացնել գերբնականի վրա, դուք նույնպես կարող եք սկսել չլինող բաները լինողի պես կանչել:

Ինչպե՞ս եք «չլինող բաները լինողի պես կանչում»: Դե՛, երբ չեք տեսնում բժշկություն, սկսեք ձեր մարմինը բժշկված անվանել: Տեսնում եք ձեր բժշկությունը, թե ոչ, այն գոյություն ունի: Հավանաբար սկզբում չեք տեսնի բժշկությունը, բայց, այնուամենայնիվ, այն գոյություն ունի: Ու շատ շուտով այն ֆիզիկապես կդրսևորվի, ինչը կտեսնեք ձեր աչքերով:

**Հավատքի աչքեր**

Ինչի՞ն էք դուք նայում: Արդյո՞ք Եղիսեի ծառայի պես նայում եք միայն այն բաներին, ինչ կատարվում է ձեր շուրջը: Թե՛ Եղիսե մարգարեի պես նայում եք հավատքի աչքերով: Երբ նայում եք հավատքի աչքերով, իրերն այլ կերպ եք տեսնում: Տեսնում եք բժշկություն և առողջություն այն դեպքում, երբ հանգամանքները խոսում են հիվանդության և տկարության մասին: Տեսնում եք բարգավաճում, երբ հանգամանքները խոսում են աղքատության և պակասության մասին: Տեսնում եք հաղթանակ, երբ հանգամանքները խոսում են պարտության մասին:

Երբ մենք կառուցում էինք «Ռեմա» աստվածաշնչյան եկեղեցու դահլիճը, ոմանք ասում էին. «Դա հնարավոր չէ անել: Նման բան երբևէ չի կառուցվել»: Իրականում մետաղաշինական ընկերությունը, որի հետ պայմանագիր էինք կնքել, ստիպված եղավ գնել համակարգչային նոր ծրագիր՝ ինժեներական բոլոր հաշվարկները կատարելու համար:

Ես գնում էի շինհրապարակ, որտեղ բացի աղբակույտից ոչինչ

չկար: Երբեմն ինձ հետ տանում էի հովվական անձնակազմին: Ես կանգնում էի այնտեղ և ցույց էի տալիս. «Ահա ամբիոնը: Նստա-րանները սկսվում են այստեղից և շարունակվում մինչև վերև: Պատշգամբն այնտեղ է, իսկ երգչախումբն ու նվագախումբը՝ հենց այստեղ: Միթե չեք կարող պարզապես տեսնել»:

Սկզբում բոլորն ասում էին. «Ո՛չ»: Սակայն, գոհություն Աստծուն, կարճ ժամանակ անց նրանք սկսեցին բռնվել տեսիլքից: Ես կարողանում էի «տեսնել» այն, ինչը չկար իրականում:

Դա այն է, ինչ դուք պետք է անեք ձեր անձնական կյանքում: Երբ սատանան ասի, որ այն, ինչի համար հավատում եք Աստծուն, չի կատարվելու, դուք պետք է տեսնեք, թե ինչպես է այն տեղի ունենում՝ ոչ թե մարմնի, այլ հոգու աչքերով:

Ես հրաժարվում էի մարմնի ազդեցությանը և վախի՛ն ենթարկվելուց, երբ մարդիկ ինձ հարցնում էին. «Ինչպե՞ս եք վճարելու այդ շենքի համար»: Իմ պատասխանն էր. «Իրականում ես չգիտեմ: Բայց ես նայում եմ նրան, ինչ չեմ կարող տեսնել: Ես գիտեմ, որ Աստված ինձ ասել է, որ այս շենքը լինելու է այս ուսումնական տարածքի ամենահեշտ վճարվող շինությունը»: Եվ այսօր ես կարող եմ վկայել, որ այդպես էլ եղավ:

## **Ձեր տեսանկյունը որոշում է, թե ինչ արդյունք կունենաք**

Այն, թե ինչին եք դուք նայում, կտանի ձեզ դեպի հաղթանակ կամ պարտություն: Դուք պետք է սկսեք նայել չերևացող բաներին և չլինող բաները լինողի պես կանչել (Հռոմ. 4.17): Թեև չեք կարողանում դա տեսնել, միևնույնն է, պիտի սկսեք հավատքով ասել. «Ես տեսնում եմ դա»:

Սկսեք տեսնել, որ ձեր կյանքում լավ բաներ են կատարվում: Սատանան միգուցե երկար ժամանակ ձեզ ճնշված է պահել: Միգուցե նա ձեզ ասել է, որ ձեր երազանքները երբեք չեն իրականանա, և միգուցե այդպես էլ թվում է: Բայց սատանան ինչպե՞ս կարող է իմանալ: Նա ստախոս է: Նայեք իրականությունից այն կողմ և տեսեք արդեն կատարված այն, ինչին հավատում եք: Ապա սկսեք դա կատարված կանչել:

Դուք պետք է հասկանաք, որ իրականում միայն երկու տեսանկյուն կա՝ մարմնավոր կամ բնական և հոգևոր կամ գերբնական: Այնուհետև որոշեք, թե որ տեսանկյունն եք ունենալու: Ինչպես ավե-

լի վաղ ասացի, ձեր տեսանկյունը կորոշի, թե ինչ արդյունք դուք կունենաք: Նշանակություն չունի, թե որքան շատ եք աղոթում: Այլ խոսքով՝ ձեր աղոթքի կյանքը միշտ չէ, որ որոշում է, թե ինչ արդյունք կունենաք: Ես բնավ չեմ նվազեցնում աղոթքի կարևորությունը: Ես հավատում եմ աղոթքին: Սակայն դուք կարող եք աղոթել, ապա սկսել կենտրոնանալ սխալ բաների վրա և խոսել դրանց մասին, ու ձեր աղոթքն իզուր կլինի:

Եթե նայեք ձեր հանգամանքներին ֆիզիկական աչքերով, շուտով ձեռքներիդ կծալեք ու կասեք. «Ի՞նչ եմ հիմա անելու»: Բայց երբ նայեք հոգևոր աչքերով, ինչպես Եղիսեի ծառան վերջապես արեց, կտեսնեք, որ «*ձեզ հեղեղները շատ են, քան թե նրանց հեղեղները*» (Դ Թագ. 6.16): Աստված արդեն ձեր փոխարեն հոգ է տարել այդ իրավիճակի մասին:

Ուղղեք ձեր աչքերը գերբնականի վրա և սկսեք գործել Աստծո խոսքին համապատասխան: Տեսեք ձեր հաջողությունը և հաղթանակը հոգու աչքերով:





## Գլուխ 5

### Ինչպիսի վերաբերմունք ունեք

*Կարողությունն այն է, ինչ ընդունակ եք անելու:*

*Դրդապատկառը որոշում է, թե ինչ եք անում:*

*Վերաբերմունքը որոշում է, թե որքան լավ եք դա անում:*

*Լու Հոլթս*



Ինչպես ասացի նախորդ գլխում, ձեր տեսանկյունը որոշում է, թե ինչ արդյունք դուք կունենաք: Սա վերաբերում է ոչ միայն նրան, թե ինչին եք դուք նայում, այլև նրան, թե ինչպիսի վերաբերմունք ունեք: Ապագան գրոհով կնվաճեք, թե ոչ, կախված է մի քանի բաներից. դրանցից մեկը ձեր վերաբերմունքն է:

Մենք բոլորս լսել ենք, թե ինչպես են մարդիկ ասում. «Այսինչը վերևից է նայում ուրիշներին» կամ «Այսինչը վատ վերաբերվեց ինձ»: Երբեմն մենք ստիպված ենք անտեսել ուրիշների վերաբերմունքը, այսպես ասած՝ կրճտացնել մեր ատամները և առաջ մղվել դեպի հաղթանակ:

Այս հարցում լավ օրինակ է բռնցքամարտը: Շատ անգամներ բռնցքամարտիկը ստիպված է լինում հարված ընդունել (կամ թույլ տալ, որ իրեն հարվածեն), որպեսզի կարողանա հասցնել «նոկաուտը»:

Աստծո հետ անցնելով մեր ճանապարհը՝ երբեմն կարծում ենք, թե երբեք որևէ փորձության կամ խնդրի չենք հանդիպի: Մենք մտածում ենք, որ քանի որ քայլում ենք Աստծո հետ, ճանապարհին ամեն բան հրաշալի կլինի: Սակայն ես ուզում եմ՝ դուք հասկանաք, որ եթե

քայլում եք Աստծո կամքի մեջ՝ անելով այն, ինչ Նա ցանկանում է, որ անեք, ապա ինչ-որ պահի հանդիպելու եք դիմադրության:

Հնարավոր չէ կյանքի ճանապարհներով քայլել և չհանդիպել դիմադրության: Սատանան չի սիրում Աստծո Խոսքը, ու նա կհակառակվի ձեզ ամեն անգամ, երբ սկսեք հավատալ Աստծուն որևէ բանի համար: Նա կհակառակվի ձեզ ամեն քայլափոխի: Նա այնտեղ կլինի, որպեսզի, այսպես ասած, ցատկի ձեր ուսերին և ասի, որ ձեզ չի հաջողվի դա անել:

Ես ուզում եմ, որ դուք վերհիշեք և ուշադրություն դարձնեք այն բանին, որ երբ ֆինանսական, առողջական կամ կյանքի որևէ այլ բնագավառում հարձակման ենթարկվեցիք, հակառակությունը եկավ այն ժամանակ, երբ հավատում էիք Աստծուն և մեջբերում Խոսքը: Երբ ասում եք այն, ինչ գրված է Աստծո Խոսքում, կարող եք հարձակման ենթարկվել, շատ անգամներ՝ կրոնավոր մարդկանց կողմից:

Դուք հավանաբար տեսել եք այս բանի ճշմարտացիությունը, երբ սկսել եք ապրել հավատքով, հավատալ Աստվածաշնչին այն ամենի համար, ինչ գրված է նրանում, և թողել եք ձեր կրոնական որոշ ավանդույթներ, որոնք ընդունված էին նախկին եկեղեցում:

Հնարավոր է՝ որոշ կրոնավոր մարդիկ չեն ցանկացել որևէ առնչություն ունենալ ձեզ հետ: Գուցե նրանք նույնիսկ վիրավորական են արտահայտվել ձեր հասցեին: Ես գիտեմ, որ ոմանք «հավատքի խոսքի» խարիզմատներին անվանում են մարդկանց խումբ, որոնց աստվածաբանությունն է «կանչիր և պահանջիր» կամ «դավանիր և ունեցիր»: Ես դեմ չեմ դրան. ինձ դուր են գալիս այդ անվանումները: Դրանք հնչում են այնպես, կարծես այդ խմբի մարդիկ ինչ-որ բան են ստանում: Ինձ հետաքրքրում է տիրելը: Ինձ հետաքրքրում է այն ամենն ունենալը, ինչ Աստծո Խոսքում գրված է, որ իմն է:

Ես չեմ խոսում ինչ-որ մեկի եկեղեցական դավանանքի կամ վարդապետության մասին: Ես խոսում եմ այն մասին, թե ինչ է ասվում Աստվածաշնչում: Մենք չենք կարող թույլ տալ, որ որևէ մեկը ստիպի մեզ, որ դադարենք հավատալուց նրան, ինչ գրված է Աստվածաշնչում:

## Սուրբ Հոգու զորությունը

Գործք առաքելոցում մենք կարդում ենք մի մարդու մասին, որն օրինակ է այն բանի, թե ինչպիսի վերաբերմունք պետք է ունենանք: Ստեփանոսն ուներ այնպիսի վերաբերմունք, որը մղում էր նրան ծծառայելու ու հավատալու Աստծուն՝ անկախ ամեն ինչից:

**Գործք 6.8-11**

**8** Ստեփանոսն էլ, հավատքով և զորությամբ լցված, մեծ-մեծ հրաշքեր և նշաններ էր անում ժողովրդի մեջ:

**9** Եվ վեր կացան ոմանք այն ժողովարանից, որ Լիբերտինացիների էր կոչվում, և կյուրենացիներից և աղեքսանդրացիներից և նրանցից, որ Կիլիկիայից և Ասիայից էին, և վիճաբանում էին Ստեփանոսի հետ:

**10** Եվ չէին կարողանում դեմ կենալ այն իմաստությանը և այն հոգուն, որով նա խոսում էր:

**11** Այն ժամանակ մի քանի մարդկանց հրապուրեցին, որ ասեն, թե մենք լսեցինք դրանից, որ հայիոյության բաներ էր խոսում Մովսեսի և Աստծո դեմ:

**ԳՈՐԾՔ 7.54-55**

**54** Եվ (մարդիկ), այս խոսքերը լսելով, իրենց սրտերում կատաղում էին և ատամները կրճտացնում էին նրա (Ստեփանոսի) վրա:

**55** Իսկ նա, լցված Սուրբ Հոգով, դեպի երկինքը նայեց և Աստծո փառքը տեսավ և Հիսուսին՝ կանգնած Աստծո աջ կողմում:

Գործք առաքելոց 6.9-րդ խոսքում գրված է, որ Ստեփանոսի դեմ հակառակություն բարձրացավ լիբերտինացիների ժողովարանի անդամներից. հրեական մի աղանդ, որը բաղկացած էր կյուրենացիներից, աղեքսանդրացիներից, Կիլիկիայի և Ասիայի հրեաներից:

Ուշադրություն դարձրեք Գործք 6.10-րդ խոսքին. «Եվ չէին կարողանում (կրոնավոր մարդիկ) դեմ կենալ այն իմաստությանը և այն Հոգուն, որով նա (Ստեփանոսը) խոսում էր»: Եթե դուք քայլում եք Աստծո խոսքին համապատասխան և խոսում Աստծո խոսքը ձեզ շրջապատող իրավիճակներին, ոչ մի հակառակություն չի կարողանա դեմ կանգնել ձեզ: Ձեր դեմ շինված ոչ մի գործիք հաջողություն չի ունենա (Ես. 54.17):

Կրկին ուշադրություն դարձրեք, որ Գործք 6.10-ում ասվում է. «Եվ չէին կարողանում դեմ կենալ այն իմաստությանը և այն Հոգուն, որով նա խոսում էր»: Այս խոսքը չի նշանակում, որ Ստեփանոսը խոսում էր Սուրբ Հոգու մասին: Այն նշանակում է, որ ամեն բան, ինչ Ստեփանոսն ասում էր, Սուրբ Հոգուց էր մղված և լիազորված:

Գործք առաքելոց 4-րդ գլխում Պետրոսն ու Հովհաննեսը

կրոնական առաջնորդների կողմից նախատվեցին բարի գործ անելու և այն մարդուն բժշկելու համար, որը նստում էր տաճարի դռանը: Երբ կաղը բժշկվեց, նա սկսեց վազել տաճարի շուրջը՝ ցատկոտելով և փառաբանելով Աստծուն:

Երբ Պետրոսն ու Հովհաննեսը խոսեցին ատյանում, մարդիկ հարցրին. «Ինչպե՞ս են այս մարդիկ կարողանում այսպես խոսել, քանի որ նրանք տգետ են և անկիրթ»: Պետրոսն ու Հովհաննեսն այդպես էին խոսում, որովհետև Սուրբ Հոգին էր նրանց խոսել տալիս:

Հասկան՞ում ե՞ք, Սուրբ Հոգին ավելի ուժեղ է, քան ապստամբության ոգին: Սուրբ Հոգին ավելի ուժեղ է, քան հակառակության ոգին: Սուրբ Հոգին ավելի ուժեղ է, քան կրոնական ոգիները: Սուրբ Հոգին ուժեղ է ցանկացած ոգուց:

### **Ժամանակն է վերաբերմունք ցուցաբերելու**

Սուրբ Հոգին ամենակարևորն է: Ու եթե դուք թույլ տաք Նրան լիարժեք հոսել և ապրել ձեր կյանքում, ապա կձևավորեք մի վերաբերմունք, որը կստիպի ձեզ երբեք չըրջվել ու չփախչել: Դուք կունենաք վերաբերմունք, որը կստիպի ձեզ ամուր կանգնել Աստծո Խոսքի դավանության վրա:

Դուք չեք կարող պարզապես դավանել *ցանկացած բան*: Ձեր դավանությունը պետք է հիմնված լինի Աստծո Խոսքի վրա: Եթե Աստված ասել է դա, դուք ունեք իրավունք՝ ասելու դա. այդպես գրված է Աստվածաշնչում:

Մեր վերաբերմունքը պետք է լինի այսպիսին. *«Եթե Աստված ասում է ինձ ինչ-որ բան անել, ապա, անկախ հանգամանքներից, ես կանենմ դա և ամուր կկանգնեմ: Ես չեմ շրջվի ու չեմ փախչի»*:

Ստեփանոսը ցուցաբերեց հեզության վերաբերմունք, երբ հրաժարվեց պատասխան հարված տալուց կամ ֆիզիկապես պաշտպանվելուց, սակայն շատ անգամներ մենք անտեսում ենք ամենակարևոր վերաբերմունքը, որ նա ուներ, որովհետև հիանում ենք նրա հեզությամբ. նա արեց այն, ինչ ճիշտ էր, և հակահարված չտվեց: Ուշադրություն դարձրեք, որ Ստեփանոսը կարողացավ ամուր կանգնել և անել այն, ինչ ճիշտ էր, որովհետև նա ուներ այս վերաբերմունքը. «Ես արել եմ այն, ինչ Աստված կանչել է ինձ անելու, և ես չեմ զիջի իմ դիրքերը»:

Եթե մենք մտադիր ենք հաղթական կյանքով ապրել Աստծո համար, ապա պետք է ունենանք նույնպիսի վերաբերմունք: Մենք կարիք ունենք այնպիսի վերաբերմունքի, որն ասում է. «Սա այն է, ինչ

Աստված կանչել է ինձ անելու, և ինչ էլ լինի, ես կանգուն կմնամ: Ես կքայլեմ Աստծո Խոսքի ճանապարհներով: Ես կվարվեմ սիրով: Ես կդավանեմ այն, ինչ Աստված ասում է, որ պատկանում է ինձ, և կունենամ այն հաղթանակը, որն ինձ է պատկանում»:

Հնարավոր է, որ մի օր դուք էլ հայտնվեք այնպիսի դրության մեջ, ինչպիսին Ստեփանոսինն էր, երբ ամեն բան դեմ էր նրան: Միգուցե հայտնվեք այնպիսի վիճակում, երբ կարծես ամեն բան դեմ է ձեզ: Այդ իրավիճակում դուք պետք է որոշեք, թե ինչպիսի վերաբերմունք եք ունենալու:

Մենք բոլորս լսել ենք «վերաբերմունք ցուցաբերել» արտահայտությունը: Այժմ ժամանակն է որոշելու, թե ինչպիսի վերաբերմունք ենք մենք ցուցաբերելու: Արդյո՞ք որդեգրելու ենք այնպիսի վերաբերմունք, որն ասում է. «Դե՛, ես կարծում էի, թե Աստված սրա մեջ է: Աստծո Խոսքում գրված էր այսպես անել, բայց հիմա ես չգիտեմ»։ Թե՛ որդեգրելու ենք այն վերաբերմունքը, որը համարձակ հռչակում է. «Աստված ասել է դա, ես հավատում եմ դրան, և հարցը փակված է: Ես հետևում եմ Աստծո կամքին՝ անկախ ամեն ինչից»: Առաջին վերաբերմունքը ձեզ բացարձակապես ոչ մի տեղ չի տանի: Երկրորդ վերաբերմունքը ձեզ հաղթանակ կբերի:

Քրիստոնյայի՝ Երկինք գնալը կամ չգնալը չի որոշվում նրանով, թե այս վերաբերմունքներից որը նա ունի: Քրիստոնյան, որը վստահում է Հիսուսին՝ որպես Փրկչի, հավիտենությունը կանցկացնի Աստծո հետ՝ անկախ նրանից, թե հավատքում կամ հոգու մեջ նա ուժեղ է, թե ոչ: Սակայն նա, ով գնում է Երկինք դժվարին կյանք ապրելուց հետո, ցուցադրելու շատ բան չի ունենա: Ես շահագրգռված եմ նրանով, որ գնամ Երկինք՝ իմ կյանքում ընդունած լինելով այն բոլոր բարիքները, որ պատկանում են ինձ: Ես շահագրգռված չեմ, որ Աստծո Խոսքի համաձայն ինձ պատկանող որևէ բարիք մնա անձեռնմխելի: Ես մտադիր եմ օգտագործել իմ հավատքը՝ ապագան գրոհով նվաճելու համար, ու ես խոսում եմ *այս* կյանքի մասին:

## **Հաղորդակցում ընդհանուր հիմքի վրա**

Աստծո օրհնությունները ստանալու հարցում Աստծո Խոսքի հանդեպ հավատքը միշտ ազդեցություն կունենա մեր կյանքում, սակայն պարտադիր չէ, որ այն որոշի մեր Երկինք գնալը կամ չգնալը: Ես թույլ չեմ տալիս, որ փրկության համար ոչ կարևոր հարցերը ինձ հետ պահեն այն հավատացյալների հետ հաղորդակցվելուց, որոնք գուցե ինձ

պես չեն հավատում: Ումանք մշտապես մտնում են կրոնական վիճաբանությունների մեջ: Մարդիկ ինձ հարցրել են. «Ինչո՞ւ էիք շփվում այսինչի հետ: Չգիտե՞ք, թե ինչպիսին է նրա հավատքը այս կամ այն բանի վերաբերյալ»: Բարեկան, ես կհաղորդակցվեմ ցանկացած մարդու հետ, ով հավատում է Տեր Հիսուս Քրիստոսի արյան միջոցով վերստին ծնվելուն և Աստծո առաջ ուղիղ ապրելուն: Կարևոր չէ, թե ինչին է նա հավատում բժշկության վերաբերյալ: Կարևոր չէ, թե ինչին է նա հավատում Սուրբ Հոգու մկրտության վերաբերյալ: Կարևոր չէ, թե ինչին է նա հավատում բարգավաճման վերաբերյալ: Ես կարող եմ հաղորդակցվել ուրիշների հետ՝ հիմնվելով այն փաստի վրա, որ նրանք հավատում են Տեր Հիսուս Քրիստոսի արյան միջոցով վերստին ծնվելուն:

Մենք կարիք ունենք սովորելու հաղորդակցվել միմյանց հետ և անհամաձայնությունների պատճառով «չընկնել» կամ չմտնել վիճաբանության մեջ: Աստվածաշնչում մեզ ասվում է թույլ չտալ, որ վիրավորանքը տեղ ունենա մեր կյանքում: Քանի որ ինչ-որ մեկը մի փոքր տարբերվում է ձեզնից կամ մի փոքր այլ կերպ է հավատում, քան դուք, դա պատճառ չէ վիճաբանության համար: Երկինք գնալու միակ անհրաժեշտ պայմանը Տեր Հիսուս Քրիստոսի արյունով վերստին ծնված լինելն է:

Շատ քրիստոնյաներ ուզում են վիճել ջրի մկրտության շուրջ: Ինձ համար որևէ նշանակություն չունի՝ դուք ընկղմվել եք մկրտության ավազանում, լճակում, հոսող գետում, թե ձեր գլխին մի դույլ ջուր են լցրել: Միակ բանը, որ ես ուզում եմ իմանալ, սա է. լվացվել եք արդյոք արյունով: Եթե դուք վերստին ծնվել եք, լվացվել Տեր Հիսուս Քրիստոսի արյունով, ուրեմն ես կարող եմ հաղորդակցվել ձեզ հետ:

Դա է սիրո վերաբերմունքը: Հարկ չկա, որ մենք համաձայնենք յուրաքանչյուր թեմայի շուրջ, որ հաղորդակցվենք միմյանց հետ: Մենք պետք է զգույշ լինենք, որ այդպես հեշտությամբ չվիրավորվենք: Մենք պետք է զգույշ լինենք ուրիշներին դատելու հարցում և չասենք, որ նրանք չեն պատկանում Քրիստոսի Մարմնին, որովհետև մեզ պես չեն հավատում:

Սա մի հիմնահարց է, որի մասին խոսում է Պողոսը Ա Կորնթացիների 11-րդ գլխի վերջին հատվածում:

#### **Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 11.27-31**

**27 Ուրեմն ով որ այս հացն ուտի կամ Տիրոջ բաժակը խմի անարժանությամբ, նա պարտական կլինի Տիրոջ մարմնին և արյանը:**

**28 Ուրեմն թող մարդ փորձի իր անձը և ապա այն հացից ուտի և այն բաժակից խմի:**

**29 Որովհետև անարժանությամբ ուտողը և խմողը իր անձի համար դատաստան է ուտում և խմում, որ ՉԻ ՈՐՈՇՈՒՄ ՏԻՐՈՋ ՄԱՐՄԻՆԸ:**

**30 Նրա համար էլ ձեր մեջ շատ հիվանդներ և ցավագարներ կան, և շատերն էլ ննջած են:**

**31 Որովհետև եթե մեր անձերը դատեինք, չէինք դատապարտվի:**

Տիրոջ Մարմինը չորոշելու եղանակներից մեկը (29-րդ խոսք) Քրիստոսի ամբողջ Մարմինը չընդունելն է: Քանի որ դուք ինչ-որ մեկի հետ համաձայն չեք որևէ փոքր թեմայի շուրջ, դա չի նշանակում, որ նա Քրիստոսի Մարմնի անդամ չէ: Մենք պետք է մնանք Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանի հետ և շարունակենք քայլել սիրո մեջ՝ «որոշելով Տիրոջ Մարմինը»:

Երբ հայտնվում եք այնպիսի իրավիճակներում, որտեղ համաձայն չեք ինչ-որ մեկի հետ, պարզապես շարունակեք ունենալ սիրո վերաբերմունք, ու պահպանեք այն վերաբերմունքը, որն ասում է. «Ես չեմ կարող պարտվել, ու ես չեմ հանձնվի»: Անկախ նրանից, թե ինչ են ուրիշներն ասում՝ մի՛ դադարեք Աստծո հոսքին հավատալուց և սիրո մեջ քայլելուց: Այդպիսի վերաբերմունքով երբեք չեք պարտվի:

### **Հանձնվողները երբեք չեն հաղթում**

Կարող եք անհաջողակ լինել միայն այն դեպքում, երբ ինչ-որ բանում ձախողվելուց հետո հրաժարվեք, այսպես ասած, ձեզ հավաքելուց և առաջ գնալուց: Քանի դեռ չեք հրաժարվում առաջ գնալուց, դուք ձախողվել եք միայն այն բանում, ինչ փորձել եք: Մարդը կարող է *ձախողվել*, սակայն դա նրան *անհաջողակ* չի դարձնում: Նույնիսկ եթե ձեզ գետնին են տապալում, դուք անհաջողակ չեք, եթե չեք մնում գետնին: Եթե ոտքի եք կանգնում և շարունակում ապրել, դուք անհաջողակ չեք: Աստված չի փնտրում կատարյալ մարդկանց: Նա փնտրում է մարդկանց, որոնք պատրաստ են ասելու. «Ես հետևելու եմ Աստծուն՝ անկախ ամեն ինչից»:

Եթե հայտնվել եք այնպիսի իրավիճակում, որ ամեն բան ձախողել եք, պարզապես ապաշխարեք և ասեք. «Տեր, ես սխալվել եմ: Խնդրում եմ, ներիր ինձ»: Ապա ներողություն խնդրեք նաև նրան-



ցից, ումից պետք է ներողություն խնդրել: Այնուհետև վեր կացեք, առանց շարժվեք ու հետ մի՛ նայեք:

Շատ-շատերը «վրան են խփում» այնտեղ, որտեղ ձախողվում են: Դա վատ տեղ է՝ մնալու համար, որովհետև դուք ընկղմվում եք տրտմության և ինքնախղճահարության մեջ՝ ասելով. «Եթե չլինեք այսինչ բանը, ես չէի հայտնվի այս խառնաշփոթի մեջ»: Եթե դուք ցանկանում եք գրոհով նվաճել ապագան և լինել հաջողակ մարդ Աստծո համար, ուրեմն վեր կացեք, տրորեք խարույկի մոխիրը, հավաքեք վրանը, պարագաները և առանց շարժվեք Աստծո համար:

### Հաստատ կանգնեք

Ես հիշում եմ, թե ինչ էր հայրս ասում ամեն անգամ, երբ իմ ընտանիքը խնդրի առաջ էր կանգնում: Անկախ խնդրից՝ հայրս ասում էր. «Սա պարզապես մեկ այլ հնարավորություն է ապացուցելու, որ Աստծո Խոսքը գործում է»: Այսպիսին պետք է լինի ձեր վերաբերմունքը, երբ բախվում եք որևէ խնդրի:

Դուք կարող եք նայել ձեր խնդրին ու ասել. «Օ՛հ, ինչ եմ հիմա անելու»: Կամ կարող եք նայել խնդրին Աստծո Խոսքի լույսի ներքո ու ասել. «Սա ինձ համար մեկ այլ հնարավորություն է ապացուցելու, որ Աստծո Խոսքը գործում է»:

Միզուցե այսօր դուք բախվել եք որոշ խոչընդոտների: Ամոհյալ կանգնեք Աստծո Խոսքի վրա: Առանց շարժվեք՝ ապրելով Աստծո Խոսքին համապատասխան: Մոռացեք անցյալը, մոռացեք այն, ինչ ձեր հետևում է: Մոռացեք, թե ով ինչ ասաց, և հիշեք, թե Աստված ինչ ասաց: Գաղատացիների 5.1-ում գրված է. «Արդ այն ազգայությունով, որ Քրիստոսը մեզ ազատեց, հաստատ կացեք և դարձյալ ծառայության լծի տակ մի՛ մտնեք»:

Երբ մարդիկ զայրացած էին Ստեփանոսի վրա և դուրս էին եկել նրա դեմ այն ամենով, ինչ ունեին, Ստեփանոսը որոշակի վերաբերմունք դրսևորեց: Նա հաստատ մնաց Աստծո Խոսքի վերաբերյալ իր համոզմունքներում: Նա համարձակվեց կանգնել Աստծո համար և մահացավ Աստծո համար՝ իր հավատքով հաճո լինելով Նրան:

Գուցե մենք երբեք ստիպված չլինենք մահանալ մեր համոզմունքների համար, սակայն երբեմն կարող է թվալ, թե կմահանանք: Բայց եթե մտադիր ենք հաջողության հասնել, պետք է դիմակայենք ցանկացած բանի, ինչին կբախվենք: Ես չեմ ասում, որ մենք պետք է պառկենք և պարզապես ընդունենք բացասական հանգամանքները:

Սակայն չպետք է նաև անձնատուր լինենք, երբ հանգամանքները կիսովեն մեզ վրա՝ փորձելով հեռացնել մեզ մեր հավատքից: Պողոսը մեզ ասաց, որ չկա մի փորձություն՝ քննություն, գայթակղություն, նեղություն կամ խնդիր, որ մեզ պատահի, ու Աստված տված չլինի շնորհք դա հաղթահարելու համար (Ա Կորնթ. 10.13):

Հենց հիմա միգուցե դուք այնպիսի իրավիճակում եք, որ ամեն կողմում խավար է: Միգուցե կյանքը մոայլ է թվում, ու դուք ինքներդ ձեզ ասում եք. «*Ես ոչ մի ելք չեմ տեսնում: Ես որևէ հույս չեմ տեսնում*»: Այստեղ է, որ դուք պետք է հաստատ կանգնեք՝ ունենալով այս վերաբերմունքը. «Ես կհաղթեմ Աստծո Խոսքով: Կանգնելով Աստծո խոստումների վրա՝ ես կհաղթեմ: Ես *կհաղթեմ*՝ հակառակ յուրաքանչյուր խոչընդոտի, որ ասում է՝ *ոչ*»:

Ինչ-որ մեկը կարող է ասել. «Ես նայում եմ հորիզոնին, սակայն մթությունից և մոայլությունից բացի ոչինչ չեմ տեսնում»: Հիշեք, այս դեպքում դուք նայում եք ձեր ֆիզիկական աչքերով: Սկսեք նայել հոգևոր աչքերով, և դուք կբացահայտեք, որ չարի ուժերը չեն կարող համեմատվել Աստծո ուժերի հետ: Սկսեք նայել և տեսնել, որ Տերը բարի է, և արդարները երբեք չեն թողնվի ու երբեք ստիպված չեն լինի հաց մուրալ (Սաղմ. 34.8, 37.25): Հաստատ կանգնեք և պահպանեք այնպիսի վերաբերմունք, որն ասում է. «Ես չեմ կարող պարտվել, և ես չեմ հանձնվի»:

### **Գործադրեք և կառուցեք ձեր հավատքը**

Ես մեծացել եմ մի ընտանիքում, որտեղ սովորեցնում էին հավատք, ապրում էին հավատքով և ցուցադրում էին հավատք: Մեծանալով տեսնում էի, թե ինչպես էր հայրս գործադրում իր հավատքը ամենատարբեր հանգամանքներում: Ես հետևում էի, թե ինչպես էր հայրս մեր միակ մեքենան վաճառելուց հետո հնարավոր ամեն բան անում իր հավաքություններին հասնելու համար: Նա նստում էր ավտոբուս, անվճար տեղից տեղ գնում և անում ամեն անհրաժեշտ բան եկեղեցի հասնելու համար: Մարդկանց մեծ մասը չգիտի այդ մասին: Բոլորը տեսնում նրա այսօրվա ֆինանսական վիճակը և ուզում են ունենալ այն, ինչ նա ունի: Սակայն մի քանի տարի հետ գնացեք ու տեսեք, թե ինչպես է նա հասել այնտեղ, որտեղ այսօր է: Եթե դուք ցանկանում եք ունենալ այն, ինչ նա ունի, ավելի լավ է սովորեք քայլել հավատքի այն քայլերով, որ նա քայլեց:

Ես երբեք չեմ տեսել, որ հայրիկիս հավատքի վերաբերմունքը

որևէ չափով տատանվի: Նա սովորել է քայլել Աստծո հոսքի հանդեպ հավատքով՝ անկախ նրանից, թե ինչ է կատարվում իր շուրջը: Ես հաճախ եմ նրանից լսել այն պատմությունը, թե ինչպես էին նա և մայրս խոսում չվախենալու կամ չմտահոգվելու մասին:

Մայրս ասում էր. «Ես չեմ հավատում, որ դու կանհանգստանայիր, եթե ես ու երեխաները հենց այստեղ մահանայինք»:

Հայրս, փաստացի, ասում էր. «Իհարկե ճիշտ: Միթե հիմարություն չէր լինի դա անելը: Աստվածաշնչում ասվում է. «Ձեզնից ո՞վ կարող է հոգս անելով իր հասակի վրա մեկ կանգուն ավելացնել» (Մատթ. 6.27): Իհարկե, ես չէի անհանգստանա դրա համար: Եթե բոլորդ մահանայիք, ինչո՞ւ պիտի ես անհանգստանայի: Դուք արդեն Երկնքում կլինեիք»:

Որքան էլ վատ լինեի իրավիճակը, հորս վերաբերմունքը երբեք չէր փոխվում: Նույնիսկ այն ժամանակ, երբ հայրս ստիպված եղավ վաճառել իր մեքենան, նա շարունակեց հավաքույթներ անցկացնել ու մարդկանց ասել, որ Աստված ցանկանում է՝ Իր զավակները բարգավաճեն:

Երբ ես սովորում էի երրորդ դասարանում, մենք տեղափոխվեցինք երեքսենյականոց երկբնակարան: Այն բաղկացած էր հյուրասենյակից, ննջասենյակից և խոհանոցից: Ես քնում էի ծալովի մահճակալին կամ ծածկապատռամբում, կամ խոհանոցում՝ նայած, թե տարվա որ եղանակն էր: Քույրս և զարմիկս, որ այդ ժամանակ ապրում էր մեզ հետ, քնում էին խոհանոցում դրված բազմոց-մահճակալին: Իհարկե, ննջասենյակում քնում էին ծնողներս:

Ծածկապատռամբը, որտեղ ես քնում էի ամռանը, ցանցապատ էր, և համատեղ օգտագործում էին երկբնակարանի երկու վարձակալները: Ծածկապատռամբի երկու կողմերում լոգարաններ կային: Ուստի երբ մարդիկ իրենց բնակարանից դուրս էին գալիս, որ մտնեին լոգարան, նրանք անցնում էին իմ ննջարանով: Ձմռանը ծալովի մահճակալը դնում էի խոհանոցում: Ես միշտ վաղ էի քնում և ստիպված էի վաղ արթնանալ և ազատել ճանապարհը:

Երբ ութերորդ դասարանում էի, մենք տեղափոխվեցինք առանձնատուն, ու ես ունեցա իմ ննջասենյակը: Դա հիասքանչ օր էր, և ես երբեք չեմ մոռանա, թե ինչպես ձեռք բերեցինք այդ տունը: Երբ հայրս առաջին անգամ տեսավ այն, իր հոգում իմացավ, որ դա լինելու է իր տունը: Նա քայլեց տան շուրջը և պնդեց, որ այն մերն է: Սկզբում տան սեփականատերերը հայրիկիս ասացին, որ չեն ցան-

կանում վաճառել այն: Հայրիկիս վերաբերմունքը երբեք չփոխվեց: Նա նրանց ոչինչ չասաց, սակայն շարունակ ասում էր. «Նրանք ցանկանում են վաճառել, պարզապես դեռ չգիտեն դրա մասին»:

Հայրս շարունակում էր հավատալ Աստծուն: Ես երբեք չեմ մոռանա այն օրը, երբ նա վերադարձավ հավաքույթից՝ ձեռքին մի ծրար: Նա պարզեց ինձ այդ ծրարը և ասաց. «Հաշվիր, թե որքան է ներսում»: Նախկինում ես արել եմ այդպես, որովհետև երբեմն այն եկեղեցին, որտեղ նա ծառայում էր, նրան ծրարով զոհաբերություն էր տալիս: Այսպիսով՝ ես բացեցի ծրարը և հաշվեցի տասը հատ հարյուր դոլարանոց թղթադրամ: Ես առաջին անգամ էի տեսնում հարյուր դոլարանոց թղթադրամ: Այդ գումարն օգնեց մեզ ձեռք բերելու այդ տունը:

Հայրիկիս վերաբերմունքը չփոխվեց *նախքան* գումարը ստանալը, և այն չփոխվեց գումարը ստանալուց *հետո*: Նրա վերաբերմունքն արդեն հաստատ էր տունը ձեռք բերելուց դեռ շատ առաջ: Նա գիտեր, որ այդ տունը մերն է լինելու, ուստի գործադրում էր իր հավատքը և շարունակում դավանել այն, ինչին հավատում էր:

## Հաջողությունը հանկարծակի չի գալիս

Նույնիսկ երբ մենք հավատքի կյանքով ենք ապրում, միշտ չէ, որ անմիջապես ստանում ենք այն, ինչին հավատում ենք: Մենք պետք է համբերությունը խառնենք հավատքին: Եբրայեցիներին ուղղված թղթի 6.12-րդ խոսքում գրված է, որ հավատքով և համբերությամբ ենք ժառանգում Աստծո խոստումները: Իսկ Հակոբոսի 1.3-րդ խոսքում ասվում է, որ մեր հավատքի փորձառությունը համբերություն է գործում:

Հակառակությունն անխուսափելի է, երբ ապրում եք Աստծո համար: Դուք պետք է սովորեք ունենալ այսպիսի վերաբերմունք՝ սատանան չի կարող հաղթել: Սակայն ես ուզում եմ՝ դուք գիտակցեք, որ ձեր տեսած մարդիկ, որոնք ունեն ուժեղ հավատք և կարծես թե միշտ հաղթանակ են տանում, երկար տարիներ ապրել են հավատքով և քայլել Աստծո հետ: Նրանք հանկարծակի չեն հայտնվել այնտեղ, որտեղ հիմա են, և նրանք քայլել են այն նույն փորձությունների ու նեղությունների միջով, որոնց միջով դուք եք քայլում: Շատերը վարել են հին մեքենաներ և ապրել այնպիսի տներում, որտեղ քամին փռփռացնում էր վարագույրները նույնիսկ այն ժամանակ, երբ պատուհանները փակ էին: Ես ու կինս ապրել ենք այդպիսի տան

մեջ, երբ որդիս՝ Գրեգը, նորածին էր: Երբ նա ծնվեց, ես ստիպված էի սենյակը վերադասավորել՝ նրան տաք պահելու համար:

Մի նայեք, թե որտեղ եմ ես հիմա, ու մի՛ մտածեք, թե ես ծնվել եմ, այսպես ասած, արծաթե գդալը բերանումս: Միակ արծաթե գդալը, որ հայրս տվեց ինձ, Աստծո Խոսքն էր: Նա ինձ ասաց. «Որդիս, ուսումնասիրիր Խոսքը: Սովորիր ինչպես վարվել Աստծո հետ և ինչպես ապրել Աստծո համար: Արև այն, ինչ Նա ասում է՝ անկախ ամեն ինչից: Եթե այդպես վարվես, միշտ հաղթող դուրս կգաս: Պոդոս առաքյալն ասաց, որ Աստված *միշտ* մեզ հաղթող է անում Քրիստոս Հիսուսում (Բ Կորնթ. 2.14)»:

Բարեկամ, կարևոր չէ, թե կյանքում որտեղ եք, կարևոր չէ, թե ինչի առջև եք կանգնած կամ որքան խնդիրներ ունեք. եթե բռնվեք Աստծո Խոսքից, հավատաք դրան և ճիշտ որոշումներ կայացնեք՝ հիմնված Խոսքի վրա, ապա կձևավորեք այս վերաբերմունքը. «Ես մտադիր եմ հասնել հաղթանակի՝ անկախ ամեն ինչից»: Եվ Աստված դուրս կբերի ձեզ ստեղծված իրավիճակից ու հաղթության կհասցնի:

Ուշադրություն դարձրեք, ես ասացի, որ դուք ճիշտ որոշումներ պետք է կայացնեք: Մենք չենք կարող մեզ թույլ տալ, որ հիմար որոշումներ կայացնենք: Հասկանում եք, շատ մարդիկ իրենք իրենց համար խնդիրներ են ստեղծում վատ որոշումներ կայացնելու պատճառով: Հետո նրանք ուզում են մեղադրել Աստծուն կամ սատանային այն իրավիճակի համար, որում հայտնվել են, բայց դա Աստծո կամ սատանայի մեղքը չէ: Եթե մենք վատ որոշումներ ենք կայացնում, հետևանքները *մեր* մեղքով են լինում: Մենք պետք է օգտագործենք մեր բանականությունը: Սակայն նույնիսկ այն ժամանակ, երբ վատ որոշումներ ենք կայացնում, Աստված Իր ողորմությամբ պատրաստ է օգնելու մեզ:

## Տոկունություն

Կրկին, կյանքում հաջողության հասնելու համար պետք է ունենալ որոշակի վերաբերմունք: Դուք պետք է ունենաք տոկունություն: Ըստ բառարանի՝ «տոկունություն» նշանակում է *մտքի կամ հոգու ամրություն, անզիջում խիզախություն՝ դժվարության կամ վտանգի առաջ*: Տեխասում մենք դա անվանում ենք «կամքի ուժ»: Դա այն վերաբերմունքն է, որն ասում է. «Ո՛չ սատանան, ո՛չ էլ որևէ մեկը ինձ հետ չեն պահի, որպեսզի ես ձեռք բերեմ այն, ինչ Աստված ասում է, որ պատկանում է ինձ»:

Ես ուզում եմ ձեզ մի փոքրիկ գաղտնիք բացել: Այն, ինչ ստանում եք կյանքում, կախված չէ Աստծուց. դա կախված է ձեզնից: Եթե ցանկանաք, կարող եք սատանային թույլ տալ, որ գողանա ձեզնից: Բայց եթե սովորեք ընդունել Աստծո Խոսքն այնպես, ինչպես որ գրված է, և ունենաք այն վերաբերմունքը, որն ասում է՝ «Աստված ասել է դա. ես հավատում եմ դրան, և հարցը փակված է», ապա դուք կարող եք հաղթական կյանք ունենալ: Քայլեք Աստծո Խոսքով, խոսեք Խոսքը և ապրեք դրան համապատասխան: Քայլեք սիրով, խոսեք սիրով և ապրեք սիրով: Երբ քայլեք հավատքով ու սիրով, Աստված կտանի ձեզ դեպի հաղթանակ:

Միայն դուք կարող եք որոշել՝ ինչ վերաբերմունք կունենաք: Հենց հիմա որոշեք ունենալ այնպիսի վերաբերմունք, որն ասում է. «Անկախ ամեն ինչից՝ ես հասնելու եմ հաղթանակի»:

Աստվածաշնչում գրված է, որ ձեր դեմ շինված ոչ մի գործիք չի հաջողվի (Ես. 54.17): Հավատացեք դրան: Գործեք այդպես: Քայլեք կյանքի ճանապարհով՝ դավանելով Աստծո Խոսքը: Խոսեք ձեր խնդրին ու ասեք. «Ո՛չ: Այդպես չի լինելու»: Խոսեք այն, ինչ Աստված է ասում, և ասեք. «Իմ կյանքում այդ խոչընդոտը վայր կընկնի: Խորհուրդդ տեղերը կհարթվեն (Ղուկ. 3.5): Ու ես կքայլեմ դեպի հաղթանակ՝ դավանելով Աստծո Խոսքը: Իմ պաշտպանության համար նախատեսված հավատքի վահանով ես առաջ կշարժվեմ մարտում՝ իմանալով, որ պատերազմը իմը չէ, այլ Աստծունը (Բ Մնաց. 20.15): Եվ Աստված երբեք չի պարտվում: Հետևաբար այս իրավիճակից ես հաղթանակած դուրս կգամ»:

Դուք կարող եք ցանկացած ժամանակ, նույնիսկ ընթրելիս, ի սրտե դավանել Աստծո Խոսքը: Օրինակ՝ ամեն անգամ ճաշից առաջ աղոթելիս մենք կարող ենք շնորհակալություն հայտնել Աստծուն Իր Խոսքում գրված բարիքների համար: Երբ խնդրում ենք Աստծուն օրհնել կերակուրը, մենք կարող ենք ասել. «Մենք շնորհակալ ենք, որ մեր միջից հեռացնում ես հիվանդությունը և մեզ տալիս առողջություն ու բժշկություն: Շնորհակալություն, որ մեր դեմ շինված ոչ մի գործիք չի հաջողվի»: Ամեն անգամ դա անելով՝ Աստծո Խոսքը դավանում ենք մեր կյանքերում: Երբ հայրս աղոթում է կերակուրի համար, նույն բանն է ասում. «Շնորհակալություն մեզնից հիվանդությունը հեռացնելու և մեզ առողջություն ու բժշկություն տալու համար»:

Ես կանգնել եմ հորս կողքին վշտի ժամանակ, երբ ննջել են մեր սիրելիները: Ես եղել եմ նրա կողքին, երբ նա չի հասկացել, թե ինչու

չի կարողանում հավատքի աղոթք անել այդ մարդկանցից ոմանց համար: Ու ես կանգնել եմ նրա կողքին, երբ նա հետևել է, թե ինչպես են նրանք իրենց վերջին շունչը փչում: Նրա հոգու խորքից դուրս են եկել այս խոսքերը. «Ո՛վ մահ, ո՛ր է քո խայթոցը. գերեզման, ո՛ր է քո հաղթությունը» (Ա Կորնթ. 15.55): Այնուհետև սուրբ գրվածքները մեկը մյուսի հետևից սկսել են հորդել նրա բերանից:

Այդպիսի վերաբերմունք է անհրաժեշտ կյանքում հաջողության հասնելու համար: Եթե դուք ցանկանում եք գրոհով նվաճել ձեր ապագան, կառչե՛ք Խոսքից: Ունեցե՛ք այնպիսի վերաբերմունք, որ անկախ նրանից, թե ինչին եք բախվում՝ շարունակելու եք քայլել Աստծո հետ: Հավատացե՛ք Աստծուն և դավանե՛ք Խոսքը, ինչ էլ որ պատահի: Անկախ նրանից, թե ով է մահանում, անկախ նրանից, թե ով է ընկնում, անկախ նրանից, թե ով ինչ է ասում կամ անում՝ քայլե՛ք Աստծո հետ, և ամեն անգամ կհայտնվեք հաղթանակած կողմում:

## Գլուխ 6

### Նպատակ դրեք

*Խնդիրներն այն բաներն են, որոնք մենք տեսնում ենք,  
երբ մեր աչքերը հեռացնում ենք նպատակից:*

*Ջոն Մաքսվել*



Մենք տեսանք, որ վերաբերմունքը շատ կարևոր դեր ունի ապագան գրոհով նվաճելու հարցում: Վերաբերմունքի՝ այդքան կարևոր լինելու պատճառներից մեկն այն է, որ այն կարող է թելադրել, թե ինչպիսի կյանքով ենք մենք ապրելու:

Անձի վերաբերմունքը, ըստ էության, տրամադրություն է հաղորդում նրա միջավայրին: Մենք պետք է հասկանանք, որ մի բան է խոսել Աստծուն հավատալու և Նրան նվիրված կյանքով ապրելու մասին, բոլորովին այլ բան է ունենալ այնպիսի վերաբերմունք, որը մշտապես ցուցադրում և հաստատում է այն, ինչ ասում ենք:

Շատ մարդիկ խոսում են նվիրվածության մասին, սակայն նրանց խոսելաձևից և վարքից կարող ենք ասել, որ նրանց սիրտը ամենևին էլ նվիրված չէ: Մենք կարող ենք չօգտագործել «վերաբերմունք» եզրույթը, փոխարենն ասել. «Միգուցե նա այսինչ բանն է անում, բայց նրա սիրտը դրա մեջ չէ»: Ինչպես կարող եք ասել, որ մարդկանց սիրտն այն բանում չէ, ինչ նրանք ասում կամ անում են: Նրանց վերաբերմունքից:

Հեշտությամբ կարելի է ասել, թե երբ է մարդ ինչ-որ բանի ասում «այո», բայց իրականում ցանկանում էր ասել «ոչ»: Միգուցե եղել է ժամանակ, երբ ինչ-որ բանի, որին իրականում ցանկանում էիք ասել



«ոչ», ասել եք «այո» ու մտածել, թե զրուցակցից թաքցրիք ճշմարտությունը: Մեծ մասամբ զրուցակիցը ոչինչ չի ասի, սակայն գիտի, որ դուք դժկամությամբ ասացիք «այո»: Ձեր վերաբերմունքը սովորաբար մատնում է ձեզ:

Ոմանք չեն ցանկանում հետևել քրիստոնեական մեր ուղուն գուցե այն պատճառով, որ մենք շուրթերով մի բան ենք ասում, բայց վերաբերմունքով մեկ այլ բան հայտնում:

## Մի՛ խաբվեք

Ղուկասի Ավետարանի 21-րդ գլխում Հիսուսը խոսում է Իր երկրորդ գալստյան մասին: Այս հատվածից մենք կարող ենք սովորել այն վերաբերմունքներից մի քանիսի մասին, որոնք պետք է ունենանք, մինչ սպասում ենք Հիսուսի վերադարձին:

### ՂՈՒԿԱՍ 21.8

**8 Նա էլ ասաց. «Ձգո՛ւյշ կացեք, մի՛ խաբվեք, որովհետև շատերը կգան Իմ անունով և կասեն, թե ես եմ, և ժամանակը մոտեցավ. արդ նրանց հետևից մի՛ գնացեք:**

Հիսուսն Իր հետևորդներին ասում էր զգույշ լինել խաբեբաներից, որոնք կփորձեն ճանապարհից շեղել նրանց: Այս հատվածը կարդալով՝ մենք իմանում ենք խաբեությանն առնչվող այլ բաներ, որոնցից պետք է զգուշանալ:

Օրինակ՝ հաճախ հեշտ է ճանաչել սուտը, երբ մարդիկ բացահայտ դեմ են խոսում Աստծուն կամ Հիսուսին, բայց ավելի դժվար է ճանաչել խաբեբաներին, որոնք գրեթե ճշմարտանման են երևում:

Հնարավոր է՝ ստիպված լինեք գործունենալ սուտ վարդապետության հետ: Պարզապես անտեսեք ցանկացած մեկին, ով փորձում է քարոզել այնպիսի ուսմունք, որը չի համապատասխանում Աստծո Խոսքին: Ուշադրություն մի՛ դարձրեք դրան և շարունակեք ձեր ընթացքը: Այս կապակցությամբ Պողոս առաքյալն այսպես էր ասում. «Բայց եթե մենք էլ կամ երկնքից մի հրեշտակ ավերարանի ձեզ նրանից ուրիշ, քան թե որ մենք ավերարանեցինք ձեզ, նզովված լինի» (Գաղատ. 1.8): Այլ խոսքով՝ ուշադրություն մի՛ դարձրեք որևէ ասածի, եթե այն Աստծո Խոսքի համաձայն չէ. պարզապես շարունակեք հավատալ Աստծո Խոսքին:

Մի՛ անհանգստացեք, թե ինչպես պատասխանեք այն մարդկանց, որոնք ընդդիմանում են այն Ավետարանին, որին դուք հավատում եք: Շարունակեք հավատալ նրան, ինչին հավատում եք, և թողեք,

որ նրանք գրեն և ասեն այն, ինչ ցանկանում են: Նրանց ասածը և արածը որևէ բան չեն փոխում, քանի դեռ ձեզ չեն հետաքրքրում: Դրանք կարող են ազդել ձեզ վրա միայն այն դեպքում, երբ ինքներդ դա թույլ տաք: Երբևէ թույլ մի՛ տվեք, որ որևէ բան խանգարի ձեզ իրականացնելու այն, ինչ պետք է իրականացնեք Աստծո համար:

#### **ՂՈՒԿԱՍ 21.14**

**14 Արդ ձեր սրտի մեջ դրե՞ք, որ առաջուց հոգս չանեք պատասխանելու համար:**

Մենք պետք է պարզենք, թե ինչ է ասվում Աստծո Խոսքում, և քայլենք մեր կյանքի ճանապարհով՝ Նրա խոսքի ճշմարտությունը մեր սրտում պահելով:

Աստվածաշնչում մեզ շարունակ զգուշացվում է չհավատալ ամեն տեսակի վարդապետության: Եփեսացիների 4.14-ում բացահայտվում է Աստծո ցանկությունը. *«Որ այլևս երեխա չլինենք երերված ու տատանված վարդապետության ամեն քամուց մարդկանց խաբեբայությունով, որ մոլորեցնեն խաբեբայության խորամանկությունով»*: Այս խոսքից իմանում ենք, որ որոշ վարդապետություններ կարող են մոլորեցնող լինել:

Սուտ վարդապետության մեջ այնքան շատ սուրբ գրվածքներ կան, որ բավական են այն ճիշտ համարելու համար, եթե չափազանց խորաթափանց չլինեք: Աստծո Խոսքում մենք կարդում ենք, որ նույնիսկ սատանան է Սուրբ գրքից մեջբերումներ անում (Մատթ. 4.6, Ղուկ. 10): Բայց քանի որ մենք վերստին ծնված ենք, մեր ներսում ունենք Սուրբ Հոգուն, որն առաջնորդում է մեզ ողջ ճշմարտության մեջ (Հովհ. 16.13):

Դուք բավականաչափ հոգևոր խորաթափանցություն պետք է ունենաք, որպեսզի չխաբվեք, բայց եթե ինչ-որ պահի հայտնաբերում եք, որ վրիպել եք, մի՛ վախեցեք ասելու. «Աստված, ես վրիպել եմ»: Այն անձը, որը երբեք չի սխալվել և չի վրիպել, կարող է նետել առաջին քարը, սակայն եթե մարդիկ անկեղծ լինեն, ոչ մի քար էլ չի նետվի:

Երբ խոսքը վերաբերում է չխաբվելուն կամ խաբված չլինելուն, կարող ենք հետևել Պողոսի խորհրդին, որ նա տվեց Տիմոթեսին:

#### **Բ ՏԻՄՈԹԵՈՍ 4.2, 3**

**2 ԽՈՒՍՔը քարոզիր. վրա՛ հասիր թե՛ ժամանակին լինի, թե՛ ժամանակից դուրս, հանդիմանի՛ր, սաստի՛ր, հորդորի՛ր ամեն երկայնմտությունով և վարդապետությունով:**

**3 Որովհետև ժամանակ կգա, որ ողջամիտ վարդապետությանը չեն համբերի, այլ իրենց հատուկ ցանկությունների համեմատ վարդապետներ կդիզեն իրենց վրա, իրենց լսելիքների մարմաջելու պես:**

Ես արդեն խոսել եմ «մարմաջող ականջներ» ունեցող մարդկանց մասին: Ոմանց արդեն անհնար է օգնել: Նրանք կլսեն միայն այն մարդկանց, որոնք սովորեցնում են այն, ինչ իրենք են ցանկանում լսել: Որոշ քրիստոնյաներ ցանկանում են լսել ուղերձներ միայն բարգավաճման և Տիրոջ մեջ հրաշալի ժամանակ անցկացնելու մասին: Եթե հովիվը որևէ բան է հիշատակում քննության կամ փորձության մասին կամ սովորեցնում այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք են դատաստանը կամ զսպվածությունը, նրանք փակում են իրենց ականջները և գնում այլ եկեղեցի:

Այսօր շատ քրիստոնյաներ ծառայություններին ցանկանում են աղաղակել կամ գործողության մեջ տեսնել Հոգու պարզկները: Սակայն Հոգու պարզկները գործում են միայն այն ժամանակ, երբ Հոգին կամենում է: Դա է պատճառը, որ կարևոր է քարոզել Խոսքը: Դուք կարող եք միշտ քարոզել Խոսքը, և Խոսքը միշտ գործում է:

Ցավոք, կան մարդիկ, որոնք հնարավորության դեպքում այնքան քաղցրավենիք կուտեն, մինչև որ մահանան թերսնուցումից: Եթե դուք ուտեիք միայն խմորեղեն, կոնֆետ և պաղպաղակ ու խուսափեիք միս, միրգ և բանջարեղեն ուտելուց, ապա չէիք ապրի առողջ, կենսունակ կյանքով:

Նմանապես, կան մարդիկ, որոնք հոգևոր կյանքում ցանկանում են միայն «քաղցրավենիք ուտել»: Բայց ինչպես իրական կյանքում մեզ անհրաժեշտ է լավ հավասարակշռված սննդակարգ, այնպես էլ հոգևոր կյանքում մեզ անհրաժեշտ է լավ հավասարակշռված սննդակարգ առողջ, պողպատե կյանքով ապրելու համար: Լավ է աղաղակել, պարել ու վազել, բայց մենք չենք կարող դրանով ապրել: Միշտ վերադարձեք Խոսքին: Դա է մեր հիմքը:

Մենք զգույշ պետք է լինենք, որ մեր վերաբերմունքը չհասնի այն կետին, որ միշտ փնտրենք նոր բան և բաց թողնենք Աստծո իրական շարժը:

Աստված փնտրում է մարդկանց, որոնք հավատարիմ են ու նվիրված: Աստված դատում է մարդկանց՝ ըստ նրանց հավատարմության, ոչ թե ըստ նրա, թե որքան բարձր են նրանք ցատկում, որքան շատ են պարում հոգու մեջ, որքան լավ են երգում կամ քա-

րոզում, որքան տեսաերիզներ կամ ձայներիզներ կամ գրքեր են վաճառում: Աստված դատում է ըստ հավատարմության: Թվերը որևէ մեկին հաջողակ չեն դարձնում: Աստծո մոտ դուք հաջողակ եք, երբ նվիրված և հավատարիմ եք Նրա Խոսքին և այն ծրագրին, որ Նա ունի ձեր կյանքի համար:

## Մի՛ խոռվվեք

Ղուկասի Ավետարանի 21.8-րդ խոսքը մեզ զգուշացնում է խաբեության մասին, իսկ 9-րդ խոսքը զգուշացնում է վախի մասին: Աստծո Խոսքում մեզ ասվում է, որ չխոռվվենք վերջին լուրերից կամ նրանից, ինչ կատարվում է մեր շուրջը: Ղուկաս 21.9-ում գրված է. *«Բայց երբ որ պատերազմներ և խռովություններ կլսեք, մի՛ զարհուրեք, որովհետև պետք է, որ առաջ նա լինի, բայց դեռ շուտով վերջը չէ»:*

Մարդիկ հաճախ վախեցած են այն ամենից, ինչ տեղի է ունենում աշխարհում. արժեթղթերի շուկա, պտտահողմեր, ջրհեղեղներ, երկրաշարժեր և պատերազմներ: Այս բաների մասին լուրերը ամենևին չեն անհանգստացնում ինձ: Ես նույնիսկ չեմ վրդովվում դրանցից: Գիշերները, երբ պտտահողմի ահազանգ է լինում, ես իշխանություն եմ վերցնում իմ անձնական ունեցվածքի և այն ամենի վրա, ինչը «Ռեմայի» սեփականությունն է, որովհետև ես իրավասու եմ այդ բաների համար: Այնուհետև վերադառնում եմ քնելու՝ վստահելով Տիրոջը: Երբ լսում եք բնական աղետների մասին, կամ երբ լուրեր են պտտվում որևէ վերահաս աղետի շուրջ, իշխանություն վերցրեք այն ամենի վրա, ինչ պատկանում է ձեզ: Դուք չեք կարող իշխանություն վերցնել այն բաների վրա, որոնք պատկանում են մեկ ուրիշի, սակայն դուք կարող եք իշխանություն վերցնել այն ամենի վրա, ինչը ձերն է:

Հարկ չկա, որ մենք վրդովվենք: Որոշ մարդիկ միշտ վրդովված են՝ տեսնելով ժամանակի այն նշանները, որ իրականանում են նրանց շուրջը: Մարդկանց սրտերը նվաղում են վախից, սակայն մենք չպետք է վախենանք: Մենք ծառայում ենք հզոր Աստծո:

Հնարավոր է, որ դուք լսեք, որ վառելիքի գինը բարձրանալու է, որ դուք ունենալու եք ամենավատ ծմեռը, կամ որ հարկերն ավելանալու են: Սակայն դուք չպետք է թույլ տաք, որ վատ լուրերն ազդեցություն թողնեն ձեզ վրա: Վրդովվելու, անհանգստանալու կամ վախենալու փոխարեն դուք կարող եք հանդարտվել և վստահ լինել, որ Աստված դեռևս Աստված է, ու Նա միշտ կլինի Աստված:

Աստված անապատում հոգ տարավ երկու միլիոնից ավելի իսրայելցիների համար, երբ նրանց ազատեց եգիպտական գերությունից: Արեգակի տակ ամեն բան, այսպես ասած, սպառնում էր նրանց, բայց Աստված մատակարարում և պաշտպանում էր Իր ժողովրդին: Աստված նրանց ջուր տվեց խմելու, երբ ջուր չկար: Աստված նրանց կերակուր տվեց ուտելու, երբ կերակուր չկար: Դա այն Աստվածն է, Ում ես ծառայում եմ: Ու եթե Աստված կարողանում է հոգ տանել երկու միլիոնի համար, ապա Նա անշուշտ կկարողանա հոգ տանել *ձեզ* համար, և Նա *հոգ կդնի*:

Չափազանց շատ մարդիկ սարսափահար են լինում այս բնական երևույթներից: Բայց տեսնելով այս ամենը՝ ես հիշում եմ, թե ինչ է ասվում Աստծո Խոսքում. «*Եվ երբ որ այս բաները կսկսեն լինել, վեր նայեք և բարձրացրե՛ք ձեր գլուխները, ՈՐ ՁԵՐ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՏ Է*» (Ղուկ. 21:28):

Այս հատվածը նաև խոսում է վերջին ժամանակների իրադարձությունների մասին, այն բաների, որոնք տեղի են ունենալու երկրագնդի վրա նախքան Քրիստոսի վերադարձը: Հարկ չկա, որ մենք խռովվենք՝ լսելով լուրեր այս բաներից որևէ մեկի մասին, որովհետև Ղուկաս 21:28-րդ խոսքում գրված է, որ մենք կարող ենք վեր նայել. մեր փրկությունը մոտ է: Մենք պետք է ունենանք հավատք և հավատանք դրան: Այս նշանները պարզապես քաջալերում են մեզ, որովհետև մենք գիտենք, որ Հիսուսը շուտով գալու է:

Մենք կարող ենք խաղաղության մեջ մնալ՝ ուշադրություն չդարձնելով միջազգային լուրերին, ինչպես նաև այն ժամանակ, երբ լսում ենք զանազան լուրեր, թե ինչ է տեղի ունենում եկեղեցական տարբեր շրջանակներում:

Որոշ մարդիկ բորբոքվում և մտահոգվում են՝ ասելով. «Լսել եք, թե ինչ է քարոզում այսինչը: Մենք պետք է ինչ-որ բան անենք այդ կապակցությամբ»: Ո՛չ, մենք չպետք է ինչ-որ բան անենք: Երբ գիտես ճշմարտությունը, չես վրդովվում որևէ վատ լուրից՝ լինի աշխարհիկ, թե հոգևոր:

Ինչ-որ մեկը կարող է ասել. «Օ՛հ, մի՞թե չեք լսել, թե ինչ է կատարվում»: Դա որևէ նշանակություն չունի: Աստված է իմ աղբյուրը, և Նրա Խոսքը ճշմարտություն է:

## Աստծո հետ դուք չեք կարող ձախողվել

Երբ սատանան դուրս է գալիս ձեր դեմ, հարկ չկա, որ դուք խառնվեք: Սատանան չի հաղթել: Փաստացի, նա պարտվել է ավելի քան 2000 տարի առաջ: Փոխանակ ձեռքերը ծալելու և ասելու՝ «Օ՛հ, ինչ եմ անելու», սկսեք խոսել Խոսքը և հիշեցնել սատանային, թե ինչ է Հիսուսն արել:

Միաժամանակ ստուգեք ձեր վերաբերմունքը: Քննեք, թե ինչպես եք մտածում: Այն, թե ինչպես եք մտածում այն ամենի վերաբերյալ, ինչ լսել եք Աստծո Խոսքից, կորոշի, թե ինչին եք հավատում և ինչ եք խոսում:

Աստծո Խոսքում շատ բան կա գրված ճիշտ վերաբերմունք ունենալու մասին: Ճիշտ վերաբերմունքը ապահովում է ճիշտ մտայնություն: Ճիշտ մտայնությունը նպաստում է ճիշտ մտածելուն: Ճիշտ մտածելը բերում է ճիշտ հավատք: Ճիշտ հավատքը բերում է ճիշտ խոսք, իսկ ճիշտ խոսքը բերում է դրական արդյունքներ: Սխալ մտածելակերպը ստեղծում է կասկած և անհավատություն՝ բերելով բացասական հետևանքներ:

Աստծո հետ դուք չեք կարող ձախողվել: Քանի դեռ շարունակում եք քայլել Աստծո հետ, դուք չեք կարող ձախողվել: Նայելով ձեր հանգամանքներին՝ միգուցե թվա, թե անհաջողության եք մատնվելու, սակայն դուք չեք կարող ձախողվել: Հանգամանքները կարող են հաղթել ձեզ միայն այն դեպքում, եթե դուք հանձնվեք:

Այսօր որոշում կայացրեք և վճռեք, որ չեք խաբվի կամ չեք վրդովվի որևէ բանից, փոխարենը նպատակ կդնեք հետևելու Աստծուն և անելու այն, ինչ Նա կանչել է ձեզ անելու:

## Կանգնեք Խոսքի վրա

Մինչ այժմ ես խոսում էի վերաբերմունքի բացասական կողմի մասին և այն մասին, թե ինչ *չպետք է* անել. մի՛ խաբվեք, մի՛ խոռովվեք: Սակայն կա նաև դրական կողմը: Մենք պետք է գիտակցենք, որ փրկագնվել ենք: Ինչ էլ լինի, անկախ այն բանից, թե ինչ է տեղի ունենում, կամ ինչ է որևէ մեկն ասում՝ մենք պետք է կանգնենք Աստծո Խոսքի խոստումների վրա:

Բժշկության, ֆինանսների կամ որևէ այլ բանի համար հավատալիս կանգնեք նրա վրա, ինչ գրված է Խոսքում: Աստծո Խոսքը մեզ ասում է, որ Հիսուսն արդեն պարտության է մատնել սատանային:

Դա նշանակում է, որ հիմա սատանան մեր ոտքերի տակ է:

Երբ սատանան փորձում է դուրս գալ ձեր դեմ, պնդեք ձեր դիրքորոշումը և ասեք. «Բավական է»: Թող նրա սպառնալիքներն ու բացասական մտքերը գլորվեն ձեր վրայից այնպես, ինչպես ջուրը բադի վրայից: Այլ խոսքով՝ եթե մենք կանգնած ենք Խոսքի վրա, ապա խնդիրները կամ սպառնալիքները պարզապես կգլորվեն մեր վրայից՝ առանց երբևէ մեզ վնասելու:

Ես հիշեցի մի նյութի մասին, որը վաճառվում է մեքենաների դիմապակիների համար: Դիմապակու վրա այն ցանելուց հետո անձրևը ապակու վրա պարզապես վերածվում է կաթիլների և գլորվում է ցած: Դա այն է, ինչ մեզ համար կանի Աստծո Խոսքը: Երբ մենք հագնում ենք Խոսքով, հանգամանքները, այսպես ասած, վերածվում են կաթիլների և գլորվում մեր վրայից անգամ այն ժամանակ, երբ սատանան կամ որևէ բացասական բան դուրս է գալիս մեր դեմ:

Որոշ մարդիկ վախենում են սատանայից: Երբ սատանան գիտի, որ մարդիկ վախենում են իրենից, նա օգտվում է դրանից: Եթե ծանոթ եք ձիավարությանը, ապա կհիմնաք նաև, որ ձին գիտի, թե երբ է հեծյալը վախենում: Ձին չի անի որևէ բան, ինչ դուք ցանկանում եք, եթե գիտի, որ վախենում եք իրենից: Եթե նրան ցույց չտաք, թե ով է տերը, նա ձեզ հետ կտանի ախոռ, մինչ մյուսները վարձով կընթանան ճանապարհով: Նույն կերպ գործում է սատանան: Մինչև նրան ցույց չտաք, որ դուք եք «տերը», ու չհայտնեք, որ չեք վախենում նրանից, նա կխաբի ձեզ ամեն անգամ, երբ շրջվեք:

Աստվածաշնչում գրված է, որ ձեր դեմ շինված ոչ մի գործիք չի հաջողվի (Ես. 54.17): Սատանան կարող է գործիք շինել, բայց դա ընդամենը շփոթեցնելու համար է: Նա կարող է միայն խոսել, որովհետև «հաչան շունը չի կծում»: Ինչպես որոշ շներ հաչում են, գոմոռում, կարծես պատրաստվում են ոտքդ պոկելու, այդպես էլ սատանան է հաչում ու գոմոռում: Բայց երբ ոտքով հարվածում եք գետնին և հակառակվում սատանային Աստծո Խոսքով, նա ծեծված շան նման սարսափահար փախչում է (Հակ. 4.7):

Սկսեք կանգնել Աստծո Խոսքի խոստումների վրա և որոշում կայացրեք, որ ձեր ոտքերը հաստատված են մնալու Ժայռի վրա:

## Գլուխ 7

# Համբերության կարևորությունը

*Մեր համբերությամբ ավելի շատ բանի  
կհասնենք, քան մեր ուժով:*

*Հղմունդ Բուրկե*



Նախորդ գլխում վերաբերմունքի մասին խոսելիս մենք օգտագործեցինք Ղուկասի Ավետարանի 21-րդ գլուխը՝ որպես ուղեցույց: Ղուկասի Ավետարանում գրված այդ հատվածում իրականում խոսվում է Հիսուսի երկրորդ գալստյան և Նրա վերադարձի հանդեպ մեր վերաբերմունքի մասին, սակայն ես այդ հատվածն օգտագործում եմ ընդհանուր առմամբ մեր վերաբերմունքը քննարկելու համար:

Մենք խոսեցինք խաբեբաների կողմից խաբվելու և վատ լուրերից վրդովվելու մասին: Խոսեցինք այն մասին, թե որքան կարևոր է չանհանգստանալ այն բանի համար, թե ինչպես պատասխանենք մարդկանց, որոնք չեն հավատում ճիշտ այնպես, ինչպես մենք ենք հավատում, և որոնք դժվարություններ են պատճառում մեզ: Նաև խոսեցինք, որ չպետք է վախենալ բնական աղետներից, ֆինանսական ցնցումներից կամ այլ վատ լուրերից:

Ես ցանկանում եմ, որ շարունակենք ուսումնասիրել վերաբերմունքի, հատկապես համբերության վերաբերմունքի կարևորությունը: Մենք պետք է համբերատար լինենք, մինչ սպասում ենք Տիրոջ վերադարձին և ապրում մեր առօրյա կյանքով: Ղուկասի Ավետարանի 21.19-րդ խոսքում գրված է. «Եվ ձեր համբերությամբ կշահեք ձեր հոգիները»: Աստվածաշնչի թարգմանության «Նոր միջազգային տար-



բերակում» գրված է այսպես. «Հաստատված կանգնելով՝ կյանք կշահեք»:

Մենք ապրում ենք անհամբեր աշխարհում, ու բոլորս ստիպված ենք փորձել համբերատար լինել: Ես ուզում եմ, որ դուք գիտակցեք, որ ես նման եմ բոլորին: Ես մինչև հիմա էլ աշխատում եմ ինձ վրա: Ցանկացած ոք, ով ասում է, թե հասել է կատարելության և այլևս չի ձգտում կատարելագործվելու, ճշմարտությունը չի ասում: Միայն Մեկը կար, որ Կատարյալ էր, ու Նա խաչվեց:

Մարդկանց մեծ մասը կհամաձայնի, որ ամենադժվար բաներից մեկը, որ պետք է սովորենք, համբերությունն է: Ճանապարհին մարդիկ անհամբեր են մյուս վարորդների հանդեպ (հատկապես եթե ինչ-որ տեղ են շտապում): Մարդիկ անհամբեր են դառնում իրենց երեխաների, մատուցողների, խանութի գործակատարների և այլոց հանդեպ:

Մենք նույնիսկ անհամբեր ենք պատասխանված աղոթքի դրսևորմանը սպասելիս: Մենք անհամբեր ենք հավատքով կանգնելիս, և եթե զգույշ չլինենք, անհամբերությունը կտանի մեզ դեպի անհավատություն: Շատ մարդիկ չեն գիտակցում դա, բայց անհամբեր լինելով՝ նրանք թույլ են տալիս, որ սատանան իրենց հրելով հանի հավատքից և մտցնի անհավատության մեջ:

Նշաններից մեկը, որ մենք անհամբեր ենք Տիրոջ հանդեպ, այն է, որ սկսում ենք գանգատվել և նվնվալ Նրա առաջ: Միգուցե դուք ասում եք. «Ես երբեք նման բան չեմ անի»: Բայց երբ կասկածի ենք ենթարկում Նրան՝ ասելով՝ «Տէր, ինչո՞ւ չես այսինչ բանն արել: Ես չեմ հասկանում, թե ինչու չես դա արդեն արել», մենք անհավատության մեջ ենք:

Համբերությունը շատ կարևոր է, որովհետև առանց դրա մենք չենք կարողանա մնալ հավատքի մեջ: Ինչպես ավելի վաղ ասացի, երբայեցիներին ուղղված թղթի 6.12-րդ խոսքում գրված է, որ հավատքով և համբերությամբ ժառանգում ենք Աստծո խոստումները:

## Տերը համբերատար է

Ամբողջ Սուրբ գրքում մենք կարդում ենք Տիրոջ համբերության և երկայնամտության մասին: Հակոբոսի 5.7-րդ խոսքում գրված է, որ Նա սպասում է երկրի պատվական պտղին, և Նա ունի *երկայնամտություն* դրա համար: Բ Պետրոս 3.9-րդ խոսքում գրված է. «Տերը չի ուշացնի խոստումը, ինչպես ոմանք ուշացնել են կարծում,

*բայց երկայնամիտ է լինում մեզ վրա, որովհետև չի կամենում, որ կորչողներ լինեն, բայց որ ամենն ապաշխարության հասնեն»:*

Մենք մեծապես կշահենք, եթե համբերատար լինենք: Այսօրվա աշխարհում կարծես տիրում է այսպիսի վերաբերմունք. «Շտապիր, շտապիր, շտապիր»: Եթե մենք ուշադիր չլինենք, կսկսենք թույլ տալ, որ անհամբերությունը բացասական ազդեցություն թողնի Աստծո հոսքի հանդեպ մեր հավատքի վրա:

Երբևէ նկատել եք, որ երբ սկսում եք անհամբեր դառնալ մի բնագավառում, դա ազդում է ձեր կյանքի մյուս բոլոր բնագավառների վրա: Դուք թույլ եք տալիս, որ անհամբերությունը սկսի իշխել, ու հանկարծ հայտնաբերում եք, որ անհամբեր եք դարձել ձեզ շրջապատողների հանդեպ: Իրականում դուք մտադիր չէիք այդպիսին լինել և երբ կանգ եք առնում ու մտածում, թե ինչպես հասաք դրան, հասկանում եք, որ այդ ամենը սկսվեց մեկ այլ ոլորտում անհամբերություն ցուցաբերելու պատճառով:

## **Համբերության ամենօրյա չափաբաժին**

Մենք ապրում ենք ֆիզիկական աշխարհում: Ֆիզիկական մարմինը, որում ապրում ենք, մշտապես կապի մեջ է ֆիզիկական աշխարհի հետ: Մեր ֆիզիկական մարմինը կապ չի հաստատում հոգևոր աշխարհի հետ: Դա անում է մեր ներսի մարդը, որն ունի Հոգու բոլոր պտուղները, որ նշված են գաղատացիներին ուղղված թղթի 5-րդ գլխում: Եվ այդ պտուղներից մեկը համբերատարությունն է:

Քանի որ համբերատարությունը Հոգու պտուղ է, մենք գիտենք, որ եթե վերստին ծնված ենք, մեր ներսում ունենք համբերության պտուղ: Բայց, հասկանում եք, հին մարդը չի ցանկանում համբերության որևէ նշույլ ունենալ: Նա անընդհատ մերժում է պտուղները, սակայն մենք պետք է թույլ տանք, որ այն, ինչ մեր ներսում է, դուրս գա և իշխի մեր կյանքում: Մենք պետք է ամեն օր ինքներս մեզ ասենք. «Դու համբերատար ես լինելու»:

Դուք դա պետք է անեք ամեն օր, երբեմն օրական մի քանի անգամ: Այդ կերպ էլ համբերությունը նման է այն վիտամիններին, որ մենք ընդունում ենք, օրինակ՝ վիտամին C-ին: Քանի որ որոշ վիտամիններ մարմնում չեն պահպանվում, մենք ստիպված ենք ընդունել դրանք օրական չափաբաժնով, որպեսզի օգուտ ստանանք: Նույնիսկ այդ ժամանակ դուք չպետք է հենվեք միայն վիտամինների

վրա: Ո՛չ, օրվա ընթացքում դուք պետք է ուտեք տարբեր կերակուրներ, որոնք պարունակում են տվյալ վիտամինը:

Այսպես է նաև համբերատարության դեպքում: Ինքներս մեզ ասում ենք, որ համբերատար լինենք, և համբերատար ենք, որոշ ժամանակ: Բայց կարճ ժամանակ անց, երբ կրկին համբերության կարիք ունենք, հասկանում ենք, որ ևս մեկ չափաբաժին պետք է ընդունել:

## **Ձեր մտքերն ուղղե՛ք դեպի երկինք**

Մինչ այժմ մենք սովորեցինք, որ պետք է համբերություն ունենանք, քանի դեռ ապրում ենք այս աշխարհում և սպասում Տեր Հիսուս Քրիստոսի գալստյանը: Մեկ այլ բան, որ պետք է անենք, մինչ սպասում ենք Տեր Հիսուսի գալստյանը, մեր մտքերը դեպի երկինք ուղղելն է:

Երբ հանդիպում ենք դժվար իրավիճակների, հանգամանքների և փորձությունների, պետք է հիշենք, որ մեր խնդրի պատասխանը այս երկրի վրա չէ: Եթե ձեր խնդրի պատասխանն այս երկրի վրա լիներ, ապա արդեն լուծած կլինեիք այդ խնդիրը: Այնպես որ ձեզ հարկավոր է վերև նայել:

Ղուկաս 21.28-ում գրված է. *«Եվ երբ որ այս բաները կսկսեն լինել, վեր նայեք և բարձրացրե՛ք ձեր գլուխները. որ ձեր փրկությունը մոտ է»*: Իհարկե, այն «բաները», որոնց մասին Հիսուսը խոսում է, նշված են նախորդ խոսքերում, սակայն մենք կարող ենք այս խոսքը վերագրել ցանկացած բանի, ինչ տեղի է ունենում մեր կյանքում: Օրինակ, երբ տեսնում եք, որ հանգամանքներն ու խոչընդոտները փակում են ձեր ճանապարհը, մի՛ նայեք, թե ինչ է տեղի ունենում, ու մի՛ ասեք. «Օ՛հ, ի՛նչ է կատարվելու հիմա»: Փոխարենը սկսե՛ք վեր նայել, որովհետև ձեր փրկությունը Երկնքից է:

«Փրկություն» բառի փոխարեն օգտագործվում է նաև «ազատագրում»-ը: Ուստի մենք կարող ենք ասել. «Ձեր ազատագրումը Երկնքից է գալիս»: Հիշե՛ք, Աստված է ձեզ Ազատողը, և ձեր ազատագրումը գալու է Նրանից, ոչ թե ինչ-որ անձնավորությունից:

## **Մարմնեղեն բազմակ, թե՛ Աստծո ձեռք**

Անհանգստացնող հանգամանքների բախվելիս ոմանք ուզում են ասել. «Երանի այսինչ եղբայրը կամ քույրը կարողանար աղոթել ինձ համար»: Կամ նրանք ասում են. «Եթե կարողանայի լինել այսինչ

աղոթքախմբում, ապա կստանայի իմ պատասխանը»:

Եթե դուք նայում եք մարդուն՝ ազատագրում ստանալու համար, ոչինչ չեք ստանա: Սխալ մի՛ հասկացեք այն, ինչ ասում եմ: Ես գիտակցում եմ, որ մենք կարող ենք աղոթել միմյանց համար և աղոթքում համաձայնության գալ միմյանց հետ՝ ըստ Աստծո Խոսքի: Ես խոսում եմ այն մասին, որ մենք պետք է միշտ ընդունենք ու հասկանանք, որ մեր փրկությունն *Աստուծոց* է՝ անկախ նրանից, թե ով է աղոթում:

Շատ մարդիկ գնում են բժշկության և ազատագրման հավաքությունների ծառայողի պատճառով, որը լինելու է այնտեղ: Ու շատ հաճախ նրանք վրդովվում են, եթե ծառայողը, որին նրանք գնացել էին տեսնելու, հանձնարարում է մեկ ուրիշի՝ այդ երեկո հիվանդների համար աղոթելու:

Ես եղել եմ այնպիսի հավաքություններում, որտեղ եղբայր Հեգինը որոշել է, որ հիվանդների համար աղոթեմ ես կամ իմ որդին կամ «Ռեմայի» փառաբանության խմբից որևէ անդամ: Ես տեսել եմ, թե ինչպես են որոշ մարդիկ իրականում բարկացել, քանի որ նրանք ցանկանում էին, որ եղբայր Հեգինն աղոթեր իրենց համար:

Տարիներ առաջ, երբ ես ղեկավարում էի քարոզարշավները, հավաքություններից մեկի ժամանակ մի մարդ շատ զայրացավ, որովհետև այն երեկո, երբ նա եկել էր հավաքության, հիվանդների վրա ձեռք դնողը եղբայր Հեգինը չէր: Տեսնելով, որ եղբայր Հեգինը չաղոթեց մարդկանց համար, նա այնքան բարկացավ, որ մոտեցավ ու հայիռյեց ինձ:

Ես պարզապես կանգնեցի ու նայեցի նրան, որովհետև դա հանկարծակիի բերեց ինձ: Ի վերջո ես ասացի. «Լավ, միևնույնն է, դուք որևէ բան չէիք ստանալու նման վերաբերմունքով»:

Երբ նա պաշտպանական դիրք գրավեց, ես հարցրի. «Ո՞ւմ եք սպասում, որ բժշկի ձեզ՝ Աստծուն, թե՛ եղբայր Հեգինին»:

Երբեմն մարդիկ չեն գիտակցում դա և առանց մտածելու ակնկալում են, որ ուրիշները պատասխան կստանան իրենց համար, երբ կարող էին իրենք ստանալ իրենց պատասխանը՝ ինքնուրույն աղոթելով:

Հիշում եմ, թե ինչպես էր մի մարդ ասում. «Ես կանչել եմ Միացյալ Նահանգներում գործող աղոթքի և բարեխոսության իմ իմացած բոլոր խմբերին, այնպես որ գիտեմ, որ ազատագրվելու եմ»:

Ես նրան հարցրի. «Ո՞ւմ եք սպասում, որ ազատագրի ձեզ՝ Աստծոն, թե՛ այն բոլոր մարդկանց, որոնք աղոթում են»:

Մենք պետք է մարդկանց դիտենք որպես անոթների, որոնց միջոցով Աստված գործում է, գործիքների, որոնց միջով կարող է հոսել Աստծո գորությունը՝ միաժամանակ մտքում պահելով այն, որ *Աստված է Բժշկողը, Ազատողը և Փրկողը*: Այնպես որ տարբերություն չկա՝ ձեզ համար աղոթում է իննամյա երեխամ, թե՛ հանրաճանաչ ծառայող: Եթե նրանք երկուսն էլ վերստին ծնված են, Աստված կարող է երկուսի միջոցով էլ գործել:

### **Բարձրացրեք ձեր գլուխը**

Հիմա գլուխը բարձրացնելու և վստահ լինելու ժամանակն է: Մենք պետք է համոզված լինենք, որ Աստված կազատի մեզ, այնպես, ինչպես Պողոս առաքյալն էր համոզված, երբ ասաց. «*Գիտեմ, թե Ում եմ հավատացել*» (Բ Տիմոթ. 1.12):

Շատ անգամներ մարդիկ, որոնք ունեն վատ վերաբերմունք, գլուխները կախ այս ու այն կողմ են շրջում: Ես կարող եմ հեշտությամբ զանազանել, թե երբ են քրիստոնյաները բացասական վերաբերմունք ունենում. ես կարող եմ ասել՝ նրանք ընկճված են՝ նրանց պահվածքին նայելով: Եթե որևէ մեկը միշտ քայլում է գլուխը կախ և թուլացած ուսերով, հնարավոր է՝ պատճառն այն է, որ նա կորցրել է իր վստահությունը: Եբրայեցիներին ուղղված թղթի 10.35-րդ խոսքում գրված է. «Դեն մի՛ գցեք ձեր վստահությունը»:

Որոշ քրիստոնյաներ կորցնում են իրենց վստահությունը, որովհետև ինչ-որ մեկը, որին նրանք ճանաչում են, չի ստացել այն, ինչի համար հավատում էր Աստծուն: Բարեկամ, թույլ տվեք ձեզ մի բան ասել: Եթե աշխարհում բոլորը հավատան ու չստանան, միևնույնն է, ես վստահելու եմ Աստծո խոսքին: Ես դարձյալ գլուխս վեր եմ պահելու ու վստահաբար ասելու եմ. «Աստված է ինձ Ազատողը և Փրկողը»:

Ես չեմ խոսում *ինքդ քեզ* վստահելու մասին. դա մեծամտություն է: Աստծո խոսքն ասում է «բան չմտածել նրանից ավելի, քան թե արժան է մտածել» (Հռոմ. 12.3): Ես խոսում եմ Աստծո և Նրա խոսքի մեջ վստահ լինելու մասին:

Ինչևէ, հավելեմ, որ Հռոմեացիների 12.3-րդ խոսքում չի ասվում՝ *ընդհանրապես* չմտածեք ինքներդ ձեր մասին: Պարզապես ասվում է, որ ավելի բարձր չմտածեք, քան արժան է մտածել:

Ոմանք ասում են՝ «Օ՛հ, ո՛չ, դուք չպետք է երբևէ մտածեք ձեր մա-սին», և իրենց, այսպես կոչված, խոնարհությամբ հպարտանում են:

Նրանք ասում են. «Ես ոչինչ եմ: Ես մի մեղավոր եմ՝ շնորհքով փրկված»:

Եթե դուք վերստին ծնվել եք, այլևս շնորհքով փրկված մեղավոր չեք: Դուք նոր արարած եք Քրիստոս Հիսուսում (Բ Կորնթ. 5.17): Այժմ դուք Աստծո զավակ եք և փրկագնվածներից մեկը:

### **Գիտե՛ք, թե ով եք դուք**

Հաճախ մարդիկ, որոնք չունեն վստահություն, չգիտեն, թե ով են իրենք. նրանք փնտրտուքի մեջ են: Ես չեմ փնտրում, թե ով եմ ես: Ես վստահ եմ, թե ով եմ ես: Ես փրկագնվածներից մեկն եմ: Ես կանչվածներից մեկն եմ: Ես Քրիստոսի Մարմնի մասնիկ եմ և Աստծո ընտանիքի անդամ: Իմ անունը գրված է Գառան Կյանքի գրքում:

Ես վստահ եմ, որ եթե ապրեմ Աստծո համար և քայլեմ Նրա հետ, Նա կառաջնորդի, կուղեկցի և կուղղորդի ինձ: Նա խորհուրդորդ տեղերը կհարթեցնի, ցածր վայրերը կբարձրացնի, իսկ բարձրերը կցածրացնի (Ղուկ. 3.5): Նա կփշրի երկաթե և պղնձե դռները (Ես. 45.2) և կհեռացնի ցանկացած այլ բան, որ փակում է իմ ճանապարհը: Ինձ մնում է միայն քայլել Նրա հետ և վստահ լինել Նրանում և այն ամենում, ինչ Նա կարող է անել:

Բարձրացրե՛ք ձեր գլուխները, որովհետև ձեր փրկությունը մոտ է: «Փրկությունը մոտ է» արտահայտությունը գրված է *Քինգ Ջեյմս փարբերակում*: Մեկ այլ թարգմանության մեջ այսպես է ասվում. «Ձեր ազատագրումը մոտ է»: Այնպես որ վստահ եղեք Աստծո ազատագրող զորության մեջ:

Երբ սկսում եմ ամեն կողմից ինձ պաշարված զգալ, ու թվում է, թե ամեն բան «փլվում է» ինձ վրա, ինքս ինձ կանգնեցնում եմ ու ասում. «Մի թուլանա՛ր: Ահա գալիս է իմ ազատագրումը»:

Եթե դուք շարունակեք նայել խնդիրներին, ճնշումներին ու հանգամանքներին, կթվա, թե ամեն բան ավելի ու ավելի է վատանում: Բայց երբ բարձրացնեք ձեր գլուխը, այլևս չեք տեսնի խնդիրներ, ճնշումներ ու հանգամանքներ: Դուք կտեսնեք Աստծո փրկությունը, որը պատկանում է ձեզ:

## Չթուլանանք

Հիսուս Քրիստոսը կրկին գալիս է: Բայց մինչ համբերությամբ սպասում ենք Նրա վերադարձին, Աստծո Խոսքում ասվում է, որ կան բաներ, որոնք այս ընթացքում պետք է անենք:

Օրինակ՝ մենք պետք է հոգ տանենք մեր անձնական կյանքի և հոգևոր բարեկեցության համար: Ղուկասի Ավետարանի 21.34-ում գրված է. «*Զգույշ կացեք անձերիդ, միգուցե ձեր սրտերը ծանրանան շարակերությունով ...և ապրուստի հոգսերով...*»: Իսկ Գաղատացիների 6.9-ում ասվում է, որ չձանձրանանք բարին գործելուց:

### ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 6.9

**«Եվ չձանձրանանք բարին գործելուց, որովհետև իր ժամանակին կհնձենք, եթե ՉԹՈՒԼԱՆԱՆՔ»:**

Եթե զգոն չլինեք, կարող եք ձանձրանալ բարին գործելուց: Իր ժամանակին կհնձենք, եթե միայն չթուլանանք:

## Պատրաստ եղեք

Մեկ այլ բան, որ պետք է անենք Տիրոջ վերադարձին համբերատար սպասելիս, արթուն լինելն է և աղոթելը:

### ՂՈՒԿԱՍ 21.36

**21 Ուրեմն արթուն կացեք և ամեն ժամանակ աղոթք արեք, որ արժանի լինեք ազատվել այն բոլոր բաներից, որ պիտի լինեն, և կանգնել մարդու Որդու առաջ:**

Ես միշտ փորձում եմ արթուն կամ աշալուրջ մնալ և ուշադրություն դարձնել, թե ինչ է կատարվում իմ շուրջը: Ես ուշադրություն եմ դարձնում, թե ինչ է կատարվում հոգևոր աշխարհում, և ուշադրություն եմ դարձնում, թե ինչ է կատարվում ֆիզիկական աշխարհում: Այնուհետև ես ուսումնասիրում եմ Աստծո Խոսքը, որ տեսնեմ, թե ինչ է գրված վերջին օրերի մասին: Ահա թե ինչպես եմ ինքս ինձ պատրաստ պահում:

Պողոսն ասում է, որ անդադար աղոթենք (Ա Թեսաղ. 5.17): Դա չի նշանակում, որ ամբողջ օրը պետք է մնանք ձևիների վրա: Ես նկատի ունեմ, որ *որոշակի* ժամանակ պետք է հատկացնել աշխատանքին: Ես խոսում եմ այն մասին, որ դուք կարող եք ձեր սրտում աղոթել, մինչ աշխատում եք: Դուք կարող եք աղոթել, մինչ մեքենայով անցնում եք փողոցը:

Երբ ես պատանի էի, գնում էի ավտոտնակ և բավականաչափ երկար աշխատում մեքենաների վրա: Ես աղոթում և խորհում էի Խոսքի շուրջ, մինչ գործ էի անում մեքենայիս վրա: Այնտեղ՝ մեքենաների վրա աշխատելիս, ես շատ քարոզներ եմ ստացել: Երբ միտք էի ստանում, ստիպված էի լինում դադարեցնել աշխատանքը, մաքրել ձեռքերիս յուղը և գրի առնել այն:

Դուք կարող եք աղոթել, մինչ քայլում եք կամ վազում: Շատերը մարզվելիս ականջակալներ են դնում, որ երաժշտություն լսեն: Մարզվելիս երաժշտություն լսելու փոխարեն նրանք կարող էին աղոթել:

## Հիսուսի արտացոլանքը

Մենք չպետք է մոռանանք, որ Հիսուսը կրկին գալիս է: Բայց նաև չպետք է մոռանանք, թե ինչպիսի վերաբերմունք պիտի ունենանք, մինչ սպասում ենք Նրա վերադարձին: Մենք կանչված ենք ներկայացնելու քրիստոսանման վերաբերմունք *ամեն* մարդու հանդեպ *ամեն* ժամանակ *ամենուրեք*: Երբ ունենք ճիշտ վերաբերմունք, կարող ենք հաճախ վկայել մարդկանց՝ առանց երբևէ մեր բերանը բացելու: Թող երբեք մեր վերաբերմունքը չստիպի որևէ մեկին չցանկանալ հետևել Հիսուսին:

Հիշեք, ձեր վերաբերմունքն ազդում է այն բանի վրա, ինչ դուք անում եք, և արտացոլում է ձեր ով լինելը: Եթե դուք ունեք վատ վերաբերմունք, ձեր արտացոլանքը բացասական կլինի: Եթե ունեք լավ վերաբերմունք, այն դրական կլինի: Որպես քրիստոնյաներ՝ մենք պետք է լինենք Հիսուսի արտացոլանքը:

Փիլիպեցիների 2.5-ում գրված է. «*Ձեր ամեն մեկը թող այն մտածի, որ էլ Քրիստոս Հիսուսում էր*»: Եթե դուք ունեք Քրիստոսի միտքը, ձեր վերաբերմունքը լավը կլինի, ու դուք կսովորեք, թե ինչպես համբերատար լինեք: Ուշադրություն դարձրեք, ես չասացի, որ դուք *ինքնաբերաբար* համբերատար կդառնաք: Ես ասացի, որ դուք *կսովորեք*, թե ինչպես համբերատար լինեք: Մենք բոլորս սովորում ենք:

Ձեր վերաբերմունքը կստեղծի այնպիսի մթնոլորտ, որ շրջապատող մարդիկ ձեզ կամ կսիրեն, կամ կարհամարհեն: Մենք բոլորս ճանաչում ենք մարդկանց, որոնց կողքին պարզապես կցանկանալինք լինել: Եվ կան մարդիկ, որոնց կողքին լինելն այդքան էլ հաճելի չէ: Երբեմն պատճառը, որ հաճույք չենք ստանում այդ մարդկանց կողքին գտնվելուց, այն է, որ նրանք բացասական վերաբերմունք



են ցուցաբերում: Նրանք նույնիսկ կարիք չունեն որևէ խոսք ասելու:

Եթե ձեր վերաբերմունքի հարցում դուք օգնության կարիք ունեք, ի սրտե աղոթե՛ք այս աղոթքը. «Երկնային Հայր, օգնիր ինձ փոխելու իմ վերաբերմունքը: Օգնիր ինձ արթուն լինելու Քեզ և Քո Խոսքին հետևելու մեջ: Օգնիր ինձ Քո Խոսքին համապատասխան պահելու իմ վերաբերմունքը, մտքերը և խոսքերը, որպեսզի ես սփռեմ Հիսուսի սերը, ուրախությունը, խաղաղությունը և ողորմությունը: Շնորհակալ եմ դրա համար Հիսուսի անունով, ամեն»:

## Գլուխ 8

### Ակնկալե՛ք լավագույնը

*Անկախ նրանից՝ դուք մտածում եք, որ կարող եք,  
թե մտածում եք, որ չեք կարող՝ երկու  
դեպքում էլ դուք ճիշտ եք:  
Հենրի Տորդ*



Գուցե մարդուն հատուկ է վատագույնին սպասելը, սակայն եթե մենք մտադիր ենք նվաճել ապագան, ապա պետք է սովորենք սպասել լավագույնին:

Աստվածաշնչում բազմաթիվ աստվածապաշտ մարդիկ սպասում էին վատագույնին իրենց կյանքի այս կամ այն պահին: Առաջինը, որին ուզում եմ՝ անդրադառնանք, Դավիթն է:

Ա Թագավորաց 27-րդ գլուխը հիշատակում է Սավուղ թագավորի և Դավթի միջև ընթացող պայքարի մասին: 26-րդ գլխում մենք կարդում ենք, որ Դավիթը երկրորդ անգամ խնայեց Սավուղի կյանքը: Դավիթը մեկ անգամ չէ, որ հնարավորություն ունեցավ սպանելու Սավուղին, սակայն նա չարեց դա, որովհետև գիտեր, որ Սավուղը Տիրոջ օծյալն էր: Սա այն միջադեպն էր, երբ Դավիթը մտավ քարանձավ, որտեղ քնած էր Սավուղը, և վերցրեց Սավուղի նիզակն ու ջրի սափորը, որպեսզի երբ Սավուղն արթնանար, իմանար, որ Դավիթն այնտեղ էր եղել, բայց խնայել էր իր կյանքը:

Երբ Սավուղը գիտակցեց, թե ինչ է Դավիթն արել, աղաղակելով Դավթին ասաց. «...Մեղք գործեցի. դարձիր, որոյսկ իմ Դավիթ. քեզ դեմ այլևս չարիք չեմ գործի, որովհետև իմ հոգին այսօր քո աչքերին

պատրվական երևաց. *ահա հիմարություն արի և մեծապես սխալվեցի»* (Ա Թագ. 26.21): Այն ժամանակ Սավուղն օրհնեց Դավթին, և Դավիթը գնաց իր ճանապարհով:

Դավիթն ու Սավուղը երկար տարիներ տևական պայքարի մեջ էին այն բանից հետո, երբ Դավիթը սպանեց Գողիաթին: Սակայն երբ Դավիթը երկրորդ անգամ խնայեց Սավուղի կյանքը, նրանք կարծես համաձայնության եկան հաշտության շուրջ:

Դավիթը վստահեց Աստծուն Սավուղի դեմ պայքարի ողջ ընթացքում, և Աստված պահպանեց նրան: Բայց Ա Թագավորաց 27-րդ գլխում Դավիթը սայթաքեց հավատքում:

**Ա ԹԱԳԱՎՈՐԱՑ 27.1**

**27 ԵՎ ԴԱՎԻԹՆ ԻՐ ՍՐՏՈՒՄ ԱՍԱՑ. «ՎԵՐՋԱՊԵՍ ԵՍ ՄԵՎ ՕՐ ՍԱՎՈՒՂԻ ՁԵՌՔՈՎ ԿՈՐՉԵԼՈՒ ԵՄ. Ինձ համար փղշտացիների երկիրը փախչելուց լավը չկա, որ Սավուղը ինձնից հույսը կկտրի, և ինձ այլևս Իսրայելի բոլոր սահմանների մեջ չի որոնի. այսպես նրա ձեռքից կազատվեմ»:**

Քանի որ Դավիթը սպասում էր վատագույնին, նա վեր կացավ ու գնաց բնակվելու փղշտացիների երկրում, որտեղ ապրեց որոշ ժամանակ:

Շատ անգամներ, երբ սպասում ենք վատագույնին, տանջվում ենք այն բաների մտքերով ու պատկերներով, որ, մեր կարծիքով, տեղի է ունենալու: Մինչդեռ մեծ մասամբ այն ամենը, ինչին սպասում ենք, երբեք չի իրականանում:

Դավիթը մոռացավ Աստծո պաշտպանող զորության մասին ու սկսեց կենտրոնանալ հանգամանքների վրա: Դա ստիպեց նրան փոխել իր ակնկալիքները: Երբ Դավիթը մոռացավ այն փաստը, որ Աստված ամբողջ ժամանակ պաշտպանում էր իրեն, սկսեց սպասել, որ ինքը կորչելու է Սավուղի ձեռքով:

Աստված բազմիցս հոգ էր տարել Դավթի մասին՝ ազատելով նրան առյուծից ու արջից, Գողիաթի թրից և նույնիսկ Սավուղի ձեռքից: Բայց տկարության պահին Դավիթը կորցրեց հավատքը և գնաց բնակվելու փղշտացիների՝ իր ժողովրդի թշնամու երկրում:

**Դանիելը և առյուծների գուրը**

Այժմ եկեք նայենք մի մարդու օրինակի, որն անհավանական դժվարությունների հանդիպեց, սակայն առ Աստված ունեցած հավատքի շնորհիվ սպասեց լավագույնին և հաղթեց: Սա Դանիելի և

առյուծների գուրբի մասին պատմությունն է:

Դանիելի 6-րդ գլխում ապագա մեծ մարգարե Դանիելը դեռևս երիտասարդ էր, երբ տարվեց գերության: Իր սովորության համաձայն՝ Դանիելը օրը երեք անգամ մոտենում էր պատուհանին և աղոթում Տիրոջը: Նրա թշնամիներն ասում էին նրան, որովհետև նախանձում էին, որ նա բարեհաճություն էր գտել թագավորի մոտ: Ուստի նրանք համոզեցին Դարեհ թագավորին, որ մի հրովարտակ ստորագրի, որում ասվում էր, որ ով երեսուն օրվա ընթացքում, բացի թագավորից, որևէ աստծո կամ մարդու աղոթի, կենտվի առյուծների գուրբը:

Դարեհ թագավորը ստորագրեց հրովարտակը՝ չիմանալով, որ այդ մարդիկ փորձում էին թակարդը գցել Դանիելին:

Այս մարդիկ սպասեցին այնքան, մինչև Դանիելը սկսեց աղոթել, ապա գնացին թագավորի մոտ և հիշեցրին նրան իր հրովարտակի մասին: Երբ թագավորն իմացավ, որ Աստծուն աղոթողը Դանիելն էր, հասկացավ, որ սխալ է գործել, սակայն նա ոչինչ չէր կարող անել հրովարտակը փոխելու համար:

Երբ Դարեհը Դանիելին նետեց առյուծների գուրբը, նրան ասաց. «Թող այն Աստված, որին դու ծառայում ես, փրկի քեզ» (Դան. 6.16): Եվ հաջորդ առավոտյան բոլորը, այդ թվում՝ թագավորը, հայտնաբերեցին, որ դա հենց այն էր, ինչ Աստված արեց:

## Մեկի հավատքը՝ ի հակադրություն մյուսի

Ես ուզում եմ Դարեհ թագավորին համեմատել Դանիելի հետ՝ ցույց տալով, որ մինչ մեկը սպասում էր վատագույնին, մյուսը սպասում էր լավագույնին և հզոր կերպով ազատվեց:

Դարեհ թագավորն իշխանություն ուներ Դանիելին նետելու առյուծների գուրբը և, հակառակ իր ցանկության, ստիպված եղավ անել դա, որովհետև ինքն էր այդ հրամանն արձակել: Դա օրենք էր, և նույնիսկ ինքը՝ թագավորը, չէր կարող փոխել այն: Դանիելին առյուծների գուրբը նետելուց հետո Դարեհը վերադարձավ տուն՝ գիշերելու:

### ԴԱՆԻԵԼ 6.18

**6 Հետո թագավորը գնաց իր պալատը և գիշերը անցկացրեց առանց ուտելու, և նվագարաններ էլ բերել չտվեց իր առաջ, և քունը գնաց նրա վրայից:**

Դարեհը չկարողացավ քնել, որովհետև մտահոգված և ան-

հանգստացած էր Դանիելի համար:

Իսկ Դանիելը գիշերը լավ քնեց: Պատկերացնում եմ, թե ինչպես էր նա այդ բոլոր առյուծներին միասին հովվել, նրանցից մեկին օգտագործել բարձի փոխարեն, իսկ մյուսներին ստիպել պառկել իր կողքին՝ գիշերն իրեն տաքացնելու համար:

**ԴԱՆԻԵԼ 6.19-22**

**19 Այն ժամանակ թագավորը արշալույսին վեր կացավ կանուխ և շտապելով գնաց առյուծների գուբը:**

**20 Եվ երբ որ գուբին մոտեցավ, Դանիելին կանչեց տրտում ձայնով. թագավորը խոսեց և ասաց Դանիելին. «Ո՛վ Դանիել, կենդանի Աստծո ծառա, քո Աստվածը, որին դու պաշտում ես անդադար, կարողացավ քեզ ազատել առյուծներից»:**

**21 Այն ժամանակ Դանիելը խոսեց թագավորի հետ. «Ո՛վ թագավոր, հավիտյան ո՛ղջ կաց:**

**22 Իմ Աստվածը ուղարկեց իր հրեշտակը, և նա փակեց առյուծների բերանը, և նրանք ինձ չվնասեցին, որովհետև նրա առաջ մաքրություն գտնվեց ինձ վրա, և քո առաջ էլ, ո՛վ թագավոր, մի հանցանք չեմ արել:**

Քանի որ Դանիելը վստահեց Աստծուն և սպասեց լավագույնին, նա կարողացավ թագավորին ասել. «Չվախենաս, ո՛վ թագավոր: Ես այստեղ եմ, և ամեն բան հրաշալի է: Իմ Աստված հոգ է տարել իմ մասին»:

Հասկանում եք, մեկը սպասում էր վատագույնին, իսկ մյուսն ապրում էր հավատքով: Հավատքը հանգստանում է, անհավատությունն ընկղմվում է անհանգստության մեջ: Երբ սպասում եք վատագույնին, ամբողջ գիշեր շուռումուռ եք գալու: Բայց երբ սպասեք լավագույնին, կհանգստանաք Աստծո խաղաղության մեջ:

## **Ունեցե՛ք դրական մտքեր**

Գուցե դուք ասում եք. «Ի՞նչ առնչություն ունեն այս պատմություններն ինձ հետ այսօր»:

Զգալի: Օրինակ, եթե երեսուն օր շարունակ ամուր կանգնեք հավատքում, ապա հավատքից մեկ քայլ նահանջեք, այդ մեկ սայթաքումը կարող է ի չիք դարձնել Աստծուն հավատալու երեսուն օրերը: Սատանան գիտի դա, ուստի նա մշտապես փորձում է հեռացնել ձեզ հավատքից:

Երբ հավատքով կանգնում եք ինչ-որ բանի համար, չեք կարող ձեզ թույլ տալ, որ բացասական մտքեր ունենաք: Երբ լսում եք լուրեր աշխարհում կամ ձեր քաղաքում կատարվող իրադարձությունների մասին, դուք չեք կարող ձեզ թույլ տալ բացասական մտքեր ունենալ: Դուք պետք է միշտ ակնկալեք, որ Աստված հոգ կտանի ձեր մասին:

Թերթ կարդալիս կամ հեռուստատեսային լուրեր լսելիս գրեթե անհնար է, որ մտքում անմիջապես չսպասենք վատագույնին: Սակայն եթե ցանկանում ենք, որ Աստծո և Նրա Խոսքի հանդեպ մեր հավատքը գործի, չենք կարող թույլ տալ, որ այս աշխարհի ճնշումները շարունակ ոմբակոծեն մեր ականջները, աչքերը և միտքը՝ առնվազն մեզ վրա ազդելու նպատակով:

Ես չեմ ասում, որ մենք չպետք է գործենք ողջամտորեն: Մենք պետք է միշտ օգտագործենք առողջ բանականությունը: Ես խոսում եմ այն մասին, թե ինչպես սովորեք հավատալ Աստծուն և ակնկալել, որ այն, ինչ Նա Իր Խոսքում ասում է ձեր մասին, կիրականանա:

## Աստված դեռևս Աստված է

Աստված ասաց, որ կրոնի մեր կարիքները (Փիլիպ. 4.19): Գուցե դուք հարցնում եք՝ ինչպե՞ս: Չգիտեմ: Իմ կամ ձեր պարտականությունը չէ իմանալ, թե ինչպես է Նա դա անելու: Մեր պարտականությունն է միայն հավատալ Աստծուն և աներկբայորեն ընդունել Նրա Խոսքը:

Աստծո Խոսքում գրված է, որ Նա կբավարարի մեր կարիքները: Այն, թե ինչպես է Նա բավարարում մեր կարիքները, Նրա գործն է: Մեր գործն է աներկբայորեն ընդունել Նրա Խոսքը և թույլ տալ, որ Նրա Խոսքը լինի վերջնական հեղինակությունը:

Հնարավոր է՝ ինչ-որ մեկն ասի. «Բայց ձեզ չի մտահոգում գնաճը: Ի՞նչ կլինի, եթե վառելիքի գինը նորից բարձրանա: Ի՞նչ կլինի, եթե հարկային համակարգը փոխվի»:

Դե, եթե ես լսեի այն ամենը, ինչ հաղորդվում է լուրերով, կընկնեի հուսահատության մեջ և կսպասեի վատագույնին: Սակայն ես ականջ եմ դնում Աստծո Խոսքի ճշմարտությանը: Եվ անկախ նրանից, թե ինչ է տեղի ունենում՝ ես պատրաստվում եմ անելու այն, ինչ գրված է Աստվածաշնչում, որովհետև Աստծո Խոսքում ասվում է, որ այն, ինչին հավատամ, ինչի համար հավատք ունենամ՝ հիմնված Խոսքի վրա, կիրականանա:

Այս աշխարհում կան բաներ, որ կարող են փոխվել, սակայն Աստ-

ված նույնն է (Եբր. 13.8): Աստված և Խոսքը միակ բաներն են, որ չեն փոխվում: Եվ Իր Խոսքում Աստված ասաց, որ Նա կլրացնի իմ բուրդը կարիքները (Փիլիպ. 4.19): Մեծ մասամբ Աստված լրացնում է իմ կարիքները դուլարային թղթադրամների միջոցով, բայց իմ վստահությունը դրանց մեջ չէ: Ապահովության հարցում իմ վստահությունն իմ աշխատանքի մեջ չէ: Ապահովության հարցում իմ վստահությունը հիմնված է Աստծո և Նրա Խոսքի վրա: Մատթեոսի Ավետարանի 24.35-ում գրված է. «Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց Իմ Խոսքերը չեն անցնի»: Եթե դա Աստված է ասել, ես հավատում եմ դրան: Եվ այսքանով հարցը փակված է:

## **Թող Խոսքը առաջին տեղում լինի**

Մարկոսի Ավետարանի 16-րդ գլխում մենք կարդում ենք երեք կանանց մասին, որոնք սպասում էին վատագույնին, սակայն պարզվեց, որ այն, ինչին նրանք սպասում էին, երբեք տեղի չունեցավ:

### **ՄԱՐԿՈՍ 16.1-4**

**1 Եվ երբ որ շաբաթն անցավ, Մարիամ Մագդաղենացին և Հակոբի մայրը՝ Մարիամը, և Սաղովմեն խունկեր առան, որ գան, Նրան օծեն:**

**2 Եվ միաշաբաթի առավոտ շատ կանուխ արեգակը ծագելիս գալիս են գերեզմանը:**

**3 Եվ իրար ասում էին. «Ո՞վ կթավալեցնի քարը մեզ համար գերեզմանի դռնից»:**

**4 Եվ նայեցին տեսան, որ քարը գերեզմանից հեռու էր թավալած, որովհետև շատ մեծ էր:**

Այս կանայք անհանգստացան, որովհետև սպասում էին վատագույնին: Նախքան գերեզման հասնելը նրանք անհանգստանում էին. «Ո՞վ է գլորելու քարը»: Սակայն երբ հասան այնտեղ, հայտնաբերեցին, որ դա նույնիսկ խնդիր չէր, որովհետև քարն արդեն գլորված էր:

Միգուցե դուք անհանգստանում եք տարբեր պատճառներով: Բայց եթե հետևեք Աստծուն և այն ճանապարհին, որ Նա նախասահմանել է ձեր կյանքի համար, ապա երբ հասնեք այնտեղ, ուր ուղևորվել էիք, կհայտնաբերեք, որ ամեն բանի մասին արդեն հոգ է տարվել: Բայց եթե ձեր ժամանակն անցկացնեք անհանգստանալով ու ցանկանալով իմանալ, թե ինչ է տեղի ունենալու ապագայում,

ապա կապրեք տանջալից կյանքով: Հիշեք, եթե ինքներդ կարողանայիք շտկել ձեր իրավիճակը, ապա արդեն արած կլինեիք դա: Հիմա ժամանակն է պարզապես ապավինելու Աստծո խոսքին և առաջ շարժվելու:

Երբեմն մենք թույլ ենք տալիս, որ թշնամին խաղա մեր մտքերի հետ, փոխանակ թույլ տալու, որ խոսքը լինի առաջին տեղում: Եվս մեկ անգամ թույլ տվեք ասել, որ ես չեմ խոսում անխոհեմ գործելու մասին: Ես խոսում եմ այն մասին, որ եթե դուք իմանաք ինչպես հավատալ Աստծուն և ամուր կանգնել ձեր դիրքում, ապա թույլ կտաք, որ Աստծո խոսքը լինի առաջին և վերջին խոսքը ձեր կյանքում:

### **Դուք կարող եք ամեն բան անել Հիսուս Քրիստոսի միջոցով**

Մի անգամ մեկն ինձ ասաց. «Թվում է, թե դուք չգիտեք ինչպես ընդունել «ոչ» պատասխանը»:

Ես պատասխանեցի. «Դե, ես չեմ հավատում «դա հնարավոր չէ» արտահայտությանը»:

Ես միշտ սպասում եմ լավագույնին, որովհետև հավատում եմ, որ Աստված կարող է ճանապարհ բացել այնտեղ, որտեղ ճանապարհ չկա: Ամեն բան հնարավոր է, երբ ունեք հավատք Աստծո խոսքի հանդեպ: Փիլիպեցիների 4.13-ում գրված է, որ մենք կարող ենք անել *ամեն բան* մեզ զորացնող Քրիստոսով:

Շատ մարդիկ դեռևս ամուր չեն կառչել այդ խոսքից: Նրանք կարդում են այն, սակայն չեն կառչում դրանից: Գրված է. «Ես *կարող եմ*»: Այստեղ չկա «չեմ կարող» արտահայտությունը: Գրված է՝ «Ես *կարող եմ*»: Կարող եմ ինչ անել: *Ամեն բան*: Ոչ թե որոշ բաներ, այլ *ամեն բան*: Ինչպես կարող ենք ամեն բան անել: Հիսուս Քրիստոսի միջոցով:

Ես կարող եմ անել ցանկացած անհրաժեշտ բան, որովհետև ես Քրիստոսում եմ: Պատճառը ոչ թե այն է, թե ով եմ *ես*, այլ այն, թե Ով է *Հիսուսը*, և այն, որ ես Նրա մեջ եմ:

Որոշ մարդիկ կարծում են, որ այս խոսքը վերաբերում է միայն հոգևոր բաներին, սակայն Պողոսը չէր խոսում միայն հոգևոր բաների մասին. նա խոսում էր նաև ֆիզիկական բաների մասին: Ուշադրություն դարձրեք, որ ասվում է. «*ԱՄԵՆ ԲԱՆ կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով*»: Դա նշանակում է, որ ես կարող եմ այն ամենը, ինչ անհրաժեշտ է անել հոգևոր և ֆիզիկական ոլորտներում:



Ինչ-որ մեկը գուցե ասի. «Սպասե՛ք: Եթե դուք շարունակեք այդպես խոսել, չափից շատ կոզևորեք մարդկանց, և նրանք կդառնան եսասեր ու մեծամիտ»:

Ո՛չ, մեծամտություն չէ, երբ ասում եք. «Ես կարող եմ դա անել *Հիսուս Քրիստոսի միջոցով*»: Գուցե մենք կատարում ենք ֆիզիկական աշխատանքը, բայց Քրիստոսն է, որ մեզ ուժ և զորություն է տալիս:

## Եղիա մարգարեն

Չկա ոչինչ, որի միջով չկարողանաք անցնել, չկա ոչինչ, որ չկարողանաք հաղթահարել, եթե մնաք Քրիստոսում: Խնդիրն այն է, որ շատ քրիստոնյաներ հայտնվում են դժվարությունների մեջ և զրկվում Նրա խաղաղությունից ու պաշտպանությունից՝ ընկնելով վախի մեջ և սպասելով վատագույնին:

Եղիան՝ Աստծո մեծ մարգարեն, լավ օրինակ է նրա, ինչի մասին ես խոսում եմ: Աստվածաշնչում ասվում է, որ նա բազում մեծ սխրանքներ գործեց Աստծո համար: Գ Թագավորաց 18-րդ գլխում կարդում ենք, թե ինչպես Եղիան պարտության մատնեց Բահաղի բոլոր մարգարեններին: Բայց 19-րդ գլխում Եղիան է հանդես գալիս պարտվողի դերում:

### Գ ԹԱԳԱՎՈՐԱՑ 19.1-4

- 1 Եվ Աքաաբը պատմեց Հեզաբելին բոլոր, ինչ որ Եղիան արել էր, և այն բոլորը, որ ամեն մարգարեններին սրով սպանել էր:
- 2 Եվ Հեզաբելը պատգամավոր ուղարկեց Եղիայի մոտ՝ ասելով. «Աստվածները այսպես անեն և սրանից էլ ավելի անեն, եթե որ էգուց այս ժամանակին քո անձը նրանցից մեկի անձի տեղ չդնեն»:
- 3 Եվ այս բանը տեսնելով՝ վեր կացավ գնաց իր անձը ազատելու համար և հասավ Հուդայի Բերսաբեեն և իր պատանուն թողեց այնտեղ:
- 4 Բայց ինքը մեկ օրվա ճանապարհի գնաց անապատում և եկավ մի գիհիի տակ նստեց և սրտանց ուզեց, որ մեռնի, և ասաց. «Արդեն բավական է, ո՛վ Տեր, իմ հոգին ան, որովհետև ես իմ հայրերից լավը չեմ»:

Եկե՛ք մի պահ պատկերացնենք: Ահա Աստծո մեծ մարդ Եղիան, որը հենց նոր սարի վրա էր, որտեղ կրակն իջավ Երկնքից և լափեց

զոհը, որը թրջվել էր տասներկու տակառ ջրով: Եղիան՝ այն մարդը, որ նոր էր սպանել Բահադի բոլոր մարգարեներին, շրջվեց ու փախավ՝ վախենալով իր կյանքի համար, որովհետև թագուհին ասել էր, որ կտրելու է նրա գլուխը իր մարգարեներին սպանելու համար:

Այս տեսարանը հիշեցնում է ինձ որոշ քրիստոնյաների: Նրանք խոշոր հաղթանակ են տանում և առատորեն օրհնվում Աստուծոց: Հետո սատանան հարվածում է նրանց համեմատաբար աննշան ինչ-որ բանով, ու նրանք սկսում են վախեցած վազել՝ ասելով. «Ինչ ենք անելու հիմա»:

Գ Թագավորաց 19.4-ում Եղիան այնպես էր սպասում վատագույնին, որ այլևս չէր ցանկանում ապրել: Նա ասաց. «Տե՛ր, այլևս անօգուտ է իմ ապրելը: Պարզապես վերցրո՛ւ իմ կյանքը»: Եղիան իրականում չէր ցանկանում մահանալ: Եթե այդպես լիներ, նա չէր փախչի: Եթե նա իսկապես ցանկանար մահանալ, ապա կարող էր մնալ իր տեղում, և Հեզաբելն արագ կգտներ նրան: Ո՛չ, նա հավատքում սայթաքում ունեցավ, որովհետև վատ լուր էր լսել ու սպասում էր վատագույնին:

Եղիան կարիք չուներ փախչելու, երբ Հեզաբելը սպառնում էր սպանել նրան: Նա կարող էր մնալ իր տեղում, կախված լինել Աստծո զորությունից և ապրել: Եղիան գիտեր ինչպես կանչել Աստծուն նեղության ժամանակ: Նա հենց նոր էր սարի վրա ապացուցել Աստծո զորությունը (տե՛ս Գ Թագ. 18.19-40): Ու եթե Եղիան մնար այնտեղ, որտեղ գտնվում էր, ու շարունակեր հավատալ Աստծուն, Աստված նրան կրկին կազատեր:

Ինչ կկատարվեր, եթե այն ժամանակ, երբ Հեզաբելի մարդիկ եկան Եղիային մահապատժի ենթարկելու, Եղիան Տեր Եհովային կանչեր այնպես, ինչպես կանչեց սարի վրա: Ինչ կկատարվեր, եթե նա գլուխը բարձրացներ Երկինք ու ասեր. «Տե՛ր Եհովա՛ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստված, ես աղաղակում եմ Քեզ՝ պաշտպանող զորության համար»: Կոահե՛ք, թե ում գլուխները կգլորվեին: Ոչ թե մարգարեի, այլ այն մարդկանց գլուխները, որոնք դուրս էին եկել նրա դեմ:

Բայց փոխարենը Եղիան կորցրեց իր հավատքը: Այս դեպքը ցույց է տալիս, որ ձեր երեկվա հաղթանակը երաշխիք չէ այն բանի, որ ինքնաբերաբար հաղթանակ կունենաք վաղը: Դուք պետք է պատշաճ հոգևոր վիճակում լինեք և ամեն օր որոշում կայացնեք ամեն ինչից վեր հավատալու Աստծո խոսքին:

## Պողոս առաքյալը

Գործք առաքելոց 27-րդ գլխում կարդում ենք, որ Պողոս առաքյալը մի նավի վրա էր, որը սաստիկ փոթորկի էր ենթարկվել: Նավը մի քանի օր շարունակ տարուբերվում էր: Անձնակազմն ամեն ինչ նավից դուրս նետեց, բայց, միևնույնն է, նավը սուզվում էր: Ողջ անձնակազմը վախենում էր իր կյանքի համար՝ բացի Պողոսից, որը կանգնեց նավի տախտակամածին և ասաց. «...սրտապի՛նդ կացեք, ո՛վ մարդիկ, որովհետև հավատում եմ Աստծուն, որ այսպես կլինի, ինչպես ինձ հետ խոսեց» (Գործք 27.25):

Ինչո՞ւ էր Պողոսն այդքան վստահ: Որովհետև գիշերն Աստծո հրեշտակը երևաց նրան՝ վստահեցնելով, որ նա ապրելու էր, որպեսզի կանգներ Կեսարի առաջ: Հրեշտակը Պողոսին ոչ միայն ասաց, որ նա անցնելու էր փոթորկի միջով, այլև հայտնեց, որ նրանք, ովքեր Պողոսի հետ էին, ողջ էին մնալու (Գործք 27.22-24): Եվ Պողոսը հավատաց ու գործեց Աստծո հրեշտակի խոսքերի հիման վրա:

Կարո՞ղ եք, այսպես ասած, կանգնել ձեր նավի տախտակամածին, մինչ տարուբերվում եք կյանքի փոթորիկներում, և ասել. «Ես հավատում եմ Աստծուն, որ կլինի այնպես, ինչպես Նա ինձ հետ խոսեց»: Դա այն դիրքն է, որին պետք է հասնեք Նրա մեջ, և այն սպասումը, որ պիտի ունենաք:

Դուք չեք կարող ձեզ թույլ տալ ասել. «Ո՞վ է գլորելու քարը» կամ «Ես պետք է փախչեմ՝ կյանքս փրկելու համար»: Ո՛չ, հավատքը սպասում է հաղթանակի: Այնպես որ սկսե՛ք ակնկալել լավագույնը և խոսել լավագույնը: Մի՛ խոսեք այն մասին, թե ինչ չունեք. խոսեք այն մասին, թե ինչ ունեք: Խոսե՛ք այն մասին, թե ով եք դուք և ինչ ունեք Քրիստոսում:

Մի՛ նստեք ու խոսեք բացասական բաներ: Եթե թույլ տաք, որ ձեր ականջները դառնան աղբաման՝ մշտապես լսելով անպետք բաներ, ապա կսկսեք անպետք բաներ խոսել: Բայց եթե մշտապես լսեք Աստծո խոսքը, ապա կխոսեք խոսքը:

Դուք նմանվում եք նրանց, ում հետ ժամանակ եք անցկացնում: Եվ դուք դառնում եք այն, ինչ լսում եք: Այսօր այդքան շատ ընտանիքներ վտանգի տակ են այն պատճառով, որ մարդիկ նստած դիտում և լսում են այն աղբը, որ հեռարձակվում է հեռուստատեսությամբ: Եթե թույլ տաք, որ ձեր սրտում բացասական սերմ ցանվի, սատանան կփորձի այնպես անել, որ այդ սերմը պտուղ բերի:

Դուք ոչինչ չեք կարող անել այն բանի հետ, ինչ հեռարձակվում է հեռուստատեսային ալիքներով, սակայն դուք *կարող եք* փոխել *ձեր* հեռուստացույցի ալիքը: Գուցե ասեք. «Ինչ կապ ունի ձեր ասածը այն բանի հետ, ինչ ես դիտում եմ հեռուստացույցով»: Երբ սնվեք անպիտան բաներով, Աստծո Խոսքը ձեր սրտից կզողացվի: Դա կխանգարի ձեզ ապրելու Աստծո համար, և դուք կսկսեք սպասել վատագույնին: Ձեր հավատքը բավականաչափ ուժեղ չի լինի լավագույնին սպասելու համար:

## Պարզ մոտեցում

Ուժեղ պահեք ձեր հավատքը ու դադարեք վատագույնին սպասելուց: Սկսեք պահանջել այն, ինչ, համաձայն Խոսքի, ձերն է՝ ասելով. «Ես կարող եմ ամեն բան անել ինձ զորացնող Քրիստոսով»:

Կարևոր չէ՝ ինչ է մեկ ուրիշն ասում այն մասին, թե ինչ է կատարվելու ապագայում: Աստծո Խոսքում գրված է, որ Աստված հոգ կտանի ձեզ համար: Անգամ չափազանց բարձր գնաճի դեպքում Աստծո Խոսքը, միևնույնն է, գործում է:

Աստված հոգ տարավ իսրայելցիների համար, երբ նրանք թափառում էին անապատում, ու Նա հոգ կտանի նաև ձեզ համար, նույնիսկ եթե ստիպված լինի մանանա թափել ձեր տան բակում: Աստված արեց դա Իր զավակների համար Հին կտակարանում, և եթե հարկ լինի, Նա կանի դա Իր զավակների համար այսօր:

Իմ վստահությունն Աստծո Խոսքի մեջ է: Ինչ էլ պատահի, ղվ էլ գա իշխանության կամ հեռանա իշխանությունից, ղր քաղաքական կուսակցությունն էլ ղեկավարի կամ չղեկավարի, Աստծո Խոսքը կգործի:

Ինչ-որ մեկը կարող է ասել. «Դա շատ պարզ մոտեցում է»:

Դե՛, Հիսուսն ասաց, որ այդպիսի մոտեցում է պետք ունենալ: Մարկոս 10.15-ում Նա ասաց. *«Ճշմարիտ ասում եմ ձեզ, ով որ Աստծո արքայությունը չընդունի ինչպես երեխա, նա չի մտնի նրա մեջ»*:

Երբ փոքրիկ երեխային ինչ-որ բան եք ասում, նա հավատում է ձեզ: Նա չի գնում ու անհանգստանում ձեր ասածի համար ու չի էլ վերադառնում և անընդհատ հարցնում, թե արդյոք դա լինելու է: Նա ակնկալում է, որ կլինի հենց այնպես, ինչպես նրան ասացիք:

Եկեք նույն կերպ վերաբերվենք Աստծուն: Եթե Աստված ասել է, որ ինչ-որ բան է անելու, ուրեմն սպասեք, որ Նա կանի դա: Սպասեք, որ դա կլինի ոչ թե ձեր ով լինելու, այլ այն բանի շնորհիվ, թե ով եք դուք Քրիստոս Հիսուսում:

Դուք երբևէ ստիպված չեք լինի սպասել վատագույնին կամ կրկին սայթաքել հավատքում, սակայն դա տեղի կունենա, եթե սնվեք անպիտան բաներով Աստծո Խոսքի ճշմարտության փոխարեն: Դուք չեք կարող հաղթանակ տանել գլխում ունեցած գիտելիքներով կամ պարզապես ցանկանալով, որ դա տեղի ունենա: Դուք պետք է սպասեք և սրտով հավատաք դրան: Դուք ունեք հաղթանակ, երբ հավատում եք Աստծո Խոսքին՝ անկախ ամեն ինչից. անկախ նրանից, թե ինչ եք զգում, տեսնում, ճաշակում, շոշափում կամ հոտոտում:

## Գլուխ 9

# Ինչ է դուրս գալիս ճնշում գործադրելիս

*Իմ արժեքն Աստծո առաջ հայտնապես այն է,  
ինչ ես կամ ծածուկում:  
Օսվալդ Չեմբերս*



Ապագան գրոհով նվաճելու մասին խոսելիս ես մտադիր չեմ ձևա- նալ, թե միշտ հեշտ է դա անելը: Կյանքի ճնշումներն այցի են գալիս բոլորին: Կարևորն այն է, թե ինչպես ենք արձագանքում մեր առջև ծառայած տարբեր ճնշումներին: Այն, ինչ մեր ներսում է, դուրս կգա, երբ ճնշում գործադրվի, հետևաբար այն, ինչ ներդնում ենք, կենսա- կան նշանակություն ունի:

Ինչ ազդեցությամբ եք առաջնորդվում կյանքում: Բոլորս լսել ենք այսպիսի ասացվածքներ. «Փողը կրկնապատկելու ամենաարագ եղանակը այն ծախելն է և կրկին գրպանում դնելը», «Կատվին պարկից դուրս թողնելը շատ ավելի հեշտ է, քան նրան հետ մտցնելը» և «Եթե հայտնվեք փոսում, առաջին բանը, որ պետք է անեք, փորելը դադարեցնելն է»: Որոշ կարգախոսներ կամ աֆորիզմներ գուցե հումորային են, սակայն դրանցից շատերը լավ խորհուրդներ են տալիս:

Մենք բոլորս ունենք ասացվածքներ կամ կարգախոսներ, որոնց վրա հիմնում ենք մեր կյանքը: Տարիների ընթացքում տարբեր բա- ներ են մեզ ասել: Դրանք կարող են լինել ասացվածքներ կամ ար- տահայտություններ, որոնք մենք սովորել ենք փոքր հասակում կամ դպրոցում:

Օրիորդ Ֆաուլերը՝ իմ առաջին ուսուցչուհին, տարիներ առաջ, երբ ես նրա աշակերտն էի, ինձ ասաց մի բան, որով ապրում եմ մինչ օրս: Նա ասաց. ««Չկարողանալ» բառ գոյություն չունի, մինչև թույլ չտաս, որ այն գոյություն ունենա»: Օրիորդ Ֆաուլերն ինձ սովորեցրեց, որ միակ բանը, որ ինձ հետ է պահում ինչ-որ բան անելուց, «հնարավոր չէ անել» արտահայտությունն է: Մինչ օրս ես չեմ ասում, որ չեմ կարող ինչ-որ բան անել:

Նաև այն ամենը, ինչ ես անում եմ, անում եմ հարյուր տոկոսանոց ջանքով՝ շնորհիվ այն խոսքերի, որ հայրս ինձ ասաց մանկության տարիներին: Նա միշտ ասում էր. «Որդիս, եթե արժե ինչ-որ բան անել, ուրեմն արժե դա ճիշտ անել և արժե դա անել այն ամենով, ինչ ունես, և էլ ավելի: Եթե չես պատրաստվում ինչ-որ բան անելու այն ամենով, ինչ ունես, ուրեմն ընդհանրապես մի՛ արա դա»:

Ես սրտանց ընդունեցի հորս խորհուրդը, և այդ փիլիսոփայությունը դարձավ իմ կենսակերպը: Ես իմ ունեցած ամեն ինչը ներդնում եմ այն ամենի մեջ, ինչ անում եմ: Ես համոզված եմ, որ եթե որևէ բան արժե անել, ուրեմն արժե դա անել այն ամենով, ինչ ունեմ, այլապես ես ընդհանրապես չեմ անի դա:

Ոմանք այն, ինչ անում են, մակերեսորեն են անում: Նրանք երբեք որևէ բան չեն իրագործում. նրանք պարզապես այստեղ են: Բայց Աստվածաշունչը ցանկանում է, որ մենք պարզապես այստեղ չլինենք, այլ լինենք ավելին: Աստված Իր սուրբ Խոսքում ասում է, որ Իր ցանկությունն է, որ մենք լինենք *ինչ-որ բան* և անենք *ինչ-որ բան*:

## Ինչ ներս է մտնում, այն էլ դուրս է գալիս

Իմ երկու զավակները կարող են հաստատել, որ հազարավոր անգամներ ես կրկնել եմ այս արտահայտությունը. «Դու և Աստված միասին կարող եք իրականացնել ցանկացած բան»:

Ամեն օր, երբ Քրեյգն ու Դենիսը դուրս էին գալիս մեքենայից և գնում դպրոց, ես նրանց ասում էի. «Աստված սիրում է ձեզ, և հայրիկը սիրում է ձեզ: Ձեզ հրաշալի օր եմ մաղթում»: Ամեն գիշեր, երբ նրանց պառկեցնում էի քնելու, նույնիսկ նախքան նրանք կկարողանային խոսել, ես նրանց ասում էի. «Դուք հաջողակ եք: Եվ եթե Աստված ձեր կողմից է, դուք կարող եք լինել այն, ինչ ցանկանում եք լինել, և անել այն, ինչ ցանկանում եք անել»:

Ես ուրախությամբ կարող եմ ասել, որ իմ երկու զավակներն էլ

սովորել են բուհում և «Ռեմա» աստվածաշնչյան ուսուցման կենտրոնում և այսօր ամբողջական ծառայության մեջ են:

Ինչհի է, որ որոշ մարդիկ մեծանալով դառնում են ուժեղ անհատականություններ և հաղթում կյանքում: Գուցե դա պայմանավորված է նրանով, ինչ նրանց ծնողները սերմանել են նրանց մեջ: Գուցե երեխա ժամանակ նրանց միշտ ասել են, որ կարող են ունենալ և կունենան հաջողություն իրենց կյանքում:

Հենց մարդը սկսում է հավատալ, որ կարող է լինել ինչ-որ մեկը և կարող է ինչ-որ բան անել կյանքում, այդ ժամանակ նա իսկապես կարողանում է: Խնդիրն այն է, որ շատ մարդկանց սխալ բան են ասել, ու նրանք սկսել են հավատալ դրան: Ուստիև նրանց կյանքն արտացոլում է նրանց սխալ մտածողությունը:

Միգուցե նրանց ասել են, որ իրենք ոչինչ են, որևէ արժեք չունեն կամ երբեք հաջողության չեն հասնի: Այսպիսով՝ ինչ են նրանք արել: Նրանք գործել են այդ սպասումներով, որովհետև դա այն է, ինչ ներդրվել է նրանց մեջ:

Ինչպես ասացվածքն է ասում. «*Ինչ ՆԵՐՍ է մտնում, այն էլ ԴՈՒՐՍ է գալիս*»: Նայե՛ք սպունգին: Եթե սպունգը դնեք մաքուր ջրի մեջ, ապա քամեք այն, մաքուր ջուր դուրս կգա: Բայց եթե վերցնեք նույն սպունգը և դրանով մեծ քանակությամբ յուղ և յուղաքսուրք մաքրեք, այնուհետև ճզմեք այն, դուրս կգա կեղտանման մի զանգված: Ինչհի: Որովհետև դա այն է, ինչ մտել էր սպունգի մեջ:

Երբ հայտնվեք ճնշման տակ, ձեզնից դուրս կգա այն, ինչ մտել է ձեր մեջ: Եթե ձեր կյանքը լցված է բամբասանքով, պոռնոգրաֆիայով, հարբեցողությամբ, թմրամոլությամբ, բարկությամբ, բժախնդրությամբ և այնպիսի բացասական բաներով, որոնք ավելի շուտ քանդում, քան շինում են, ապա կյանքի ճնշումների տակ ճզմվելիս, բացի աղբից, ուրիշ ոչինչ դուրս չի գա:

Բայց եթե ձեր կյանքը լցված է սիրով, ողորմությամբ, ներմամբ, Աստծո խոսքով, աղոթքով, փառաբանության ու երկրպագության երգերով և Աստծո շնորհքով, երբ կյանքի ճնշումները գան ու ճզմեն ձեզ, ձեզնից դուրս կգան սեր, ողորմություն, շնորհք և այլն:

## **Կառուցե՛ք Աստծո խոսքի վրա**

Մենք մեր կյանքը կառուցել ենք տարբեր ասացվածքների ու առաձների վրա, սակայն պետք է ունենանք նաև Սուրբ գիրքը, որն առաջնորդում և ուղղորդում է մեզ: Քանի որ ձեր մտքում և սրտում



գրվածը կվերահսկի ձեր կյանքը, կարևոր է, որ այդ կյանքը կառուցեք Աստծո խոսքի հիման վրա:

Եբրայեցիների 10.16-ում գրված է, որ Աստված մեզ հետ ուխտ կնքեց սրա կապակցությամբ:

#### **ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 10.16**

**Թե՛ սա է այն ուխտը, որ կդնեմ նրանց հետ այն օրերից հետո,- ասում է Տերը,- կտամ Իմ օրենքները նրանց սրտերի մեջ և նրանց խորհուրդների վրա կգրեմ նրանց:**

Եթե ուսումնասիրեք Աստծո խոսքը, Նա Իր օրենքները կդնի ձեր սրտի մեջ: Եվ Հիսուսն ասաց. «Եթե կենաք ինձանում, և Իմ խոսքերը ձեզանում կենան, ինչ որ էլ կամենաք, կխնդրեք, և կլինի ձեզ» (Հովհ. 15.7): Լավ, ինչպե՞ս են Նրա խոսքերը մտալու ձեզանում, եթե առաջին հերթին դրանք չդնեք ձեր մեջ:

### **Կովի խոհեմություն**

Մենք պետք է հոգ տանենք, թե ինչ ենք դնում մեր սրտում: Մենք պետք է զգույշ լինենք, թե ում և ինչ ենք լսում: Եթե մենք բավականաչափ երկար լսենք այն, ինչ հակասում է Աստծո խոսքին, և հետևենք դրան, կհայտնվենք անախորժության մեջ:

Դուք պետք է հասկանաք, որ ինչ ներս եք մտցնում, այն էլ դուրս եք հանելու: Երբ կյանքի ճնշումները գան, դուք կամ դուրս եք հանելու Աստծո խոսքը («Շնորհակալություն Աստծուն, իմ բոլոր կարիքները լրացված են Նրա հարստության չափով՝ փառքով», «Նրա վերքերով ես բժշկված եմ» և այլն), կամ ասելու եք. «Օ՛հ, Տեր իմ, ինչո՞ւ թույլ տվեցիր, որ սա պատահեր ինձ հետ»: Դա պարզապես կախված է նրանից, թե ինչին եք դուք նայել և ում եք լսել:

Անկախ նրանից, թե ում ենք լսում կամ ինչ ենք կարդում՝ մենք պետք է կարողանանք զանազանել՝ արդյոք տվյալ ուսմունքը համապատասխանում է Աստծո խոսքին, թե մի փոքր շեղված է: Հիշում եմ մի շրջիկ ծառայողի, որը հզոր բաներ էր սովորեցնում աղոթքի մասին, սակայն ծայրահեղության մեջ էր մեկ այլ բնագավառում: Հասկանում եք, մարդիկ կարող են շեղվել մի բնագավառում, միաժամանակ ճիշտ ուղու վրա լինել մեկ այլ բնագավառում: Դա է պատճառը, որ մենք պետք է ունենանք բավականաչափ խորաթափանցություն՝ «խոտը ուտելու և ծղոտը թքելու» համար: Եթե դուք երբևէ կերակրել եք խոշոր եղջերավոր անասունի, ապա գիտեք, թե ինչ նկատի ունեմ:

Երկար տարիներ է՝ ես չոր խոտ չեմ հակավորել, բայց հիշում եմ, որ չոր խոտի շուրջը հակավորման թել էինք դնում, հետո հակերը տեղավորում էինք դեզերի մեջ: Բայց երբ հակավորող մեքենան հավաքում էր դաշտի խոտը, խոտի հետ հավաքում էր նաև քարեր, պահածոյի տուփեր և գետնին ընկած զանազան այլ բաներ: Այդ անպիտան բաները հակավորվում էին չոր խոտի հետ:

Բայց եթե դուրս գայիք դաշտ, կտեսնեիք, որ կովերը կերել էին միայն չոր խոտը, իսկ անպիտան բաներին՝ քարեր, պահածոյի տուփեր, ծղոտ և այլն, չէին դիպել: Դուք ստիպված կլինեիք հավաքել այդ ամբողջ աղբը: Կովերը բավականաչափ խելացի էին, որպեսզի ուտեին միայն խոտը, իսկ անպիտան բաներին չդիպեին:

Ցավոք, որոշ քրիստոնյաներ այնքան խելացի չեն, որքան կովերը: Ինչ ուսմունք էլ նրանց առջև դրվի, նրանք ընդունում և յուրացնում են այն՝ անկախ նրանից՝ դա լավ է իրենց համար, թե ոչ: Նրանք նման են թռչնի ձագերին, որոնք բնում նստած սպասում են մայր թռչունին, որը գնացել է նրանց կերակուր բերելու: Անկախ այն բանից, թե ինչ է մայրը բերում՝ ձագուկները բացում են իրենց բերանները և կոլ տալիս: Մենք պետք է ավելի խոհեմ լինենք:

## Մենք ձեր հավատքը

Հասկանում եք, մենք պետք է գիտակցենք, որ եթե մեկն ինչ-որ բան է ասում, դա չի նշանակում, որ իրականում այդպես է: Նույնիսկ Պողոս առաքյալն ասաց. *«Բայց եթե մենք էլ կամ երկնքից մի հրեշտակ ավերարանի ձեզ նրանից ուրիշ, քան թե որ մենք ավերարանեցինք ձեզ, նզովված լինի»* (Գաղատ. 1.8):

Մենք պետք է զգույշ լինենք, թե ինչ ենք ընդունում, որովհետև ինչ-որ ներս է մտնում, այն էլ դուրս է գալու, երբ ճնշում գործադրվի: Այնքան կարևոր է, որ կարդանք մեր Աստվածաշունչը և իմանանք, թե ինչ է ասում Աստծո հոսքը: Աստծո հոսքը սնում է մեր սիրտն ու միտքը:

Հռոմեացիների 10.17-ում գրված է, որ հավատքը գալիս է լսելուց, և լսելը՝ Աստծո հոսքից: Երբ սնվում եք Աստծո հոսքով, սնում եք ձեր հոգին: Եվ այն ժամանակ, երբ ի հայտ գան կյանքի ճնշումները, և կյանքը սկսի ճզմել ձեզ, ձեզնից հավատք և խիզախություն դուրս կգան: Դուք կունենաք խիզախություն դեմառդեմ կանգնելու ցանկացած իրավիճակի, որովհետև կունենաք հավատք առ այն, որ Աստված կանցկացնի ձեզ ցանկացած և ամեն բանի միջով:

Կրկին, Եբրայեցիների 10.16-ում գրված է. *«Թե՛ սա է այն ուխտը,*

որ կղնեմ նրանց հեպ այն օրերից հեպո,- ասում է Տերը,- կրամ Իմ օրենքները նրանց սրտերի մեջ և նրանց խորհուրդների վրա կգրեմ նրանց»: Աստված օրենքները դնում է մեր սրտերի ու մտքերի մեջ, երբ մենք կարդում կամ լսում ենք Խոսքը:

Եվ երբ Աստծո Խոսքը մտնում է մեր սրտի մեջ, այն դառնում է մեր մտքի՝ մեր մտածողության մասը: Այդ ժամանակ, երբ մեզ ճզմում են, սեր է դուրս գալիս: Երբ մեզ հետ սխալ են վարվում, ներողամտություն է դուրս գալիս: Երբ մեկ ուրիշը սխալ է կատարել կամ թերացել է, շնորհք և ողորմություն է դուրս գալիս:

### Ընդմիջտ պայքար

Մենք պետք է հասկանանք, որ պայքարի՝ հավատքի պայքարի մեջ ենք, ու դա ընդմիջտ պայքար է: Մենք պետք է ջանք թափենք պահպանելու Աստծո Խոսքը մեր սրտում և մտքում: Աստվածաշնչում ասվում է, որ պետք է պահես սիրտդ, որովհետև նրանից է կյանքի ելքը (Առակ. 4.23):

Սատանան ամեն կերպ կփորձի ձեզնից գողանալ Խոսքը կամ խանգարել, որ այն պտուղ բերի ձեր կյանքում: Երբեմն օգտագործելով զայրույթը կամ վիրավորանքը՝ նա խանգարում է քրիստոնյաներին՝ ստանալու այն, ինչ Աստված ունի իրենց համար:

Շատ քրիստոնյաներ թույլ են տվել, որ խոր վիրավորանքը կամ ակնհայտ անարդարությունը խանգարեն իրենց՝ ստանալու Աստծո լավագույնը: Նրանք թույլ են տվել, որ իրենց ցավը խանգարի իրենց՝ լինելու օրհնություն ուրիշների համար, ու սատանան նրանց հասցրել է այնտեղ, որտեղ ցանկանում է, որ նրանք լինեն: Այժմ նրանք օգուտ չեն տալիս ոչ իրենց, ոչ մեկ ուրիշի և ոչ էլ Աստծո արքայությանը:

Եթե սատանան չկարողանա գայթակղել ձեզ, որ մեղք գործեք, ապա կղիմի այլ միջոցների՝ ձեզ խանգարելու համար: Նա կարող է ասել. «Հիշում ես, թե այսինչն ինչ արեց քեզ հետ: Դու պետք է բոլորին ասես, թե ինչպիսի անձնավորություն է նա...»:

Երբ դուք սկսում եք կանգ առնել ուրիշների արածների վրա, սատանան շեղում է ձեր ընթացքը: Կրկին, դուք պետք է իմանաք, թե ինչ է գրված Խոսքում, որպեսզի երբ ճնշումը գա, ձեր ներսից միայն Աստծո Խոսք դուրս գա: Աստվածաշնչում գրված է, որ մենք պետք է աղթենք մեզ ցավ պատճառողների համար և ներենք նրանց (Մատթ. 5.44): Խոսքում նաև ասվում է, որ հեզության հոգով վերականգնենք նրանց, ովքեր մեղանչել են, որպեսզի ինքներս չմեղանչենք (Գաղատ. 6.1):

## Մոռացե՛ք անցյալը

Ես լսել եմ, թե որքան շատ մարդիկ են խոսում մերժված լինելու մասին: Նրանք ասում են. «Ողջ կյանքում ես մերժված եմ եղել: Ինձ այնքան խորն են ցավեցրել»:

Դուք կարող եք կենտրոնանալ այն վիրավորական բաների վրա, որ ուրիշներն արել կամ ասել են, մինչև որ դառնաք մի սպունգ, որը «լի է ոչնչով»: Բայց երբ կյանքի ճնշումները գան, դուք միայն կխանգարեք ձեզ և ուրիշներին: Եվ ընդհակառակը, դուք կարող եք Աստծո խոսքերը թաքցնել ձեր սրտում, մինչև որ դրանք դառնան նաև ձեր մտքի մի մասը: Եվ երբ որևէ մեկը սխալ վարվի ձեզ հետ, ձեր ներսից սեր ու ներում դուրս կգա: Երբ որևէ մեկը սխալ գործած լինի, ձեր ներսից շնորհք և ողորմություն դուրս կգա:

Ես վճռել եմ քայլել սիրով՝ անկախ նրանից, թե ինչ են ասում իմ մասին: Ես որոշել եմ պարզապես ասել. «Տե՛ր, Դու գիտես իմ սիրտը: Դու գիտես, թե ինչպես եմ ես ապրում, և Դու գիտես, թե ինչին եմ ես հավատում: Ների՛ր նրանց, Տե՛ր, իրենց ասածների և արածների համար: Ես շարունակելու եմ հետևել Քեզ»:

Ինչ էլ այլ մարդիկ ասեն կամ անեն, ձեր ապագան և կյանքի որակը կախված են նրանից, թե ինչ եք *դուք* ասում և անում:

Հասկանո՞ւմ եք, այս ամենը կրկին հիշեցնում է Աստծո օրենքները մեր սրտում և մտքում պահելու մասին: Աստված ինձ հավաստիացնում է, որ նշանակություն չունի, թե ինչ է տեղի ունեցել անցյալում, որովհետև Եբրայեցիների 10.17-ում գրված է, որ Աստված այլևս չի հիշում մեր մեղքերը և մեր անօրինությունները: Եթե դուք ներողություն եք խնդրել որևէ բանի համար, ինչ արել եք, մոռացե՛ք դրա մասին: Աստված մոռացել է:

Ինչո՞ւ ընկղմվել անցյալի մեջ: Շատ մարդիկ ընկղմվում են անցյալի վիրավորանքների մեջ, որովհետև ցանկանում են ընդունված լինել: Բայց Ամենակարող Աստված արդեն ընդունել է ձեզ:

## Շրջանակի մեջ առնել «Այո» կամ «Ոչ» պատասխանը

Բոլորս էլ կարող ենք հիշել գրություններ, որ փոխանցում էինք մեր ընկերներին, երբ սովորում էինք հիմնական դպրոցում: Մինչև չորրորդ դասարան տղաներն ու աղջիկները չէին ցանկանում որևէ առնչություն ունենալ միմյանց հետ: Սակայն հինգերորդ կամ վեցե-

րորդ դասարանից բոլորս սկսում էինք փոքրիկ նոթեր գրել՝ ասելով. «Դու ինձ դուր ես գալիս: Ես քեզ դժուր եմ գալիս: Պատասխանը վերցրու՝ շրջանակի մեջ. «Այո», «Ոչ», «Միգուցե»»: Մենք սեր չէինք փնտրում: Միգուցե դա անվանում ենք «մանկական սեր», սակայն իրականում մենք հավանություն էինք փնտրում նրանից, ով մեզ դուր էր գալիս:

Ուզում եմ ձեզ մի բան ասել. մենք ունենք լավագույն գրությունը, որ երբևէ գրվել է: Աստված մեզ համար մի գրություն է թողել, որը կոչվում է Աստվածաշունչ, և դրա մեջ Նա ասել է. «Այո՛, ես հավանում եմ քեզ»: Նա մեկ քայլ առաջ է գնացել ու գրել. «Այո՛, դու սիրված ես: Այո՛, դու ներված ես: Այո՛, դու Աստծո զավակ ես: Այո՛, դու Իմ ընկերն ես: Այո՛, Ես քո Երկնային Հայրն եմ: Այո՛, դու Թագավորի զավակ ես»:

Այժմ մենք կարող ենք վստահությամբ մոտենալ Աստծո Գահին: Ինչո՞ւ: Որովհետև Հիսուսն ասաց. «Այո՛, դու ազատ ես մեղքից: Այո՛, դու ազատ ես մեղքի զգացումից: Այո՛, դու ազատ ես վիրավորանքից: Այո՛, դու ազատ ես ցանկացած բռնությունից, որ երբևէ կատարվել է քո հանդեպ»:

Հիսուս Քրիստոսն «այո»-ն է՝ գրված մեր սրտերում և մտքերում: Աստված մեզ ուղարկել է մեծ սիրո գրություն: Եվ այս սիրո գրառման մեջ Նա ասել է. «Ես երբեք քեզ չեմ թողնի կամ չեմ լքի (Եբր. 13.5): Ես կլրացնեմ քո բոլոր կարիքները (Փիլիպ. 4.19): Ես կբժշկեմ քո մարմինը (Ա Պետր. 2.24)»:

Հարկ չկա, որ դուք մենակ անցնեք կյանքի ուղին: Աստված ընդունել է ձեզ: Կարևոր չէ, թե որտեղ եք. դուք կարող եք անապատի մեջտեղում մենակ լինել, սակայն դուք միայնակ չեք:

## Որոշումը ձերն է

Ձեզնից է կախված այն, ինչ տեղի է ունենում ձեր կյանքում: Աստված տվել է ձեզ բոլոր պատասխանները: Դուք կարող եք վիրավորված ու վախեցած անցնել ձեր կյանքի ուղին, եթե ցանկանաք: Սակայն ես մտադիր եմ գլուխս վեր պահել ու անցնել իմ կյանքի ուղին Հիսուս Քրիստոսի հետ՝ որպես իմ զորության և ուժի: Ես մտադիր եմ անցնել փորձությունների և նեղությունների միջով և դուրս գալ այդ ամենից՝ ժպիտը դեմքիս, պարելով և երգելով: Դուք կարող եք անել նույնը՝ Աստծո Խոսքը ձեր սրտում պահելով:

Պարզապես հիշեք. Հիսուսն «Այո» է: Այո՛, Նա սիրում է ձեզ: Այո՛,

Նա հոգ է տանում ձեր մասին: Եթե վիրավորված կամ մերժված զգաք, հիշե՛ք, որ Հիսուսը ձեզ հետ է: Նա ձեզ չի մերժել ու երբեք չի մերժի: Նա գրկում է ձեզ և ասում. «Դե՛, գնացի՛նք: Դու կարող ես հաղթահարել»:

Այսօր որոշում կայացրե՛ք՝ Աստծո հոսքը պահելու ձեր սրտում և դառնալու սպունգ, որը լցված է Նրա հոսքով և Նրա զորությամբ: Այդ ժամանակ, երբ կյանքի ճնշումները սկսեն ճզմել ձեզ, անկախ նրանից, թե մեկ ուրիշն ինչ է ասում կամ անում, ձեզնից դուրս չի գա ոչինչ՝ բացի խիզախությունից, սիրուց, հավատքից և զորությունից:



## Գլուխ 10

### Կրակին դեմ հանդիման

*Հաղթանակ ամեն զնով, հաղթանակ՝  
չնայած բոլոր սարսափներին,  
հաղթանակ, որքան էլ երկար և դժվար  
լինի ճանապարհը:  
Ուինսթոն Չերչիլ*



Մենք խոսում ենք մեր ապագան գրոհով նվաճելու մասին: Միակ եղանակը, որով կկարողանանք դա անել, միակ եղանակը, որով հաջողություն կգտնենք կյանքում, որդեգրելն է այն վերաբերմունքը, որն ասում է. «Ես չեմ կարող պարտվել, և ես չեմ հանձնվի»:

Ցավոք, որոշ մարդիկ կարծում են, որ երբ իրենք ունենան այդպիսի վերաբերմունք, այն ժամանակ կապրեն անհոգ կյանքով: Այդպես չէ: Թեև որոշ մարդկանց դուր չի գալիս սա լսել, անկախ նրանից, թե ինչպիսի վերաբերմունք մենք ունենք՝ կյանքում դեռևս բախվելու ենք խոչընդոտների և հակառակության: Մեր վերաբերմունքը պարզապես որոշում է՝ կունենանք հաղթանակ խոչընդոտների հանդեպ, թե ոչ:

Ես չեմ ուզում, որ դուք մտածեք, թե երբևէ դեմադրեմ չեք կանգնի կրակին: Ես ցանկանում եմ, որ դուք իմանաք, թե ինչ անեք կրակի մեջ հայտնվելիս, որպեսզի անվնաս անցնեք դրա միջով:

Դուք կյանքում կբախվեք խոչընդոտների, սակայն կարող եք հաղթահարել դրանք Աստծո հանդեպ ունեցած ձեր հավատքով և նվիրվածությամբ: Երբ կառչեք Աստծո Խոսքից և հավատաք Նրան, չնայած բոլոր հակառակություններին, Նա կազատի ձեզ:



## Համարձակ լինել

Դանիելի գրքի 3-րդ գլխում մենք կարդում ենք, որ երբ եբրայեցի երեք երիտասարդներին՝ Սեդրաքին, Միսաքին և Աբեդնագովին, տարան Բաբելոն՝ գերության, նրանք ենթարկվեցին սաստիկ ճնշման, որպեսզի թողնեին իրենց հավատքն առ Աստված:

Նաբուգոդոնոսոր թագավորը ոսկե կուռք շինեց, ապա հավաքեց իր թագավորության գավառների բոլոր պաշտոնյաներին ու կառավարիչներին, որպեսզի նրանք ներկա լինեին կուռքի նավակատիքին: Հետո թագավորը մի հրովարտակ արձակեց, որում ասվում էր, որ երբ մարդիկ լսեն երաժշտության ձայնը, պետք է վայր ընկնեն ու երկրպագեն այդ պատկերին:

Բայց Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովն իրենց սրտում վճռել էին ամեն գնով ծառայել և հնազանդվել միակ ճշմարիտ Աստծուն:

### ԴԱՆԻԵԼ 3.1-6

- 1 Նաբուգոդոնոսոր թագավորը մի ոսկի արձան շինեց՝ նրա բարձրությունը վաթսուն կանգուն (գրեթե 28 մետր), լայնությունը վեց կանգուն. նրան կանգնեցրեց Դուրայի դաշտում՝ Բաբելոնի գավառում:
- 2 Եվ Նաբուգոդոնոսոր թագավորը ուղարկեց, որ հավաքեն կուսակալներին, նախարարներին և կառավարիչներին, գլխավոր դատավորներին, գանձապետներին, խորհրդականներին, օրենսգետներին և գավառների բոլոր իշխաններին, որ գան Նաբուգոդոնոսոր թագավորի կանգնեցրած արձանի նավակատիքին:
- 3 Այն ժամանակ ժողովվեցին կուսակալները, նախարարները և կառավարիչները, գլխավոր դատավորները, գանձապետները, խորհրդականները, օրենսգետները և գավառների բոլոր իշխանները Նաբուգոդոնոսոր թագավորի կանգնեցրած արձանի նավակատիքին և կանգնեցին այն արձանի առաջ, որ կանգնեցրել էր Նաբուգոդոնոսորը:
- 4 Եվ մունետիկը կանչում էր ուժով. «Ձեզ են ասում, ո՛վ ժողովուրդներ, ազգեր և լեզուներ,
- 5 երբ որ լսեք փողի, սրնգի, քնարի, ջութակի, տավիղի, տիկի և ամեն տեսակի նվագարանների ձայնը, վայր ընկեք և երկրպագություն արեք այն ոսկի արձանին, որ կանգնեցրեց Նաբուգոդոնոսոր թագավորը:

## **6 Եվ ով որ չընկնի և երկրպագություն չանի, իսկույն պիտի գցվի կրակով բորբոքված հնոցի մեջ:**

Երբ երաժշտությունը հնչեց, բոլոր մարդիկ վայր ընկան և երկրպագեցին ոսկե կուռքին, բոլորը՝ բացի երեք եբրայեցի երիտասարդներից: Այն ժամանակ որոշ քաղղեացիներ գնացին Նաբուգոդոնոսորի մոտ և ասացին. «Արքա՛, չէ՞ որ դու հրովարտակ արձակեցիր, որի համաձայն՝ բոլոր մարդիկ պետք է վայր ընկնեին և երկրպագեին այն կուռքին»:

Թագավորը հաստատեց, և նրանք ասացին. «Դե՛, մի քանի հրեաներ կան, որոնց դու դրել ես քո գործերի վրա՝ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը, որոնք հաշվի չառան քո ասածը, ո՛վ արքա: Նրանք չերկրպագեցին ոսկե կուռքին և չպաշտեցին քո ասածուն» (Խնդիրը մասամբ այն էր, որ քաղղեացիները դժգոհ էին նրանից, որ իրենց ղեկավարում էին կողմնակի անձինք): Եվ այսպես՝ Նաբուգոդոնոսորը, սաստիկ զայրացած, ասաց. «Բերե՛ք այդ երեք տղաներին ինձ մոտ» (Դան. 3.7-13):

### **ԴԱՆԻԵԼ 3.14-15**

**14 Նաբուգոդոնոսորը նրանց պատասխան տվեց և ասաց.**

**«Նպատակով է, ո՛վ Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, որ դուք չեք պաշտում իմ աստծուն և իմ կանգնեցրած արձանին երկրպագություն չեք անում:**

**15 Արդ եթե պատրաստ եք, որ երբ լսեք փողի, սրնգի, քնարի, ջութակի, տավիղի, տիկի և ամեն նվագարանների ձայնը, վա՛յր ընկեք և երկրպագություն արեք իմ շինած արձանին, բայց եթե երկրպագություն չանեք, իսկույն պիտի գցվեք կրակով բորբոքված հնոցի մեջ, և ո՛ր աստվածն է, որ ձեզ ազատի իմ ձեռքից:**

Ես ուզում եմ, որ դուք ուշադրություն դարձնեք, Նաբուգոդոնոսորը մարտահրավեր նետեց ոչ միայն այս երեք երիտասարդներին, այլև Ամենակարող Աստծուն: Նա ասաց. «Ո՞վ է այդ Աստվածը, որ ազատի ձեզ իմ ձեռքից»: Սա գրեթե նման է աշխարհի վերաբերմունքին այսօր, երբ սկսում եք խոսել ազատագրման և զորության Աստծո մասին: Միգուցե դա չի արտահայտվում այն խոսքերով, որոնք գրված են այստեղ, բայց դա կարծես շատերի վերաբերմունքն է:

Սակայն Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի համար միևնույնն էր, թե ինչ էր ասում կամ անում աշխարհը: Նրանք ընտրեցին հնազանդվել Աստծուն:

**ԴԱՆԻԵԼ 3.16-18**

**16 Եվ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը պատասխանեցին և ասացին թագավորին. «Մենք պետք չունենք այս բանի մասին քեզ պատասխան տալու, ո՛վ Նաբուգոդոնոսոր:**

**17 Ահա մեր Աստվածը, որին մենք պաշտում ենք, կարող է մեզ ազատել կրակով բորբոքված հնոցից և քո ձեռքից էլ, ո՛վ թագավոր, նա մեզ կազատի:**

**18 Եվ եթե ոչ, ԹՈՂ ՔԵՉ ՀԱՅՏՆԻ ԼԻՆԻ, ո՛վ թագավոր, որ ՔՈ ԱՍՏԾՈՒՆ ՄԵՆՔ ՉԵՆՔ ՊԱՇՏՈՒՄ և քո կանգնեցրած արձանին երկրպագություն չենք անում:**

Այս երեք հրեա երիտասարդներն ասացին. «Մենք նույնիսկ կարիք չունենք մտածելու դրա մասին: Մենք գիտենք, թե որտեղ ենք մենք. մենք գիտենք, թե ով ենք մենք, և գիտենք, թե ուր ենք գնում: Բայց, միևնույնն է, չենք խոնարհվելու քո աստծո առաջ»:

**Կրակի մե՛ջ եք**

Միգուցե այսօր ձեզ թվում է, թե կրակին դեմառդեմ եք կանգնել, կամ գուցե զգում եք, թե արդեն հնոցի մեջ եք այն բաների պատճառով, որ սատանան բերել է ձեր դեմ: Ես գիտակցում եմ, որ դուք հավանաբար երբեք դեմառդեմ չեք կանգնի իսկական կրակի հնոցին, սակայն կյանքի հանգամանքները՝ փորձություններն ու նեղությունները, կարող են կրակի հնոց թվալ ձեզ համար: Ուստի դուք կարիք ունեք սովորելու ինչպես դեմառդեմ կանգնել կրակին: Երբ բոլորը փշրվեն և փոխզիջման գնան ճնշման ներքո, դուք պետք է հաստատ կանգնեք:

Պատկերացնում եք, թե ինչ ուժեղ հավատք և վճռականություն պահանջվեցին այդ երեք երիտասարդներից հանուն Աստծո հաստատ կանգնելու համար: Բաբելոնում նրանց հետ կային այլ հրեաներ: Բոլորը խոնարհվել էին արձանի առաջ: Նրանց ճիշտ այնպես, ինչպես Սեդրաքին, Միսաքին և Աբեդնագովին, սովորեցրել էին, որ բացի Տիրոջից ուրիշ աստվածներ չունենային (Ելից 20.3): Բայց նրանք օտար երկրում էին և գնացին փոխզիջման: Նրանք կորցրին իրենց հավատքն ու նվիրվածությունը:

Մինչդեռ այստեղ էին երեք երիտասարդ տղաներ՝ հավանաբար ուշ պատանեկան տարիքի կամ քսան տարին նոր լրացած, որոնք որոշում կայացրին ավելի շուտ դեմառդեմ կանգնելու կրակին, քան գնալու փոխզիջման: Քաջություն է հարկավոր կանգուն մնալու համար, երբ բոլորը գնում են այլ ուղղությամբ:

## Երբեք մի՛ գնացեք փոխզիջման

Երիտասարդներ, ես գիտեմ, որ հեշտ չէ կանգնել այն բանի համար, ինչին հավատում եք, երբ բոլոր հասակակիցները ձեզ իրենց կողմն են քաշում, և ձեր դեմ ճնշում է գործադրվում: Բայց այդ ժամանակ է, որ դուք սովորում եք աճել Աստծո հետ: Այդ ժամանակ է, որ սովորում եք դառնալ Աստծո մարդ կամ անվճռական մարդ սատանայի համար:

Պատանիներ, շատ մեծահասակներ արդեն անցել են այդ արահետով: Նրանք կարող են ձեզ ասել, որ միգուցե այդ արահետը լավ տեսք ունի, սակայն այն դառնություն արահետ է: Դա ձեզ ոչ մի տեղ չի տանի:

Ամբոխը կարող է ասել. «Օ՛հ, դա չի վնասի: Պարզապես շտապիր և միացիր մեզ»:

Այո՛, կվնասի: Շատ անգամներ մարդիկ մտածում են. «Դե՛, ես մտադիր եմ օգնել նրանց»: Դուք չեք կարող օգնել մեղավորներին՝ գնալով այնտեղ, ուր նրանք են գնում, կամ անելով այն, ինչ նրանք են անում: Դուք օգնում եք նրանց՝ ձեր դիրքում ամուր կանգնելով և ասելով. «Ես մտադիր չեմ դա անել»:

Գոհանում եմ Աստծուց, որ ավագ դպրոցում սովորելիս, երբ ընկերներս պատրաստվում էին ինչ-որ բան անելու, որ չպիտի անեին, ես ունենում էի բավականաչափ խիզախություն՝ ասելու. «Կանգնեցրե՛ք մեքենան և ինձ դուրս թողե՛ք»: Դրանից հետո ես տուն էի գնում: Իմ միտքն ասում էր. «Օ՛հ, պարզապես գնա՛ նրանց հետ: Պետք չէ, որ մասնակցես»: Բայց ինձ համար այնտեղ լինելն արդեն փոխզիջում էր:

Դուք պետք է հասկանաք, որ եթե որոշում եք փոխզիջման չգնալ, ապա բախվելու եք կրակին: Սեդրաքի, Միսաքի և Աբեղնագովի համար փոխզիջման չգնալը նշանակում էր դեմառդեմ կանգնել մահվան դատավճռին: Ոսկե արձանի առաջ չխոնարհվելը կրակի հնոց՝ մահ էր նշանակում: Բայց այս երիտասարդները գիտեին, թե ինչ էր գրված Խոսքում: Օրենքը նրանց սովորեցրել էին այնպես, ինչպես յուրաքանչյուր երիտասարդ հրեայի: Նրանք գիտեին, որ Օրենքում գրված էր բացի Տիրոջից ուրիշ աստվածներ չունենալու մասին, և նրանք ընտրեցին հետևել Աստծուն (Ելից 20.3, Ես. 45.6):

Այժմ նրանք օտար երկրում էին, և հավանաբար ոչ ոք երբևէ չէր իմանա, եթե նրանք խոնարհվեին ոսկե արձանի առաջ: Բայց Աստ-

ված կիմանար: Գուցե դուք մտածում եք, որ խաբույմ եք բոլորին, բայց Աստված գիտի: Աստված ամեն բան գիտի: Գուցե ուրիշ ոչ ոք չգիտի, բայց Աստված գիտի:

Ես համոզված եմ, որ նրանց միտքը փորձում էր համոզել իրենց. «Օ՛հ, վնաս չի լինի միայն այս մեկ անգամը խոնարհվել՝ կրակի հնոցից ազատվելու համար»: Վնաս կլինի: Եթե մեղանչում եք մեկ անգամ, ավելի հեշտ է լինում մեղանչել երկրորդ անգամ: Եթե մեղանչում եք երկու անգամ, ավելի հեշտ է լինում մեղանչել երրորդ անգամ: Եթե մեղանչում եք չորս անգամ, ուրեմն մոռացե՛ք դրա մասին:

### Երբեմն պետք է եսասեր լինել

Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովն այնտեղ՝ Բաբելոնում, ունեին ընկերներ, սակայն նրանց համար միևնույնն էր, թե ինչ էին ասում կամ անում իրենց ընկերները: Դուք դա պետք է հասկանաք. երբ հերթը հասնում է հոգևոր կյանքին, դուք պետք է եսասեր դառնաք:

Երբ հերթը հասնում է ուրիշներին օգնելուն, տալուն և այլն, դուք չպետք է եսասեր լինեք: Բայց երբ հերթը հասնում է ձեր անձնական հոգևոր կյանքին, դուք պետք է եսասեր դառնաք: Ասածս սխալ մի՛ հասկացեք: Ես ուզում եմ, որ ճիշտ հասկանաք դա: Մի՛ գնացեք ու ասեք, թե ես ասացի, որ եսասեր լինելը լավ է, որովհետև ես նման բան չասացի: Ես նկատի ունեմ, որ ձեր հոգևոր կյանքը *ձեր* պատասխանատվությունն է:

Հասկանո՞ւմ եք, Աստծո հետ փոխհարաբերություն ունենալը ընտանեկան գործ կամ խմբային մի բան չէ: Դա անձնական է՝ երես առ երես: Մայրիկը չի կարող դա անել ձեզ համար, հայրիկը չի կարող դա անել ձեզ համար, ոչ էլ կարող է ձեր ամուսինը, կինը կամ որևէ քարոզիչ: Ուրիշ ոչ ոք չի կարող դա անել ձեզ համար: *Դուք* պետք է հոգ տանեք Աստծո հետ ձեր փոխհարաբերության մասին:

Ու երբ իսկապես իմանաք, թե ով եք դուք Քրիստոսում, և Նրա հանդեպ ձեր հավատքն ամուր լինի, դուք հետ չեք դառնա: Ամուր հավատքը փոխզիջման չի գնում կամ չի հանձնվում ճնշման տակ: Ամուր հավատքը համառորեն կառչում է Աստծո բաներից, նույնիսկ երբ թվում է, թե դա անօգուտ է: Ամուր հավատքը չի հանձնվի լիակատար պարտության առաջ: Ահա թե ինչպես եք դեմառդեմ կանգնում կրակին: Այդպես եք հաջողության հասնում Աստծո հետ:

## Մի՛ խոնարհվեք ճնշման տակ

Սեդրաքը, Միսաքն ու Աբեդնագովը հրաժարվեցին ճնշման տակ խոնարհվելուց: Իրենց կյանքի մեծագույն փորձության ժամանակ նրանք որոշում կայացրին կանգնել Աստծո համար, նույնիսկ եթե դա մահ էր նշանակում: Ավելի ուշ մենք կտեսնենք, թե ինչպես Աստված վարձահատույց եղավ նրանց այն բանի համար, որ նրանք ամուր կանգնեցին Աստծո համար: Բայց, նախևառաջ, եկեք կրկին նայենք Դանիելի 3-րդ գլխի 17-րդ և 18-րդ խոսքերին: Այս խոսքերը քննադատության են ենթարկվել հակասական պնդումներ թվալու պատճառով:

### ԴԱՆԻԵԼ 3.17-18

**17 Ահա մեր ԱՍՏՎԱԾԸ, որին մենք պաշտում ենք, ԿԱՐՈՂ Է ՄԵՁ ԱՉԱՏԵԼ կրակով բորբոքված հնոցից և քո ձեռքից էլ, ո՛վ թագավոր, նա մեզ կազատի:**

**18 ԵՎ ԵԹԵ ՈՉ, թող քեզ հայտնի լինի, ո՛վ թագավոր, որ ՔՈ ԱՍՏՈՒՆ ՄԵՆՔ ՉԵՆՔ ՊԱՇՏՈՒՄ և քո կանգնեցրած արձանին երկրպագություն չենք անում:**

Արտաքուստ, առանց իսկապես մտածելու դրա մասին, արդարև թվում է, թե այս խոսքերը հակասում են միմյանց: Բայց եթե դրանց նայեք *ամուր հավատքի* հասկացողության լույսի ներքո, ապա կտեսնենք, որ դրանք ամենևին էլ չեն հակասում միմյանց:

17-րդ խոսքում գրված է Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի հավատքի մասին. «Մեր Աստված կարող է մեզ ազատել»: 18-րդ խոսքը ցույց է տալիս նրանց նվիրվածությունն իրենց հավատքին. «Մենք հավատարիմ կլինենք նրան, ինչին հավատում ենք՝ անկախ ամեն ինչից»: Եթե դուք հասկանում եք, որ 17-րդ խոսքը հավատքի պնդում է, իսկ 18-րդ խոսքը ցուցադրում է այն նվիրվածությունը, որը հավատքն ուժեղ է պահում, ուրեմն ձեզ համար դժվար չէ հասկանալ այս խոսքերը:

Եթե պատրաստվում եք ոտքի կանգնելու Աստծո համար և ստանալու այն, ինչ անհրաժեշտ է Նրանից ստանալ, ապա ոչ միայն պետք է ունենաք ուժեղ հավատք և հավատքի դավանություն անեք, այլև պետք է նվիրվեք ձեր հավատքի պաշտպանությանը:

Հենց այստեղ է ձախողվում մարդկանց մեծ մասը: Նրանք հասկանում են, թե ինչ է հավատքը, և ինչպես ապրեն հավատքով, ու կարող են ձեզ համար խոսքից մեջբերումներ անել: Բայց հավատքի

նվիրվածության մեջ նրանք սայթաքում են: Նրանք հանձն չեն առնում կանգնել, երբ հայտնվում են քննադատության տարափի ներքո:

Փոխարենը սկսում են փոխզիջման գնալ: Նրանք սկսում են հետքաշվել ու հարցնել. «Ինչո՞ւ»: Բարեկամներ, մեր գործը չէ հարցնել՝ ինչու: Մեր գործը ասելն է այն, ինչ Պողոս առաքյալն ասաց փոթորկի մեջ հայտնված նավի տախտակամածին. «...*հավատում եմ Աստծուն, որ այսպես կլինի, ինչպես ինձ հետք խոսեց*» (Գործք 27.25): Դա նրա պնդումն էր. վերջակետ:

Թույլ տվեք ձեզ մի փոքր գաղտնիք ասել. մենք բախվելու ենք ամենատարբեր փորձությունների և իրավիճակների: Բայց եթե ամուր բռնվենք հավատքի մեր դավանությունից, Աստված կազատի մեզ այդ ամենից: Դա կախված է նրանից, թե ինչ ենք *մենք* անում:

Դանիելի 3-րդ գլխի 17-րդ և 18-րդ խոսքերում հրեա երիտասարդներն ասում էին. «Ինչ էլ պատահի, միևնույնն է, մենք նվիրված ենք մնալու առ Աստված մեր հավատքին»: Այսօր մարդիկ չեն սիրում նվիրվել ինչ-որ բանի, որովհետև նվիրումը պատասխանատվություն է պահանջում: Նրանք չեն կանգնի իրենց ընկերների առաջ ու չեն ասի. «Աստված այդպիսի բաներ չի անում, և ես Աստծո զավակ եմ, իսկ Աստվածաշնչում ասվում է, որ ես պետք է արտացոլեմ իմ Հորը, ուստի ես չեմ անում այդ բաները»: Փոխարենը խուսանավում են՝ ասելով՝ «Իմ եկեղեցին չի հավատում դրան», որպեսզի որևէ պատասխանատվություն չկրեն:

Դուք պետք է պաշտպանեք այն, ինչին *դուք* հավատում եք: Մարդիկ կարող են տարօրինակ կերպով ձեզ նայել և վիրավորել: Պարզապես հիշեք, վերջում նրանք են, որ այրվելու են, և դուք եք, որ փայլելու եք: Մի անհանգստացեք այն կրակոտ փորձությունների համար, որոնց բախվելու եք այստեղ՝ երկրի վրա: Դուք պետք է սովորեք անցնել կրակի փորձությունների միջով այստեղ՝ երկրի վրա, որպեսզի վերջում չհայտնվեք դժոխքի կրակներում:

## Չորրորդ մարդը

Երբ Սեդրաքը, Միսաքը և Աբեղնագովը պաշտպանեցին այն, ինչին հավատում էին, նրանց կապեցին և նետեցին կրակի հնոցը (Դան. 3.19-22): Բայց Աստված ազատեց նրանց:

### ԴԱՆԻԵԼ 3.23-25

**23 Եվ այս երեք մարդիկ՝ Սեդրաքը, Միսաքը և Աբեղնագովը, ընկան կրակով բորբոքված հնոցի մեջ կապված:**

**24 Այն ժամանակ Նաբուգոդոնոսոր թագավորը ապշել էր և շտապելով վեր կացավ և խոսեց և ասաց իր խորհրդականներին. «Չէ՞ որ մենք երեք մարդ գցեցինք կրակի մեջ՝ կապված»: Նրանք պատասխանեցին և ասացին թագավորին. «Այո, ո՛վ թագավոր»:**

**25 Նա էլ պատասխանեց և ասաց. «Ահա ես չորս մարդ եմ տեսնում՝ արձակված ման են գալիս կրակի մեջ, և վնաս չկա նրանց վրա, և չորրորդի կերպարանքը աստվածների որդու է նման:**

Ուզում եմ ուշադրություն դարձնեք, որ 23-րդ խոսքում գրված է. «...Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը, ԸՆԿԱՆ ԿՐԱԿՈՎ բորբորված հնոցի մեջ ԿԱՊՎԱԾ»: Դա նշանակում է, որ նրանց ձեռքերն ու ոտքերը կապված էին: Նրանք մտան կրակը կապված, բայց արագ արձակվեցին: Թագավորը զարմանքից վեր թռավ ու հարցրեց. «Հեյ, չէ՞ որ մենք երեք մարդու գցեցինք այնտեղ՝ կապված»:

Թագավորի ծառաները պատասխանեցին. «Այո, երեք մարդու գցեցինք»:

Այն ժամանակ թագավորն ասաց. «Ես տեսնում եմ չորս մարդու՝ արձակված կրակի մեջ ման են գալիս, և վնաս չկա նրանց վրա (այլ խոսքով՝ նրանք չեն վառվում): Եվ չորրորդ մարդը, որ նրանց հետ է, նման է Աստծո Որդուն»:

Միգուցե դուք մտնեք կրակի հնոցի մեջ՝ կապված, բայց շուրջը նայեք և տեսնեք, որ արձակվել եք: Եվ Աստծո Որդին ման է գալիս ձեզ հետ, և «ձեզ վրա վնաս չկա»:

Նաբուգոդոնոսորը Սեդրաքին, Միսաքին և Աբեդնագովին դուրս կանչեց հնոցից, և երբ նրանք դուրս եկան, բոլոր կուսակալները, իշխանները և մյուսները տեսան, որ կրակը որևէ իշխանություն չէր ունեցել նրանց վրա (խոսք 27):

## **Մեր հակահրդեհային համազգեստը**

Բարեկամ, ուզում եմ ձեզ մի բան ասել: Դուք ունեք հակահրդեհային համազգեստ. այն Աստծո զորությունն ու օժոթությունն է: Կյանքի հանգամանքները կարող են, այսպես ասած, ձեզ կապել ու նետել կրակի մեջ, սակայն դուք հրդեհային պաշտպանիչ հագուստով եք:

Թույլ տվեք բացատրել, թե ինչ նկատի ունեմ: Ինձ դուր են գալիս ավտոարշավները, հատկապես ՆԱՍԿԱՐ ընկերության կազմակերպած: Եթե ցանկանում եք վարել ավտոարշավում, պետք է պահ-



պանեք անվտանգության կանոնները, այլապես ձեզ թույլ չեն տա մասնակցել ավտոարշավին: Նախևառաջ պետք է հագնեք հատուկ կիսագուլպաներ և ներքնազգեստ, հետո հագնեք համազգեստ և հատուկ գլխարկ դնեք. այս բոլորը հրակայուն են: Մրցարշավի վարորդները կարող են հայտնվել հրդեհի մեջ, սակայն առանց վառվելու դուրս կգան այնտեղից շնորհիվ իրենց հրակայուն համազգեստի:

Հրակայուն համազգեստը երկար չի ծառայի նրանց. դա նախատեսված է այնքան ժամանակահատվածի համար, որքան հարկավոր է կրակից ազատվելու համար: Սակայն հրակայուն հանդերձանքը, որ մենք ունենք՝ Աստծո օծությունը և զորությունը, այնպիսի համազգեստ է, որը պահպանվում է *հավիտյան*: Եվ թշնամու ոչ մի կրակոտ նետ չի կարող թափանցել նրա մեջ:

Դուք չեք ապրի ձեր կյանքը առանց որևէ խնդրի, քննության կամ փորձության: Դուք դեմառդեմ կանգնելու եք կրակին, սակայն եթե ունեք ամուր հավատք և Աստծո Խոսքի հանդեպ խոր նվիրում, կմտնեք կրակի մեջ և այնտեղից անվնաս դուրս կգաք: Ու երբ դուրս գաք, բոլորը կտեսնեն դա, ինչպես Նաբուգոդոնոսոր թագավորը տեսավ:

### ԴԱՆԻԵԼ 3.29

**29 Եվ ինձնից (Նաբուգոդոնոսորից) հրաման է դուրս գալիս, որ ամեն ժողովուրդ, ազգ և լեզու, որ սխալ բան ասի Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի Աստծո դեմ, պիտի կտոր-կտոր հոշոտվի, և նրա տունը աղբանոց պիտի դառնա, որովհետև ԶԿԱ ՄԻ ՈՒՐԻՇ ԱՍՏՎԱԾ, ՈՐ ԿԱՐՈՂ ԼԻՆԻ ԱՅՍՊԵՍ ԱՂԱՏԵԼ:**

Միայն մեկ Աստված կա: Բոլոր այսպես կոչված աստվածները սուտ են, կամ դրանք ինչ-որ մեկի երևակայության արդյունքն են: Այդ կրոնավոր առաջնորդները մահացել են, և նրանց ոսկորները դեռ գերեզմանում են, բայց աստվածների Աստված կենդանի է և զործում է: Նա կանցկացնի ձեզ կրակի միջով. Նա կանցկացնի ձեզ ջրհեղեղի և ցանկացած այլ բանի միջով, որտեղ կհայտնվեք (Ես. 43.2):

Աստված կքայլի մեզ հետ *կրակի մեջ*, և Նա դուրս կգա մեզ հետ *կրակի միջից*: Մենք չպետք է փոխզիջման գնանք և կորցնենք մեր հավատքն ու նվիրվածությունը: Հավատքով մենք հասել ենք այստեղ: Եկեք չգնանք փոխզիջման և պարտվենք հիմա: Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը դուրս եկան կրակից, որովհետև «չկա մի ուրիշ Աստված»:

Շատերը լաց են լինում և տրտնջում, երբ բախվում են կրակին, որովհետև չակերտավոր աստված ունեն: Սակայն մենք ունենք «մի ուրիշ Աստված»: Մենք ունենք էլ Շադայ՝ *Աստված, որն ավելին է, քան բավական*: Մենք ունենք խաղաղության, արդարության և այն ամենի Աստվածը, ինչի կարիքը ունենք կամ ինչ ցանկանում ենք:

## Ազատագրում և հաջողություն

Քանի որ Սեդրաքը, Միսաքն ու Աբեդնագովը հրաժարվեցին իրենց հավատքի և նվիրվածության հարցում փոխզիջման գնալուց, Աստված ոչ միայն ազատեց նրանց կրակից, այլև հաջողություն տվեց:

### ԴԱՆԻԵԼ 3.30

**30 Այն ժամանակ թագավորը ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ տվեց Սեդրաքին, Միսաքին և Աբեդնագովին Բաբելոնի գավառում:**

Աստված ձեզ համար կանի այն, ինչ արեց Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի համար: Երբ ապրեք հավատքով և լիովին նվիրվեք Աստծուն, կմտնեք կրակի մեջ կապված ու դուրս կգաք արձակված: Եվ դրանից հետո հաջողություն կունենաք:

Եթե ձեզ թվում է, թե հենց հիմա կրակի մեջ եք, մի՛ կորցրեք ձեր հավատքը կամ մի՛ տատանվեք առ Աստված ձեր նվիրվածության մեջ: Դուք կրակից դուրս կգաք անվնաս, որովհետև չկա ուրիշ աստված՝ բացի Աստծուց:



## Գլուխ 11

### Շարունակէք զարկել գետնին

*Ես անում եմ լավագույնը, ինչ գիտեմ, լավագույնը,  
ինչ կարող եմ, և ես մտադիր եմ  
շարունակել դա մինչև վերջ:  
Աբրահամ Լինքոլն*



Մենք իմացանք, որ զուտ այն պատճառով, որ ունենք «ես չեմ կարող պարտվել, և ես չեմ հանձնվի» վերաբերմունքը, չի նշանակում, որ մեր կյանքում երբևէ չենք հանդիպի խոչընդոտի: Մենք պարզապես պետք է սովորենք, թե ինչպես հաղթահարենք խոչընդոտները և հասնենք հաղթանակի:

Կարևոր է ունենալ, այսպես ասած, մարտական ծրագիր, թե ինչ պետք է անենք, երբ վրա հասնեն դժվար ժամանակները: Երբ բախվում եք ինչ-որ խնդրի, ժամանակը չէ պառկելու և ասելու. «Ինչո՞ւ է սա տեղի ունենում ինձ հետ: Ես հավատքի մարդ եմ»: Ո՛չ, դա հավատքով մնալու և առաջ շարժվելու ժամանակն է:

Մենք բոլորս ստիպված ենք եղել գործ ունենալ հիասթափության հետ: Երբեմն հիասթափությունը կարող է հանգեցնել հուսահատության և ընկճվածության: Սրանք այն երեք բաներն են, որոնց հետ երբեմն ստիպված ենք գործ ունենալ կյանքի փոթորիկներին բախվելիս. *հիասթափություն, հուսահատություն և ընկճվածություն*: Ուշադրություն դարձրեք, որ ես ասացի՝ ստիպված կլինենք «գործ ունենալ» այս բաների հետ: Կա տարբերություն ինչ-որ բանի հետ գործ ունենալու և դրան գերի դառնալու միջև: Հնարավոր է, որ մենք

գործ ունենանք այս բաների հետ, բայց երբ դրանց հետ վարվենք Աստծո խոսքի համաձայն, միշտ հաղթանակ կունենանք:

Հիասթափությունը կարող է առաջանալ կարիերայում ունեցած անհաջողությունից, ֆինանսական հետընթացից կամ խաթարված փոխհարաբերությունից: Կարևորն այն է, թե ինչպես ենք վարվում հիասթափության հետ: Երբ դժվարությունը գալիս է, մենք պետք է շարունակենք զարկել գետնին:

«Շարունակել զարկել գետնին» արտահայտությունը վերցված է Դ Թագավորաց 13-րդ գլխում նկարագրված պատմությունից: Հովասը՝ Իսրայելի թագավորը, հուսահատված և ընկճված էր ասորիների հնարավոր ներխուժման կապակցությամբ, ուստի նա գնաց Եղիսե մարգարեից խորհուրդ հացնելու:

#### **Դ ԹԱԳԱՎՈՐԱՑ 13.14**

**14 Եվ Եղիսեն հիվանդացավ իր հիվանդությունով, որով և մեռավ: Եվ Իսրայելի Հովաս թագավորը իջավ նրա մոտ և լաց եղավ նրա երեսին և ասաց. «Հայր իմ, հայր իմ, Իսրայելի կառքը և նրա ձիավորները»:**

Ուշադրություն դարձրեք, որ Հովասը լաց չէր լինում նրա համար, որ Եղիսեն հիվանդ էր: Նա լաց էր լինում, որովհետև Ասորեստանի գորքը շուտով հասնելու էր իրեն և իր մարդկանց:

Հովասը երիտասարդ էր, երբ ստանձնեց գահը: Մենք կարդում ենք, որ նա գնաց մահացող մարգարեի մոտ և օգնություն աղերսեց: Պատկերացրեք, թե Հովասը որքան հուսահատ պետք է լիներ, որ նման բան աներ: Այդ օրերին թագավորները մարդկանց հետ ընդունելություն չէին անցկացնում. թագավորը տալիս էր հրամաններ, իսկ այն մարդիկ, որոնց ցանկանում էր տեսնել, բերվում էին նրա մոտ: Սակայն Հովասը խոնարհեցրեց իրեն և գնաց ծեր մարգարեին փնտրելու:

### **Օգնություն խնդրել**

Սուրբգրային այս հատվածից սովորում ենք, որ հիասթափությունը, հուսախաբությունը և ընկճվածությունը հաղթահարելու առաջին քայլը սեփական կարիքն առանց ամոթի ընդունելն է:

Այստեղ մի փոքրիկ նշում եմ ավելացնելու: Այսօր կան մարդիկ, որոնք կարիք ունեն խոնարհվելու և փնտրելու Աստծուն: Շատ անգամներ «հավատքի խոսք» շարժմանը և խարիզմատիկ շրջանակներին պատկանող մարդիկ լցվում են հպարտությամբ՝ ասելով. «Ես

հավատացի Աստծուն այս բանի համար, և ես հավատացի Աստծուն այն բանի համար: Ես այս իրականացրի, և ես այն իրականացրի»: Այս մարդիկ այնքան շատ են այսպիսի բաներ խոսել, որ արդեն մեծամտացել են: Այլ կերպ ասած՝ նրանք ավելի բարձր են մտածում իրենց մասին, քան պետք է:

Հովասը չամաչեց բացահայտ լաց լինելուց իր հուսահատության մեջ: Շատ անգամներ ամենամեծ արգելքը, որ հետ է պահում մեզ օգնություն ստանալուց, մեր ներսի հպարտությունն է, որը թույլ չի տալիս մեզ օգնություն խնդրել:

Բազմաթիվ անգամներ քրիստոնյաները, որոնք հայտնվում են բացասական հանգամանքներում, փորձում են թաքցնել իրենց իրավիճակը և որևէ մեկին չեն ասում իրենց խնդիրների մասին, փոխանակ դիմեն իրենց եկեղեցական ընտանիքին՝ այն մարդկանց, որոնք պատրաստ կլինեն ձեռք մեկնելու, ծառայելու և օգնելու նրանց: Երբեմն քրիստոնյաները, վատառողջ լինելով, գնում են հիվանդանոց և որևէ մեկին տեղյակ չեն պահում այդ մասին: Եթե ես այդ իրավիճակում լինեի, կգերադասեի, որ միայն եկեղեցին իմանար դրա մասին: Եկեղեցին կարող է առնվազն աղոթել ինձ համար, մինչ ես այնտեղ եմ:

Հասկանում եք, ձեր եկեղեցական ընտանիքն է, որ կպատասպարի ձեզ աղոթքով և կսատարի ձեզ: Ցավոք, սատանան, այսպես ասած, նստում է ձեր ուսին և ասում. «Ավելի լավ է որևէ մեկին չասես այս իրավիճակի մասին, այլապես կմտածեն, թե դու տկար ես հավատքում»:

Ես պատրաստվում եմ ձեզ ասելու մի բան, որը կարող է ցնցող թվալ. յուրաքանչյուր ոք ինչ-որ ժամանակ հավատքում տկարացել է: Կարևոր չէ, թե ով եք դուք, կամ ինչ է ձեր անունը, որքան հաճախ եք քարոզում կամ քանի մարդու եք քարոզում, յուրաքանչյուրն էլ այս կամ այն ժամանակ հավատքի տկարության խնդիր ունեցել է: Ոչ ոք *ամեն* ժամանակ լիովին չի տիրապետում *ամեն* ինչին:

## Հպարտություն

Հպարտությունը կարող է թույլ չտալ մեզ ընդունել, որ մենք կարիք ունենք՝ ինչ-որ մեկը ծառայի մեզ: Երբեմն դժվար է նույնիսկ ինքներս մեզ, ուր մնաց ուրիշներին խոստովանել, որ մենք խնդիր ունենք: Սովորաբար այլ մարդիկ ավելի շուտ են տեսնում խնդիրը, քան դուք երբևէ կխոստովանեք դա որևէ մեկին:

Երբևէ գնացել եք ձեր ընկերներից որևէ մեկի մոտ, ով, պարզ երևում

է, որ ինչ-որ բանի միջով է անցնում, ու նրան հարցրել՝ «Ամեն ինչ կարգին է: Ամեն բան լավ է», ու լսել եք նրա պատասխանը՝ «Ոչինչ չի պատահել. ես շատ լավ եմ»: Պատահել է, որ ինքներդ ինչ-որ բանի միջով անցնելիս եք եղել և նույն կերպ եք պատասխանել այն մարդուն, որը տվել է ձեզ նույն հարցը: Միգուցե Աստված ցանկանում է օգտագործել այդ մարդուն մեզ օգնելու համար, սակայն մենք այնքան հպարտ ենք, որ նույնիսկ չենք խոստովանի նրան, որ կարիքի մեջ ենք:

Եթե դուք որևէ մեկին չեք ասում, որ խնդիր ունեք, միայն երկու եղանակ կա, որով մարդիկ կարող են դա պարզել: Կամ Տերն է նրանց ասում, կամ դուք սովորականից այնքան տարբեր եք ձեզ պահում, որ նրանք հասկանում են, որ ինչ-որ բան է ձեզ անհանգստացնում: Պարզապես հիշեք. նրանք ձեզ հարցնում են, թե ինչ է պատահել, ոչ թե ձեզ նվաստացնելու համար, այլ որպեսզի կարողանան օգտակար լինել և ծառայել ձեզ:

Որպես եղբայրներ և քույրեր Տիրոջ մեջ՝ մենք պետք է ծառայենք միմյանց: Ցավոք, շատ քրիստոնյաներ սխալ եզրահանգման են եկել, որ ինքնուրույն կարող են հաղթահարել բոլոր խնդիրները և մեկ ուրիշի կարիքը չունեն: Սակայն մենք պետք է գիտակցենք, որ ինքներս չենք կարող լուծել բոլոր խնդիրները, որ ծառանում են մեր առջև:

## Փորձելով թաքցնել

Երբեմն դուք կարիք ունեք, որ որևէ մեկն աղոթի ձեզ հետ, իսկ երբեմն պարզապես օգտակար է ինչ-որ մեկի հետ խոսելը: Երբ որևէ մեկի հետ խոսում եք ձեր իրավիճակի մասին, հաճախ այդ ժամանակ է, որ կարողանում եք տեսնել ելքը: Երբ ասում եմ «ինչ-որ մեկի հետ խոսել», նկատի չունեմ ողբալ և բացասական վարքագիծ դրսևորել այդ մարդու մոտ: Ես նկատի ունեմ, որ դուք պարզապես խոսում եք իրավիճակի մասին մեկի հետ, ով ունի լսող ականջ:

Չափազանց հաճախ մարդիկ ամաչում են խոստովանելուց, որ խնդիր ունեն: Խնդիրը կարող է լինել ցանկացած բան՝ հարբեցողություն, թմրամոլություն, հեշտասիրություն, զայրացկոտություն և այլն: Ցավոք, որոշ մարդիկ այնքան շատ են լսել ճիշտ դավանության մասին, որ մշտապես բացասական խոսելու ծայրահեղությունից սխալմամբ անցել են դեպի մյուս ծայրահեղություն, փորձում են թաքցնել ցանկացած պարտություն կամ անհաջողություն, որ միգուցե այդ պահին վերապրում են:

## Ընկճվել

Ես հասկանում եմ, որ հուսահատությունը կարող է սողոսկել մարդու կյանքի մեջ նույնիսկ այն ժամանակ, երբ նա ամեն բան ճիշտ է արել: Սատանայի կողմից վերահսկվող աշխարհում ճնշումը և լարվածությունը կարող են երբեմն ընկճել ձեզ: Օրինակ՝ աշխատավայրում մշտապես գռեհիկ խոսակցությունները, Տիրոջ անունը զուր տեղը օգտագործելը, հոռետեսական վերաբերմունքը ժամանակի ընթացքում կարող են հոգնեցնել ձեզ և միգուցե սկսեն ազդեցություն թողնել ձեզ վրա: Այդ ժամանակ է, որ պետք է օգնություն փնտրեք:

Ոմանք այնքան են ընկճվում, որ հայտնվում են այնպիսի դիրքում, որտեղ նրանց համար դժվար է հավատալ Աստծուն: Եթե մենք հասնում ենք այդ կետին, այդ ժամանակ կարիք ունենք, որ ուրիշները մեզ հետ համաձայնության աղոթք անեն և օգնեն մեզ դուրս գալու այդ վիճակից (Մատթ. 18:19):

Երբ մեր որդին՝ Քրեյգը, մի քանի տարի առաջ ենթարկվեց վիրահատության, որի ժամանակ հեռացվեց գլխուղեղի ուռուցքը, կինս և ես չփորձեցինք թաքցնել այն, ինչի միջով մենք անցնում էինք: Դա օգնեց, որ մարդիկ աղոթեն մեզ համար, սեր ցուցաբերեն մեր հանդեպ և ուժ տան մեզ: Ես ուրախ եմ, որ կային մարդիկ, որոնք պատրաստ էին և կարող էին մեզ հետ աղոթել ու մեզ հետ հավատալ Աստծուն:

## Պարզապես ընդունեք դա

Ես չեմ ամաչում խոստովանելուց, որ եղել եմ այնպիսի վիճակում, երբ կարիք եմ ունեցել, որ մարդիկ աղոթեն ինձ հետ: Աստվածաշունչն ինձ սովորեցնում է, որ նախքան մարդը կկարողանա որևէ օգնություն ստանալ, նա պետք է ընդունի, որ ինքը կարիք ունի: Դուք պետք է ընդունեիք, որ մեղավոր էիք և Փրկչի կարիք ունեիք, նախքան կկարողանայիք փրկվել: Եթե դուք հիվանդ եք, պետք է ընդունեք դա, նախքան կկարողանաք բժշկություն ստանալ: Եթե փողի կարիք ունեք, պետք է խոստովանեք դա, նախքան կկարողանաք ստանալ այն:

Ոմանք կարծում են, որ երբ ընդունում ենք, որ գործ ունենք նման բաների հետ, դա նշանակում է, որ մեր հոգևոր կյանքը վատ վիճակում է: Ոմանք ասում են. «Դե՛, եթե նրանք հոգևորապես ուժեղ լինեին, որևէ խնդիր չէին ունենա ու երբեք կարիք չէին ունենա, որ որևէ մեկն օգներ նրանց՝ դուրս գալու այդ վիճակից»: Դա այդպես չէ:



Շատերը դա են սովորեցրել, բայց այդպես չէ:

Եթե այդպես լիներ, Հակոբոսը մեզ չէր ասի աղոթել միմյանց համար (Հակ. 5.16): Երբ Հակոբոսը դա ասաց, նկատի չունեք, որ աղոթենք նրանց համար, որոնք Աստծո արքայության մեջ չէին: Նա խոսում էր մեր քրիստոնյա եղբայրների ու քույրերի համար աղոթելու մասին:

Ինչո՞ւ եք աղոթում նրանց համար: Սովորաբար աղոթք է արվում, երբ ինչ-որ բանի կարիք կա: Ուստի երբ մեզ ասվում է աղոթել մեկս մյուսի համար, մենք գիտենք, որ կարող ենք աղոթել մեկ այլ քրիստոնյայի համար, որը կարիքի մեջ է:

Որոշ մարդիկ կարծում են, որ մենք պետք է այնքան աճենք, մինչև որ դառնանք այնպիսի ուժեղ քրիստոնյաներ, որոնք երբեք չեն խոստովանում, որ որևէ բան անհանգստացնում է իրենց: Ես դեռևս չեմ տեսել որևէ մեկին, ով այդքան ուժեղ է: Նույնիսկ Աստվածաշնչում ես տեսնում եմ, որ մարդիկ, որոնք քայլում էին Հիսուսի հետ, ունեին խնդիրներ:

Ոմանք այսօր ցանկանում են քննադատել ցանկացած մարդու, որն ուրանում է հավատքը: Եկեք չմոռանանք, որ Պետրոսը, որն, ըստ էության, քայլեց և ծառայեց Հիսուսի հետ, ուրացավ հավատքը: Հասկանո՞ւմ եք, եթե դուք սայթաքում եք և ուրանում հավատքը, կարևոր քննությունն այն է, թե ինչ եք անում աքաղաղի կանչելուց հետո:

Այն, թե ինչ եք անում դրանից հետո, որոշում է ձեր ապագան:

Աքաղաղի կանչելը պարզապես հիշեցրեց Պետրոսին, թե ով էր ինքը և ինչ պետք է աներ: Եթե դուք երբևէ հայտնվեք այս վիճակում, դա կարող է ծառայել ձեզ որպես հիշեցում, թե ինչ պետք է անեք: Դիմե՛ք նրանց, ովքեր կարող են ծառայել ձեզ, աշխատել ձեզ հետ, աղոթել ձեզ հետ և օգնել ձեզ՝ դուրս գալու ստեղծված իրավիճակից:

## Միջոցներ ձեռնարկեք

Հիասթափությունը, հուսահատությունը և ընկճվածությունը կարող են կաթվածահար անել ձեր հավատքը: Հիշե՛ք, հավատքը գործողություն է: Հավատքը ինչ-որ բան անելն է: Հավատքը վեր է կենում, ձեռք մեկնում և շարժվում: Բայց երբ ճկվում եք հիասթափության, հուսահատության և ընկճվածության ծանրության տակ, ձեր հավատքը կարող է կաթվածահար լինել: Դուք ֆիզիկապես կաթվածահար չեք լինում, սակայն այն հանգամանքները, որոնցում

գտնվում եք, մտավոր և հուզական առումով ազդում են ձեզ վրա այն աստիճան, որ խանգարում են ձեզ հավատքով գործելու:

Երբ սկսում եք ասել՝ «Օ՛հ, ես չգիտեմ՝ ինչ անեմ: Ես չգիտեմ՝ ինչ անեմ», դուք կաթվածահար եք լինում և չէք կարողանում որևէ բան անել: Որպեսզի դուրս գաք ցանկացած իրավիճակից, որի մեջ հայտնվել եք, պետք է ինչ-որ բան *անեք*: Դուք պետք է գործեք:

Եկեք կրկին նայենք Եղիսեի և Հովասի պատմությանը, որպեսզի հասկանանք գործի անցնելու կարևորությունը:

### **Հետևեք հրահանգներին**

Հիշեք, Հովասը գնաց Եղիսեի մոտ խորհուրդ հարցնելու, որովհետև ասորիների բանակը պատրաստվում էր գրավելու իսրայելցիների բանակը:

#### **Դ ԹԱԳԱՎՈՐԱՑ 13.14-16**

**14 Եվ Եղիսեն հիվանդացավ իր հիվանդությունով, որով և մեռավ: Եվ Իսրայելի Հովաս թագավորը իջավ նրա մոտ և լաց եղավ նրա երեսին և ասաց. «Հայր իմ, հայր իմ, Իսրայելի կառքը և նրա ձիավորները»:**

**15 Եվ Եղիսեն ասաց նրան. «Վեր առ մի աղեղ և նետեր»:** Եվ նա մի աղեղ և նետեր առավ:

**16 Եվ նա ասաց Իսրայելի թագավորին. «Ձեռքդ պնդացրո՞ւ աղեղիդ վրա»:** Եվ նա ձեռքը պնդացրեց, և Եղիսեն իր ձեռքը թագավորի ձեռքի վրա դրեց:

15-րդ խոսքում մենք կարդում ենք, որ Հովաս թագավորը Եղիսեից աղեղ և նետեր վերցնելու հրահանգ ստացավ: Պատկերացրեք Հովաս թագավորի արձագանքը. «Եղիսեն, ես եկել եմ այստեղ, որպեսզի տասս ինձ իմ խնդրի պատասխանը, իսկ դու ինձ ասում ես աղեղ ու նետեր բերել»: Բայց Հովասը հնազանդվեց և *գործեց* Տիրոջ խոսքի համաձայն, որը տրվեց մարգարեի կողմից:

Նախ՝ Եղիսեն Հովասին ասաց, որ վերցնի աղեղը և նետերը: Հովասը հնազանդվեց ու բերեց աղեղն ու նետերը: Ապա Եղիսեն նրան ասաց, որ ձեռքը պնդացնի աղեղի վրա այնպես, կարծես նետ է արձակում: Կրկին Հովասը հնազանդվեց և աղեղը պատրաստեց նետահարելու:

**Դ ԹԱԳԱՎՈՐԱՑ 13.15-17**

**15 Եվ Եղիսեն ասաց նրան. «Վեր առ մի աղեղ և նետեր», և նա մի աղեղ և նետեր առավ:**

**16 Եվ նա ասաց Իսրայելի թագավորին՝ «Ձեռքդ պնդացրո՛ւ աղեղիդ վրա», և նա ձեռքը պնդացրեց: Եվ Եղիսեն իր ձեռքը թագավորի ձեռքի վրա դրեց:**

**17 Եվ ասաց. «Բայց արա պատուհանը դեպի արևելք»: Եվ նա բացեց, և Եղիսեն ասաց. «Նետը գցի՛ր»: Եվ նա գցեց: Եղիսեն էլ ասաց. «Տիրոջ փրկության նետը և ասորիների դեմ փրկության նետը, և դու պիտի հաղթես ասորիներին Ափեկում, մինչև որ վերջանան»:**

Ինչ կանեիք, եթե լինեիք Հովասի փոխարեն: Մեկ րոպե մտածե՛ք սրա մասին: Հովասը՝ ամբողջ Իսրայելի թագավորը, գնում է ծեր մարգարեի մոտ՝ պատասխաններ ստանալու: Մարգարեն նրան ասում է անել այնպիսի բաներ, որոնք իրականում անտրամաբանական են: Հովասը կարող էր մտածել. «Ինչ օգուտ կտան աղեղ ու նետեր վերցնելը և պատուհան բացելը»:

Եղիսեի պատասխանն այդքան էլ լավը չէր թվում: Իրականում, երբ մտածում ես, այն մի տեսակ հիմարություն է թվում: Բայց Հովասն արեց այնպես, ինչպես իրեն ասվեց. վերցրեց աղեղն ու նետերը և գնաց ու բացեց պատուհանը: Այնուհետև մարգարեն ձեռքը դրեց Հովասի ձեռքի վրա և նրան ասաց պատուհանից նետն արձակել:

Ուզում եմ ուշադրություն դարձնեք, որ միայն այն բանից հետո, երբ Հովասը հնազանդվեց մարգարեի հրահանգներին, մարգարեն ձեռքերը դրեց նրա վրա: Եթե Հովասն արած չլիներ մարգարեի ասածը, մարգարեն ավել ոչինչ չէր անի:

Շատերը ցանկանում են, որ ինչ-որ քարոզիչ ձեռք դնի և աղոթի իրենց համար, սակայն իրենք ոչինչ չեն անում: Դուք ոչ միայն պետք է գործեք Խոսքի հիման վրա, նախքան որևէ մեկը ձեռք կոնի ձեզ վրա, այլև ձեռք դնելուց հետո էլ պետք է շարունակեք անել այն, ինչ գրված է Խոսքում:

Հովասը հետևեց մարգարեի հրահանգներին Եղիսեի՝ իր վրա ձեռքերը դնելուց առաջ և հետո:

### **Հավատքը գործում է**

Հավատքն ինչ-որ բան է անում. միջոցներ է ձեռնարկում: Պառկած վիճակում անհնար է որևէ բան անել կամ ինչ-որ գործ ձեռնարկել: Եթե ես պառկած եմ, միակ բանը, որ իսկապես կարող եմ անել,

ուտքերս ու ձեռքերս շարժելն է: Եթե ես մտադիր եմ որևէ այլ բան անել, ապա պետք է վեր կենամ և կանգնեմ:

Հավատալը նույնքան գործողություն է, որքան վերաբերմունք: Դուք կարող եք մտովի հավանել կամ պասիվ կերպով համաձայնել հավատքի ուսմունքին, սակայն մտավոր հավանությունը և պասիվ համաձայնությունը գործի չեն դնում հավատքը: Այլ խոսքով՝ դուք կարող եք ասել՝ «Ես հավատում եմ բժշկությանը՝ համաձայն Աստծո հոսքի», սակայն չվերապրել բժշկություն ձեր կյանքում: Դուք նույնիսկ կարող եք ասել. «Ես հավատում եմ, որ Հիսուս Քրիստոսն է Աստծո Որդին, ես հավատում եմ, որ Նա է աշխարհի Փրկիչը», ու տակավին թույլ չտալ Նրան լինելու *ձեր* կյանքի Տերը:

Երբ հավատում եք ինչ-որ բանի՝ համաձայն Աստծո հոսքի, դուք պետք է *գործեք* այն բանի հիման վրա, ինչին հավատում եք, որպեսզի ձեր կյանքում իրականություն դառնա այն, ինչին հավատում եք:

Երբ բախվում եք հիասթափության, հուսահատության կամ ընկճվածության, պետք է գործի դնեք Հռոմեացիների 8.37-ը:

### **ՀՌՈՄԵԱՏԻՆԵՐԻ 8.37**

**37 Բայց այս ամեն բաներում առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, որ մեզ սիրեց:**

Եթե հավատաք, որ այս գրվածքը ճշմարիտ է, և գործեք դրա հիման վրա, այն կապացուցի իր ճշմարիտ լինելը ձեր կյանքում: Այլ կերպ ասած՝ այն կդրսևորվի բնական տիրույթում, և դուք կապրեք որպես ավելի, քան հաղթող:

## **Ձեռնամուխ եղեք խնդրի լուծմանը**

Եկեք վերանայենք, թե մինչ այժմ ինչ սովորեցինք այս գլխում: Երբ խնդիրները դուրս են գալիս ձեր դեմ, առաջին բանը, որ պետք է անեք, առանց ամաչելու *ընդունելն է, որ դուք խնդիր ունեք*: Երկրորդ՝ պետք է *գործի դնեք ձեր հավատքը*: Եվ այժմ, երրորդ բանը, որ պետք է անեք, *խնդրի լուծմանը ձեռնամուխ լինելն է*:

Կրկին, եկեք նայենք Հովասի և Եղիսեի պատմությանը, որպեսզի հասկանանք խնդրի լուծմանը ձեռնամուխ լինելու կարևորությունը:

### **Դ ԹԱԳԱՎՈՐԱՏ 13.18-19**

**18 Եվ ասաց. «Ա՛ռ նետերը»:** Եվ նա առավ: **Եվ ասաց Իսրայելի թագավորին. «Գետնին զարկիր»:** Եվ նա զարկեց երեք անգամ ու կանգնեց:

**19 Եվ Աստծո մարդը բարկացավ նրա վրա և ասաց. «Հինգ կամ վեց անգամ պետք էր զարկել, այն ժամանակ կզարկեիր ասորիներին, մինչև որ վերջանային, բայց հիմա միայն երեք անգամ ես զարկելու»:**

Երբ Եղիսեն Հովասին ասաց, որ բերի աղեղն ու նետերը, բացի պատուհանը և արձակի նետը, նա ստուգում էր Հովասի հավատքը և հնազանդությունը: Հովասը հանձնեց այդ քննությունը: Բայց 18-րդ խոսքում Եղիսեն Հովասին ասաց վերցնել նետերը և հարվածել կամ *զարկել* գետնին: Սա համառության և վճռականության քննություն էր: Այս քննությունը Հովասը չհանձնեց:

Երբ Եղիսեն Հովասին ասաց նետերով զարկել գետնին, Հովասը հնազանդվեց նրան, սակայն զարկեց գետնին առանց եռանդի: Նրա անտարբեր վերաբերմունքը ցույց էր տալիս, որ նա այդքան էլ նախանձախնդիր չէր: Եվ քանի որ Հովասը չշարունակեց զարկել գետնին, նա և իր զորքը կկարողանային հաղթել ասորիներին ընդամենը երեք անգամ՝ նրանց լիովին կործանելու փոխարեն:

Երբ մարգարեն նրան ասաց զարկել գետնին, Հովասը պետք է շարունակեր այնքան զարկել, մինչև մարգարեն կանգնեցներ նրան:

Երբ բախվում ենք խոչընդոտների և հանգամանքների, մենք նույնպես պետք է շարունակենք զարկել գետնին: Բավական չէ ունենալ հավատք և հնազանդություն, մենք պետք է նաև վճռական լինենք հասնելու մեր ուզածին՝ անկախ ամեն ինչից: Այս առումով Պողոս առաքյալն այսպես ասաց. «Սրա համար Աստծո սպառնալիցությունն առեք, որ կարող լինեք հակառակ կենալ չարության օրում և ԱՄԵՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՎ՝ ՀԱՍՏԱՏ ԿԱՆԳՆԵԼ» (Եփես. 6.13):

Ձեռնամուխ եղեք ձեր խնդրի լուծմանը: Ու երբ հիասթափությունը, հուսահատությունը կամ ընկճվածությունը փորձեն մոտենալ ձեզ, սկսեք զարկել գետնին ու կանգ մի՛ առեք, մինչև ունենաք հաղթանակ: Հասկանում եք, բարդ խնդիրները հանկարծակի չեն լուծվում: Եվ ձեր կյանքից դրանք հեռացնելու կիսատ, առանց եռանդի փորձերը արդյունք չեն տա: Երբեմն հաղթանակը պահանջում է համբերություն, համառություն և վճռականություն:

Երբևէ շնորհավորե՞լ եք որևէ մեկին նրա ձեռքբերման կամ մեծ հաջողության համար ու նրանից լսել, որ դրա համար շատ «արյուն, քրտինք և արցունք» թափվեցին: Այս խոսքերը նկարագրում են յուրաքանչյուր խոչընդոտի հանդեպ այն վճռականությունը և քրտնաջան աշխատանքը, որոնք անհրաժեշտ են հաղթանակի հասնելու համար:

Մենք պետք է ունենանք այդ նույն «արյուն, քրտինք և արցունք» թափելու վճռականությունը, երբ պատրաստվում ենք մարտի բռնվելու թշնամու դեմ: Դա է այն վերաբերմունքը, որը կրեցի մեզ հաղթանակ յուրաքանչյուր խոչընդոտի հանդեպ:

Ոմանք, այսպես ասած, մի քիչ զարկում են գետնին, բայց հետո դադարեցնում են, երբ արդյունքներ անմիջապես չեն տեսնում: Մի փոքր ժամանակ Աստծո Խոսքի վրա կանգնելուց հետո նրանք ասում են. «Դէ, կարծում եմ՝ սա չի գործելու»:

Քանի որ նրանք զարկում են գետնին, զարկում, զարկում, և, ըստ իրենց, ոչինչ տեղի չի ունենում, նրանք հանձնվում են, երբ նրանց հաղթանակը կարող էր լինել հենց հաջորդ զարկի մեջ: Շատ-շատերը հանձնվում են հաղթանակից անմիջապես առաջ:

Մենք չենք կարող մեզ թույլ տալ հանձնվել: Եթե հանձնվենք, ինչ ենք շահելու: Բայց եթե չհանձնվենք, ինչ ենք կորցնելու:

## Շարունակէք զարկել

Ձեռնամուխ եղեք ձեր դժվարությունների հաղթահարմանը և շարունակէք գրոհել դրանց վրա, մինչև որ հիմնովին ոչնչացնեք: Ինչպես այս գլխի սկզբում ասացի, մենք բոլորս գործ ունենք հիասթափության և հուսահատության հետ: Դուք դատապարտված եք միայն այն ժամանակ, երբ զիջում և թույլ եք տալիս, որ դրանք վերահսկեն ձեզ:

Երբ հիասթափությունը, հուսահատությունը և ընկճվածությունը դրսից գալիս և փորձում են տիրել ձեր մտքին, այդ ժամանակ է, որ պետք է թույլ տաք՝ Խոսքը ներսից դուրս գա և սկսի «զարկել գետնին»: Գետնին զարկելու պատկերը ես օգտագործում եմ փոխաբերական իմաստով: Խոսքը մեջբերելը նույնն է, ինչ խնդրին զարկելը: Ասացեք այն, ինչ Խոսքն ասում է ձեր իրավիճակի վերաբերյալ: Չերևացող բաները երևացողի պես կանչեք, մինչև դրանք երևան (Հռոմ. 4.17):

Եթե դուք այսօր օգնության կարիք ունեք, խոստովանեք դա և մի՛ ամաչեք որևէ մեկին խնդրելուց, որ աղոթի ձեզ հետ: Հաստատեք ձեր հավատքը և վստահությունն առ Աստված՝ ինչ-որ բան անելով իբրև հավատքի գործողություն: Եվ զարկեք խնդրին այնքան, մինչև որ այն տեղի տա Աստծո Խոսքի անողոք հարվածներին: Սա է հիասթափության, հուսահատության, ընկճվածության կամ ձեր դեմ դուրս եկող որևէ այլ բանի հանդեպ հաղթանակ տանելու մարտական ծրագիրը: Հավատացեք Խոսքին, գործեք Խոսքի հիման վրա և շարունակէք զարկել գետնին:



## Գլուխ 12

# Տիրել նրան, ինչը քեզ է պատկանում

*Առաջընթացը միշտ վրանգներ է պարունակում:*

*Դուք չեք կարող գրավել երկրորդ հենակետը*

*և ձեր ուրբը պահել առաջինի վրա:*

*Ֆրեդերիկ Ուիլկոքս*



Երբեմն կարող է անհնարին թվալ տիրանալը նրան, ինչ Աստված ասում է, որ քեզ է պատկանում: Բայց Խոսքում գրված է, որ Աստծո հետ *ամեն բան* հնարավոր է (Մատթ. 19.26): Ժամանակ առ ժամանակ ձեր կյանքում կարող են լինել արգելքներ, որոնք խոչընդոտում են ձեր ճանապարհը դեպի հաղթանակ: Ուստի ես ցանկանում եմ Աստծո Խոսքից բերել մի քանի ճշմարտություններ, որոնք ձեզ կօգնեն հայտնաբերելու, թե ինչպես կարող եք տիրանալ նրան, ինչը ձեզ է պատկանում:

Հետոի գրքի 1-ին գլխում կարդում ենք, որ Հեսուն դարձել էր Իսրայելի առաջնորդ, և իսրայելցիները երկրորդ անգամ կանգնած նայում էին իրենց Խոստմունքի երկրին: Իսրայելցիների այն սերունդը, որն ապստամբեց Տիրոջ դեմ, մահացավ անապատում, ինչպես որ Տերն ասել էր նրանց: Ավելի երիտասարդ սերունդը մեծացել էր և վերջապես պատրաստ էր տիրելու իր Խոստմունքի երկրին:

### **ՀԵՍՈՒ 1.1-11**

**1 Եվ եղավ, որ Տիրոջ ծառա Մովսեսի մեռնելուց հետո Տերը խոսեց Մովսեսի սպասավոր Նավեի որդի Հեսուի հետ՝ ասելով.**



- 2 «Իմ ծառա Մովսեսը մեռավ, և հիմա վեր կաց, անցիր այդ Հորդանանով, դու և այս ամբողջ ժողովուրդը, այն երկիրը, որ ես տալիս եմ Իսրայելի որդիներին:
- 3 Բոլոր տեղերը, որ կոխեն ձեր ոտքի թաթերը, ձեզ պիտի տամ, ինչպես որ Մովսեսին ասել եմ:
- 4 Անապատից և այս Լիբանանից մինչև մեծ Գետը, այսինքն՝ Եփրատ գետը, քետացիների ամբողջ երկիրը մինչև արևմտյան կողմի մեծ ծովը ձեր սահմանը լինի:
- 5 Ոչ մի մարդ չկարողանա քեզ քո կյանքի բոլոր օրերում դեմ կանգնել. ինչպես որ Մովսեսի հետ էի, քեզ հետ կլինեմ. քեզ չեմ թողնի և քեզ անտես չեմ անի:
- 6 Չորացի՛ր և քաջ եղի՛ր, որովհետև այս ժողովրդին դու պիտի ժառանգեցնես այն երկիրը, որի համար սրանց հայրերին երդում արի սրանց տալու համար:
- 7 Միայն թե զորացի՛ր և շատ քաջ եղի՛ր, որ պահես և անես այն ամեն օրենքի պես, որ իմ ծառա Մովսեսը քեզ պատվիրել է. նրանից չխոտորվես աջ կամ ձախ, որ ամենում էլ խելամուտ լինես, ուր որ գնում ես:
- 8 Այս օրենքի գիրքը քո բերանից չհեռանա, այլ գիշեր և ցերեկ նրա վրա մտածես, որ պահես և կատարես բոլոր նրա միջի գրվածի պես, որովհետև այն ժամանակ ճանապարհները հաջողակ կանես և այն ժամանակ խելամուտ կլինես:
- 9 Ահա քեզ պատվիրում եմ, զորացի՛ր և քաջ եղի՛ր, մի՛ վախեցիր և մի՛ զարհուրիր, որովհետև քո Տեր Աստվածը քեզ հետ է ամեն *տեղ*, ուր որ գնաս»:
- 10 Եվ Հեսուն ժողովրդի ոստիկաններին պատվիրելով ասաց.
- 11 «Բանակի միջով անցկացե՛ք և պատվիրե՛ք ժողովրդին՝ ասելով. «Ձեզ համար պաշար պատրաստեք, որովհետև երեք օր հետո դուք այս Հորդանանով կանցնեք, որ գնաք, ժառանգեք այն երկիրը, որ ձեր Տեր Աստվածը ձեզ տալիս է իբրև ժառանգություն»:

Քառասուն տարի անապատում թափառելու ընթացքում Հեսուն ու Քաղեբը երբեք չդադարեցին Աստծուն հավատալուց: Ես համոզված եմ, որ նրանց հավատքը փորձվեց և ստուգվեց բազում անգամներ, մինչ քառասուն տարի նրանք դեգերում էին այդ անհավատ իսրայել-

ցիների հետ: Խորհե՛ք դրա շուրջ: Հետուն ու Քաղերը ստիպված էին քառասուն տարի անցկացնել այդ անհավատ իսրայելցիների հետ: Մինչ նրանք խոսում էին հավատքից, նրանց ընկերներն ու գործընկերները խոսում էին անհավատությունից: Երբ Հետուն ու Քաղերն ասացին՝ մենք կարող ենք, մյուսներն ասացին՝ մենք չենք կարող: Բայց Հետուն ու Քաղերը երբեք չհրաժարվեցին առ Աստված իրենց հավատքից, որովհետև գիտեին, որ կարող են նվաճել երկիրը:

Առաջին անգամ, երբ Իսրայելի զավակները գնացին տիրելու Խոստմունքի երկրին, հայտնաբերեցին, որ երկրում հսկաներ կային, և քաղաքները պարսպապատ էին: Տասներկու լրտեսներից տասը նայեցին արգելքներին և ասացին. «Մենք չենք կարող դա անել»: Այն, ինչ նրանք ասացին, իրականացավ, և քառասուն տարի նրանք թափառեցին անապատում:

Իսկ հիմա, Հետուի գրքի 1-ին գլխում իսրայելցիների մի նոր սերունդ կանգնած է Հորդանան գետի մոտ՝ պատրաստ տիրելու երկրին: Աստված խոսում է նրանց հետ Հետուի միջոցով և ասում. «Գնացե՛ք և տիրե՛ք երկրին»: Այդուհանդերձ, նրանց և Խոստմունքի երկրի միջև, որպես արգելք, կանգնած էր Հորդանան գետը:

Աստված Հետու 1.2-ում իսրայելցիներին ասաց անցնել Հորդանանը, բայց ի՞նչ էր Նա ակնկալում, ինչպե՞ս էին նրանք անցնելու գետը: Չկային կամուրջներ, և նրանք չունեին նավակներ:

Ուշադրություն դարձրե՛ք, որ թեև իսրայելցիները բախվեցին անհնարին իրավիճակի, Աստված նրանց չասաց, որ կարող են հանձնվել: Հասկանո՞ւմ եք, Աստված անհնարինը հնարավոր է դարձնում:

## Հավատքը տիրում է

Անհնարին թվացող արգելքները երբեք չեն անհանգստացնում Աստծուն: Միգուցե մենք թույլ ենք տալիս, որ դրանք ինչ-որ ազդեցություն ունենան մեզ վրա, սակայն դրանք երբևէ չեն անհանգստացնում Աստծուն, որովհետև Նրա համար անհնարին ոչինչ չկա: Ու եթե դուք Աստծո զավակ եք, Աստծո զորությունն ապրում է ձեր մեջ, հետևաբար անհնարին թվացող արգելքները նույնպես չպետք է անհանգստացնեն ձեզ:

Ամեն անգամ, երբ բախվեք անհնարին թվացող արգելքի, անմիջապես ընդունե՛ք այն որպես Աստծո համար գործելու մեկ այլ հնարավորություն: Աստծո համար տարբերություն չկար, թե որքան խոր

կամ որքան լայն է Հորդանան գետը: Նա Իսրայելին տվեց ծրագիր, որով նրանք կկարողանային իրականացնել անհնարինը:

Դուք ունեք ծրագիր՝ գրված Աստծո Խոսքի մեջ, որով դուք նույնպես կարող եք իրականացնել անհնարինը: Աստծո Խոսքը պարունակում է Աստծո ծրագիրը և Նրա խոստումները, սակայն Նրա ծրագրին հետևելը և տիրելը նրան, ինչը պատկանում է ձեզ, կախված են ձեզնից: *Հավատքը տիրում է Աստծո խոստումներին:*

Տերը Հետուին ասաց. «Ուխտի տապանակը պահող քահանաներին պատվիրիր, որ մտնեն գետը, և հենց որ նրանք մտնել են գետի մեջ, այն կարկառակույտի պես կկանգնի»: Բնական տեսանկյունից այս ծրագիրն անտրամաբանական էր: Անտրամաբանական է մտածել, որ եթե մտնեք գետի մեջ, ջուրը երկու կողմից պատ դարձած կկանգնի:

Աստվածաշունչը Հեսու 3.15-ում մեզ ասում է, որ Հորդանանի ջրերն այդ ժամանակ վարարում էին: Մենք գիտենք, որ եթե մտնենք ջուրը, որն այնքան խորն է, որ հասակով մեկ չենք կարող կանգնել, կարող ենք խեղդվել: Բայց երբ ջրերը վարարում են, հաճախ գետի հոսանքն այնքան ուժեղ է լինում, որ կարող է ձեզ ներքև քաշել և տանել գետն ի վար:

## Դիմացե՛ք

Միգուցե ճնշված եք կյանքի հանգամանքներից, և թվում է՝ հանգամանքները կատաղած հեղեղի նման փորձում են ձեզ և ձեր ունեցածը քշել-տանել և վերջնականապես կործանել ձեզ: Ձեզ կարող է թվալ, թե կյանքի և մահու կռիվ եք տալիս:

Այդ զգացողությունը համակում է բոլորիս՝ և երիտասարդներին, և տարեցներին: Տարբերություն չկա՝ դուք քարոզիչ եք, թե մի անձնավորություն, որը եկեղեցում կամավորական գործունեություն է ծավալում: Այս կամ այն ժամանակ բոլորիս մեջ էլ եղել է այն զգացողությունը, թե պարզապես դիմանում ենք: Սակայն, բարեկամ, եթե շարունակեք դիմանալ, իրավիճակից հաղթանակած դուրս կգաք:

Անկախ նրանից, թե ինչ եք զգում՝ հիշե՛ք, որ մենք չենք շարժվում զգացմունքներով կամ երևույթով: Մենք շարժվում ենք նրանով, ինչին հավատում ենք: Ուստի շարունակե՛ք դիմանալ և հավատալ Աստծուն: Նա կարող է անհնարինը հնարավոր դարձնել:

## Մտե՛ք ջրի մեջ

Հետուի գրքի 3-րդ գլխում մենք կարդում ենք, որ Աստված անհնա-  
րինը հնարավոր դարձրեց Հետուի և իսրայելցիների համար:

### ՀԵՍՈՒ 3.7-8

**7 Եվ Տերն ասաց Հետուին. «Այսօր կսկսեմ քեզ մեծացնել բոլոր Իսրայելի աչքի առաջ, որ իմանան, թե ինչպես որ Մովսեսի հետ էի, քեզ հետ կլինեմ:**

**8 Եվ հիմա դու ուխտի տապանակը վեր առնող քահանաներին պատվիրի՛ր՝ ասելով. «Երբ որ Հորդանանի ջրի եզերքը հասնեք, Հորդանանում կանգնե՛ք»»:**

Քահանաներին ասվեց վերցնել Տապանակը և գնալ կանգնել գետի մեջ:

Եթե քահանաները պարզապես գնային ու կանգնեին Հորդանանի ջրերի եզրին, ոչինչ տեղի չէր ունենա: Նրանց ասվել էր կանգնել գետի մեջ, և ոչինչ տեղի չունեցավ, մինչև նրանք չմտնեին ջրի մեջ: Այդ քահանաները կարող էին կանգնել գետի ափին և ամբողջ օրը դավանել, աղաղակել ու փառաբանել Աստծուն, ու ջուրը երբեք չէր բաժանվի:

Պատկերացրե՛ք այս քահանաներին, երբ նրանք մոտեցան ջրի եզերքին: Հնարավոր է՝ մենք չմեղադրեինք նրանց, եթե նրանք շրջվեին դեպի Հետուն և ասեին. «Սպասե՛ք: Եթե մենք մտնենք ջրի մեջ՝ միաժամանակ կրելով այս ծանր տապանակը, ջուրը կարող է մեզ քշել-տանել: Մենք կարող ենք խեղդվել: Այնուամենայնիվ, ինչ եք փորձում մեզ հետ անել»: Բայց քահանաները դա չասացին: Փոխարենը նրանք հավանաբար սկսեցին հիշել այն, ինչ իրենց պատմել էին Եգիպտոսից իրենց նախահայրերի ազատագրման մասին: Նրանք հիշեցին, որ երբ իրենց նախահայրերը հասան անհնարին թվացող Կարմիր ծովին, Աստված նրանց ցամաքով անցկացրեց: Քահանաները հավատացին, որ Աստված կարող էր նույնն անել իրենց համար: Ուստի նրանք ասացին. «Եկե՛ք քայլենք»:

## Հավատք և հնազանդություն

Ավելի շատ քրիստոնյաներ պետք է նման լինեն այս քահանաներին: Շատ քրիստոնյաներ կանգնած են իրենց ազատագրման եզրին, բայց փոխանակ անեն այն, ինչ Աստված ասել է, նրանք պարզապես աղաղակում և փառաբանում են Աստծուն: Այժմ, սխալ մի՛ հասկացե՛ք ինձ: Ես հավատում եմ, որ մենք պետք է աղաղակենք և

փառաբանենք Աստծուն և հավատքի դավանություններ անենք: Ասկայն մենք չենք կարող անել այս բաները և սպասել, որ ինչ-որ բան տեղի կունենա, եթե հանգիստ կանգնած մնանք ու չանենք այն, ինչ Աստված ասել է մեզ անել:

Որպեսզի տիրեք նրան, ինչ Աստված ասում է, որ ձեզ է պատկանում, պետք է ինչ-որ բան *անեք*: Եթե քահանաները միայն կանգնեին Հորդանանի ափին ու երբեք որևէ քայլ չանեին, ապա ոչինչ տեղի չէր ունենա: Նրանք պետք է հնազանդվեին Աստծուն: Մենք նույնպես պետք է հնազանդվենք այն ծրագրին, որ Նա տվել է մեզ: Աստծուց ստանալու համար կա երկու բան, որ պետք է հասկանանք. *հավատք և հնազանդություն*:

Դուք կարող եք ամբողջ օրը հավատքի դավանություն անել, սակայն մինչև չհնազանդվեք նրան, ինչ Աստված ասել է ձեզ Իր Խոսքում, ոչինչ տեղի չի ունենա: Ես տեսնում եմ, որ շատերը դավանում են Խոսքը և խոսում իրենց հավատքի մասին, բայց նրանք ոչինչ չեն *անում*:

Հասկանում եք, Աստված քահանաներին ասել էր ինչ-որ բան անել: Նրանք պարզապես չհավատացին, որ Աստված կարող էր բաժանել և կբաժաներ ջրերը. նրանք հնազանդվեցին այն բանին, ինչ Նա ասաց, որ *նրանք* անեն: Աստված ասաց, որ նրանք գնան և կանգնեն ջրի մեջ, և նրանք արեցին այն, ինչ Նա ասաց:

Տեսել եք լողափում մարդկանց, որոնք մոտենում են ջրափնյա գծին, բայց երբ այիք է բարձրանում և հասնում նրանց ոտքերին, նրանք շտապով հետ են գնում: Կամ տեսել եք մարդկանց, որոնք ցանկանում են լողավազանում լողալ, բայց քանի որ ջուրը մի փոքր սառն է լինում, նրանք մոտենում են լողավազանի եզրին ու մի փոքր թրջում ոտքի մատները՝ ջերմաստիճանը ստուգելու համար:

Ես այն տեսակի մարդկանցից եմ, որոնք ավելի շուտ կվազեն և կցատկեն ջրի մեջ: Եթե պատրաստվում եք մտնելու ջուրը, ավելի լավ է միանգամից դա անեք: Ոմանք քիչ-քիչ են մտնում ջուրը, մինչև վերջապես կընկղմվեն: Իմ կարծիքով շատ ավելի հեշտ է պարզապես ցատկել ջրի մեջ: Քահանաները պետք է մտնեին ջուրը, նախքան որևէ բան տեղի կունենար: Գուցե ձեզ համար նույնպես ժամանակն է ջուրը մտնելու:

## Համապատասխան գործողություններ

Երբ անում եք հնազանդության առաջին քայլը, ինչ-որ բան է սկսում կատարվել: Սուրբ Հոգին, որ ձեր ներսում է, ցույց կտա, թե ինչպես անցնեք այն գետը, որ վարարել է ձեր կյանքում:

Աստված սկսեց գործել, երբ քահանաները մտան ջուրը:

**ՀԵՍՈՒ 3.15-17**

**15 Եվ ՀԵՆՑ ՈՐ տապանակը վեր առնողները մինչև Հորդանանը հասան, և տապանակը վեր առնող ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՈՏՔԵՐԸ ՋՐԻ ԵԶԵՐՔԻ ՄԵՁ ՄԽՎԵՑԻՆ (որովհետև հունձքի ամբողջ ժամանակը Հորդանանը լիքն է լինում իր բուրբ եզերքների վրա),**

**16 այն ժամանակ վերևից իջնող ջրերը կանգնեցին, և Սարթանի մոտ եղող Ադամ քաղաքից շատ հեռու մի կարկառակույտի պես բարձրացավ, և դաշտի ծովը, այսինքն՝ Ադի ծովը իջնող ջրերը վերջացան կտրվեցին, և ժողովուրդը Երիքովի դեմ անցկացավ:**

**17 Եվ Տիրոջ ուխտի տապանակը վեր առնող քահանաները Հորդանանի մեջ ցամաքի վրա հաստատ կանգնեցին, և ամբողջ Իսրայելը ցամաքով անցկացավ, մինչև որ ամբողջ ժողովուրդը Հորդանանով անցնելը վերջացրեց:**

Հավատքը և հնազանդությունը Աստծուն ասպարեզ են բերում: Միգուցե դուք ասում եք. «Օ՛հ, Աստված, օրհնիր ինձ, Աստված, օգնիր ինձ, տո՛ր ինձ աշխատանք, արձ աշխիչ և այնինչ բանը»: Թեպետ դուք պետք է աղոթեք և հավատաք Աստծուն, բայց պետք է նաև վեր կենաք և սկսեք ինչ-որ բան անել:

Հասկանո՞ւմ եք, որոշ մարդիկ, որ հավատում են Աստծուն աշխատանքի համար, հավատում են, որ Նա երկնքից պարզապես մի աշխատանք կգցի իրենց վրա: Այդպես չի լինում: Լավ է աղոթել և դավանել, որ Աստված ձեզ աշխատանք է տալու: Բայց աղոթելուց հետո վեր կացեք և սկսեք աշխատանքի հայտեր լրացնել:

Կարևոր է հավատալ Աստծո Խոսքին, բայց դուք պետք է նաև ինչ-որ բան անեք: Շատերն իսկապես հավատում են Խոսքին, բայց երբեք որևէ գործողություն չեն ավելացնում իրենց հավատքին: Հակոբոսն ասաց. «...Տո՛ւյց տուր ինձ քո հավատքը գործերից, և ես էլ ցույց կտամ քեզ իմ հավատքն իմ գործերից» (Հակ. 2.18):

**Ինքներդ միջոցներ ձեռնարկեք**

Դուք կարող եք իմանալ, թե ինչպես հավատաք Աստծուն, և տակավին չստանաք այն, ինչի համար հավատում եք: Երբ պատանի էի, սաստիկ բորբոքումից ականջս այտուցվել էր: Հայրս աղոթեց ինձ համար, ինչպես միշտ էր անում, երբ ֆիզիկական ախտանշաններ

էի ունենում: Ես հավատում էի Աստծուն, որ կբժշկվեմ: Ամեն անգամ, երբ հայրս աղոթել էր ինձ համար, ես բժշկվել էի, բայց այս անգամ ոչինչ տեղի չունեցավ:

Կարճ ասած՝ հայրս աղոթեց և Տիրոջը հարցրեց, թե ինչու այս անգամ ես չբժշկվեցի, ու Տերը պատասխանեց նրան. «Դու այլևս չես կարող միայնակ պատասխանատվություն կրել քո որդու համար: Նա հավատում է Խոսքին, և ժամանակն է, որ ինքը միջոցներ ձեռնարկի»:

Ես տասնհինգ տարեկան էի: Մինչ այդ ամեն անգամ, երբ ինչ-որ բանի կարիք էի ունենում, կանչում էի հայրիկիս, և նա աղոթում էր ինձ համար: Այո՛, ես հավատում էի Խոսքին, բայց աղոթողը հայրս էր: Նույնն էր նաև այս անգամ: Երբ հայրս և ես ծնկի իջանք, ես սպասեցի, որ նա աղոթի: Մի քանի րոպե լռությունից հետո ես նրան հարցրի. «Դու պատրաստվում ես աղոթելու»:

Նա ասաց. «Ո՛չ, ես չէ, որ ինչ-որ բանի կարիք ունեմ: Կարիք ունեցողը դու ես»:

Հետո նա ինձ բացատրեց, որ պետք է ինքս աղոթեմ: Ես աղոթեցի՝ հավատքս գործի դնելով, և բժշկվեցի:

Միգուցե դուք հենց հիմա հավատում եք Աստծուն ինչ-որ բանի համար: Միգուցե դուք կարիք ունեք սկսելու այս պարզ հնազանդությամբ՝ վստահել Աստծուն և առաջ շարժվել՝ անկախ ձեզ շրջապատող հանգամանքներից:

Ինչ-որ մեկը կարող է ասել. «Դուք չգիտեք իմ իրավիճակը»:

Ինձ պետք չէ իմանալ ձեր իրավիճակը: Ես գիտեմ, թե ինչ է ասվում Աստծո Խոսքում, և ինչպիսին էլ լինի ձեր իրավիճակը, Աստծո Խոսքը հոգ է տարել դրա մասին: Չկա որևէ իրավիճակ, որևէ հանգամանք և որևէ խնդիր, որ հնարավոր չլինի լուծել Աստծո Խոսքի միջոցով:

Իհարկե, Խոսքը միայն գործում է այն ժամանակ, երբ դուք հավատքի և հնազանդության մեջ եք: Շատ հիվանդներ հավատքի դավանություններ են անում՝ ասելով. «Տերը բժշկել է ինձ: Նրա վերքերով ես բժշկված եմ և առողջ»: Եվ դա անելը սուրբգրային է: Դուք պետք է անեք հավատքի այդ դավանությունները: Բայց հետո պետք է նաև գործի դնեք ձեր հավատքը: Սկսեք անել որևէ բան, որ չէիք կարողանում անել: Եթե դուք անկողնում պառկած ասում եք՝ «Ես հավատում եմ, որ Աստված բժշկել է ինձ», այդ ժամանակ վեր կացեք անկողնուց և սկսեք ձեզ պահել այնպես, ինչպես բժշկված մարդն է պահում:

Ոմանք գետի մոտ կանգնած ասում են. «Օ՛հ, Աստված, օգնիր

ինձ»: Դուք կարող եք ամբողջ օրը կանգնել ջրի եզրին ու սպասել, որ Աստված ինչ-որ բան անի, բայց ոչինչ էլ տեղի չի ունենա: Դուք կարող եք ամբողջ օրը դավանել Նրա Խոսքը, բայց մինչև դրան որևէ գործողություն չավելացնեք, ոչինչ տեղի չի ունենա:

Հիշեք, Հակոբոսն ասաց. «Հավատքն առանց գործերի մեռած է»: Այլ խոսքով՝ հավատքն առանց համապատասխան գործողությունների որևէ արդյունք չի տա: Իսկական հավատքը սկսում է ինչ-որ բան անել: Այն հենց այնպես չի նստում, հենց այնպես չի կանգնում: Մեր հավատքը գործի դնելը կատարվում է Աստծո Խոսքին հնազանդությամբ, և երբ հավատքը խառնում ենք հնազանդությանը, տիրում ենք նրան, ինչը պատկանում է մեզ:

### Աստված կառաջնորդի ձեզ

Տերը խոստացավ, որ կազատի մեզ մեր բոլոր խնդիրներից, հանգամանքներից և փորձություններից, ինչպիսին էլ դրանք լինեն: Աստծո համար տարբերություն չկա, թե ինչպիսին է ձեր խնդիրը՝ ֆիզիկական, ֆինանսական, հուզական և այլն: Աստծո համար տարբերություն չկա, թե որքան մեծ կամ փոքր է ձեր խնդիրը: Նա կազատի ձեզ:

Այսպես ասած՝ պարզապես գետի եզերքին կանգնելը և շուրջը տիրող խառնաշփոթությանը նայելը ձեզ չեն օգնի: Ոչինչ չի փոխվի, եթե այնտեղ կանգնեք ու ցանկանաք, որ ամեն բան ավելի լավ լինի, որ այսինչ և այնինչ բանն այլ կերպ լինեն: Այնտեղ կանգնելը և զուտ հավատքի դավանություն անելը ձեզ չեն անցկացնի գետի միջով, որպեսզի տիրեք մյուս կողմում գտնվող երկրին:

Այդ քահանաները կարող էին ամբողջ օրն այդտեղ կանգնած մնալ, ու ոչինչ տեղի չէր ունենա: Եթե դուք դեռ կանգնած եք, ժամանակն է քայլելու:

Հնարավոր է, որ ասեք. «Բայց ես չեմ կարող տեսնել, թե ուր եմ գնում»:

Դա խնդիր չէ: Եթե խոսեք Խոսքը, կկարողանաք տեսնել ճանապարհը, որովհետև Սաղմոս 119.105-ում գրված է, որ Խոսքը լույս է ձեր ճանապարհին: Երբ խոսում եք Խոսքը, այն գործում է ձեր կյանքում իբրև լապտեր: Լապտերով հնարավոր չէ տեսնել շատ հեռուն, հատկապես մթին գիշերում, կամ եթե գտնվում եք բազմաթիվ ծառերի՝ կյանքի հանգամանքների և փորձությունների մեջ: Բայց երբ մեջբերեք Խոսքը, այն կլուսավորի ձեր ճանապարհն այնքան, որ ցույց



կտա յուրաքանչյուր հաջորդ քայլը: Երբ տեսնեք, թե որն է հաջորդ քայլը, արե՞ք այն:

«Բայց ես չգիտեմ, թե ինչ կա այնտեղ: Ես չգիտեմ, թե ինչպիսին է գետինը»:

Շատ-շատ քրիստոնյաներ չեն տիրում նրան, ինչ իրենց է պատկանում, որովհետև նրանք կանգնում են և ասում. «Դե, ես չգիտեմ: Միգուցե...»:

Այս հարցում «միգուցե» չկա: Աստված ասաց՝ շարժվե՛ք, ուրեմն շարժվե՛ք: Երբ սովորեք դուրս գալ չգոյության դատարկությունից՝ բացի Աստծո Խոսքից ուրիշ ոչինչ չունենալով ձեր ոտքերի տակ, կբացահայտեք, որ ամեն անգամ Նա ձեզ ընդառաջ է գալիս:

Հիշե՛ք, հավատքը տիրում է Աստծո խոստումներին: Աստված խոստացել է մեզ կյանք, ազատություն, երջանկություն, առողջություն, բժշկություն, լիարժեքություն և էլ ավելի: Դուք կարող եք կանգնել չոր գետափին, եթե ցանկանում եք, բայց ես պատրաստվում եմ շարժվելու, որովհետև ցանկանում եմ տիրել նրան, ինչը պատկանում է ինձ:

#### **ԵՍԱՅԻԱ 43.2**

**2 Երբ որ ջրերից անցնես, ես քեզ հետ եմ, և եթե գետերով, նրանք քեզ չեն ողողի. երբ որ գնաս կրակի միջով, չես այրվի, և բոցը քեզ չպիտի վառի:**

Եթե սատանան կրակ է վառել, Աստծո հետ անցե՛ք դրա միջով: Նա ձեզ ցույց կտա ճանապարհը: Սկսե՛ք քայլ անել, ու Նա կառաջնորդի և կուղեկցի ձեզ: Միգուցե ձեզ թվա, թե այրվելու եք, բայց եթե հավատաք Աստծուն, Նա կառաջնորդի ձեզ կրակի միջով: Նա կառաջնորդի ձեզ գետի միջով, և դուք դուրս կգաք մյուս կողմը՝ փառաբանելով ձեր Աստծուն: Նա ձեզ կազատի, եթե հավատաք Նրան և գործեք Նրա Խոսքի պես:

### **Մի՛ սպասեք, որ ինչ-որ բան տեղի ունենա**

Դուք կարող եք կանգնել գետափին, եթե ցանկանում եք, ու երբեք չտիրել այն երկրին, որ Աստված տվել է ձեզ: Բայց Աստված չի ցանկանում, որ դուք հանձնվեք ու հեռանաք: Նա ցանկանում է, որ դուք շարունակեք: Եթե հանձնվեք, ոչինչ չեք շահի: Բայց եթե շարունակեք առաջ գնալ և հավատքով կանգնել Աստծո Խոսքի վրա, շահելու շատ բան կունենաք:

Թշնամին կարող է հրմշտել ու քաշքշել, և գուցե թվա, թե նա

պատրաստվում է ձեզ ցած հրելու: Բայց երբ նա հեղեղի պես գա, Տերը նրան կփախցնի:

**ԵՍԱՅԻԱ 59.19**

**19 Եվ պիտի վախենան Տիրոջ անունից արևմուտքից եղողները, և Նրա փառքից՝ արևելքից եղողները: Երբ որ թշնամին գետի պես գա, Տիրոջ հոգին նրան կփախցնի:**

Երբեմն թշնամին հեղեղի պես գալիս է մեր կյանքի մեջ: Նա ներս է մտնում իբրև կատաղի և ոչնչացնող կրակ: Բայց Եսայիա 43.2-ում Աստված մեզ խոստանում է, որ երբ ջրի միջով անցնենք, այն մեզ չի ողողի, ու երբ կրակի միջով քայլենք, մենք չենք այրվի: Թշնամին կփորձի հեղեղել ձեր կյանքը հիասթափությամբ: Նա կփորձի ձեզ գերության մեջ գցնել: Պարզապես վերցրե՛ք Աստծո խոսքը և, այսպես ասած, մտե՛ք գետը: Աստվածաշնչում գրված է, որ երբ իսրայելցիները մտան գետը, այն երկու կողմից պատնեշեց նրանց: Սակայն ոչինչ տեղի չունեցավ, մինչև նրանց ոտքերը չթրջվեցին:

Եթե դուք սպասում եք, որ ձեր կյանքում ինչ-որ բան տեղի ունենա, դիմե՛ք Աստծո խոսքին և պարզե՛ք, թե ինչ է ձեզ պատկանում՝ ըստ Նրա խոսքի: Հավատացե՛ք այն բանին, ինչ գրված է խոսքում, ապա համապատասխան գործողություն հաղորդե՛ք ձեր հավատքին՝ անելով այն, ինչ Նա ասել է ձեզ անել: Ժամանակն է թրջելու ոտքերը և տիրելու նրան, ինչը պատկանում է ձեզ:



## Գլուխ 13

### Մնացե՛ք «Երիքովի քայլերթում»

*Համառությունը երկար մրցավազք չէ. այն բազմաթիվ կարճ մրցավազքեր է մեկը մյուսի հետևից:*

*Ուղիներ էլիոս*



Մեզնից շատերն այս կամ այն ժամանակ բաց են թողել հնարավորությունը տիրելու այն ամենին, ինչը, համաձայն Աստծո խոսքերի, պատկանում է իրենց, որովհետև չեն մնացել «Երիքովի քայլերթում»: Իսրայելի զավակները բառացիորեն դեմառդեմ էին կանգնել Երիքովին: Մեզ համար Երիքովը ներկայացնում է այն ամենը, ինչ թշնամին դնում է մեր ճանապարհին՝ ֆիզիկական կամ հոգևոր առումով, որպեսզի խանգարի մեզ ստանալու այն, ինչ Աստված նախատեսել է մեզ համար:

«Երիքովի քայլերթում» մնալը նշանակում է, որ դուք շարունակելու եք անել այն ամենը, ինչ Աստված ասել է ձեզ անել, մինչև որ ձեր Երիքովի պատերը վայր ընկնեն:

#### **ՀԵՍՈՒ 6.1-5**

- 1 Եվ Երիքովը Իսրայելի որդիների առաջ ամուր կերպով փակված էր. դուրս եկող և մտնող չկար:**
- 2 Եվ Տերը Հեսուին ասաց. «Տես, ես քո ձեռքն եմ տվել Երիքովը և նրա թագավորին՝ զորավոր քաջերին:**
- 3 Եվ դո՛ւք՝ ամեն պատերազմական մարդիկդ, քաղաքը շրջապատե՛ք՝ մեկ անգամ քաղաքի շուրջը պտույտ տալով. վեց օր այսպես անես:**

**4 Եվ յոթ քահանաներ յոթ Հոբեյան փողերն առնեն տապանակի առաջ, և յոթերորդ օրը քաղաքի շուրջը յոթ անգամ պտույտ տաք, և քահանաները փողերը հնչեցնեն:**

**5 Եվ երբ որ Հոբեյան եղջյուրները հնչեցնեն, և դուք փողերի ձայնը լսեք, ամբողջ ժողովուրդը մեծ աղաղակով աղաղակի, և քաղաքի պարիսպները վայր կընկնեն, և ժողովուրդը վեր գնա ամեն մեկն ուղիղ իր առաջով:**

Այն, որ մենք ունենք Աստծուց խոստումներ՝ տիրելու որոշակի բաների, չի նշանակում, որ դրանց տիրանալը հեշտ է լինելու: Աստված երբեք չասաց, որ դա հեշտ է լինելու: Բայց Նա ասաց, որ մենք կտիրենք:

Այս օրերին կարծես բոլորը միշտ փնտրում են հեշտ բաներ՝ արագ լուծումներ: Մենք ապրում ենք այնպիսի օրերում, երբ ամեն ինչը պետք է արագ լինի: Ժամանակակից տեխնոլոգիաների օգնությամբ դուք կարող եք կարտոֆիլ եփել միկրոալիքային վառարանում և ընթրիք պատրաստել ընդամենը մի քանի րոպեում: Եվ տորթի պատրաստի խառնուրդների շնորհիվ թխվածք պատրաստելու համար այլևս այնքան ժամանակ չի պահանջվում, որքան առաջ:

Հիշում եմ, որ տատիկս թխվածք էր պատրաստում հենց սկզբից: Նա ապրել է իննսուն տարի, և անգամ այն օրերին, երբ պատրաստի խառնուրդներն արդեն հասանելի էին, նա շարունակում էր հենց սկզբից պատրաստել թխվածքները: Այսօր, ինչևէ, կարծես մարդկանց մեծ մասն ամեն բան արագ է ցանկանում: Բացում ենք տուփը, պարունակությունը լցնում տարայի մեջ, ավելացնում մի քանի ձու, ջուր, խառնում և դնում ջեռոցը: Բայց տատիկս այդպես չէր անում: Թխվածք պատրաստելը որոշ ժամանակ էր պահանջում:

Արդի ժամանակներում, երբ մարդիկ ուզում են, որ ամեն բան «արագ և հեշտ» լինի, շատ քրիստոնյաներ ցանկանում են նստել ու ասել՝ «Շնորհակալություն, Տէր», և ստանալ Աստծո բոլոր օրհնությունները: Բայց երբեմն դուք ստիպված եք վեր կենալ և, այսպես ասած, ոտքեր տալ ձեր հավատքին:

Ինչպես տեսանք նախորդ գլխում, իսրայելցիները ստիպված էին անցնել Հորդանան գետը, ինչը նրանց համար անհնարին էր թվում: Եվ հիշեք, որ ոչինչ տեղի չունեցավ, մինչև քահանաները ոտքերը չդրեցին ջրի մեջ: Հորդանանն անցնելուց հետո էլ նրանք չնստեցին ու չհանգստացան: Նրանք այն երկրում էին, որ Աստված ասել էր, որ

իրենցն է, սակայն բախվեցին մեկ այլ անհնարին իրավիճակի:

Երբ տիրանում եք այն ամենին, ինչ ձեզ է պատկանում՝ ունենալով առաջընթաց և հաղթահարելով մի խոչընդոտ, սատանան մեկ այլ անհնարին իրավիճակ է դնում ձեր ճանապարհին: Միգուցե դուք ասում եք. «Ես այնքան եմ հոգնում այս ամենից»: Բարեկամ, ուզում եմ ձեզ մի բան ասել: Այս պահից մինչև Հիսուսի գալը մենք ունենալու ենք հնարավորություն հնարավորության հետևից՝ ապացուցելու, որ Աստծո Խոսքը դեռ գործում է:

Հնարավոր է, որ դուք ստիպված լինեք Երիքովի քայլերթ անցկացնել, և հնարավոր է, որ ճանապարհին անհաջողություններ կրեք: Միգուցե այնպես թվա, թե թշնամին հաղթում է մարտը: Սակայն հիշե՛ք, որ միայն այն, որ պարտվում եք մարտում, չի նշանակում, թե պարտվում եք պատերազմում: Մենք բոլորս ունենում ենք անհաջողություններ, բայց շարունակում ենք քայլել: Այն մարդիկ, որոնք նստում են և լաց լինում իրենց իրավիճակների համար, երբեք ավելի հեռու չեն գնում, որպեսզի ստանան այն բարիքները, որ Աստված խոստացել է նրանց:

## Մարտական ծրագիր

Իսրայելի՝ Երիքովի քայլերթում Աստված Հեսուին տվեց մի մարտական ծրագիր, որը, ըստ զինվորական ռազմավարության, անտրամաբանական էր, իսկ Հեսուն ռազմական առաջնորդ էր: Մովսեսը նրան ուղարկել էր շատ մարտերի՝ պատրաստելով նրան ստանձնելու Իսրայելի զավակներին առաջնորդելու գործը: Բայց Հեսուն նաև հավատքի մարդ էր և գիտեր ինչպես վստահել Աստծուն: Այսպիսով՝ Հեսուն ընդունեց Աստծո մարտական ծրագիրը և ճշգրտորեն հետևեց դրան:

Մարտական ծրագիրն այն էր, որ քահանաներն առաջնորդեին ժողովրդին քայլերթի մեջ: Որոշ քահանաներ կրում էին Ուխտի տապանակը, իսկ քայլերթի յոթերորդ օրը յոթ քահանաների տրվեցին հոբելյանական փողերը, և նրանց հրամայվեց փչել դրանք, մինչ իսրայելցիները յոթ անգամ կպտտվեին Երիքովի շուրջը: Ժողովրդին հրահանգված էր բարձր ձայնով աղաղակել, երբ լսեին փողերի երկար ձայնը (Հեսու 6.4-5):

Իսրայելցիները վարժվել էին կռվելու, և հավանաբար նրանց համար դժվար էր ընդունել այն գաղափարը, որ չպետք է օգտագործեին իրենց թրերը և այլ զենքեր՝ Երիքովը նվաճելու համար: Բայց

խրայելիցները գիտեին, որ վերջին անգամ, երբ ժողովուրդը չարեց այն, ինչ Աստված ասել էր, ընկավ խնդիրների մեջ և քառասուն տարի թափառեց անապատում: Ուստի, թեև հնարավոր է, որ նրանց դուր եկած չլիներ մարտական ծրագիրը, այնուամենայնիվ, նրանք հետևեցին դրան:

## Մի դժգոհեք

Մի պահ պատկերացրեք պարսպապատ Երիքովը: Այս քաղաքը երբեք չէր նվաճվել: Այն պաշտպանված էր վիթխարի պարսպով: Որոշ պատմաբաններ ասում են, որ այնքան լայն էր, որ նրա վրայով երկու կառք կարող էր սլանալ: Այն այնքան լայն էր, որ նրա մեջ տներ էին կառուցվել:

Պատկերացրեք պարսպի մեջ բնակվող Երիքովի մարդկանց, որոնք իրենց պատուհաններից դուրս էին նայում և տեսնում պարսպի շուրջը քայլող բազմություն: Պատկերացրեք պարսպի գլխին կանգնած գիշերային պահակներին, որոնք նայում էին քայլող, խոյերի եղջյուրներ փչող և ինչ-որ տարօրինակ արկղ կրող մի խումբ մարդկանց: Երիքովի մարդիկ պետք է որ մտածեին. *«Ի՞նչ է կատարվում այս մարդկանց հետ: Նրանք չունեն թրեր կամ այլ տեսակի զենքեր: Նրանք պարզապես քայլում են պարսպի շուրջը: Իրենց կարծիքով ի՞նչ են իրենք անում»:*

Երիքովի մարդիկ հավանաբար ինչ-որ բաներ էին բղավում խրայելիցների հասցեին, սակայն Իսրայելի որդիները շարունակում էին լռել ու քայլել: Նրանք առաջին օրը պտտվեցին քաղաքի շուրջը, ապա վերադարձան իրենց ճամբար: Ոչինչ տեղի չունեցավ. նրանք պարզապես պտտվեցին քաղաքի շուրջը:

Չափազանց հաճախ քրիստոնյաները պտտվում են իրենց խնդիրների շուրջը՝ ակնկալելով, որ դրանք կանհետանան: Երբ ոչինչ տեղի չի ունենում, նրանք նստում են և ասում. «Օ՛հ, Աստված, ինչո՞ւ որևէ բան տեղի չի ունենում»: Իսրայելիցները չվերադարձան իրենց ճամբար ու լաց չեղան ու չդժգոհեցին: Փոխարենը հաջորդ օրը վեր կացան և կրկին պտտվեցին քաղաքի շուրջը:

## Մի հենվեք ձեր հասկացողության վրա

Համոզված եմ, որ ցանկացած մեկը, ով ծառայել է Միացյալ Նահանգների զինված ուժերում, կհամաձայնի, որ ամեն անգամ, երբ

գունդն ուղարկվում է ճակատամարտի, յուրաքանչյուր անդամ պետք է համոզված լինի, որ իր բոլոր զենքերն իր հետ են: Ենթադրենք՝ նախատեսված հարձակման օրը՝ առավոտյան, սերժանտը մոտենար և ասեր. «Գեներալն ասաց լեյտենանտին, իսկ լեյտենանտն էլ՝ ինձ, որ մենք բոլոր զենքերը պետք է թողնենք այստեղ՝ ճամբարում, դուրս գանք այնտեղ, որտեղ թշնամին է, և մեկ անգամ պատվենք նրա շուրջը: Հետո կվերադառնանք ճամբար ու կնստենք, իսկ վաղը նորից կպատվենք թշնամու շուրջը: Յոթերորդ օրը կպատվենք յոթ անգամ: Հետո իմ ազդանշանով շեփորահարը երկար կփչի շեփորը, որի ընթացքում բոլորը պետք է աղաղակեն: Եվ այդ ժամանակ մենք կհաղթենք թշնամուն»: Ջինվորների մեծ մասը կասեր. «Սերժանտ, դուք խելագար եք»: Համոզված եմ, որ իսրայելցիների բանակի զինվորներից մի քանիսը, որոնք հատուկ վարժվել էին կովի համար, մտածեցին. «Հեսու, դու խելքդ թոցրել ես»:

Սակայն իսրայելցիները վստահում էին Տիրոջ Խոսքին: Աստծո Խոսքում ասվում է. «Տիրոջն ապավինի՛ր քո բոլոր սրտով և քո հասկացողությանը մի՛ վստահիր» (Առակ. 3.5): Իսրայելցիներն այս իրավիճակում չէին կարող հենվել իրենց հասկացողության վրա: Նրանց հասկացողությունն իրենց կասեր. «Դուք խելագար եք, որ նման հիմարություն եք անում»: Սակայն նրանք վստահեցին Տիրոջը և մնացին Երիբովի քայլերթում:

## Մտե՛ք քայլերթի մեջ

Դուք պետք է հասկանաք, որ եթե պատրաստվում եք նվաճելու և հաղթելու, պետք է մտնեք Երիբովի քայլերթի մեջ: Չափազանց շատ քրիստոնյաներ պարզապես նստած են ու ոչինչ չեն անում: Հավատքը պասիվ չէ, հավատքն *ակտիվ* է:

Աստված Իսրայելին ասաց, որ կտա նրանց իրենց երկիրը: Բայց ես ուզում եմ, որ դուք ինչ-որ բան նկատեք: Հեսու 1.11-ում գրված է. «Բանակի միջով անցկացե՛ք և պատվիրե՛ք ժողովրդին՝ ասելով. «Ձեզ համար պաշար պատրաստեք, որովհետև երեք օր հետո դուք այս Հորդանանով կանցնեք, որ գնաք ժառանգեք այն երկիրը, որ ձեր Տեր Աստված Ձեզ ՏԱԼԻՍ է ԻԲՐԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ»»: Հասկանում եք, Աստված Իսրայելին տվեց երկիրը, սակայն նրանք դեռ պետք է տիրեին դրան:

Աստված արդեն տվել է ձեզ խոստումներ Իր Խոսքում, սակայն դուք պետք է տիրեք դրանց: Այլ կերպ ասած՝ դուք պետք է վերցնեք այն, ինչ



ծեզ է պատկանում: «Տիրել» նշանակում է *ինչ-որ բանի տեր դառնալ, հսկողության տակ վերցնել*: Աստված մեզ ասել է, թե ինչ է պատկանում մեզ Իր Խոսքում. այժմ մենք պետք է տեր դառնանք դրան:

Հանգիստ նստելով որևէ բանի չեն տիրանում: Որոշ մարդիկ պարզապես նստում են՝ ձեռքերը կրծքին ծալած, և ասում. «Շնորհակալություն, Տեր: Քո Խոսքում գրված է, որ այսինչ բանը պատկանում է ինձ: Ես շնորհակալ եմ Քեզնից»: Քանի դեռ նրանք նստած են իրենց տեղում, ո-չ-ի-ն-չ նրանցը չէ: Ոչինչ: Բայց երբ աթոռից վեր կենան ու մտնեն Երիքովի քայլերթի մեջ, կտեսնեն, թե ինչպես են պարիսպները վայր ընկնում: Կտեսնեն, թե ինչպես են կյանքի հանգամանքները, որոնք փակել էին իրենց ճանապարհը, անհետանում:

Հնարավոր է, որ դա տեղի չունենա հանկարծակի: Իսրայելի համար դա հանկարծակի տեղի չունեցավ: Հիշեք, Աստծո մոտ աշխատավարձի վճարման օրը յուրաքանչյուր ուրբաթ չէ, սակայն աշխատավարձի վճարման օրը միշտ գալիս է: Աստծո Խոսքում ասվում է, որ Աստծո համար մեկ օրը հազար տարվա պես է (Բ Պետր. 3.8): Մենք պետք է հասկանանք, որ Աստված չի գործում մեր օրացույցով, որի համաձայն՝ օրն ունի քսանչորս ժամ, տարին՝ երեք հարյուր վաթսուներեք օր: Եթե մենք կարողանայինք իրերին նայել Աստծո տեսանկյունից, հավանաբար շատ ավելի համբերատար կլինեինք:

## Խոսե՛ք Աստծո Խոսքը

Աստված չխոստացավ, որ դուք երբեք չեք հանդիպի հոգևոր «Երիքովների», երբ ասաց. «Տիրե՛ք երկրին»: Աստված երբեք չասաց, որ դուք խնդիրներ չեք ունենա: Կլինեն քննություններ, փորձություններ, գայթակղություններ և իրավիճակներ, որտեղ դուք ստիպված կլինեք որոշում կայացնել՝ պատրաստվում եք նստելու և հանձնվելու, թե՛ վեր կենալու և շարունակելու Երիքովի քայլերթը:

Բոլորս այս կամ այն ժամանակ բախվել ենք նման իրավիճակների: Դրանք կարող են բերել տրտմություն կամ հիասթափություն: Երբեմն մենք կորցնում ենք մեզ համար թանկ որևէ մեկին կամ որևէ բան: Բայց արդյո՞ք պատրաստվում ենք նստելու և հանձնվելու: Թե՛ պատրաստվում ենք մնալու Երիքովի քայլերթում և հաղթանակած դուրս գալու:

Երբ բախվում ենք անհնարին իրավիճակների, պետք է շարունակենք քայլել՝ ասելով այն, ինչ Աստծո Խոսքում գրված է տվյալ իրավիճակի վերաբերյալ. «Ավելի մեծ է Նա, որ ինձանում է, քան թե նա,

որ աշխարհի մեջ է» (Ա Հովհ. 4.4): «Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով» (Փիլիպ. 4.13): «Նրա խոցերով ես բժշկված եմ» (Ա Պետր. 2.24): «Բայց այս ամեն բաներում առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով» (Հռոմ. 8.37): «Բոլոր քեզ դեմ շինված գործիքը չպիտի չհաջողվի» (Ես. 54.17): «Իմ բոլոր կարիքները բավարարված են Նրա հարստության չափով՝ փառքով» (Փիլիպ. 4.19): «Եթե Աստված իմ կողմն է, ո՞վ կարող է հակառակ լինել ինձ» (Հռոմ. 8.31): «Բայց շնորհակալություն Աստծուն, որ ամեն ժամանակ ինձ հաղթող է անում Քրիստոս Հիսուսում» (Բ Կորնթ. 2.14):

Երբ Երիբրովի քայլերթում եք, ձեր բերանից դուրս եկող Աստծո Խոսքը կտապալի ցանկացած անհնարին խոչընդոտ ձեր կյանքում: Սակայն ձեր պատասխանատվությունն է մնալ Երիբրովի քայլերթում և շարունակել մեջբերել Աստծո Խոսքը յուրաքանչյուր իրավիճակի համար: Այն ժամանակ դուք կտիրեք նրան, ինչ Աստված ասում է, որ ձեզ է պատկանում:

Նշանակություն չունի, թե ինչ խնդիր է, կամ որքան ցավոտ է այն: Աստված կարող է ձեզ հաղթանակ տալ, և դուք կարող եք դուրս գալ իրավիճակից ավելի ուժեղ, քան երբևէ: Դուք ոչ միայն հաղթող կլինեք, այլև ի վիճակի կլինեք օգնելու նրանց, ովքեր անցնում են միևնույն բանի միջով:

## Վերջին հաշվով բոլորս հաղթում ենք

1983 թվականը դժվար ժամանակաշրջան էր ինձ համար, երբ որդուս՝ Քրեյգին, ախտորոշեցին գլխուղեղի ուռուցք: Մինչև չվերապրեք դա, չեք իմանա այն զգացողությունը, որն առաջանում է սրտի խորքում, երբ վեց բժիշկ ուղիղ նայում են քո դեմքին և ասում. «Ձեր որդին ուղեղի հիմքում կիտրոնի չափ ուռուցք ունի»:

Քրեյգը տասներկու ժամ մնաց վիրահատարանում, և երբ վիրահատությունն ավարտվեց, բժիշկներն ասացին. «Մենք հեռացրինք ուռուցքի մեծ մասը, սակայն մի փոքր ծայր դեռ մնում է»: Շատ ծանր էր նման բան լսելը: Բայց Աստված հոգ տարավ մնացած ուռուցքի մասին, և մենք դուրս եկանք այդ ծանր վիճակից: Շնորհակալություն Աստծուն հաղթանակի համար: Շնորհակալություն Աստծուն Իր բոլոր օրհնությունների և բարիքների համար:

Ցավոք, որոշ քրիստոնյաներ չեն հաղթում իրենց մարտերը: Եվ այս կյանքում մենք հանդիպում ենք այնպիսի բաների, որոնք միշտ չէ, որ լիովին հասկանում ենք: Բայց եթե դուք ընկճված եք մարտում

պարտվելու պատճառով, ուզում եմ ձեզ ասել, որ պայքարը դեռ չի ավարտվել: Դուք կարող եք հաղթանակած հեռանալ՝ իմանալով, որ վերջին հաշվով հաղթելու եք: Եվ ճանապարհին կարող եք օգնել շատերին, որոնք նույն իրավիճակում են, որում դուք եք եղել:

## Մեր առաքելությունը

Յուրաքանչյուր հավատացյալ այս երկրագնդի վրա ունի Աստծո փրկագնող ծրագրի ամբողջությունը ստանալու կարողություն: Դուք կարող եք տիրել նրան, ինչը պատկանում է ձեզ: Դուք ունեք ընտրություն: Դուք կարող եք գնալ և տիրել կամ կարող եք մնալ ձեր տեղում ու երբեք չանել ևս մեկ քայլ, որպեսզի ստանաք այն ամենը, ինչ Աստված ունի ձեզ համար:

Սատանան ցանկանում է մտնել ձեր կյանքի մեջ՝ սպանելու, գողանալու և կործանելու համար (Հովհ. 10.10): Նա կանի ամեն հնարավոր բան ձեզ, ձեր գործը և ձեր կյանքը կործանելու համար: Բայց մենք պետք է մնանք Երիթովի քայլերթում՝ գնալով առաջ ու երբեք կանգ չառնելով: Մենք գործ ունենք անելու, և այդ գործը Աստծո խոստումները հոչակելն է:

Հիշեք. կռվի դաշտում լինում են կորուստներ: Նույնիսկ հավատքի պայքարում լինում են կորուստներ: Բայց թույլ մի՛ տվեք, որ վնասվածքները կամ կորուստներն ընկճեն ձեզ կամ ստիպեն դադարեցնել ձեր երթը: Ժամանակն է ոտքի կանգնելու և անելու այն, ինչ Աստված ասել է: Թույլ մի՛ տվեք, որ կորուստը հետ պահի ձեզ Աստծո լավագույնը ստանալուց: Անկախ նրանից, թե ինչպիսին է մարտը՝ մենք հաղթում ենք պատերազմը: Եվ Հիսուս Քրիստոսի արյունով ողողված դրոշը պետք է փողփողա Սուրբ Հոգու մեղմ քամուց:

Երբ թշնամին գետի պես գա, հիշեք, Տիրոջ Հոգին նրան կփախցնի (Ես. 59.19): Պարզապես շարունակեք քայլերթը: Ժամանակ չկա նստելու: Հիմա հաղթանակի երեկո անցկացնելու ժամանակը չէ: Հիմա այն ժամանակն է, որ եկեղեցին բարձրանա իր կատարյալ հասակի չափով, գոտեպնդվի լիարժեք մարտական պատրաստությամբ և առաջ շարժվի ու կռվի թշնամու դեմ նրա տարածքում՝ վերցնելով այն, ինչ իրեն է պատկանում, և հոգիներ փրկելով այրվող դժոխքից: Սա է մեր առաքելությունը:

## Մի՛ խաբվեք

Ինչ կլինի, եթե բախվեք որևէ խոչընդոտի կամ խնդրի: Մտածե՛ք Աստվածաշնչում հիշատակված այն բոլոր տղամարդկանց և կանանց մասին, որոնք բախվել են խոչընդոտների և խնդիրների: Աստծո Խոսքում ասվում է, որ մեր թշնամին մոնչացող առյուծի պես ման է գալիս՝ փնտրելով, թե ում կույ տա (Ա Պետր. 5.8): Բայց Խոսքը նաև ասում է, որ Աստված արդարին կազատի բոլոր նեղություններից (Սաղմ. 34.19):

Սատանան Հիսուսին հանեց բարձր սարի վրա և ասաց. «Եթե հետևես Ինձ, կարող ես ունենալ աշխարհը և այն բոլոր հաճույքները, որ այն առաջարկում է» (Մատթ. 4.8-9): Սատանան այսօր էլ նույն հնարքներն է օգտագործում: Նա առաջարկում է զվարճանքներ ու վայելքներ, բայց չի ասում, որ դրանք վերածվում են աղետի: Հեռուստաշոուները և կինոնկարները գրավիչ են դարձնում ակոհուլն ու թմրադեղերը: Բայց հարցրե՛ք մարդկանց՝ նախկին փաստաբանների, բժիշկների, տնօրենների, քարոզիչների և այլն, որոնք ընտրել են այդ ուղին: Նրանք տեսել են հմայքն ու պայծառ լույսերը. դա այն կողմն է, որ սատանան ցանկանում է ցույց տալ մարդկանց: Բայց անցե՛ք կուլիսների հետև, և կպարզեք, որ այդ ուղին ավարտվում է կործանումով: Միայն Հիսուս Քրիստոսը կարող է բերել կյանք և էլ ավելի (Հովհ. 10.10):

Ուզում եք, որ այն պատերը, որ խանգարել են ձեզ, վայր ընկնեն: Ուրեմն սկսե՛ք փառաբանության հաղթանակն աղաղակել: Փառաբանե՛ք Աստծուն, երբ ամեն բան խավար ու մոայլ է թվում: Հավատքը հավատում է, և հավատքը փառաբանում է:

## Աստված ավելի մեծ է

Վերադառնալով Հեսուին և Իսրայելի զավակներին՝ նշենք, որ նրանք պտտվեցին Երիբովի պարսպի շուրջը վեց օր շարունակ, օրը՝ մեկ անգամ: Յոթերորդ օրը նրանք պտտվեցին յոթ անգամ: Յոթերորդ պտույտից հետո հնչեց փողի երկար ձայնը: Այդ պահին իսրայելցիները սկսեցին աղաղակել, և Երիբովի պարիսպները վայր ընկան:

### ՀԵՍՈՒ 6.20

**20 Եվ ժողովուրդը աղաղակեց փողերը հնչելիս, և երբ որ ժողովուրդը փողերի ձայնը լսեց, և ժողովուրդը բարձ-**

**րաձայն աղաղակեց, պարիսպները վայր ընկան, և ժողովուրդը վեր ելավ քաղաքը, ամեն մեկը՝ ուղիղ իր առաջ, և քաղաքն առան:**

Փառաբանելու և աղաղակելու փոխարեն շատ քրիստոնյաներ խուճապի են մատնվում, երբ իրենց ճանապարհին խոչընդոտի, հիասթափության կամ հարվածների են հանդիպում: Նրանք խուճապահար են լինում և բռնվում վախի ոգով: Աստծո Խոսքում գրված է, որ մեզ չի տրվել վախի ոգի, այլ սիրո, զորության և զգաստության հոգի (Բ Տիմոթ. 1.7): Զգաստությունը յուրաքանչյուր իրավիճակում կասի, որ ժամանակը չէ խուճապի մատնվելու. ժամանակն է փառաբանելու:

Աստված ավելի մեծ է, քան ցանկացած քննություն կամ փորձություն և ցանկացած հարված կամ հիասթափություն, որոնց միջով, հնարավոր է, որ անցնում եք: Աստված ավելի մեծ է, քան ցանկացած ֆինանսական ծանրություն, որի միջով, հնարավոր է, որ անցնում եք: Ուշադրություն դարձրեք, որ ես օգտագործում եմ «անցնել» բառը: Եթե դուք ինչ-որ իրավիճակում եք, մի՛ նստեք ու մտրճվեք դրա մեջ: Անցե՛ք դրա միջով:

Երբ թվում է, թե ամեն բան սխալ է ընթանում, և բանկն ինչ-որ բան է բռնագրավում, պարզապես ասե՛ք. «Փանոք Աստծուն, սա ևս մեկ հնարավորություն է ապացուցելու, որ Աստված ինձ կվերադարձնի ավելին, քան ունեի»: Հիշում եք, երբ սատանան Հոբից խլեց ամեն բան (հասկանում եք, գողացողը սատանան է): Պատմության ավարտին Հոբը երկու անգամ ավելի ուներ, քան նախկինում (Հոբ 42.10): Ու եթե դուք մնաք Երիցովի քայլերթում, վերջում ավելին կունենաք, քան ունեիք սկզբում:

## **Հավատքը փառաբանում է**

Գործք առաքելոց 16-րդ գլխում կարդում ենք, որ Պողոսն ու Շիղան բանտում էին՝ իրենց «Երիցովի պարսպի» դիմաց: Պողոսն ու Շիղան խուճապի չմատնվեցին. փոխարենը նրանք փառաբանեցին Տիրոջը: Շատ մարդիկ այդ իրավիճակում կասեին. «Պողոս, դու հրավիրեցիր ինձ միանալու այս միսիոներական ճանապարհորդությանը, և հիմա նայիր, թե որտեղ ենք մենք: Ո՛րն է այստեղ խնդիրը: Դու հավանաբար Աստծո կամքից դուրս ես»:

Մեծ մասամբ, երբ հայտնաբերում եք, որ բախվել եք սոսկալի խոչընդոտների և հանգամանքների, դա պարզապես ապացուցում է, որ

դուք Աստծո կամքի մեջ եք: Ձեր կարծիքով ամենից շատ հում է սատանան փորձում խառնաշփոթության մեջ գցել. նրանց, ովքեր Աստծո կամքի մեջ են. այն մարդկանց, որոնք, սատանան գիտի, որ մասնատելու են իր թագավորությունը: Ինչ օգուտ, եթե նա խառնաշփոթության մեջ գցի որևէ մեկին, ով նրա համար խնդիր չի ստեղծելու:

Այսպիսով՝ պարզապես մնացե՛ք Երիբրովի քայլերթում: Երբ ձեր թշնամին գա, երբ առճակատվեք ամեն տեսակի խոչընդոտի, որ կարող եք պատկերացնել, բարձրացրե՛ք ձեր ձեռքերը և սկսե՛ք փառաբանել Աստծուն՝ ասելով. «Սա ևս մեկ հնարավորություն է ապացուցելու, որ Աստված դեռևս Աստված է»: Հասկանո՞ւմ եք, մենք ունենք ընտրություն՝ ընդունելու պարտությունը կամ բարձրացնելու մեր ձեռքերը, փառաբանելու Աստծուն և մնալու Երիբրովի քայլերթում:

Գործք առաքելոց 16.25-ում գրված է. *«Եվ ԿԵՍՍՊԻՇԵՐԻՆ Պողոսը և Շիղան աղոթք անելով օրհնում էին Աստծուն, և բանտարկվածներն էլ նրանց ականջ էին դնում»*: Ինձ համար կեսգիշերը երկու բան է նշանակում: Առաջին՝ այն ներկայացնում է ձեր փորձության ամենախավար ժամը: Բայց այն նաև մեկ այլ բան է նշանակում. կեսգիշեր նշանակում է, որ գիշերը վերջանում է, և օրը շուտով կբացվի:

Ինչ-որ մեկը, որ անցնում է կեսգիշերային փորձության միջով, հնարավոր է, որ ասի. «Օ՛հ, այնքան խավար է!»:

Ես այս մարդկանց ասում եմ. «Դա նշանակում է, որ դուք պետք է նայեք հորիզոնին, որովհետև Աստծո Ո-ր-դ-ի-ն սկսում է Իր լույսը սփռել ձեր ճանապարհին: Եվ ձեր բոլոր փորձությունները հավելու են այնպես, ինչպես ձնագնդին՝ Օկլահոմայի հուլիսյան կիզիչ արևից»:

Հավատքը փառաբանում է Աստծուն Երիբրովի քայլերթի ընթացքում:

## Ճիշտ ժամանակին

Ուզում եմ՝ ուշադրություն դարձնեք, որ իսրայելցիներին հրամայվեց որոշ ժամանակ քայլել, մինչև նրանց թույլ կտրվեր բացել իրենց բերանները: Հեսու 6.10-ում գրված է. *«Եվ Հեսուն ժողովրդին պատվիրեց՝ ասելով. «Աղաղակ մի՛ հանեք, և ձեր ձայնը չլսվի, և ՁԵՐ ԲԵՐԱՆԻՑ ՄԻ ԽՈՍՔ ԴՈՒՐՍ ՉԳԱ մինչև այն օրը, որ ես ձեզ ասեմ, թե աղաղակեք. այն ժամանակ աղաղակեք»*: Չափազանց շատ մար-

դիկ չափից շուտ են բացում իրենց բերանները: Համոզված եղեք, որ գիտեք ամբողջ ծրագիրը, նախքան կսկսեք խոսել:

Նաև համոզված եղեք, որ գիտեք ամբողջ ծրագիրը, մինչ կսկսեք քայլերթը: Կա ժամանակ՝ քայլելու, և կա ժամանակ՝ աղաղակելու: Աստվածաշնչում ասվում է, որ ամեն բանի ժամանակ կա (Ժող. 3.1):

Սաղմոս 1.3-ում գրված է. «Եվ նա ջրերի գնացքում տնկված ծառերի պես է, որ իր պտուղը տալիս է ԻՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ, և նրա տերևը չի թափվում, և ամեն ինչ, որ անում է, հաջողվում է նրան»: Միգուցե դուք փորձում եք պտուղ բերել, երբ դեռ ժամանակը չէ: Թույլ տվեք լուսաբանել այսպես. երբ ելակի ժամանակը չէ, չեք գնում խանութ, որ թարմ ելակով կարկանդակ գնեք: Բայց երբ գարունը վերջանա, կամ սկսվի ամառը, օհ, ելակով կարկանդակը հրաշալի համ կունենա:

Հասկանո՞ւմ եք. եթե պատրաստվում եք բերք հավաքելու, պետք է շարունակեք շարքերով վեր ու վար անել՝ խնամելով բույսերը, մինչև գա բերքահավաքի ժամանակը: Շարունակեք շարքերով վեր ու վար անել՝ հոչակելով Աստծո խոսքը: Երբ ժամանակը գա, սկսեք աղաղակել հաղթանակը, և ձեր կյանքում կսկսվի բերքահավաքը:

## Փնտրեք հաղթանակը

Եթե իսրայելցիները կարողացան աղաղակել և փառաբանել Աստծուն այն ժամանակ, երբ, բացի Ուխտի տապանակին նայելուց, ուրիշ ոչինչ չէին կարող անել, որքան առավել մենք կարող ենք աղաղակել և փառաբանել Աստծուն, երբ Նա մեր ներսում է բնակվում: Սակայն աղաղակելու փոխարեն շատ-շատերը նստած ասում են. «Օ՛հ, Աստված, ինչո՞ւ»: Դա այն չէ, ինչ մենք պետք է ասենք: Մենք պետք է աղաղակենք և փառաբանենք Աստծուն՝ ասելով. «Ես վստահում եմ Քեզ, Տեր: Ես հավատում եմ Քո խոսքին»:

Սկսեք փնտրել հաղթանակը, այլ ոչ թե «Ինչո՞ւ սա պատահեց» հարցի պատասխանը: Ու շարունակեք քայլել: Չափազանց շատ մարդիկ հարցնում են՝ ինչո՞ւ, այն դեպքում, երբ նրանք պետք է քայլեին: Որքան շուտ սկսեք փառաբանել Աստծուն և քայլել Նրա թմբուկների զարկի ներքո, այնքան շուտ դուրս կգաք ձեր փորձությունից և իրավիճակից:

Շարունակեք քայլել, որովհետև բլրի վրա հաղթանակը ձեզ է սպասում: Մի՛ դանդաղեք զուտ այն պատճառով, որ ճանապարհին խոչընդոտ կա: Շարունակեք քայլել շոգի և ցրտի միջով, և Աստված

ցույց կտա ձեզ հաղթության բազուկը: Շարունակե՛ք քայլել և կտեսնե՛ք, որ այն, ինչ ձեր հետևում է, ձեզ վրա ոչ մի ազդեցություն չի ունենա: Հետ մի՛ նայեք, նույնիսկ մի՛ մտածեք անցյալի մասին: Անցյալն անցյալ է. այն վերջացած է և չկա: Ընդմիջտ մի կո՛ղմ դրեք այն և շարունակե՛ք քայլել, և Աստված ձեզ հրաշալի ու հզոր բաներ ցույց կտա:





## Գլուխ 14

### Ինչպէս հաջողության հասնել

*Եթե մարդ կանչված է լինելու փողոց մաքրող, նա պետք է մաքրի փողոցները ճիշտ այնպես, ինչպես Միքելանջելոն նկարում էր, կամ Բեթհովենը երաժշտություն էր հորինում, կամ Շեքսպիրը պոեզիա էր գրում: Նա պետք է այնքան լավ մաքրի փողոցները, որ երկնքի և երկրի բոլոր զորքերը կանգ առնեն ու ասեն. «Այսփեղ մի գերազանց փողոց մաքրող է եղել, որը լավ է կատարել իր աշխատանքը»:*

*Մարտին Լյութեր Քինգ Կրտսեր*



Մինչ ձգտում ենք գրոհով նվաճելու մեր ապագան և հաջողության հասնելու այն ամենում, ինչ Աստված ծրագրել է մեր կյանքի համար, կարևոր է, որ չդադարեցնենք մեր ջանքերը: Հասկանում եք, անկախ նրանից, թե որքան ջանասիրաբար է մարդ ձգտում որևէ բանի՝ ձախողումը դեռևս հնարավոր է, եթե հենց սկզբից չվերացվեն ձախողման պատճառները:

Ուզում եմ բերել երեք տարածված պատճառներ, որոնցով քրիստոնյաները ձախողվում են կյանքում, և մի քանի իմաստուն խորհուրդ տալ, որոնք կօգնեն ձեզ ապագայում մնալու ճիշտ ուղու վրա:

Երբ Աստվածաշնչում կարդում ենք արարչագործության պատմությունը, հայտնաբերում ենք, որ մարդկությունը ստեղծված չէր ձախողվելու համար: Մենք գիտենք սա, որովհետև Ծննդոց 1-ին գլխում գրված է, որ մարդկությունը ստեղծվեց Աստծո պատկերով:

**ԾՆՆԴՈՑ 1.26-27**

**26 Եվ Աստված ասաց. «Մեր պատկերով և մեր նմանության պես մարդ շինենք, որ իշխեն ծովի ձկների և երկնքի թռչունների և անասունների և բոլոր երկրի վրա և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա:**

**27 Եվ Աստված ստեղծեց մարդը Իր պատկերով. Աստծո պատկերով ստեղծեց նրան. արու և էգ ստեղծեց նրանց:**

26-րդ խոսքում ասվում է, որ մարդը ստեղծվեց երկրի վրա իշխելու համար: «Իշխել» նշանակում է *տիրել կամ իշխանություն ունենալ*: Այսպիսով՝ մարդը ստեղծվեց իշխանություն ունենալու, տիրելու և իշխելու, ոչ թե ձախողվելու համար:

Բայց մենք տեսնում ենք, որ մարդը միշտ սայթաքում է, խնդիրներ ունենում և ձախողվում: Այսպիսով՝ պետք է լինի պատճառ մարդու կրկնվող ձախողումների համար: Եթե մարդը նա չէ, ով ստեղծված է լինելու, և չի անում այն, ինչ ստեղծված է անելու, ուրեմն նա ինչ-որ սխալ բան է անում:

Երբ առաջին անգամ բացահայտում եք, որ ինչ-բան այն չէ, պետք է անմիջապես փնտրեք խնդրի բուն պատճառը: Նախքան կկարողանաք շտկել խնդիրը, պետք է պարզեք, թե որն է խնդրի պատճառը: Միգուցե դուք կարողանաք *ժամանակավորապես* լուծել խնդիրը՝ առանց պարզելու, թե ինչից է այն առաջացել, սակայն մինչև չվերացնեք բուն պատճառը, խնդիրը, վերջին հաշվով, կվերադառնա:

### **Ժամանակավոր լուծում**

Մեկ անգամ, երբ մեր ծառայության ավտոբուսներից մեկի լույսերը չէին աշխատում էլեկտրականությամբ պայմանավորված ինչ-որ խնդրի պատճառով, մեր մեքենագետը լարերն այնպես միացրեց, որ լույսերն աշխատեին, և մենք կարողանայինք ժամանակավորապես օգտվել ավտոբուսից: Բայց քանի որ նա չվերացրեց խնդրի *պատճառը*, նրա արածն ընդամենը «վիրակապում» էր, այլ ոչ թե խնդրի մեկընդմիշտ լուծում:

Խնդրի իսկական պատճառը գտնելու համար ավտոբուսը պետք է տարվեր արհեստանոց, և այն մանրակրկիտ զննության պետք է ենթարկեին՝ կիրառելով բոլոր տեսակի գործիքներն ու սարքերը: Մենք, առանց մանրակրկիտ զննելու, այնպես արեցինք, որ ավտոբուսի լույսերն աշխատեցին կարճ ժամանակ: Բայց դա միայն ժամանակավոր լուծում էր, մինչև կանդրադառնայինք բուն պատճառին:

Շատ քրիստոնյաներ հավատքով բռնվում են Աստծո Խոսքից և ստիպում սատանային ժամանակավորապես դադարեցնել իր գործունեությունը: Սակայն եկեք ժամանակավորապես չդադարեցնենք սատանայի գործունեությունը, այլ Աստծո Խոսքն ուղղենք բուն խնդրին և ստիպենք սատանային մեկընդմիշտ դադարեցնել իր գործունեությունը:

## Ճիշտ ճանապարհը

Քրիստոնյաների ձախողման առաջին պատճառն այն է, որ նրանք մեղք են գործում կամ խախտում են Աստծո Խոսքը: Աստծո Խոսքին չհնազանդվելը քրիստոնյայի ձախողման պատճառ է դառնում: Աստծո Խոսքին հնազանդվելը ամեն անգամ հաջողություն է բերում:

Կարծում եմ, բոլորս գիտակցում ենք, որ Աստծո ասածը չանելը կարող է մեզ համար ձախողման պատճառ դառնալ: Բայց երբեմն չենք գիտակցում, որ նույնիսկ այն դեպքում, երբ անում ենք ճիշտ բան, բայց սխալ կերպով, մենք դառնում ենք անհնազանդ:

Սրա օրինակը կարող ենք գտնել Ա Թագավորաց 15-րդ գլխում: Սավուղ թագավորը ճիշտ բան արեց՝ Աստծուն զոհ մատուցելով: Սակայն նա դա արեց սխալ կերպով՝ թշնամու ավարը որպես զոհ մատուցելով:

Աստված Սավուղին շատ առանձնահատուկ կերպով ասաց ինչոր բան անել, իսկ Սավուղը չարեց դա: Սավուղը մեծամտացավ և համառորեն չհնազանդվեց Աստծուն: Եթե ուսումնասիրեք Հին կտակարանը, կհայտնաբերեք, որ հաճախ մարտում տարած հաղթանակից հետո Իսրայելը հետ էր բերում ավարը և այն մատուցում Աստծուն: Սակայն այս ճակատամարտից առաջ Աստված Սավուղին և Իսրայելի ժողովրդին հրամայեց որևէ ավար չվերցնել թշնամուց:

Սավուղը չհնազանդվեց Աստծո հրամանին և վերադարձավ ավարով: Նա կարծում էր, որ իր արարքը կընդունվեր, երբ ավարը բերեր Սամուել մարգարեի մոտ, որպեսզի վերջինս զոհ մատուցեր Աստծուն: Բայց Սամուելը Սավուղին ասաց. «Հնազանդությունը զոհից լավ է» (Ա Թագ. 15:22): Այլ խոսքով՝ ավելի լավ է հնազանդվել Աստծուն և անել Նրա ասածը, քան Նրան զոհ մատուցել:

Հասկանո՞ւմ եք, մենք բազմիցս ձախողվում ենք ոչ թե այն պատճառով, որ ինքնին սխալ բան ենք անում, այլ ճիշտ բան ենք անում սխալ կերպով: Իրականում միակ ճանապարհը հնազանդվելն ու տվյալ բանը ճիշտ անելն է:

## Հաշվեք ծախսը

Քրիստոնյաների ծախողման երկրորդ պատճառն այն է, որ նրանք *ինչ-որ բան են սկսում նախքան բոլոր փաստերը հավաքելը*: Սա մի բան է, որն ազդեցություն է թողնում շատ քրիստոնյաների վրա և թերևս ավելի շատ ծախողման պատճառ է դառնում, քան որևէ այլ բան:

**ՂՈՒԿԱՍ 14.28-30**

**28** Որովհետև ձեզնից ով է, որ կամենա աշտարակ շինել և առաջ չնստի և ծախսը հաշվի, թե ավարտելու համար բավական բան ունի:

**29** Որ մի գուցե երբ որ հիմքը դնի և չկարողանա ավարտել, բոլոր տեսնողները սկսեն ծաղր անել նրան

**30** և ասել, թե այս մարդը սկսեց շինել և չկարողացավ ավարտել:

Եթե շարունակեք կարդալ 33-րդ խոսքը, կտեսնեք, որ Հիսուսը սովորեցնում է, որ եթե որևէ մեկը պատրաստվում է հետևելու Քրիստոսին, ապա պետք է տա ամենը, ինչ ունի, և հետևի Նրան: Եթե դուք պատրաստվում եք հետևելու Աստծուն, չեք կարող պահել ձեր սրտի մի մասը և ասել. «Շատ լավ, Աստված, Դու կարող ես ունենալ իննսուն տոկոսը, բայց տասը տոկոսն իմն է»: Ո՛չ, դուք պետք է բոլորը տաք Աստծուն:

Սա եղանակներից մեկն է, որով կարելի է նայել այս սուրբգրային հատվածին, սակայն մենք կարող ենք մեկ այլ բան սովորել այս խոսքերից: Ամեն անգամ, երբ սկսում ենք որևէ բան անել Աստծո համար, նախ պետք է նստենք և մանրամասն ուսումնասիրենք դա, որպեսզի համոզված լինենք, որ ունենք այն, ինչ պահանջվում է նախագիծն ավարտին հասցնելու համար: Այլապես վնաս կհասցնենք քրիստոնեությանը (և հատկապես հավատքի ուղեծրին): Մենք քրիստոնյաների բարի համբավը կխայտառակենք, մինչդեռ կարող էինք դա կանխել:

Շատ անգամներ հավատքի պակասը չէ, որ քրիստոնյաների ծախողման պատճառ է դառնում: Դա պատշաճ ծրագրման և նախապատրաստման պակասն է: Երբ նախքան սկսելը ամեն բան չեք հաշվարկում, խնդիրների առաջ եք կանգնում:

Ես խոսում եմ փաստերին նայելով ծախսը հաշվելու մասին: Մենք պետք է հասկանանք, որ կան փաստեր, որոնք պետք է դիտարկել:

Նշանակություն չունի, թե որքան հավատք ունեք, միևնույնն է, պետք է հաշվի առնեք իրական փաստերը:

Ուզում եմ, որ դուք հասկանաք, ես չեմ նսեմացնում հավատքի և Աստծուն հավատալու դերը: Ես հավատքի մարդ եմ և հասկանում եմ, որ Աստծուն հավատալը որևէ բանի հասնելու կարևորագույն նախապայմանն է: Բայց ես նաև հասկանում եմ, որ մենք պետք է նստենք և հաշվենք ծախսը, նախքան կներգրավվենք որևէ նախագծի կամ շարժման մեջ կամ որևէ որոշում կկայացնենք:

Երբ ունենաք հնարավորություններ՝ անելու այս, այդ կամ այն բանը, կնկատեք, որ միշտ չէ, որ Աստված ասում է, թե ինչ անեք: Դուք կարող եք աղոթել ուղղություն ստանալու համար, սակայն երբեմն Աստված թույլ կտա ձեզ ինքնուրույն որոշում կայացնել, երբ դա չի ազդում ձեր փրկության կամ այն բանի վրա, ինչ Նա ցանկանում է, որ անեք: Բայց նախքան որոշում կայացնելը անպայմանորեն ստուգե՛ք բոլոր մանրամասները և հաշվե՛ք ծախսը:

Շատ քրիստոնյաներ հապճեպ որոշումներ են կայացնում, իսկ հետո կրում հետևանքները: Եթե դուք մտածում եք թողնել այն, ինչ անում եք, և անցնել մեկ այլ բանի, քննե՛ք բոլոր փաստերը, նախքան կանեք ձեր քայլը:

## Ստուգե՛ք փաստերը

Մի մարդ ինձ ասաց. «Ես պատրաստվում եմ թողնելու աշխատանքս և սկսելու իմ այսինչ բիզնեսը»:

Ես նրան ասացի. «Լավ, ամեն բան մանրակրկիտ ստուգել եք» (Խնդրում եմ, ինձ սխալ մի՛ հասկացեք: Այս մարդը չէր ցանկանում մեղք գործել կամ ինչ-որ սխալ բան անել: Անկախ նրանից, թե ինչ էր նա որոշել՝ նա դեռևս փրկված էր: Նա հաճախում էր եկեղեցի ու կամավորական գործունեություն ծավալում):

Նա ինձ ասաց. «Այո՛, ես բավականին լավ ստուգել եմ: Ես հավատում եմ, որ Աստված հոգ կտանի ամեն բանի համար»:

Ես ասացի. «Աստված այդպես չի գործում»:

Նա ասաց. «Ինչի՞ մասին եք դուք խոսում»:

Ես նրան բացատրեցի, որ Աստված չի պատրաստվում շոջելու նրա հետևից ու հոգ տանելու նրա համար զուտ այն պատճառով, որ նա չի օգտագործել այն ուղեղը, որ Աստված տվել է նրան: Աստված մեզնից յուրաքանչյուրին ստեղծել է ուղեղով, և Նա ցանկանում է, որ մենք օգտագործենք այն:

Ես շնորհակալ եմ Աստծուց հավատքի համար, և ես ապրում եմ հավատքով ու քարոզում եմ հավատք այնքան ուժգին, որքան ցանկացած մեկը կքարոզեր, բայց մենք պետք է նայենք նաև փաստերին և օգտագործենք այն ուղեղը, որ Աստված տվել է մեզ:

Այժմ, եթե նայում եք փաստերին, և դրանք ասում են՝ մի՛ արեք դա, իսկ Աստված ասում է առաջ գնալ և ամեն դեպքում անել դա, այդ ժամանակ սպառազինվեք Աստծո Խոսքի *առավել հզոր* փաստերով և առաջ գնացեք: Սակայն ավելի լավ է հարյուր տոկոսով համոզված լինեք, որ Աստված ձեզ ասաց անել դա:

Այս անձնավորությունը, որ պատրաստվում էր թողնելու իր աշխատանքը և սկսելու սեփական բիզնեսը, չէր քննել բոլոր փաստերը: Երբ նրան հարցրի, թե արդյոք արել է այսինչ բանը և ստուգել այնինչ բանը, նա դրական պատասխան տվեց: Սակայն ես կարող էի ասել, որ նա ոչինչ էլ չէր ստուգել: Ուստի ասացի. «Եթե թողնեք ներկայիս աշխատանքը, ինչպե՞ս եք վճարելու այս նոր բիզնեսը սկսելու ծախսերը»:

Նա ասաց. «Ես մի քիչ գումար եմ խնայել դրա համար»:

Ես ասացի. «Հրաշալի է: Այսպիսով՝ դուք ունեք գումար՝ վճարելու շենքի և գույքի համար: Բայց ինչո՞վ եք պատրաստվում գնելու նպարեղենը: Ինչպե՞ս եք վճարելու ձեր տան և ապահովագրության համար: Ինչ եք պատրաստվում տալու ձեր երեխաներին դպրոցական ծախսերի համար»:

Նա ասաց. «Ես հաշվարկել եմ, որ առաջին օրն այսքան գումար կվաստակենք, և առաջին ամսվա ավարտին մեր գումարն այսքան կկազմի»:

Ես հարցրի. «Որտեղի՞ց ձեզ այս բոլոր հաշվարկները»:

«Դե, դա այն է, ինչ նման խանութն ունեցել է այսինչ քաղաքում», - պատասխանեց նա:

Ես նրան ասացի. «Դուք չեք կարող երաշխավորել, որ ձեր խանութը նույն արդյունքը կունենա»:

Այն ժամանակ նա ասաց. «Դուք պարզապես թուլացնում եք իմ հավատքը»:

Ես ասացի. «Եղբայր, հավատքը որևէ կապ չունի սրա հետ: Ես խոսում եմ իրականության սառը, կոշտ փաստերի մասին»:

Ցավոք, շատ քրիստոնյաներ միանգամից անում են բաներ առանց պատշաճ ծրագրման և նախապատրաստման: Իսկ հետո, երբ ձախողվում են, շրջվում են ու ասում. «Աստված ինձ աչքաթող արեց: Աստված ինձ հուսախաբ արեց»:

Աստված նրանց հուսախաբ չարեց: Նրանք ձախողվեցին, որովհետև չարեցին այն, ինչ Աստծո Խոսքում ասվում էր հենց սկզբից անել, և դա ծախսը հաշվելն էր: Նախքան որևէ բան սկսելը պետք է անենք այն, ինչ գրված է Ղուկասի Ավետարանի 14.28-ում. սկզբում նստենք և տեսնենք, թե արդյոք ունենք այն, ինչ անհրաժեշտ է սկսածը ավարտին հասցնելու համար:

## Աստված երբեք չի ձախողվում

Մարդը կարող է ձախողվել, բայց Աստված երբեք չի ձախողվում: Եվ մարդը սովորաբար ձախողվում է, որովհետև չի անում այն, ինչ Աստված ասել էր նրան անել սկզբում: Միգուցե նա չի նստել և նախօրոք համոզվել, որ ամեն բան կարգին է, և կարող է ավարտին հասցնել ծրագիրը:

Եվ եթե նույնիսկ դուք քննել եք փաստերը և գիտեք, որ ի վիճակի եք ավարտելու ծրագիրը, միևնույնն է, ի հայտ կգան չնախատեսված բաներ, որոնք կհաղթահարեք՝ գործի դնելով առ Աստված ունեցած ձեր հավատքը:

Մենք ապրում ենք երկու աշխարհներում և պետք է կարողանանք գործել միաժամանակ երկու աշխարհներում: Հաջողության սկզբունքները, որոնք օգտագործում եք հոգևոր աշխարհում, նույն սկզբունքներն են, որոնք կարիք ունեք օգտագործելու ֆիզիկական աշխարհում: Դուք չեք երազի ինչ-որ բան անել՝ առանց Աստծո Խոսքով սպառազինվելու, որովհետև ամեն անգամ, երբ սատանան իր գլուխը բարձրացնի, դուք կարող եք Խոսքով դիմադրել նրան: Նմանապես, դուք չեք երազի որևէ ծրագիր իրականացնել՝ առանց սպառազինվելու թե՛ Աստծո Խոսքով, թե՛ փաստերով: Այդ կերպ ամեն անգամ, երբ հակառակություն բարձրանա, դուք ունեք փաստերը և Խոսքը՝ դրա դեմ պայքարելու համար:

Ինձ սխալ մի՛ հասկացեք: Ես բնավ չեմ նվազեցնում Աստծո գործությունը: Ես պարզապես ցույց եմ տալիս ձեզ ևս մեկ բնագավառ, որտեղ կիրառելի է իմ սիրած ասացվածքներից մեկը. «Բնականը և գերբնականը միանալով պայթյունավտանգ ուժ են ստեղծում Աստծո համար»: Մեկը չէ կամ մյուսը. երկուսն են, որ միասին գործելով պայթյունավտանգ ուժ են ստեղծում Աստծո համար:



## Գործել «հրահանը կիսով չափ քաշած»

Երբ արագորեն ներգրավվում ես ինչ-որ բանի մեջ նախքան պատրաստ լինելը, երբեմն դա համեմատվում է «հրահանը կիսով չափ քաշելու» հետ: Այս արտահայտությունը բխում է այն փաստից, որ հրացանը չի կրակում այնպես, ինչպես հարկն է, մինչև հրահանը լիովին չքաշես: Կիսով չափ քաշած հրահանը ձեզ որևէ օգուտ չի տա: Փաստացի, այն կարող է ձեզ վնասել:

Երբ F-16 կործանիչն իր առաքելությամբ լքում է ռազմակայանը, ցամաքային անձնակազմի պարտականությունն է անել այնպես, որ կործանիչը սպառազինված լինի բոլոր հնարավոր զենքերով, որ այն կարող է կրել: Եթե այն նախատեսված է չորս հրթիռ կրելու համար, սակայն սպառազինվում է միայն երկու հրթիռով, այդ օդաչուն կարող է լուրջ խնդրի առջև կանգնել:

Ենթադրենք՝ օդաչուն օդային մարտի մեջ է մտնում թշնամու երեք օդանավերի դեմ: Նա արձակում է երկու հրթիռները և խոցում թշնամու երկու օդանավերը: Այնուհետև մոտենում է երրորդ օդանավին, պահում այն տեսադաշտում և սեղմում կոճակը՝ ևս մեկ հրթիռ արձակելու համար:

Երբ ոչինչ տեղի չի ունենում, օդաչուն ինքնիրեն ասում է. *«Ես գիտեմ, որ օգտագործել եմ ընդամենը երկու հրթիռ: Պետք է որ երկուսն էլ ունենամ»*: Այն ժամանակ օդաչուն հասկանում է, որ կրակահրթիռային միջոցները սպառվել են, իսկ թշնամու մեկ օդանավ դեռ օդում է: Նա հույս է փայփայում, որ այնքան արագ կթռչի, որ կանցնի թշնամու օդանավին:

Եթե այդ օդաչուին կրակեն, մարդիկ հավանաբար կասեն, որ նա ձախողեց իր առաքելությունը: Սակայն խնդիրը չառաջացավ այն ժամանակ, երբ ի հայտ եկավ թշնամին: Խնդիրը սկսվեց այն ժամանակ, երբ օդանավը դեռ ցամաքի վրա էր, և ինչ-որ մեկը լավ չէր արել իր գործը՝ ամբողջովին չսպառազինելով օդանավը:

Երբ մտածում եք Աստծո համար ինչ-որ ծրագրի մեջ ներգրավվելու մասին, հիշեք կործանիչ օդանավի պատմությունը: Միգուցե Աստված ինչ-որ բան է ասել, որ անեք, բայց մինչև լիովին չսպառազինվեք և փոխարենն անպատրաստ գործի անցնեք, հավանաբար դուք կձախողվեք: Եվ Աստված մեղավոր չի լինի ձեր ձախողման համար: Աստված կանչեց. Աստված ասաց անել դա, սակայն դուք բավականաչափ երկար չմնացիք ձեր տեղում՝ լիովին սպառազինվելու համար:

## Մի՛ սպառեք վառելիքը

Կործանիչ օդաչուին ոչ միայն զենքերի ամբողջական լրակազմ է հարկավոր, այլև մի ամբողջ բաք բենզին, եթե ստիպված լինի թռչել-անցնել թշամուն:

Ես ավտոարշավի մոլի սիրահար եմ և սիրում եմ հեռուստացույցով դիտել ՆԱՍԿԱՐ ընկերության կողմից կազմակերպվող մրցարշավները: Մրցարշավի ժամանակ վարորդները ստիպված են կանգառներ կատարել վառելիքի պակասը լրացնելու համար, որովհետև նրանց բաքերը չեն պահում բավականաչափ վառելիք ամբողջ մրցուղին անցնելու համար:

Հատկապես հիշում եմ այդ մրցարշավներից մեկը: Մրցարշավը գլխավորող վարորդը նոր էր դուրս եկել կանգառից, իսկ կանգառում մարդիկ անհանգստացած էին, որովհետև գիտեին, որ նա հեռացել էր կանգառից՝ չսպասելով, որ բաքը լցվեր բավականաչափ վառելիքով: Այնքան շատ պտույտներ չէին մնացել, որ նա ժամանակ ունենար մեկ այլ կանգառ կատարելու, ավելի շատ վառելիք ստանալու և մրցարշավը հաղթելու համար: Նրա միակ հույսը մրցուղու վրա մնալն էր և գազը չսպառելը:

Վերջին պտույտն անելիս վարորդը հասավ առաջին շրջադարձին և սկսեց մոտենալ վերջնակետին: Նրա մեքենան սկսեց դանդաղել: Նրանից առաջ անցավ առաջին մեքենան, հետո՝ մյուսը, հետո՝ մեկ ուրիշը: Նա հասավ վերջնակետին և գրավեց չորրորդ տեղը: Քանի որ նա չմնաց կանգառում ևս երկու վայրկյան՝ վառելիքի անհրաժեշտ քանակը ստանալու համար, նա պարտվեց մրցարշավում:

Մի՛ շտապեք դուրս գալ և ինչ-որ բան անել, մինչև ձեր հոգևոր «բաքը» չլցվի: Դուք պետք է համոզված լինեք, որ ձեր ներսում բավականաչափ Աստծո Խոսք կա, որը ձեզ ուժեղ կպահի մինչև վերջնագիծ: Հակառակ դեպքում դուք որոշ ժամանակ իսկապես լավ տեսք կունենաք, սակայն վերջում կպարտվեք: Երբ դա տեղի է ունենում, փառավորվում է սատանան, ոչ թե Աստված:

## Երբեք մի՛ հանձնվեք

Մինչ այժմ մենք սովորեցինք, որ շատ քրիստոնյաների ծախողման պատճառներից մեկն այն է, որ նրանք խախտում են Աստծո Խոսքը կամ անում են ճիշտ բան, բայց սխալ կերպով: Ձախողման մեկ այլ պատճառ է այն, որ չուսումնասիրելով փաստերը՝ նրանք արագորեն

ներգրավվում են ինչ-որ բանում՝ առանց պատշաճ նախապատրաստման: Եվ երրորդ պատճառը, որ շատ քրիստոնյաներ ձախողվում են, այն է, որ նրանք *շար շուր հանձնվում են և դադարում պայքարելուց:*

Խոսքում ասվում է, որ ամենը կատարելով՝ հաստատ կանգնենք (Եփես. 6.13): Երբեմն, երբ քրիստոնյաներն աղոթում են, բայց չեն տեսնում անհապաղ արդյունքներ, ասում են. «Ես աղոթում էի և հավատում Աստծուն: Հավանաբար ոչինչ էլ տեղի չի ունենա»: Ու նրանք հանձնվում են: Հետո ուզում են մեղադրել Աստծուն և ասել, որ Աստված ձախողվեց: Ո՛չ, Աստված չձախողվեց: Նրանք հանձնվեցին և դադարեցին պայքարելուց:

Մենք չէինք ունենա այն բաների մեծ մասը, որ այսօր ունենք, եթե դրանք հնարող տղամարդիկ և կանայք ճանապարհին հանձնվեին: Օրինակ՝ էլեկտրական լամպը: Թոմաս Էդիսոնը բազմաթիվ փորձերի, փորձարկումների և ստուգումների շնորհիվ ստեղծեց գործնական շիկացման էլեկտրական լամպը: Այսօր մեր երկրի բոլոր տներում այդպիսի լամպեր են օգտագործվում: Բայց եթե Էդիսոնը հանձնվեր առաջին տասը, հիսուն, հարյուր ձախողումից հետո, նա երբեք հաջողության չէր հասնի:

Սակայն նա շարունակեց հավատալ: Նա ասում էր. «Ես հավատում եմ, որ մենք կարող ենք էլեկտրական լամպ ունենալ ու վերջ տալ այս լապտերներին»: Ու նա շարունակում էր փորձել: Այսօր էլեկտրական լամպը միջազգայնորեն ճանաչված է որպես ստեղծագործական գաղափարների խորհրդանիշ:

Դուք հավանաբար գիտեք Բեյբ Ռուֆին՝ որպես «շրջանաձև վագրի» արքայի: Սակայն Բեյբ Ռուֆն արքա էր նաև «խաղից դուրս վիճակների» համար: Ռուֆը իր կարիերայի ընթացքում ավելի շատ «խաղից դուրս վիճակներ» է գրանցել, քան որևէ այլ խաղացող: Բայց քանի որ նա խաղից դուրս վիճակներ էր գրանցում, չի նշանակում, որ նա դադարեցնում էր գնդակին հարվածելու փորձերը: Նա շարունակեց գնդակին հարվածել այնքան, մինչև դարձավ բեյսբոլի լեգենդ իր շրջանաձև վագրերի համար:

Խաղերից մեկում Ռուֆը երեք անգամ մոտեցավ «մեկնարկի» տարածքին և երեք անգամ էլ «խաղից դուրս վիճակում» հայտնվեց: Երբ նա չորրորդ անգամ մոտեցավ «մեկնարկի» տարածքին, փորձեց գնդակին հարվածել նույնքան ջանասիրաբար, որքան նախորդ երեք անգամները: Ռուֆը գնդակը նետեց ցանկապատի վրայով՝ օգնելով իր թիմին՝ հաղթելու խաղը: Բոլորը մոռացան այն մասին,

որ նա երեք անգամ «խաղից դուրս վիճակում» էր հայտնվել. նրանք միայն հիշեցին խաղին հաղթանակ բերող հարվածը:

## Խնդիրները կգան

Երբ հաղթահարում եք խոչընդոտները և հաղթանակ տանում, մարդիկ ամեն բան մոռանում են անցյալի մասին: Նրանք միայն հաջողությունն են հիշում: Սակայն պետք է հասկանաք, որ նախքան հաղթանակ ունենալը բախվելու եք որոշ խոչընդոտների:

Երբեմն մարդիկ մտածում են, որ եթե փրկված են և ապրում են հավատքով, երբեք որևէ խնդիր չեն ունենա: Ինձ համար հետաքրքիր է՝ այս մարդիկ երբևէ կարդացել են Հակոբոսի գիրքը: Աստվածաշունչն ասում է. *«Բողոքովին ուրախություն համարեք, եղբայրներ, երբ կերպ-կերպ փորձանքների մեջ ընկնեք՝ գիտենալով, որ ձեր հավատքի փորձառությունը համբերություն է գործում»* (Հակ. 1.2-3):

Համառությունը և համբերությունը ձևավորվում են միևնույն բանը կրկին ու կրկին անելու միջոցով: Խնդիրները կգան, սակայն ձեր հավատքը ձեզ կառաջնորդի դեպի հաղթանակ, եթե չհանձնվեք: Հիշե՛ք, դուք չեք կարող պարտվել, եթե չհանձնվեք:

## Ինչպե՞ս վարվել անհաջողության հետ

Անհաջողության հետևանքները կարող են կործանարար լինել: Անհաջողությունը կարող է ազդել ձեր մտքի վրա այն աստիճան, որ չկարողանաք ճիշտ մտածել: Այն կարող է ազդել ձեր զգացմունքների վրա՝ ձեզ դարձնելով անզգա, տրտում և վիատ: Անհաջողությունը կարող է նաև թուլացնել ձեր ուժը և կենսունակությունը և անապահովության զգացում առաջացնել ձեր ներսում: Այս բոլոր բաները սատանայի համար դառնում են խաղահրապարակ, երբ նա փորձում է խառնաշփոթ բերել ձեր կյանքում:

Երբ Աստծո հետ մնում եք Նրա «խաղահրապարակում», դուք ունեք ուժ և կենսունակություն: Երբ մնում եք Աստծո և Նրա Խոսքի հետ, անկախ նրանից, թե ինչ է գալիս կամ գնում՝ դուք կարող եք անել ամեն բան ձեզ զորացնող Քրիստոսով (Փիլիպ. 4.13):

Մենք քննարկեցինք ձախողման պատճառներից երեքը, որպեսզի օգնենք ձեզ պաշտպանվելու դրանից: Բայց ինչ է տեղի ունենում, երբ, այնուամենայնիվ, ձախողվում եք: Գիտե՞ք, թե ինչպե՞ս վարվեք ձախողման հետ:

Երբ հայտնաբերում եք, որ սխալվել եք, առաջին բանը, որ պետք է անեք, աստվածային առաջնորդություն փնտրելն է: Եթե հստակ չգիտեք, թե որտեղ է ձեր բացթողումը, խնդրեք Սուրբ Հոգուն, որ Նա ցույց տա ձեզ: Աստվածաշնչում ասվում է, որ «Նա քննում է սրտի բոլոր ներսերը» (Առակ. 20.27): Սուրբ Հոգին ձեզ ցույց կտա, թե որտեղ եք սխալվել:

Եթե արդեն գիտեք, թե որտեղ եք սխալվել, կամ Սուրբ Հոգին արդեն ցույց է տվել ձեզ, այն ժամանակ, նախքան կկարողանաք որևէ հաջողություն ունենալ ապագայում, պետք է վերադառնաք այնտեղ, որտեղ կատարել եք սխալ շրջադարձը, և կրկին սկսեք այդտեղից:

## Ամեն բան շրջվեց

Շատ տարիներ առաջ կինս և ես մոլորվեցինք Տեխասից դեպի Սփրինգֆիլդ (Միսուրի նահանգ) գնալիս: Ինչ-որ մեկն ինձ ասել էր Թալսայի միջով անցնող կարճ ճանապարհի մասին, որը կտաներ ինձ միջնահանգային 44-րդ ավտոմայրուղի, և մենք կխուսափեինք առավոտյան լարված երթևեկությունից:

Ես մոլորվեցի: Եվ քանի որ համառ էի, չէի վերադառնա այնտեղ, որտեղ սխալ շրջադարձ էի կատարել: Ես ուզում էի շարունակել վարել և ինքս ամեն բան պարզել: Երկուսուկես ժամ շրջելուց հետո ի վերջո հայտնվեցի 44-րդ ավտոմայրուղում: Թե ինչպես դա արեցի, չգիտեմ: Ես չէի կարող դա նորից անել, եթե նույնիսկ ցանկանայի:

Բայց ես ընդամենը պետք է վերադառնայի այնտեղ, որտեղ սխալ շրջադարձ էի կատարել, այնուհետև հետևեի ցուցանակներին և ընդամենը կես ժամից կհասնեի Սփրինգֆիլդ: Բայց ո՛չ, ես ուզում էի ստուգել ինչ-որ մեկի տված տեղեկությունը կարճ ուղու վերաբերյալ և գնալ իմ ճանապարհով: Այսպիսով՝ երկուսուկես ժամ վարելուց հետո ես դեռ երեք ժամվա ճանապարհ ունեի Սփրինգֆիլդ հասնելու համար:

Երբեմն մենք՝ քրիստոնյաներս, նույնն ենք անում: Փոխանակ ընդունելու մեր բացթողումը և ասելով՝ «Տէր, ես մտադիր եմ հետ դառնալ իմ հետքերով և վերադառնալ այնտեղ, որտեղ սխալվել եմ, իսկ հետո այնտեղից կրկին սկսել», մենք թափառում ենք՝ ասելով. «Դե՛, ես հավատում եմ, որ եթե գնամ այս, ապա այն ճանապարհով, ի վերջո կհասնեմ այնտեղ, որտեղ Աստված ուզում էր ինձ տեսնել»: Այսպիսով՝ մենք որոշ ժամանակ թափառում ենք և մեծ մասամբ վերջում հայտնվում բավականին մոտ այն տեղին, որտեղ գտնվում էինք:

Այն ժամանակը, որ անցկացրինք թափառելու վրա, վատնված ժամանակ էր:

Մտածէք, թե որքան ավելին կարող եք անել, եթե պարզապէս ընդունէք, որ սխալ եք արել, ապա անմիջապէս շրջվեք ու վերադառնաք ճիշտ ուղուն:

### Լիմոնադ պատրաստել

Պողոս առաքյալն ասաց. «Գիտեմ պակասություն քաշել և ավելությունով լինելն էլ: Ամեն բանի մեջ ամենին լավ տեղեկացած եմ՝ կշտանալն էլ, սովելն էլ. ավելությունով ունենալն էլ, պակասություն քաշելն էլ» (Փիլիպ. 4.12): Ո՞րն էր Պողոսի գաղտնիքը: Նա գիտեր ինչպէս գոհանալ բոլոր հանգամանքներում:

Ես սիրում եմ դա այսպէս ասել. «Երբ կյանքը ձեզ տալիս է կիտրոններ, լիմոնադ պատրաստեք»: Այլ կերպ ասած՝ երբ խնդիրները գալիս են, մի՛ բարկացեք կյանքի, Աստծո և մնացած ամեն ինչի վրա: Փոխարենը վերցրէք այն, ինչ կյանքը տալիս է, ավելացրէք Աստծո Խոսքը և վերածէք այն ինչ-որ քաղցր բանի:

### Շարունակէք անել այն, ինչ անում եք

Շատ անգամներ մենք նայում ենք ինչ-որ բանի և մտածում, որ ձախողվել ենք, երբ իրականում չենք ձախողվել: Հովսեփը սրա լավ օրինակն է: Նա արեց ամեն հնարավոր բան և նետվեց բանտը: Նա ապրեց արդար, հավատարիմ մնաց Աստծուն և հայտնվեց բանտում:

Ինչ-որ մեկը կարող է ասել. «Իսեղճ Հովսեփի: Ինչ տխուր պատմություն է»: Ո՛չ, ամենևին էլ տխուր պատմություն չէր: Թվում էր, թե Հովսեփը ձախողվեց, սակայն Նա շարունակեց հավատալ Աստծուն և դարձավ Եգիպտոսի վարչապետը:

Եթե Հովսեփը հրաժարվեր Աստծուց, երբեք չէր դառնա Եգիպտոսի վարչապետ: Թեև թվում էր, թե Աստծուն ծառայելը նրան զցեց անախորժության մեջ, բայց Հովսեփը երբեք չհանձնվեց:

Երբեմն կարող է թվալ, թե Աստծուն ծառայելը ձեզ անախորժության մեջ է զցել: Սակայն շարունակէք ծառայել և հավատալ Աստծուն, և Աստված կհանի ձեզ ստեղծված իրավիճակից: Ինչպէս հին ասացվածքն է ասում. «Հաղթողները երբեք չեն հանձնվում, և հանձնվողները երբեք չեն հաղթում»:

Երբ դուք եկեղեցում եք, և հովիվը մեջբերում է Փիլիպեցիների

4.13-ը, հեշտ է հավատալ, որ կարող եք ամեն բան անել ձեզ գորացնող Քրիստոսով: Բայց հավատում եք դրան, երբ չկա քարոզիչ, որն անընդհատ ոգևորում է ձեզ, երբ դուք մենակ եք, և սատանան ոտքով հարվածում է ձեր սրունքներին, ապտակում երկու երեսին և խփում ձեր գլխին: Կարո՞ղ եք դարձյալ վեր նայել և ասել. «Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով»: Ձեր հաղթանակը կորոշվի նրանով, թե արդյոք այդ պահին կհավատաք դրան և կկարողանաք ասել դա:

Մենք մեզնով ոչինչ ենք, սակայն ամեն ինչ ենք Աստծով: Մենք չենք ստեղծվել ձախողվելու համար, սակայն մենք կձախողվենք, եթե չիմանանք ինչպես հաջողությամբ վարվել այն ամենի հետ, ինչ սատանան կարող է նետել մեր ճանապարհին:

Անկախ նրանից, թե ձեր կարծիքով որքան ուժգին եք ձախողվել՝ Աստված ցանկանում է ազատել ձեզ անցյալից և առաջ մղել դեպի ապագա: Ժամանակն է թույլ տալու Աստծուն վերականգնել ձեզ և օգնել նորից սկսելու, այս անգամ միայն հաջողության ակնկալիքով:

## Գլուխ 15

### Ի՞նչ անել, երբ չգիտես ինչ անել

*Ողջ երկինքը սպասում է, որ օգնի նրանց, ովքեր բացահայտում են Աստծո կամքը և իրականացնում այն:*

*Ջ. Ռոբերտ Աշկրոֆտ*



«Գետնանուշ» կոմիքսում Անանուխի Բլիթը մեկ անգամ Չարլի Բրաունին հարցրեց, թե արդյոք նա կյանքի լավ կանոններ գիտի: Ահա նրա ցուցակը. «Գնդակը ցածր դիրքում պահիր: Մի՛ թող մատիտները արևի տակ: Ամեն օր օգտագործիր ատամի թել: Թույլ մի՛ տուր, որ մրջյունները մտնեն շաքարավազի մեջ: Եվ միշտ առաջինը սպասարկվիր»:

Շատերն այսօր հարցնում են. «Ի՞նչ պետք է անեմ»: Այսօր շատ տարածված է խորհուրդ հարցնելը, որովհետև երբ մարդիկ վարվում են ստացած խորհրդի հիման վրա, ու որևէ վատ բան է պատահում, նրանք կարող են պարզապես մեղադրել այն մարդուն, որը տվել էր նրանց այդ խորհուրդը: Որոշ մարդիկ, որոնք «ինչ անել» հարցն են տալիս, պարզապես ուզում են, որ ինչ-որ մեկն իրենց անելիքների ցուցակ տա: Այդ ժամանակ կլինի մեկը, որին կարող են մեղադրել, եթե ամեն բան սխալ ընթանա՝ դրանով իրենց ազատելով անձնական պատասխանատվությունից:

Քանի որ մարդիկ մշտապես եկել են եկեղեցի, որ հարցնեն, թե ինչ պիտի անեն, շատ եկեղեցիներ մշակել են պաշտոնական ցանկ, որտեղ նշված է, թե ինչ է կարելի, և ինչ չի կարելի: Միգուցե դուք էլ եղել եք այդպիսի եկեղեցում: Այդ ցուցակում գրված բաների մեծ



մասն ամեն դեպքում չեք անի, եթե պարզապես Աստվածաշունչ կարդաք: Բայց ինչ-որ պատճառով մարդիկ գերադասում են ունենալ կանոնների ցանկ, որին կիսուսեն:

Ասում են, որ Աստված Մովսեսին տվեց 613 կանոն, որոնց պետք էր հետևել: Փաստացի, եթե դուք ուսումնասիրեք Հին կտակարանը, կպարզեք, որ կան ավելի շատ պատվերներ, քան Տասը պատվիրաններն են, որոնք մենք սովոր ենք լսել: Մովսեսի օրենքը շատ կանոններ է պարունակում այն մասին, թե ինչ է կարելի, և ինչ չի կարելի:

## Մեկ օրենք

Երբ Հիսուսը եկավ, Նա տվեց մեզ Նոր ուխտ և նոր օրենք: Մենք այլևս չենք հետևում այն երկար ցուցակին, որտեղ նշված է, թե ինչ է կարելի, և ինչ չի կարելի: Նոր կտակարանի օրենքում միայն երկու պատվիրան կա: Այս նոր օրենքը սիրո օրենք է:

Մարկոսի Ավետարանի 12-րդ գլխում Հիսուսը տվեց մեզ այս օրենքը: Մովսեսական օրենքի ուսուցիչներից մեկը եկավ, որ Հիսուսին հարց տար: Քանի որ այդքան քաջատեղյակ էր Օրենքին, այս մարդը հավանաբար փարիսեցի էր: Նա ցանկանում էր, որ Հիսուսն իրեն ասեր, թե որն է ամենակարևոր պատվիրանը:

### ՄԱՐԿՈՍ 12.28-34

28 Եվ դպիրներից մեկը մոտ եկավ՝ լսելով, որ վիճում էին, և երբ տեսավ, թե լավ պատասխանեց նրանց, Նրան հարցրեց. «Ո՞րն է ամենից առաջին պատվիրանը»:

29 Հիսուսն էլ նրան պատասխանեց, թե ամեն պատվիրաններից առաջինը սա է. «Լսիր, Իսրայել, մեր Տեր Աստվածը մեկ Տեր է:

30 Եվ սիրիր քո Տեր Աստծուն բոլոր սրտիցդ և բոլոր անձիցդ և բոլոր մտքիցդ և բոլոր զորությունիցդ. սա է առաջին պատվիրանը:

31 Եվ երկրորդը՝ սրան նման. սիրիր քո ընկերոջը քո անձի պես. սրանցից ավելի մեծ ուրիշ պատվիրան չկա»:

32 Եվ դպիրը նրան ասաց. «Լավ, վարդապետ, ճշմարտությամբ ասացիր, թե մեկ է Աստված, Նրանից բացի ուրիշը չկա:

33 Եվ Նրան սիրելը բոլոր սրտից և բոլոր մտքից և բոլոր

**անձից և բոլոր զորությունից և ընկերոջը անձի պես սիրելը ավելի է, քան թե ամեն ողջակեզները և զոհերը»:**

**34 Եվ Հիսուսը, նրան տեսնելով, որ իմաստությամբ պատասխանեց, ասաց նրան. «Դու հեռու չես Աստծո արքայությունից»: Եվ այլևս ոչ ոք չէր համարձակվում Նրան մի բան հարցնել:**

Եթե ձեզ հետաքրքրում է, թե ինչ պետք է անեք ձեր ապագայի առնչությամբ, ես կասեմ շատ պարզ. արե՞ք այն, ինչ ասվում է Աստվածաշնչում: «Սիրի՛ր քո Տեր Աստծուն բոլոր սրտիցդ, բոլոր անձիցդ, բոլոր մտքիցդ և բոլոր զորությունիցդ: Եվ սիրի՛ր քո ընկերոջը քո անձի պես» (Մարկ. 12.30-31):

Յանկացած իրավիճակում, երբ ստիպված եք որոշում կայացնել՝ անել, թե չանել ինչ-որ բան, և մտածում եք, թե արդյոք ճիշտ է այն, ինչ անելու եք, պարզապես քննե՛ք իրավիճակը սիրո օրենքի լույսի ներքո: Ինքներդ ձեզ տվե՛ք այս հարցը. «Եթե ես որոշեմ այսինչ բանն անել մինչև վերջ, արդյո՞ք դա կլինի սիրել Տիրոջը իմ ողջ սրտով, մտքով, զորությունով և սիրել իմ ընկերոջը իմ անձի պես»: Եթե ամեն անգամ ինքներդ ձեզ տաք այդ հարցը, նույնիսկ ստիպված չեք լինի մտածել իրավիճակի ճիշտ կամ սխալ լինելու վերաբերյալ: Սիրո օրենքը ձեզ երբեք չի առաջնորդի մեղքի մեջ:

## Սիրո օրենքը

Շատ անգամներ Հոգով լցված, Աստվածաշնչին հավատացող, լեզուներով խոսող, «հավատքի» մարդիկ ցանկանում են հովվին կամ մեկ ուրիշի, որին համարում են երեց Տիրոջ մեջ, հարցնել՝ արդյոք ճիշտ է, թե սխալ այն, ինչ իրենք ցանկանում են անել: Եթե դուք ապրում եք սիրո օրենքին համապատասխան, կարիք չունեք այդ հարցը տալու: Բայց որպես փոքրիկ նշում՝ ասեմ, որ եթե դուք ուղիղ եք ապրում Աստծո հետ, հետևում եք Նրա Խոսքին, անում եք Նրա ասածը, այն մարդն եք, ով պետք է լինեք ըստ Նրա Խոսքի և այլն, ու դեռ ստիպված եք հարցնել, թե արդյոք ինչ-որ բան ճիշտ է, ապա հավանաբար դա ճիշտ չէ:

Հասկանո՞ւմ եք, այս երկու պատվիրանները՝ սիրի՛ր քո Տեր Աստծուն և սիրի՛ր քո ընկերոջը քո անձի պես, վարքի լիարժեք ուղեցույց են քրիստոնյաների համար: Որոշ մարդիկ ցանկանում են դա բարդացնել, սակայն Աստծո Խոսքը շատ պարզ Գիրք է՝ հասկանա-

լու համար, եթե այն կարդաք բաց սրտով և ո՛չ մարդու կրոնական ավանդույթով գունավորված ակնոցով:

Երբեմն մարդիկ հարցնում են՝ «Ի՞նչ պետք է անեմ», որովհետև նրանց միտքը լցված է նրանով, ինչ լսել են ուրիշներից: Բայց Աստվածաշնչում պարզ գրված է՝ սիրի՛ր Աստծուն և սիրի՛ր քո ընկերոջը: Այդքանը:

Երբ սիրում ես որևէ մեկին, նրանից չես գողանում, նրանից չես բամբասում կամ նրան չես խաբում: Ահա թե ինչպես է սիրո օրենքն առաջնորդում մեր վարքը: Այդուհանդերձ, սիրո օրենքում չկա օրինապաշտություն: Չկա ցուցակ, որտեղ գրված է. «Դու պետք է սա անես կամ մի՛ արա դա»:

## Սերը չեն պարտադրում

Սերը չունի օրենսդրություն: Սերը չի կարելի պարտադրել: Սիրել նշանակում է «Ես կհնազանդվեմ Աստծուն»: Սերը հնազանդություն է Աստծո ասածին:

Ես չեմ կարող ստիպել ձեզ սիրել Աստծուն և սիրել ձեր մերձավորին: Ոչ ոք չի կարող: Եթե ես ձեզնից ուժեղ լինեի, գուցե կարողանայի հարկադրել ձեզ ասել, որ սիրում եք Աստծուն և ձեր մերձավորին կամ ընկերոջը: Ու եթե ես ձեզնից ուժեղ լինեի կամ ինչ-որ պատճառով լծակներ ունենայի, գուցե ստիպեի ձեզ լավ բաներ ասել որևէ մեկի մասին: Բայց դուք այդ բաները կասեք միայն այնքան ժամանակ, քանի դեռ ես ներկա եմ և ճնշում եմ գործադրում: Այն պահին, երբ ինձնից հեռու լինեք, կասեք այն, ինչ ցանկանում եք ասել, և կանեք այն, ինչ ցանկանում եք անել:

Երբ երեխաներս փոքր էին, ինձ այնքան էլ չէր անհանգստացնում այն, թե որքան լավ էին նրանք իրենց պահում իմ ներկայությամբ: Ինձ ավելի շատ անհանգստացնում էր այն, թե ինչպես էին նրանք իրենց պահում իմ բացակայությամբ: Իհարկե, նրանք իրենց լավ էին պահում, քանի դեռ հայրիկն իրենց կողքին էր: Բայց լավ դաստիարակության նշանն այն էր, թե ինչպես էին իմ երեխաներն իրենց պահում այն ժամանակ, երբ ինձնից հեռու էին:

Նույն կերպ սերը մի բան է, որը պետք է ձեր մի մասնիկը լինի: Երբ սերը ձեր ապրելակերպն է, դուք սիրում եք՝ անկախ նրանից, թե ով կա ձեր շուրջը:

Հիսուսն ասաց, որ սերը պետք է լինի մեր վարքագծի կանոնը: Եթե դուք սիրեք Աստծուն և սիրեք ձեր մերձավորին, կտեսնեք, որ ամեն բան կընկնի իր տեղը:

## Սրտի փոփոխություն

Լիառատ կյանքի գաղտնիքը սրտի, ոչ թե մտքի փոփոխությունն է: Շատերը մտափոխվում են այն բանում, ինչին հավատում են, սակայն լիառատ կյանքը գալիս է սրտի փոփոխությունից: Հասկանում եք, ես կարող եմ փոխել իմ *միտքը* սիրած ըմպելիքի հարցում՝ գերադասելով Դր Փեփըր, ԱյբիՍի Ռութ Բիրը, Պեպսի-Կոլան, Կոկա-Կոլան կամ Սփրայթը (Dr. Pepper, IBC Root Beer, Pepsi-Cola, Coca-Cola, or Sprite), բայց ինչ կապ ունի դա որևէ բանի հետ: Կարևորն այն է, թե ինչ փոփոխություն է կատարվում իմ սրտում:

Մենք պետք է հասկանանք, որ ամեն բան, ինչ անում ենք, վերահսկվում է ներսից դուրս, ոչ թե դրսից ներս: Եվ այստեղ է, որ քրիստոնյաները պետք է լավ ըմբռնեն մի քանի բան: Սերը ներքին կերպարանափոխման արդյունք է: Այդ *ներքին կերպարանափոխումը* արտաքին *վերափոխում* է առաջացնում: Ճիշտ այնպես, ինչպես երգում է ասվում. «Ներսից ինչ-որ բան գործում է դրսում: Օ՛հ, ինչպիսի փոփոխություն իմ կյանքում»:

Դուրսը փոխելու միջոցով ներսը փոխելու փորձերը երբեք արդյունք չեն տա: Ներսը պետք է բարեփոխի դուրսը, եթե ցանկանում ենք տևական փոփոխություն ունենալ:

Ենթադրենք՝ գնացել եք մի ագարակ, որտեղ ագարակատերերը մի ծեր արշավաձի են պահում: Ուժերի ծաղկուն շրջանում ձին երկու թե երեք ձիարշավ է հաղթել, բայց հետո նրա մոտ ծնկի խնդիր է առաջացել: Նա դեռևս լավ ձի է. պարզապես չի կարող մրցել: Եվ ենթադրենք՝ ագարակում պահվում են նաև մի քանի ավանակներ:

Դուք կարող եք վերցնել այդ ավանակներին, փայլեցնել նրանց սմբակները, լողացնել, յուղ քսել նրանց մորթու վրա և իսկապես հրաշալի տեսք տալ նրանց: Եվ կարող եք արշավաձիուն բաց թողնել արոտավայր, որտեղ նա կպտտվի ու կկեղտոտվի, որից հետո և՛ ավանակին, և՛ արշավաձիուն հավասար կանգնեցնեք մեկնարկային դարպասի մոտ: Երբ զանգը հնչի, և դարպասները բացվեն, արշավաձին կանհետանա՝ քառատրոփ սլանալով արշավուղիով: Իսկ ավանակը հնարավոր է վազի, հնարավոր է նաև չվազի:

Ինչո՞ւ պիտի այդպես լինի: Ես նկատի ունեմ, որ ավանակն արտաքուստ հրաշալի տեսք ունի՝ շատ ավելի լավ, քան ձին: Այո՛, բայց արշավաձիուն արշավաձի է դարձնում ոչ թե այն, թե ինչպիսի տեսք նա ունի, այլ այն, թե ինչ կա նրա ներսում:

Շատերը կարող են արտաքուստ լավ տեսք ունենալ: Նոր կտակարանի փարիսեցիները մի խումբ մարդիկ էին, որոնք «լավ տեսք» ունեին: Եթե փարիսեցիներին ուղղված Հիսուսի խոսքերը շրջասենք ժամանակակից լեզվով, ապա կունենանք այս արտահայտությունը. «Դուք լավ տեսք ունեք: Դուք նման եք քրիստոնյայի: Դուք բուրում եք քրիստոնյայի նման: Սակայն ներքուստ դուք դեռևս մեղավոր եք» (Մատթ. 23.27): Հիշե՛ք, հաշվի է առնվում այն, ինչ կա սրտում:

## Սերը գործողության մեջ

Այս երկու սկզբունքները՝ Աստծուն սիրելը և մերձավորին սիրելը, ոչ միայն սրտի, այլև վարքագծի հարց են: Սերը սկսվում է սրտում, բայց երբ այն, ինչ ներսում է, փոխում է դուրսը, սերը դառնում է գործողություն: Այն, թե ինչպես եք վարվում որևէ մեկի հետ, հայտնում է այն, թե ինչ եք ձեր սրտում զգում նրա հանդեպ:

Եթե դուք սիրում եք Աստծուն, ուրեմն հնազանդվում եք Նրա Խոսքին (Հովհ. 14.15): Եթե սիրում եք Աստծուն, չեք թողնի այլ քրիստոնյաների հետ հավաքվելը (Եբր. 10.25): Եթե սիրում եք Աստծուն, կտաք ձեր տասանորդները և զոհաբերությունները (Մաղ. 3.10): Շատերն ասում են, որ սիրում են Աստծուն, բայց նրանց արարքները սեր չեն ցուցադրում:

Միակ ժամանակը, որ ոմանք սեր են ցուցաբերում, այն է, երբ նրանք ինչ-որ կարիք ունեն: Երբեմն երեխաներն այսպիսի մանիպուլյացիա են օգտագործում իրենց ծնողների նկատմամբ: Ես ճանաչում էի մի տղայի, որն այսպես էր վարվում իր ծնողների հետ:

Այս տղայի ծնողները ֆինանսապես ապահովված էին, և նա բոլորովին անտեսում էր նրանց մինչև այն պահը, երբ մի նոր մեքենայի կամ մեկ այլ բանի կարիք էր ունենում: Երբ նրանցից ինչ-որ բան էր ուզում, նա սկսում էր այցելել նրանց և ասել, թե որքան է հոգում նրանց համար և որքան է սիրում նրանց: Նա անում էր այդպես, մինչև ստանում էր այն, ինչի կարիքն ուներ, որից հետո նրա ծնողներն այլևս նրան չէին տեսնում, մինչև հաջորդ անգամը, երբ նա մեկ այլ բանի կարիք էր ունենում:

Այսպես են Աստծո հետ վարվում Նրա զավակներից շատերը: Նրանք ապրում են իրենց կյանքով և անում իրենց ուզածը, մինչև չեն հայտնվում որևէ դժվար իրավիճակի կամ անախորժության մեջ: Այդ ժամանակ եկեղեցու դռները բացվելուն պես նրանք այնտեղ են, որպեսզի աղոթեն և փնտրեն Աստծուն:

Հենց Աստված ազատում է նրանց ստեղծված իրավիճակից, նրանք սկսում են բաց թողնել մե՛կ կիրակնօրյա ծառայությունը, մե՛կ չորեքշաբթի օրվա երեկոյան հավաքույթը, և մինչ աչքդ կթարթես, այլևս եկեղեցի չեն հաճախում: Բայց եթե հարցնեք՝ սիրում են նրանք Աստծուն, թե ոչ, կպատասխանեն. «Օ՛հ, այո՛, ես սիրում եմ Աստծուն»: Նրանք չեն սիրում Աստծուն. նրանց վարքագիծն այլ բան է ասում:

## Ոսկե կանոնը

Երբ սիրում ենք որևէ մեկին, անում ենք այն, ինչ կարող ենք՝ նրան օգնելու համար: Հիսուսը մեզ հրաշալի միջոց տվեց հիշելու, թե ինչպես վարվենք մարդկանց հետ: Մարդիկ հաճախ այն անվանում են Ոսկե կանոն. դա գրված է Ղուկասի Ավետարանի 6.31-ում, որտեղ ասվում է. *«Եվ ինչպես կամենում եք, որ մարդիկ ձեզ անեն, նույնպես էլ դուք արեք նրանց»:*

Ինչ պետք է մենք անենք: Սիրենք Աստծուն մեր ամբողջ սրտով՝ մեր ամեն ինչով: Եվ պետք է սիրենք մեր ընկերոջը՝ ուրիշների հետ վարվելով այնպես, ինչպես կամենում ենք, որ նրանք վարվեն մեզ հետ:

Նախքան կյանքի որևէ հանգամանքի առջև կանգնած անձնավորությանը մի բառ ասելը կամ արձագանքելը տվե՛ք ձեզ այս հարցը. «Եթե նրա իրավիճակում լինեի, ինչպե՞ս կուզեի, որ *ինձ* հետ վարվե՛ն»: Եթե անկեղծորեն պատասխանեք այս հարցին, դա հավանաբար կփոխի ձեր վարմունքն այդ մարդու հանդեպ:

Հենց հիմա որոշում կայացրեք, որ եթե լսեք, որ մարդիկ խոսում են ինչ-որ մեկի մասին՝ ասելով, թե որքան սխալ է նա իրեն պահել կամ այսինչ բանն է արել, ինքներդ ձեզ կհարցնեք. «Ինչպե՞ս կուզեի, որ մարդիկ վարվեն ինձ հետ և խոսեն իմ մասին, եթե ես միևնույն իրավիճակում լինեի»: Դուք հավանաբար կորոշեք աղոթել անախորժության մեջ հայտնված այդ մարդու համար, այլ ոչ թե միանալ մարդկանց խոսակցությանը և լսել նրանց բամբասանքը:

Մարդիկ, որոնք հաճախ բամբասում են, ասում են. «Եթե ես լինեի այդ իրավիճակում, ես գիտեմ, որ երբեք չէի վարվի այնպես, ինչպես այսինչը վարվեց»: Դուք չգիտեք, թե ինչ կանեիք, որովհետև երբեք չեք եղել այդ մարդու տեղում: Այնպես որ դատելու փոխարեն հետևե՛ք Ոսկե կանոնին և վարվե՛ք ուրիշների հետ այնպես, ինչպես կցանկանայիք, որ ձեզ հետ վարվեն:

## Սիրո ծածկագիրը

Հիշում եմ մի պատմություն, որը ցնցող կերպով բացահայտում է «ուրիշների հետ վարվիր այնպես, ինչպես կկամենայիր, որ քեզ հետ վարվեն» կանոնի կարևորությունը:

Շատ տարիներ առաջ երկու երիտասարդներ, որոնք սովորում էին քոլեջում և ուսման վարձը վճարելու նպատակով նաև աշխատում, գումարի կարիք ունեին: Նրանց մեջ միտք ծագեց, որ Պաղերևակուն՝ հայտնի լեհ դաշնակահարին և կոմպոզիտորին, հրավիրեն իրենց ուսանողական ավան՝ դաշնամուրային մենահամերգ տալու: Նրանք կապ հաստատեցին դաշնակահարի գործակալների հետ և իմացան, որ նա 2000 դոլարի երաշխավորագիր էր ուզում:

Տղաները համաձայնեցին նրա պայմաններին և որոշեցին պատրաստվել մենահամերգին: Նրանք իրենց ամբողջ ջանքերը դրեցին այդ միջոցառման կազմակերպման համար, սակայն տոմսերի վաճառքից ստացած գումարը կազմեց ընդամենը 1600 դոլար:

Նրանք կապ հաստատեցին Պաղերևակու հետ և ասացին. «Մենք հավաքել ենք ընդամենը 1600 դոլար և կտանք ձեզ այդ ամբողջ գումարը: Կտանք նաև մուրհակ այն մասին, որ մնացած 400 դոլարը կվճարենք ձեզ որքան հնարավոր է շուտ»:

Պաղերևակին պատասխանեց. «Ո՛չ, տղաներ: Այդպես չի լինի»: Հետո նա պատռեց մուրհակը, վերադարձրեց գումարը և ասաց. «Տղաներ, հանեք ձեր ծախսերը, ձեզ վերցրեք մնացորդի տասը տոկոսը և մնացածը թողեք ինձ»:

Պաղերևակին սովեց իր համերգը:

Անցան տարիներ: Սկսվեց և ավարտվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Պաղերևակին դարձավ հայտնի պետական գործիչ Լեհաստանում: Նա ջանք էր թափում, որ կերակրեր պատերազմից ավերածության ենթարկված իր երկրի քաղցած ժողովրդին և օգնության խնդրանքով դիմեց Միացյալ Նահանգներին: Միացյալ Նահանգներից հազարավոր տոննա կերակուր ուղարկվեց Լեհաստան: Պաղերևակին ուղևորվեց Փարիզ, որպեսզի շնորհակալություն հայտներ Միացյալ Նահանգների նախագահ Հերբերտ Հուվերին՝ ուղարկած օգնության համար:

«Ամեն ինչ կարգին է, արն Պաղերևակի,- պատասխանեց Հուվերը,- ես գիտեի, որ կարիքը մեծ էր: Բացի այդ՝ մի անգամ, երբ ես քոլեջի ուսանող էի, դուք օգնեցիք ինձ»:

Միշտ չէ, որ տեսնում եք ձեր կողմից ցուցաբերված սիրո և բարության արագ փոխհատուցումը: Բայց եթե դուք ցանեք սեր, կինձեք սեր (Գաղատ. 6.7):

Որպես քրիստոնյաներ՝ մենք պետք է ապրենք սիրո ծածկագրով: Մենք պետք է սիրենք Աստծուն այն ամենով, ինչ մենք կանք, և այն ամենով, ինչ ունենք: Եվ պետք է սիրենք մարդկանց մտքով, խոսքով և գործով:

«Ինչ պետք է անեմ» հարցի պատասխանը բարդ, սրտառուչ կամ անհարկի խճճված չէ: Այն շատ պարզ է. սիրիր Աստծուն քո ամբողջ սրտով: Սիրիր քո մերձավորին և ուրիշների հետ վարվիր այնպես, ինչպես կկամենայիր, որ քեզ հետ վարվեն: Երբ հետևեք սիրո օրենքին, կապրեք լիառատ կյանքով և կունենաք այնպիսի ուրախություն և խաղաղություն, որ նախկինում երբեք չեք ունեցել:





## Գլուխ 16

### Ո՞րն է ձեր կոչումը

*Կոչումը պատահականության հարց չէ: Այն ընտրության  
հարց է. այն մի բան չէ, որին պետք է սպասել.  
այն մի բան է, որին պետք է հասնել:  
Վիլյամ Ջենինգս Բրայան*



Գիտե՞իք, որ դուք կոչում ունեք: Գիտե՞ք, թե որն է ձեր կոչումը:  
Թեև ճիշտ է, որ յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա ունի կո-  
չում, սակայն ոչ բոլորն են տեղյակ դրան: Եվ հետո, կան մարդիկ,  
որոնք գիտեն, որ իրենք կոչում ունեն, սակայն չգիտեն, թե որն է դա:  
Հիսուսը *հստակ* գիտեր, թե որն էր Իր կոչումը: Եվ այն ամենը, ինչ  
Նա արեց Իր կյանքում, այդ յուրահատուկ կոչումն իրականացնելու  
համար էր:

#### **ՀՈՎՀԱՆՆԵՍ 18.37**

**37 Պիղատոսն էլ ասաց Նրան. «Ապա ուրեմն դու թագա-  
վոր ես»: Պատասխանեց Հիսուսը. «Դու ես ասում, որ  
ես թագավոր եմ. ես դրա համար եմ ծնվել և եկել աշ-  
խարհ, որ ճշմարտությանը վկայեմ. ամեն, ով որ ճշմար-  
տությունից է, իմ ձայնը լսում է»:**

Պիղատոսը Հիսուսին հարցրեց. «Դու թագավոր ես»: Իսկ Հի-  
սուսը պատասխանեց. «Ես դրա համար եմ ծնվել»: Մենք կարող  
էինք դա այլ կերպ ասել. «Այս պատճառով եմ ես ծնվել, կամ այս  
նպատակով եմ ես ծնվել»: Այլ խոսքով՝ Հիսուսն ասում էր. «Ահա թե  
ինչու եմ ես եկել աշխարհ»:

Հիսուսն անկասկած գիտակցում էր Իր կոչումը: Նա գիտեր Իր կոչումը, որովհետև Աստծո խոսքում ասվում է, որ Նա մորթվեց աշխարհի ստեղծվելուց առաջ: Հիսուսը գիտեր, թե ինչու էր եկել աշխարհ, և հենց սկզբից գիտեր, թե ինչ էր անելու:

Հիսուսը ծնվեց, որ լինի մեր Փրկիչը և փրկի աշխարհին իր մեղքից: *Դուք* ծնվել եք, որ ինչ լինեք և ինչ անեք: Անկախ նրանից՝ մենք գիտենք, թե ոչ՝ Աստված ունի նպատակ և ծրագիր մեզնից յուրաքանչյուրի համար:

Աստված ունի յուրահատուկ կոչում ամեն մեկիս համար: Նա նախասահմանել է, որ որոշ մարդիկ լինեն հաջողակ գործարարներ, գումար վաստակեն, որպեսզի աջակցեն միսիոներներ ուղարկելու գործին և սատարեն եկեղեցիներին:

Աստված ունի կոչում յուրաքանչյուրի համար՝ անկախ սոցիալական կարգավիճակից: Աստված ցանկանում է, որ սոցիալական բոլոր կարգավիճակներում գտնվող մարդիկ ներկայացնեն Իրեն: Ցավոք, շատ մարդիկ այնպիսի դիրքում են, որը ենթադրում է, որ նրանք պետք է ներկայացնեն Աստծուն, սակայն նրանք դա չեն անում: Նրանք ճիշտ թագավորություն չեն ներկայացնում:

## Բարի գործեր

Աստված այնքան է հոգում ձեր մասին, որ հատուկ ծրագիր է պատրաստել ձեր կյանքի համար: Եփեսացիների 2.10-ում գրված է, թե ինչի համար եք դուք ստեղծվել.

### ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 2.10

**10 Որովհետև Նրա ստեղծվածն ենք՝ ՔՐԻՍՏՈՍ ՀԻՍՈՒՍՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՄԱՐ, որոնց համար Աստված առաջուց պատրաստեց մեզ, որ նրանցում վարվենք:**

Համաձայն սուրբգրային այս խոսքի՝ Աստված նախապես ինչ-որ բաներ է պատրաստել ամեն մեկիս համար: Շատ մարդիկ երբեք չեն հայտնաբերում, թե ինչ է Աստված պատրաստել իրենց համար, ուստի նրանք երբեք ոտք չեն դնում ճիշտ ուղու վրա՝ անելու այն, ինչ Աստված ցանկանում է:

Շատերը վերջին հաշվով անում են այն, ինչ իրենք են ցանկանում: Սա նույնիսկ կատարվում է ծառայության մեջ: Գուցե ինչ-որ մեկն ասում է. «Ես ուզում եմ հովիվ լինել»: Լավ, հնարավոր է՝ Աստ-

ված նրան չի կանչում հովիվ լինելու: Գուցե նա պետք է հովվի օգնական լինի: Եվ ոչ մի վատ բան չկա հովվի լավ օգնական լինելու մեջ: Յուրաքանչյուր լավ հովվի հետևում լավ օգնական է կանգնած:

## **Իմացե՛ք, թե որտեղ է Աստված ուզում ձեզ տեսնել**

Մեզնից ոմանք պետք է պարզեն, թե Աստված որտեղ է ուզում իրենց տեսնել: Ոչ բոլորը պետք է լինեն ավագության պաշտոնում: Մի՞թե խառնաշփոթության մեջ չէինք լինի, եթե բոլորը առաջնորդ լինեին: Իսկ ո՞վ կաներ գործը:

Մենք պետք է իմանանք մեր նպատակը: Մենք պետք է մտնենք մեր կոչման մեջ: Ժամանակն է որոշում կայացնելու՝ իրականացնելու Աստծուց տրված մեր կոչումը, և ուրիշ ոչ ոք չպիտի տարհամոզի կամ շեղի մեզ դրանից:

Շատերն ընկնում են խառնաշփոթության մեջ, որովհետև երբ հայտնվում է ինչ-որ մեկը և ասում, որ պետք է այսինչ բանն անեն, նրանք լսում և հնազանդվում են:

Մարդիկ հաճախ մոտենում են ինձ և ասում. ««Ռեման» պետք է այս և այն անի»:

Ես պատասխանում եմ. «Եթե դուք ուզում եք, որ դա արվի, գուցե ինքներդ անեք: Դա այն չէ, ինչ Աստված ասել է մեզ անել: Եվ Աստված մեր առաջնորդն է»:

Շատ-շատերը դիմակ են կրում Աստծո հետ իրական լինելու փոխարեն: Նրանք իրական չեն իրենք իրենց կամ շրջապատող մարդկանց հետ: Նրանք միշտ փորձում են լինել այն, ինչ չեն: Աստված ունի կոչում ձեզ համար: Պարզե՛ք, թե որն է այդ կոչումը, և իրականացրե՛ք այն, բայց եղե՛ք այն, ինչ Աստված ցանկանում է, որ լինեք, այլ ոչ թե այն, ինչ մեկ ուրիշն է ցանկանում, որ լինեք:

## **Ծառայության պարզևները բոլորի համար չեն**

Ամբողջ կյանքում ես եղել եմ ծառայության մեջ և ծառայության շուրջը: Եվ ես ուզում եմ ձեզ մի բան ասել: Երեխա ժամանակ ես երբեք չեմ ծրագրել քարոզիչ դառնալ: Ես մտադիր չէի լինել ծառայության մեջ: Իմ որդի Քրեյգը միշտ ցանկանում էր գործարար դառնալ մինչև այն գիշերը, երբ Աստված գերբնական փորձառության միջոցով կանչեց նրան՝ լինելու քարոզիչ: Մի գիշեր Քրեյգը երիտասարդական հավաքույթից տուն վերադարձավ և երկու ժամ

շարունակ չկարողացավ խոսել: Երբ վերջապես ի վիճակի եղավ խոսելու, նա ասաց. «Աստված փոխեց իմ ծրագրերը»:

Աստված ծրագիր ունի յուրաքանչյուրի համար, բայց Նա չի ծրագրել, որ յուրաքանչյուրը ստանալու է ծառայության հինգ պարզակներից որևէ մեկը: Որտե՞ղ կլինեն եկեղեցին առանց հոգևոր համայնքի այն անդամների, որոնք հավատարիմ են եկեղեցու կամավորական աշխատանքներում և իրենց նվիրատվություններում: Որտե՞ղ կլինեին ծառայությունները առանց տասանորդների և զոհաբերությունների: Որտե՞ղ կլինեն Աստծո արքայությունը: Շնորհակալություն Աստծուն յուրաքանչյուրի կոչման համար:

Ես ծնվել եմ 1939 թվականի սեպտեմբերի 3-ին և ամբողջ կյանքս ապրել եմ քարոզիչի ընտանիքում: Դեռ երեխա՝ ես չափից շատ բան էի տեսնում: Ես լսում էի, թե ինչպես էին մարդիկ խոսում հորս և այլ քարոզիչների հասցեին: Ես չէի ցանկանում քարոզիչ դառնալ:

Բայց մի օր, երբ տասնյոթ տարեկան էի և երիտասարդական ճամբարում էի, Աստված դիպավ իմ սրտին: Այդ օրը ես հասկացա, որ իմ կյանքի համար Նրա պատրաստած ճանապարհը չէր համընկնում այն ճանապարհի հետ, որ ես ընտրել էի:

Միգուցե Աստված ձեզ համար պատրաստել է ճանապարհ, որը չի համընկնում կյանքի այն ճանապարհին, որ դուք եք ծրագրել ձեզ համար: Պատրաստ եք մի կողմ դնելու ձեր ընտրած ճանապարհը, որպեսզի իրականացնեք այն, ինչ Աստված պատրաստել է ձեզ համար:

Հիսուսը գիտեր, թե ինչու եկավ աշխարհ: Եվ Աստծո Խոսքը մեզ հայտնում է, թե ինչու ենք մենք այս երկրի վրա: Եփեսացիների 2.10-ում գրված է. «Որովհետև Նրա սրբեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնց համար Աստված առաջուց պատրաստեց մեզ, որ նրանցում վարվենք»: Քրիստոս Հիսուսում ստեղծվելու պատճառը բարի գործեր անելն է՝ բարի գործեր, որոնք նախապես Աստված պատրաստեց մեզ համար:

## Սովորել լսել

Ոմանք դժվարանում են լսել Աստծուն բավականաչափ երկար, որպեսզի Նրանից որևէ բան ընդունեն: Ոմանք հերթ են կանգնում աղոթքի համար և ոչինչ չեն ընդունում, որովհետև երբեք չեն դադարեցնում խոսելը, որպեսզի կարողանան ստանալ: Լավ է, երբ ասում ենք. «Տե՛ր, ես ընդունում եմ»: Սակայն որոշ մարդիկ, հերթ կանգնելով աղոթքի համար, ասում են. «Տե՛ր, Դու գիտես, թե ես ինչի կարիք

ունեն: Տէր, Դու կարող ես ինձ օգնել: Տէր, Տէր, Դու գիտես՝ ես ինչի կարիք ունեմ»: Նրանք իրենց կարիքը բավարարված տեսնելու համար այնքան շատ ջանք են թափում, որ երբեք չեն ստանում այն:

Հրաշալի է աղոթել, և մենք պետք է աղոթենք, սակայն ոմանք պետք է լուռ մնան և լսեն, թե ինչ է Աստված ասում: Զրույցը մենախոսություն չէ: Զրույցն այն է, երբ երկուսը խոսում են միմյանց հետ: Եթե դուք ցանկանում եք զրույց ունենալ Աստծո հետ, պետք է մի փոքր խոսեք, ապա լռեք և լսեք, թե ինչ է Աստված ուզում ասել: Սովորաբար այդպես եք բացահայտում ձեր կոչումը և այն ծրագիրը, որ Աստված ունի ձեր կյանքի համար:

Ոչ ոք չի մարգարեանալու ձեր կոչման վերաբերյալ: Աստված կխոսի հենց ձեր սրտի հետ: Եթե որևէ մեկն իսկապես ինչ-որ բան մարգարեանա ձեր կյանքի վերաբերյալ, որը չի համընկնում նրան, ինչ արդեն կա ձեր սրտում, այդ դեպքում մի կրճդ դրեք այդ «մարգարեությունը» և մոռացեք այն:

## Ստեղծված՝ օգնելու համար

Վերստին ծնվելով՝ դուք Քրիստոս Հիսուսում հաստատվեցիք բարի գործեր անելու համար: Եկեք կրկին նայենք Եփեսացիների 2-րդ գլխի 10-րդ խոսքին:

### ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 2.10

**2 Որովհետև Նրա ստեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնց համար Աստված առաջուց պատրաստեց մեզ, որ նրանցում վարվենք:**

Ուշադրություն դարձրեք, որ խոսքում գրված չէ. «Եվ մենք Աստծո ստեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված, որպեսզի կյանքն անցկացնենք՝ ծուլորեն սպասելով և երգելով. «Ալելուիա, ես գնում եմ Երկինք»»: Ո՛չ: Մենք ստեղծված ենք բարի գործեր անելու համար: Բարի գործերից մեկը Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանով աշխարհին հասնելն է՝ ասելով, որ Հիսուսը փրկում է, Հիսուսը բժշկում է, և Հիսուսը կրկին գալիս է:

Մենք ստեղծված ենք մարդկանց ասելու, որ Հիսուսն է իրենց խնդիրների պատասխանը, և ծառայելու կարիքավորներին: Մենք ստեղծված ենք օգնելու մեր եղբայրներին և քույրերին: Ցավոք, շատ են այն մարդիկ, որոնք ուզում են պարզապես մի սուրբգրային խոսք տալ նրանց, ովքեր ընկճված են, և ասել. «Աստված օրհնի քեզ. հա-

վանք ունեցիր»: Աստվածաշնչում ասվում է, որ եթե դուք ունեք միջոցներ՝ օգնելու այդ անձնավորությանը, սակայն չեք անում դա, ուրեմն անհավատից էլ վատն եք:

Իրականում հեշտ է որևէ մեկին սուրբգրային խոսք տալ, սակայն բոլորովին այլ բան է ձեռքը տանել դրամապանակը և նրան քսան, հիսուն կամ հարյուր դոլարանոց թղթադրամ տալ: Ինձ համար մեծ ուրախություն է այն, երբ որևէ վայրում քարոզելիս Տերը խոսում է ինձ հետ ինչ-որ մեկին գումարով օրհնելու մասին: Երբեմն աղոթքի համար կանգնած մարդկանց համար աղոթելուց հետո, երբ բոլորը դեռ փառաբանում են Տիրոջը, Տերն ինձ մատնացույց է անում նրանցից մեկին և ասում. «Այդ անձնավորությունը գումարի կարիք ունի»: Առանց այդ մարդու գիտության ես մոտենում եմ, ձեռքս տանում գրպանս, և մինչ նա փառաբանում է Տիրոջը, գումար եմ դնում նրա բաճկոնի գրպանում: Ավելի ուշ նա հավանաբար ձեռքը կտանի գրպանը, կգտնի գումարը և կաղաղակի. «Փնոք Տիրոջը»:

Աստված չի պատրաստվում փող ստեղծելու մարդու գրպանում: Բայց եթե կարիք լինի, Նա մեկ ուրիշի սրտում կդնի, որ վերջինս գումար դնի մարդու գրպանում:

Մեկ անգամ մի ծառայող տեսավ, թե ինչպես էի ես գումար խցկում ինչ-որ մեկի գրպանը: Երեք թե չորս շաբաթ անց այդ ծառայողն ինձ ասաց. «Ես գիտեի, թե ինչ վիճակում էր այդ մարդը: Դուք ոչինչ չգիտեիք նրա մասին. դուք պարզապես եկել էիք այդ քաղաք՝ քարոզելու: Բայց եթե նա չստանար այն, ինչ դուք այդ գիշեր դրեցիք նրա գրպանը, նա կկորցներ իր մեքենան»:

Աստված ամեն մեկիս կանչել է ինչ-որ բան անելու: Մենք պետք է սովորենք հարգել յուրաքանչյուրի կոչումը: Օրինակ՝ հովվի կոչումն է հոգ տանել եկեղեցու անդամների համար և որոշումներ կայացնել եկեղեցու կառավարման վերաբերյալ: Բայց զավեշտալի չէ, որ յուրաքանչյուրը կարծում է, թե ինքը գիտի՝ ինչպես պետք է եկեղեցին ղեկավարել: Դա նրա կոչումը չէ: Նրա կոչումն է նմանվել Ահարոնին և Ովրին ու վեր պահել հովվի ձեռքերը՝ օգնելով և աջակցելով նրան, այլ ոչ թե ասել, թե նա ինչ անի:

## Աստվածային նպատակ

Ո՞րն է ձեր կոչումը: Գիտե՞ք, թե ոչ, դուք ունեք աստվածային նպատակ: Աստված ստեղծել է ձեզ անելու ավելին, քան թթվածին շնչելը

և երկրագնդի վրա տեղ զբաղեցնելը. Նա ունի ծրագիր ձեր կյանքի համար:

Սաղմոսերգու Դավիթն ասում էր. «Գոհանում եմ Քեզնից, որ ահավոր և զարմանալի կերպով ստեղծվեցի...» (Սաղմ. 139.14): Ոմանք միշտ դժգոհում են, որ չափազանց կարճահասակ կամ չափազանց բարձրահասակ են, ունեն չափազանց լայն կամ չափազանց նեղ իրան: Վերջին անգամ երբ եք նայել հայելու մեջ և ասել. «Աստված ինձ այսպես է ստեղծել, և ես ահավոր ու զարմանալի կերպով եմ ստեղծված»:

Ճաղատ գլուխ, ճերմակ մազեր, կարմիր մազեր, ինչ էլ լինի: Անկախ նրանից, թե ինչպիսի տեսք ունենք՝ մեր հետևում Աստված է, ուստի եկեք միանանք Նրան: Սաղմոսերգու Դավիթը չասաց. «Երանի այտափոսիկներ ունենայի» կամ «Տեր, երանի քիթս մի փոքր կարճ լիներ»: Ո՛չ, Դավիթն ասաց. «Ահավոր և զարմանալի կերպով ստեղծվեցի»:

Մեր Աստված անհատի Աստված է: Նա գիտի, թե ովքեր ենք մենք և ինչպիսի տեսք ունենք, այդուհանդերձ, որոշ մարդիկ փորձում են Աստծուն պատճառներ բերել, թե ինչու չեն կարողանում անել այն, ինչ Նա նախասահմանել է իրենց անելու: Երբ Աստված թփթփացնում է նրանց ուսին, նրանք ասում են. «Տեր, ես չեմ կարող անել այն, ինչ Դու ուզում ես: Ես այս եմ և այն եմ»: Միթե Աստված արդեն ամեն բան չգիտեր նրանց մասին, երբ թփթփացրեց նրանց ուսին:

Տերը գիտեր, թե ում ուսին էր թփթփացնում, երբ թփթփացրեց ձեր ուսին ու ասաց՝ «Սա է քո կոչումը: Սա այն է, ինչ Ես ցանկանում եմ քեզ համար»: Նա գիտեր, թե ինչ էր անում:

Երեմիա 1.5-ն ասում է. «Քեզ որովայնում չստեղծած՝ Ես քեզ գիտեի, և արգանդից դեռ դու դուրս չեկած՝ Ես քեզ սրբեցի...»: Աստված ուներ կոչում և նպատակ Երեմիայի կյանքի համար, նախքան նա կծնվեր: Ես ուզում եմ, որ դուք հասկանաք, Աստված ձեզ համար նույնպես ունի կոչում և նպատակ: Աստված դրել է ձեզ երկրագնդի վրա հենց այս ժամանակի համար: Աստված ուղարկել է ձեզ Իր Խոսքը, որպեսզի ասի, որ ձեզ ստեղծել և պատրաստել է հատուկ նպատակի համար: Դուք ունեք կոչում. ժամանակն է վեր կենալու և գործի անցնելու:



## Դավիթը

Յուրաքանչյուրը, ում մասին կարդում ենք Աստվածաշնչում, ուներ Աստծուց տրված կոչում: Ադամի կոչումն էր լինել մարդկության հայրը: Աբրահամի կոչումն էր լինել բազում ազգերի հայր: Նոյին վիճակված էր կառուցել տապանը և դրանով իսկ պահպանել արդար մնացորդը:

Դավթի կոչումը միայն Գողիաթին սպանելը կամ թագավոր լինելը չէր: Դավթի կոչումն էր լինել փառաբանող և երկրպագող: Սաղմոսների գրքի մեծ մասը գրվել է այն ժամանակ, երբ Դավիթը փառաբանում և երկրպագում էր Աստծուն: Միգուցե երաժշտությունն այդքան լավ չէր հնչում, երբ Դավիթն առաջին անգամ սկսեց դաշտում քնար նվագել՝ միաժամանակ հետևելով իր հոր ոչխարներին: Բայց Դավթին վիճակված էր քնար նվագել Սավուդին՝ Իսրայելի թագավորին հանգստացնելու համար: Ա Թագավորաց 16-րդ գլխում կարդում ենք, որ երբ չար ոգին տանջում էր Սավուդ թագավորին, վերջինս կանչում էր Դավթին, որ նա գար, նվագեր քնարը և դուրս քշեր չար ոգուն (Ա Թագ. 16.23): Այո՛, նախասահմանված էր, որ Դավիթը լինելու էր փառաբանող, բայց նաև նախասահմանված էր, որ նրա տոհմից պիտի դուրս գար ոչ թե թագավոր, այլ *թագավորների Թագավոր*:

Իհարկե, Դավիթը չէր կարող ըմբռնել իր կոչման ամբողջությունը, երբ դեռևս հովիվ էր դաշտերում: Գուցե դուք մտածում եք, որ հենց հիմա անապատում եք: Դուք չեք հասկանում, թե ինչ է Աստված ծրագրել ձեզ համար: Ես համոզված եմ, որ Դավիթը չէր հասկանում, թե ինչ էր անում, երբ մանուկ հասակում հովվում էր ոչխարներին: Բայց, բարեկամ, Աստված կոչում ուներ նրա համար: Եվ Աստված կոչում ունի ձեզ համար: Այնտեղ, որտեղ հիմա եք, հնարավոր է՝ այն տեղը չէ, որտեղ Աստված վերջնականապես նախասահմանել է, որ լինեք: Բայց եթե դուք չկարողանաք սովորել անցնել այն վայրի միջով, որտեղ հիմա եք, երբեք չեք հասնի այնտեղ, որտեղ Աստված նախասահմանել է, որ լինեք:

Ցավոք, որոշ մարդիկ տեղում չեն մնում այնքան, որ ինչ-որ բան սովորեն, կամ Աստված նրանց ինչ-որ բան ցույց տա:

## Մնացե՛ք տեղում

Ես ոչ մի դեպքում նկատի չունեմ, որ սա նսեմացնող է, սակայն միշտ չէ, որ հեշտ էր ապրել իմ հոր և աներոջ ծառայողական սովերի ներքո: Տարիներ շարունակ ամենուրեք, ուր ես գնում էի, ինձ ներկայացնում էին որպես Քենեթ Հեգինի որդու կամ Վ. Ի. Թիպտոնի փեսայի: Եվ հաճախ այն, ինչ անում էի ծառայության մեջ, չէր երևում հասարակության աչքին:

Կուլիսներում աշխատելը կարող է վիատեցնող լինել, բայց ես գիտեի, թե ինչ էր Աստված ինձ ասել, որ անեի: Ու գիտեի, որ եթե երբևէ մտադիր էի իրականացնել Աստծուց տրված իմ կոչումը և հասնել այնտեղ, որտեղ Աստված ցանկանում էր, ապա պետք է մնայի իմ տեղում:

Նախքան կկարողանաք անել այն ամենը, ինչ Աստված նախասահմանել է, որ անեք, և նախքան կկարողանաք հասնել այնտեղ, որտեղ Աստված ցանկանում է, պետք է մնաք տեղում և լինեք հավատարիմ, նույնիսկ երբ դա հեշտ չէ: Սակայն այդպես են հասնում կոչմանը. հավատարիմ լինելով այնտեղ, որտեղ Աստված ձեզ տնկում է, մինչև որ Նա տեղափոխի ձեզ մեկ ուրիշ տեղ:

Երբ որդիս ասաց, որ Աստված կանչել է իրեն ծառայության մեջ, ես նրան միանգամից որևէ բան չասացի, բայց մտածեցի. *«Ա՛յ քեզ բան: Նրա երկու պապիկներն էլ հարգված ծառայողներ են: Ես նույնպես ծառայության մեջ եմ: Հուսով եմ՝ նա գիրդի, թե ինչի մեջ է մտնում»*: Այդ ժամանակվանից ես հետևել եմ, թե ինչպես է Քրեյգը մնացել տեղում և ապացուցել իր հավատարմությունը: Ես տեսնում էի, թե ինչպես էր նա հնձում «Ռեմայի» ուսումնական տարածքի խոտը՝ լինելով ղեկավարի որդի: Տեսնում էի, թե ինչպես էր նա աշխատում արհեստանոցում՝ փոխելով ծառայության մեքենաների յուղը: Հետո նա տեղափոխվեց առաքման և ընդունման բաժին, բայց մնաց ծառայության մեջ, որովհետև գիտեր, որ ունի կոչում:

Գուցե դուք առանձնահատուկ բավականություն չեք ստանում այնտեղից, որտեղ հենց հիմա գտնվում եք, սակայն հնարավոր է, որ Աստված դրել է ձեզ այդտեղ ինչ-որ նպատակով: Ես չէի հասկանում, թե ինչու էի անցնում շատ ու շատ բաների միջով: Հետ նայելով՝ ես կարող եմ տեսնել, որ Աստված ցանկանում էր, որ ես որոշ բաներ սովորեի, որպեսզի ավելի լավ նախապատրաստվեի այն տեղի համար, որտեղ այսօր գտնվում եմ: Նախապատրաստվելու և սովորելու

Ժամանակահատվածի լավ օրինակ է այն շրջանը, երբ ես անցկացրի Միացյալ Նահանգների բանակում:

## **Նախապատրաստման ժամանակը վատնված ժամանակ չէ**

Քոլեջում սովորելու վերջին կուրսում ես ավտովթարի ենթարկվեցի և զրկվեցի զորակոչի տարկետումից: Կարճ ժամանակ անց քեռի Սեմից նամակ ստացա, որում ասվում էր. «Շնորհավորանքներս: Դու պետք է մեկ ամսից ներկայանաս այսինչ վայր»:

Ես չէի ուզում զորակոչվել, որովհետև ցանկանում էի ավարտին հասցնել ինձ տրված հանձնարարությունը: Այսպիսով՝ ես մի շարք թեստեր հանձնեցի, միացա բանակին և գնացի աշխատելու կապի ոլորտում:

Բանակում գտնվելու երեք տարիներին ես սովորեցի բաներ, որոնք օգնում են ինձ անելու այն, ինչ այսօր անում եմ: Դրանցից մեկն այն էր, թե ինչպես կարող եմ տվյալ պահին միայն մեկ բան անել՝ անկախ նրանից, թե որքան անելիք ունեմ: Նույնիսկ ունենալով այդքան շատ պարտականություններ՝ որպես Քենեթ Հեգինի ծառայության և «Ռեմա» աստվածաշնչյան ուսուցման կենտրոնի նախագահ, «Ռեմա» աստվածաշնչյան եկեղեցու հովիվ և «Ռեմա» ծառայողական ընկերակցության միջազգային տնօրեն, ես դարձյալ կարողանում եմ տվյալ պահին կենտրոնանալ մեկ բանի վրա և չճնշվել կամ չշեղվել այլ պարտականություններով:

Բանակում ես սովորեցի, որ կապի կենտրոնից դուրս գալուց և իմ հետևից դուռը փակելուց հետո պետք է աշխատանքս ամբողջությամբ այնտեղ թողնեի: Ես ոչինչ չէի տանում ինձ հետ. ես նույնիսկ չէի համարձակվում խոսել աշխատանքի մասին: Այժմ, երբ դուրս եմ գալիս Քենեթ Հեգինի ծառայության իմ աշխատասենյակից՝ գրասեղանին թողնելով մի խուրձ թղթեր, երբեք մտքով չեմ վերադառնում այնտեղ: Ես կարող եմ քարոզել և ծառայել մարդկանց՝ չմտածելով այն աշխատանքի մասին, որը թողել եմ հետևում, ու երբ վերադառնում եմ աշխատասենյակ, պարզապես շարունակում եմ այնտեղից, որտեղ կանգ էի առել:

Մարդիկ ինձ հարցնում են. «Ինչպե՞ս ես կարողանում անել այս ամենը: Ինչպե՞ս ես կարողանում կտրվել մի բանից և կառչել մեկ այլ բանի»: Ես այդ հմտությունները սովորել եմ բանակում:

Երբ բանակում էի, չէի հասկանում, թե ինչու եմ այնտեղ: Ես գիտեի, որ Աստված կանչել էր ինձ ամբողջական ծառայության մեջ, և մտածում էի, որ բանակում լինելը ճանապարհից շեղում էր: Միգուցե դուք կյանքում գնում եք մի ճանապարհով, բայց դա չի նշանակում, որ ձեր վերջնական նպատակակետը այդ ճանապարհի վերջն է: Այն ճանապարհը, որով գնում եք, կարող է տանել անսպասելի մի տեղ, և այն բաները, որ սովորում եք այդ ճանապարհին, կօգնեն ձեզ հասնելու ձեր մեծագույն կոչմանը և նպատակին:

### **Եղևք հավատարիմ**

Կրկին, ես ամբողջությամբ չէի հասկանում, թե ինչն էր պատճառը, որ տարբեր ժամանակներում անցնում էի տարբեր բաների միջով: Բայց այսօր ես լիովին հասկանում եմ այդ ամենը: Եվ քանի որ ես պատրաստ էի մնալու տեղում և հավատարիմ լինելու յուրաքանչյուր պարագայում, Աստված կարողացավ տեղափոխել ինձ այնտեղ, որտեղ այսօր ես կանգնած եմ:

Ես արեցի այն, ինչ պետք է անեի՝ Աստծուց տրված իմ կոչումն իրականացնելու համար: Դուք նույնպես ունեք կոչում, բայց դուք երբեք չեք իրականացնի այն, մինչև չկամենաք հավատարիմ լինել. մինչև չկամենաք մնալ այնտեղ, որտեք գտնվում եք, և թույլ տալ Աստծուն աշխատել ձեզ հետ, մինչև Նա պատրաստ լինի ձեզ տեղափոխելու:

Միգուցե դուք ասում եք. «Դուք խոսում եք ծառայության մեջ լինելու մասին, բայց ես ծառայության մեջ չեմ»:

Ես խոսում եմ ծառայության մասին. ես խոսում եմ աշխարհիկ աշխատանքի մասին. ես խոսում եմ ցանկացած վայրի մասին, որտեղ Աստված ձեզ դրել է:

Դուք հարցնում եք. «Դուք նկատի ունեք, որ Աստված հետաքրքրված է աշխարհիկ աշխատանքով»:

Իհարկե, Նա հետաքրքրված է: Դուք պետք է աղոթեք և պարզեք, թե որ բնագավառի մեջ է Աստված ցանկանում, որ դուք լինեք: Նա ունի կոչում և նպատակ հատուկ ձեզ համար:

### **Աստված լրջորեն է տրամադրված**

Ոմանք միգուցե չեն ցանկանում լսել տեղում մնալու և հավատարիմ լինելու մասին: Ես սա անվանում եմ «մսի և բանջարեղենի» ուղերձ: Եթե մենք ամեն ժամանակ աղանդեր ուտենք, կդառնանք

թերսնված քրիստոնյաներ: Կան ժամանակներ, երբ պետք է մոտենանք սեղանին և միս ու բանջարեղեն ուտենք:

Ինչ-որ մեկը կարող է ասել. «Ես չեմ սիրում բանջարեղեն»:

Գուցե ձեզ դուր չի գալիս բանջարեղենի համը, սակայն այն օգտակար է ձեզ համար: Դուք չեք կարող ունենալ հավասարակշռված մենդակարգ կամ առողջ մարմին՝ առանց բանջարեղենի:

Երբ փոքր էինք, մայրս միշտ ասում էր, որ բանջարեղեն ուտենք: Երբ նրան հարցնում էինք՝ ինչու, նա պատասխանում էր. «Որովհետև դա օգտակար է ձեզ համար»: Ու երբ մայրիկն ասում էր ինչ-որ բան անել, մենք գիտեինք, որ ավելի լավ է՝ անենք դա: Ես միշտ կարող էի ասել, թե երբ էր մայրիկը լրջորեն տրամադրված:

Առաջին անգամ, երբ մայրս խնդրում էր ինձ ինչ-որ բան անել, նա ասում էր. «Քեն, այսինչ բանն արա»:

Ես ասում էի՝ «Շանտ լավ, մայրիկ», բայց շարունակում էի խաղալ կամ անել այն, ինչ անում էի:

Հետո նա նորից էր ասում. «Քեն, այսինչ բանն արա»:

«Շանտ լավ, մայրիկ, մեկ րոպեից կանեմ»:

Հետո ես լսում էի՝ «Քենեթ Ուայնե...», ու մինչ նրա բերանից դուրս կգար «Հեգին» բառը, ես վեր էի կենում և անում այն, ինչ նա ասել էր: Ես գիտեի, որ երբ նա ասում էր իմ լրիվ անունը՝ Քենեթ Ուայնե Հեգին, նա լրջորեն էր տրամադրված: Ու ես գիտեի, որ ավելի լավ է՝ վեր կենամ և արագ անեմ դա: Դա խաղալու ժամանակ չէր:

Աստված կարող է կանչել ձեզ ձեր լրիվ անունով: Դա նշանակում է, որ ավելի լավ է՝ զործի անցնեք: Բարեկամ, մենք ապրում ենք վերջին օրերում, և Աստված լրջորեն է տրամադրված: Սա խաղալու ժամանակ չէ: Երբ Աստված ասում է ձեզ ինչ-որ բան անել, մի՛ նստեք թախտին ու ասեք. «Շանտ լավ, Աստված, մի րոպեից»: Դուք ունեք կոչում, որ պետք է իրականացնեք: Դուք Աստծո ծրագրի մի մասն եք, և Նա ունի նպատակ ձեր կյանքի համար:

## Գուրից մինչև վարչապետ

Երբեմն կարող է դժվար լինել կենտրոնանալ ապագայի կամ այն երազանքների վրա, որ Աստված դրել է ձեր սրտում, հատկապես այն ժամանակ, երբ կյանքի փոթորիկները դուրս են գալիս ձեր դեմ: Բայց հիշեք, այնտեղ, որտեղ հենց հիմա դուք գտնվում եք, այն տեղը չէ, որտեղ կլինեք, եթե վստահ լինեք այն

բանում, որ Նա «...որ ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը» (Փիլիպ. 1.6):

Նայեք Հովսեփի կյանքին: Աստված հանեց նրան գուրբից, երբ նա գերի էր, և դարձրեց Եգիպտոսի վարչապետ: Ես ձեզ չեմ ասում, որ սկսեք հավատալ Աստծուն, որ ձեզ էլ կնետեն գուրբը: Ես խոսում եմ այն մասին, որ Աստված կարող է ձեզ հանել ցանկացած իրավիճակից, որում հենց հիմա գտնվում եք, և պտտել այն այնպես, որ բարիի գործակից դառնա ձեզ համար (Հռոմ. 8.28):

Հովսեփի եղբայրները նրան զգեցին գուրբը և վաճառեցին ստրկության: Հովսեփը եկավ Եգիպտոս որպես ստրուկ և ավելի ուշ նետվեց բանտը: Մինչ այդ պահը բոլորովին չէր թվում, թե Հովսեփի երազը իրեն երկրպագող որաների (իր ընտանիքի) մասին իրականություն էր դառնալու (Ծննդ. 37.5-8): Չէր երևում, որ նա պատրաստվում էր ղեկավար դառնալու:

Գուցե հենց հիմա դուք անցնում եք ինչ-որ բաների միջով, և ձեր իրավիճակը ստիպում է ձեզ ասել հետևյալը. «Չի երևում, որ ես երբևէ պատրաստվում եմ որևէ բան իրականացնելու»: Պարզապես մնացեք Աստծո հետ, և Նա կմնա ձեզ հետ:

Աստված Հովսեփին հանեց ստեղծված իրավիճակից, որովհետև Հովսեփը մնաց Նրա հետ: Երբ Հովսեփը հնարավորություն ուներ գնալու աշխարհի ճանապարհով և հավանաբար խուսափելու բանտից, Նա մնաց Աստծո հետ: Ու եթե դուք էլ մնաք Աստծո և Նրա Խոսքի հետ, Աստված ձեզ էլ կհանի ստեղծված իրավիճակից, նույնիսկ այն դեպքում, երբ թվա, թե ամեն բան սխալ է ընթանում:

Քանի որ Հովսեփն ընտրեց հնազանդվել Աստծուն և չպղծել իրեն Պետափրեսի կնոջ հետ, նրան նետեցին բանտը: Բայց նա չմնաց բանտում: Երբ բանտից դուրս եկավ, դարձավ Եգիպտոսում երկրորդ ղեկավար անձը և ստացավ փարավոնի մատանին: Եգիպտոսում միակ մարդը, որ նրանից ավելի մեծ իշխանություն ուներ, փարավոնն էր՝ նա, ով տվեց նրան այդ մատանին:

Հովսեփի քայլերն Աստծուց էին կարգադրված, թեև այդպես չէր թվում: Հաճախ խարիզմատիկ և «հավատքի խոսք» շարժման շրջանակում, երբ մեր կյանքում որևէ բան այդքան էլ ճիշտ չի ընթանում, ինքնաբերաբար մտածում ենք, թե ինչ-որ տեղ վրիպել ենք կամ հավատքից նահանջել: Բայց գուցե պետք է պարզապես շարունակենք հետևել Աստծուն:

Այժմ, սխալ մի՛ հասկացեք ինձ, ես չեմ խոսում ծեծված՝ աղքատ, հիվանդ և պարտված կյանքով ապրելու մասին: Դա ամենևին այն չէ, ինչի մասին ես խոսում եմ: Ես խոսում եմ այն մասին, որ Աստծուն հետևելիս դուք կարող եք հայտնվել խորհուրդորդ վայրերում: Միգուցե այս վայրերից մի քանիսում է, որ հայտնաբերում եք՝ ունեք որևէ բան, թե ոչ: Ցանկացած ոք կարող է աղաղակել, երբ ամեն բան հրաշալի է: Բայց կարող եք արդյոք աղաղակել և փառաբանել Աստծուն, երբ չորս կողմը խավար է, և հորիզոնում լույսի շող չի նշմարվում:

### **Կենտրոնացե՛ք**

Մենք կարդացինք Հին կտակարանից մի քանի մարդկանց մասին, որոնք իրականացրին իրենց կոչումը: Այժմ եկեք նայենք երկու օրինակի Նոր կտակարանից:

Մարիամն ուներ կոչում: Հավանաբար մինչև այն պահը, երբ հրեշտակը երևաց Մարիամին, նա նախատեսել էր, որ անելու է այն, ինչ միշտ արել է: Անշուշտ, նա ծրագրում էր ամուսնանալ Հովսեփի հետ և ունենալ ընտանիք, բայց հետո հրեշտակը երևաց նրան և ասաց. «Մարիամ, քո կոչումն է ծնունդ տալ Աստծո Որդուն»:

Հովհաննես Մկրտիչը նույնպես ուներ կոչում: Հովհաննեսն ապրում էր անապատում, հագնում ուղտի բրդից հագուստ և ուտում վայրի մորեխներ ու մեղր: Աշխարհի համար նա տարօրինակ տեսք ուներ և գործում էր տարօրինակ կերպով, սակայն նրա կոչումն էր հայտարարել Տեր Հիսուս Քրիստոսի գալուստը:

Կենտրոնացե՛ք նրա վրա, թե ով եք դուք, ուր եք գնում և ինչ պետք է անեք: Ձեր կյանքի ճանապարհին թող ոչինչ ձեզ չշեղի:

### **Կորսված կոչում**

Այս աշխարհում կան շատ բաներ, որոնք կփորձեն շեղել ձեզ ձեր կոչումն իրականացնելուց: Աստվածաշնչում մեզ շատ օրինակներ են տրվում այն մարդկանց մասին, որոնք կանչված էին Աստծուց և հետո այս կամ այն պատճառով կորցրին իրենց կոչումը:

Ի սկզբանե Ադամին վիճակված էր լինելու Պարտեզի պահապանը, բայց երբ նա չինազանդվեց Աստծուն, կորցրեց իր կոչումը և դուրս վռնդվեց Պարտեզից: Շատ քրիստոնյաներ այսօր տանուլ են տալիս, որովհետև դադարում են Աստծուն հետևելուց:

Հովսեփը կարող էր կորցնել իր կոչումը, եթե «ոչ» չասեր Պետափրեսի կնոջը: Այսօր շատերը կորցնում են իրենց կոչումը, երբ չեն ասում «ոչ» այն իրավիճակին, որից պետք է հրաժարվեին: Պարտադիր չէ, որ դա կապված լինի մեղքի հետ: Օրինակ՝ մարդը կարող է ասել «այո» որևէ բիզնես նախաձեռնության կամ աշխատանքի առաջարկի, որից պետք է հրաժարվեր: «Այո» ասելով նա բաց է թողնում այն ծրագիրը, որ Աստված ունի իր համար: Հետո նա վհատվում է, որովհետև չի իրականացնում իր կոչումը:

Սավուղ թագավորն ուներ կոչում՝ որպես Իսրայելի առաջին թագավոր: Երբ Սամուելն օժեց Սավուղին՝ որպես թագավորի, Սավուղն Աստծո առջև խոնարհ մարդ էր: Բայց վերջում նա սխալ որոշում կայացրեց, կորցրեց իր կոչումը և վերջ տվեց կյանքին՝ իր իսկ սրի վրա ընկնելով: Պատճառը, որ Սավուղը կորցրեց իր կոչումը, որևէ կապ չուներ Աստծո հետ. այն ամբողջովին կապված էր Սավուղի հետ:

Աստված մեղավոր չէ, եթե մենք կորցնում ենք մեր կոչումը: Շատ շատ անգամներ քրիստոնյաները ցանկանում են մեղադրել սատանային, քարոզչին կամ մեկ ուրիշի այն դժվարին կացության համար, որում իրենք հայտնվել են, երբ դա հենց իրենց մեղավորությունն է:

Հարկ չկար, որ Սավուղը կորցներ իր թագավորությունը, սակայն նա կորցրեց այն՝ Աստծուն անհնազանդ լինելով: Ոմանք, հնարավոր է, չհասկանան, թե ինչու Սավուղը կորցրեց իր թագավորությունը, որովհետև թվում է, թե նա բարի բան արեց՝ Աստծուն զոհ մատուցելով: Բայց ինչպես ավելի վաղ քննարկեցինք, թեև Սավուղը ճիշտ բան արեց՝ Աստծուն զոհ մատուցեց, նա դա արեց սխալ կերպով՝ անհնազանդ լինելով Աստծուն:

Աստված Սավուղին շատ առանձնահատուկ կերպով ասաց ինչոր բան անել, և Սավուղը չկատարեց դա: Նա մեծամտացավ և չհնազանդվեց Աստծուն: Նա կորցրեց իր կոչումը՝ անելով այն, ինչ ճիշտ էր «թվում»: Աստված Սավուղին և Իսրայելի ժողովրդին հրամայել էր թշնամուց ավար չվերցնել, բայց Սավուղը չհնազանդվեց և իր հետ ավար բերեց:

Երբ Սամուելը հակադրվեց նրան և հիշեցրեց Տիրոջ հրամանը, Սավուղը հրաժարվեց իր մեղքը ընդունելուց և փոխարենը մեղադրեց իր մարդկանց (այդ երբվանից են մարդիկ ղեկավարում թագավորին): Այնպես որ Սավուղը ոչ միայն չհնազանդվեց, այլև սկսեց ստել և արդարանալ Աստծո մարգարեի առաջ: Երբ սխալ քայլ անեք



և հեռանաք ձեր կոչումից, ձեր կյանքը կլցվի ամեն տեսակի անպետք բաներով:

**Ա ԹԱԳԱՎՈՐԱՑ 15.13-16, 19-23**

13 Եվ Սամուելը Սավուդի մոտ գնաց, և Սավուդը նրան ասաց. «Տերիցն օրհնյալ լինես. Տիրոջ խոսքը կատարեցի»:

14 Եվ Սամուելն ասաց. «Ապա այս ոչխարների ձայնը ինչ է, որ գալիս է ականջիս, և արջառների ձայնը, որ ես լսում եմ»:

15 Եվ Սավուդն ասաց. «Ամաղեկացիներից բերին նրանց, որովհետև ժողովուրդը խնայեց լավ ոչխարներին և արջառներին, որ նրանց քո Տեր Աստծուն զոհ մատուցեն, իսկ մյուսներին փչացրինք»:

16 Այն ժամանակ Սամուելն ասաց Սավուդին. «Սպասիր, որ պատմեմ, ինչ որ Տերը այս գիշեր ինձ հետ խոսեց»: Եվ նա նրան ասաց. «Խոսիր»:

19 Եվ ինչի համար չլսեցիր Տիրոջ ձայնին և, ավարի վրա հարձակվելով, Տիրոջ առաջ չարություն արեցիր:

20 Եվ Սավուդն ասաց Սամուելին, թե «Տիրոջ ձայնին լսեցի, և Տերն ինձ որ ճանապարհով որ ուղարկեց, այն ճանապարհով գնացի, և Ամաղեկի թագավոր Ագագին բերեցի և Ամաղեկին բնաջինջ արեցի:

21 Սակայն ժողովուրդն այն ավարից ոչխարներ ու արջառներ վեր առավ՝ նզովածներից շատ լավերը, որ Գաղգաղայում քո Տեր Աստծուն զոհեն:

22 Եվ Սամուելն ասաց. «Միթե Տերը այնքան հավանում է ողջակեզների և զոհերի, ինչպես Տիրոջ ձայնին լսելուն. ահա հնազանդությունը զոհից լավ է, և ականջ դնելը՝ խոյերի ճարպից:

23 Որովհետև ապստամբությունը կախարդության մեղքի պես, և անհնազանդությունը կռապաշտության պես է, որովհետև դու Տիրոջ խոսքը մերժեցիր, Նա էլ քեզ մերժեց, որ թագավոր չլինես:

Իր արարքների պատճառով Սավուդը կորցրեց իր կոչումը: Աստված նրան ասաց. «Ինձ *հնազանդվելը* Ինձ զոհ մատուցելուց լավ է»: Եթե մենք ցանկանում ենք իրականացնել մեր կոչումը, պետք է հնազանդվենք Տիրոջը ամեն ժամանակ. հնազանդությունը զոհից լավ է:

## Մի՛ կորցրեք փողի պատճառով

Հուդա Իսկարիովտացին մեկ այլ օրինակ է այն մարդու, որը կորցրեց իր կոչումը: Տասներկու աշակերտներից Հիսուսն ընտրեց Հուդային, որպեսզի նա լիներ գանձապահը կամ քսակի պահապանը (Հովհ. 13:29): Հուդան կորցրեց իր կոչումը փողի պատճառով: Ու դա ընդամենը երեսուն արծաթ չէր: Դա այն գումարն էր, որի համար Հուդան մատնեց Հիսուսին, սակայն Հուդան փողի հարցում խնդիր ուներ Հիսուսին մատնելու գիշերից դեռ շատ առաջ:

Հիշում եք, երբ Մարիամը մի շիշ թանկագին յուղ բերեց և թափեց Հիսուսի վրա (Մատթ. 26:7-9, Հովհ. 12:3-7): Հուդան ասաց. «Նա չպետք է վատներ դա: Մենք կարող էինք այդ յուղը վաճառել և գումարն աղքատներին տալ»: Բայց Հուդային աղքատները չէին հետաքրքրում. նրան փողն էր հետաքրքրում:

Ինձ սխալ մի՛ հասկացեք: Փող ունենալու մեջ վատ բան չկա, և բարգավաճելու մեջ նույնպես վատ բան չկա, սակայն մենք պետք է զգույշ լինենք, որ ավելի հետաքրքրված չլինենք փողով, քան Աստծո բաներով:

Այսօր շատ քրիստոնյաներ փողի պատճառով կորցնում են իրենց կոչումը: Օրինակ՝ երբեմն մարդիկ կորցնում են իրենց կոչումը, որովհետև ընդունում են աշխատանքի տեղափոխման առաջարկ՝ առանց ստուգելու, թե արդյոք այն քաղաքում, ուր նրանք տեղափոխվում են, կա լավ եկեղեցի, ուր կարող են հաճախել: Քանի որ աշխատանքի տեղափոխման առաջարկը ներառում է աշխատավարձի զգալի բարձրացում, նրանք ընդունում են այն իրենց ընտանիքի հոգևոր բարեկեցության հաշվին: Միայն փողի հիման վրա որոշումներ կայացնելը կարող է հանգեցնել նրան, որ կորցնեք այն, ինչ Աստված պատրաստել է ձեզ համար:

## Վերաբերմունքի ստուգում

Կոչումը կորցնելու շատ հեշտ եղանակ է մյուսների կոչման վրա կենտրոնանալը: Այն մարդիկ, որոնք զբաղված են մյուսների գործերով, սովորաբար ճնշված, դյուրագրգիռ և դժբախտ են: Հենց հիմա ստուգե՛ք ձեր վերաբերմունքը: Արդյո՞ք միշտ մտածում եք, որ ոչ ոք չի կարող որևէ բան ճիշտ անել: Արդյո՞ք բոլորին միշտ դժվարություն եք պատճառում: Երբ խնդիրներ են առաջանում, արդյո՞ք դրանք միշտ

ինչ-որ մեկի մեղքով են:

Խնդիրը կարող է կապված չլինել ուրիշ մարդկանց հետ: Այն կարող է հենց *ձեզ* հետ կապված լինել: Աստված ցանկանում է, որ կենտրոնանաք ձեզ վրա և ձեր կոչման վրա: Հիշեք, Աստված տարբեր ծրագրեր ունի մեզնից յուրաքանչյուրի համար, և կարևոր է, որ մենք կանգնենք մեզ համար նախատեսված ուղու վրա և դուրս չգանք այդ ուղուց:

Նույնիսկ մի փոքր շեղումը կարող է փոխել ձեր ամբողջ ուղղությունը: Եթե օդանավով թռչելիս օդաչուն ընդամենը երկու աստիճանով շեղվի երթուղուց, օդում երկու ժամ մնալուց հետո նա հարյուրավոր մղոններ հեռու կլինի իր երթուղուց: Դուք կարող եք սկսել՝ ընդամենը ուղուց մի փոքր շեղվելով, բայց վերջում կարող եք բոլորովին սխալ ուղու վրա հայտնվել:

Եթե մենք մշտապես չենք շտկվում և վերափոխվում Աստծո Խոսքի համաձայն, կարող ենք ուղուց շեղվել: Եվ վերջիվերջո լիակատար ձախողում կունենանք: Բայց Աստված կշրջի ձեր ուղղությունը, եթե լսեք Նրան: Նա ցանկանում է, որ դուք երջանիկ և բավարարված լինեք, բայց դա տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ մնում եք այն ուղու վրա, որ Նա նախատեսել է ձեզ համար:

Թվոց 12-րդ գլխում Մարիամը դուրս եկավ իր կոչումից, երբ Ահարոնի հետ որոշեց խառնվել իր եղբոր՝ Մովսեսի գործերին: Քանի դեռ Մարիամն անում էր այն, ինչ պետք է աներ Աստծո հետ (նա կանչված էր օգնելու Մովսեսին), ամեն բան լավ էր: Բայց երբ փորձեց խառնվել *Մովսեսի* գործերին, բորոտ դարձավ: Բարեբախտաբար, Մովսեսը բարեխոսեց Աստծուն Մարիամի համար և, համաձայն ղևատաղիների օրենքի, որոշ ժամանակ մեկուսանալուց հետո նա բժշկվեց բորոտությունից:

Շատերը դուրս են գալիս Աստծո կամքից և իրենց կոչումից՝ փորձելով զբաղվել ուրիշ գործով: Արեք այն, ինչ Աստված կանչել է *ձեզ* անելու: Իրականացրեք *ձեր* կոչումը: Իրականացրեք այն, ինչ Աստված ծրագրել է *ձեզ* համար: Ու եթե վրիպեք և շեղվեք ուղուց, արագ ապաշխարեք և վերադարձեք ճիշտ ուղուն:

## **Ժամանակ տրամադրեք աղոթելու համար**

Բացահայտեք Աստծո կոչումը ձեր կյանքի համար: Դուք ապրում եք առանձնահատուկ պատճառով և նպատակով: Երեմիա 29.11-ն

ասում է. «Որովհետև ես գիտեմ այն խորհուրդները, որ ես խորհում եմ ձեր մասին,- ասում է Տերը,- խաղաղության խորհուրդները և ոչ թե չարության, որ ձեզ տան ապագան և հույսը»: Ժամանակ տրամադրեք աղոթելու և Աստուծոց ուղղություն խնդրելու, ու Նա կհայտնի ձեզ ձեր յուրահատուկ կոչումը:

Աստված ընդհանուր կոչում է տվել Քրիստոսի Մարմնի յուրաքանչյուր անդամի, և այդ կոչումը հեշտորեն կարելի է գտնել Աստծո Խոսքում: Կարդալով Խոսքը՝ բացահայտում եք, որ, ինչպես երգն է ասում. «Հարկ չկա, որ այլևս հիվանդ լինենք: Հարկ չկա, որ այլևս աղքատ լինենք: Հարկ չկա, որ այլևս որևէ բանով կապված լինենք»:

Հարկ չկա, որ կյանքն անցկացնեք ծայրը ծայրին հասցնելով, տրտնջալով, մի կերպ գոյատևելով: Հարկ չկա, որ կյանքն անցկացնեք մաշված ներբանով կոշիկներով, պատառոտված գլխարկով, որովհետև շունը կրծել է այն, հնամաշ տաբատով, որի նստատեղն այնքան բարակ է, որ նստելիս զգուշանում եք՝ հանկարծ չպատռվի: Ոմանք կարծում են, թե այդպես ապրելը խոնարհության նշան է: Ո՛չ, դա խոնարհություն չէ: Ոմանք կարծում են, թե աղքատ լինելը սրբության նշան է: Աղքատ լինելը սուրբ լինել չէ:

Աստծո Խոսքում ասվում է, որ մենք պետք է լինենք գլուխ և ոչ թե պոչ, վերևում և ոչ թե ներքևում (Երկր. օրին. 28.13): Դա է մեր կոչումը: Եթե դուք հենց հիմա ունեք ֆինանսական խնդիրներ, ես ուզում եմ՝ իմանաք, որ շնորհիվ այն բանի, ինչ Աստված արեց Հիսուսի միջոցով, և այն պատճառով, որ Նա ունի կոչում ձեզ համար, դուք չպետք է մնաք այնտեղ, որտեղ գտնվում եք: Կա ելք: Ձեր կարիքները բավարարվել են Նրա հարստության չափով՝ փառքով (Փիլիպ. 4.19), և կա առատ մատակարարում:

Եթե դուք վրիպել եք և դուրս եկել ձեր կոչումից՝ հայտնվելով այնտեղ, որտեղ հիմա եք, պարզապես ապաշխարե՛ք ու վերադարձե՛ք ճիշտ ուղուն: Հովհաննեսի 1-ին թղթի 1.9-ում գրված է. «Ապա թե մեր մեղքերը խոստովանենք, Նա հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը թողնի մեզ և սրբի մեզ ամեն անիրավությունից»: Աստված ձեզ համար ունի կոչում, որը պետք է իրականացնեք:

Աստվածաշնչում գրված է, որ մենք կարող ենք ունենալ կյանք՝ հոգևոր, ֆիզիկական, մտավոր, հուզական և այլն, և է՛լ ավելի (Հովհ. 10.10): Աստված հետաքրքրված է մեր կյանքի բոլոր կողմերով՝ հոգով, շնչով և մարմնով: Հովհաննեսի 3-րդ թղթի 2-րդ խոսքում գրված

է. «Սիրելի, աղոթք եմ անում, որ ամեն բանի մեջ հաջող և առողջ լինես, ինչպես քո հոգին հաջող է»:

Ոմանք ասում են. «Երբ հասնենք Երկինք, ամեն բան հրաշալի կլինի. դա երջանիկ օր կլինի»: Այո՛, Երկնքում հրաշալի է լինելու, բայց չպետք է սպասել այնքան, մինչև հասնեք Երկինք ու սկսեք վայելել կյանքը: Աստծո Խոսքում ասվում է, որ մենք կարող ենք Երկնքից մի փոքր ունենալ և դրանով գնալ Երկինք:

## Ձգտե՛ք նվաճելու ոսկին

Դուք պարտված չեք: Դուք հաղթող եք: Հռոմեացիների 8.37-ում գրված է, որ մենք ավելի, քան հաղթող ենք: Ես սիրում եմ հաղթող լինել: Հաղթողը գրավում է առաջին տեղը:

Յուրաքանչյուր ոք, ով երբևէ իմ կողքին եղել է, կբացահայտի, որ ինձ համար այդքան էլ կարևոր չէ երկրորդ մրցանակը: Սովորաբար ոչ ոք չի հիշում, թե ով է նվաճել արծաթե մեդալը, ուստի ես միշտ ձգտում եմ նվաճելու ոսկին: Երբ ավագ դպրոցում վագրի մրցույթ էր լինում, ես ասում էի, երբ երկրորդ տեղն էի գրավում: Երկրորդ տեղը միայն նշանակում էր, որ ես բավականաչափ արագ չէի վազում, որպեսզի մեդալ նվաճեի առաջին տեղի համար:

Մի համաձայնեք երկրորդ լավագույնին Աստծո հետ: Հիշե՛ք, մենք ավելի, քան հաղթող ենք (Հռոմ. 8.37), և Քրիստոսում մենք նախասահմանված ենք նվաճելու ոսկին:

Իհարկե, պետք է իմանանք, թե ինչպես արժանապատվորեն պարտվենք, սակայն մեծահոգի լինել չի նշանակում, որ պետք է հաճույք ստանանք պարտվելուց: Դուք չեք կարող պարտվել, եթե չհանձնվեք: Եթե հանձնվեք, ինչ կշահեք: Բայց եթե չհանձնվեք, ինչ կկորցնեք:

Մենք մրցավազրի մեջ ենք: Սա ոսկե մեդալ նվաճելու մրցավազր չէ: Սա կյանքի և մահվան մրցավազր է: Եվ այս մրցավազրում մենք ավելի, քան հաղթող ենք Հիսուսի միջոցով: Բ Կորնթացիների 2.14-ում գրված է, որ մենք ամեն ժամանակ հաղթում ենք Քրիստոս Հիսուսում: Գրված չէ, որ մենք հաղթում ենք *երբեմն* կամ ժամանակի *մի մասը*: Գրված է, որ մենք *ամեն ժամանակ* հաղթում ենք Քրիստոս Հիսուսում: Դա մեր կոչումն է: Մենք կանչված ենք միշտ հաղթող լինելու:

Ժամանակն է, որ ասենք. «Ես չեմ պարտվի, և ես չեմ հանձնվի»:

Ես ավելի, քան հաղթող եմ: Ես չեմ կարող պարտվել, որովհետև Աստծո հոսքում գրված է, որ ես միշտ հաղթում եմ Քրիստոս Հիսուսում: Ինձ վիճակված չէ աղքատ լինել: Ես կանչված չեմ աղքատ լինելու: Ես կանչված չեմ պարտվելու: Ես կանչված չեմ հիվանդ լինելու: Ես կանչված եմ լինելու օրհնված, հաղթող և առողջ»:

Ինչ-որ մեկը կարող է հարցնել. «Եթե քրիստոնյաները կանչված չեն հիվանդ լինելու, ապա ինչո՞ւ են նրանցից շատերը հիվանդ»:

Ես չգիտեմ, բայց դա չի փոխում այն փաստը, որ մենք նախասահմանված չենք հիվանդ լինելու: Հակոբոսի 5.14-ում ասվում է. «Եթե ձեզնից մեկը հիվանդ է...»: Սա ցույց է տալիս, որ որևէ մեկը չպետք է հիվանդ լինի: Բայց եթե եղբայրների մեջ որևէ հիվանդ կա, Հակոբոսը մեզ ասում է ինչ անել, որ նա բժշկվի:

Խանդավառվե՞ք այն ապագայով, որը նախասահմանված է ձեզ համար: Աստված նախասահմանել է ձեզ մեկ այլ բանի, քան աղքատ, պարտված և հիվանդ լինելու համար: Ես գիտեմ, որ քարոզվել է, թե Աստված ցանկանում է, որ դուք աղքատ և հիվանդ լինեք, բայց դա մարդու, ոչ թե Աստծո աստվածաբանությունն է: Աստված ասաց. «Պետք չէ, որ դու հիվանդ լինես»: Աստված ասում է. «Դու կարող ես լավ, առողջ և լիարժեք լինել»:

Ոմանք ասել են. «Հիվանդության միջոցով Աստված ձեզ ինչ-որ բան է սովորեցնում»: Ես երբեք չեմ հանդիպել մեկին, ով շատ բան է սովորել հիվանդ ժամանակ: Եթե մեր Երկնային Հայրն այստեղ՝ երկրի վրա լիներ, ապա մանկական բռնության մեղադրանքով կկանգներ դատարանում՝ հաշվի առնելով այն, ինչ ոմանք քարոզում են Նրա էության մասին:

Մարդիկ ասում են. «Աստված այսինչին հիվանդ է ստեղծել: Աստված այս է արել, Աստված այն է արել»: Աստված չի արել դա: Ահա թե ինչ է Աստված արել. Նա ուղարկել է Հիսուս Քրիստոսին՝ Իր Որդուն, որ Նա մահանա խաչի վրա: Նրա միջոցով Աստված նախասահմանեց, որ դուք փրկվեք, բժշկվեք, ազատագրվեք և ազատվեք:

Փրկությունը, բժշկությունը և ազատագրումը ձեր կոչման ընդամենը մի մասն են: Ուսումնասիրե՞ք Աստծո հոսքը և բացահայտե՞ք ձեր կոչման մնացած մասը:

## Ժամանակը հիմա է

Ձեր կյանքի ուղին կախված չէ Աստծուց, այն կախված չէ Հիսուսից, և այն կախված չէ որևէ քարոզչից: Ձեր կյանքի ուղին կախված չէ ձեր ամուսնուց կամ կնոջից, ձեր մայրիկից և հայրիկից կամ ձեր պապիկից ու տատիկից: Ձեր կյանքի ուղին և այն, ինչ անում եք ձեր կյանքի հետ, կախված են *ձեզնից*:

Դուք կարող եք վեր կենալ, ընդունել Աստծո կոչումը և սկսել ապրել լավ կյանքով: Կամ կարող եք նստել, բավականություն ստանալ հիվանդ, աղքատ և պարտված լինելուց ու երգել երգեր այն մասին, թե ինչ է լինելու «մի օր Երկնքում»:

Բարեկամ, մի՛ սխալվեք, «մի օրը» այսօր է: Ինչպես նախորդ գլխում ասացի, «վաղը» սկսվում է *այսօր*: Ինձ սխալ մի՛ հասկացեք. ես չեմ նսեմացնում այն, ինչ վերապրելու ենք Երկնքում: Բայց քանի որ որոշ ուսմունքներ տարածում են այն գաղափարը, որ մենք պետք է սպասենք, մինչև հասնենք Երկինք և այնտեղ վերապրենք լիառատ կյանք, թշնամին Քրիստոսի Մարմնից գողանում է այն կոչումը, որ քրիստոնյաները պետք է ունենան այստեղ՝ երկրային կյանքում:

Բարեկամ, դուք պետք է գիտակցեք, որ Աստված ձեզ նախասահմանել է ոչ թե այս կյանքը աղքատ, հիվանդ, պարտված և առանց նպատակի ապրելու, այլ ավելիի համար: Հայտնաբերեք այն, ինչ Աստված ունի ձեզ համար, ապա դժուր եկեք և տիրեք դրան Հիսուսի անունով:

Ես աղոթում եմ, որ դուք գտնեք Աստծո կոչումը ձեզ համար, որն անջնջելիորեն դրոշմված է ձեր սրտում: Ու թող այն նպատակը և ծրագիրը, որ Աստված ունի ձեզ համար, փոխեն ձեր ապրելակերպը: Ես աղոթում եմ, որ դուք շտկվեք համաձայն Խոսքի, որպեսզի բացահայտեք ձեր կոչումը. բացահայտեք, թե հստակ ինչ պետք է անեք կյանքում, այնուհետև շարժվեք համապատասխան այն տեսիլքին, որ Աստված դրել է ձեր ներսում:

Եթե ընդունեք այն ճշմարտությունները, որ ես ներկայացրի ձեզ, և քայլեք ձեր սովորածի լույսի ներքո, դուք կփոխվեք: Կփոխեք նաև ձեր ուղղությունը և կսկսեք ապրել այն հաղթական կյանքով, որ Աստված ցանկանում է:

Այս պնդումը դարձրեք հավատքի մշտական դավանություն՝ հաստատելով այն, ինչին հավատում եք ձեր սրտում. «Ես չեմ կարող պարտվել, և ես չեմ հանձնվի: Հարկ չկա, որ ես աղքատ լինեմ,

որովհետև Աստված նախասահմանել է ինձ առատության համար: Հարկ չկա, որ ես հիվանդ լինեմ, որովհետև Աստված նախասահմանել է ինձ առողջության համար: Հարկ չկա, որ ես պարտվեմ, որովհետև Աստված նախասահմանել է ինձ հաղթանակի համար: Ես ընդունում եմ այն ամենը, ինչ Աստված նախասահմանել է ինձ համար: Ես կքայլեմ Աստծուց տրված իմ յուրահատուկ կոչման մեջ և գրոհով կնվաճեմ իմ ապագան»:



# Ինչո՞ւ սովորել «Ռեմա» Աստվածաշնչյան դպրոցում

## Դուք կստանաք.



- Վերապատրաստում Սուրբ Հոգով լցված, առաջատար աստվածաշնչյան դպրոցներից մեկում
- Ուսուցում՝ հիմնված Աստծո խոսքի հանդեպ ամուր հավատքի վրա
- Աճ հոգևոր ընթացքի մեջ՝ համակցված արդյունավետ ծառայության գործնական դասընթացների հետ
- Մասնագիտացում ձեր ընտրած ոլորտում՝ երիտասարդական կամ մանկական ծառայություն, ավետարանչություն, հովվական ծառայություն, միսիա, Աստվածաշնչի ուսումնասիրություն կամ օժանդակ ծառայություններ
- Կամընտրական խտացված ծրագիր երրորդ կամ չորրորդ տարիների համար. երկրպագության դպրոց, հովվական ծառայության դպրոց, համաշխարհային միսիայի դպրոց, աստվածաշնչյան ուսումնասիրությունների դպրոց և ընդհանուր ընդլայնված ուսումնասիրություններ
- Համաշխարհային ծառայության հնարավորություններ՝ դպրոցում ուսումնառելու տարիներին
- Եկեղեցիների և ծառայությունների ցանց ամբողջ աշխարհում, որոնց «Ռեման» է տրամադրում ամբողջական դրույքով աշխատակիցներ և օժանդակ ծառայողներ

**Մանրամասներին և հայտադիմումին ծանոթանալու համար  
զանգահարե՛ք այսօր կամ անցե՛ք առցանց հղումով.**

1-888-28-FAITH (1-888-283-2484)

[www.rbtc.org](http://www.rbtc.org)



«Ռեմա» Աստվածաշնչյան ուսուցման կենտրոնն ընդունում է ցանկացած ռասա, մաշկի գույն և ազգային պատկանելություն ունեցող ուսանողների:

*Ինչո՞ւ արժե մտածել*

## «Ռեմա»

**Աստվածաշնչյան ուսուցման կենտրոն  
ընդունվելու մասին**

*Ահա մի քանի հիմնավոր պատճառ.*

- Ուսուցում աշխարհի առաջատար Հոգով լցված Աստվածաշնչյան դպրոցներից մեկում
- Ուսմունք, որի հիմքն Աստծո խոսքի հանդեպ հաստատուն հավատքն է
- Աճ ձեր հոգևոր ընթացքի մեջ և արդյունավետ ծառայության գործնական ուսուցում
- Ընտրովի երրորդ և չորրորդ տարվա ինտենսիվ ծրագրեր. Երկրպագության դպրոց, Հովվական ծառայության դպրոց, Համաշխարհային միսիոներության դպրոց, Աստվածաշնչի ուսումնասիրության դպրոց և Ընդհանուր երկարացված ուսուցում

Ավելին իմանալու համար այցելե՛ք մեր կայքը.

[www.rhema.eu](http://www.rhema.eu)  
[www.rbtc.org](http://www.rbtc.org)



«Ռեմա» Աստվածաշնչյան ուսուցման կենտրոնն ընդունում է ցանկացած ռասա, մաշկի գույն և ազգային պատկանելություն ունեցող ուսանողների:

# Բացահայտնք ձեր Ներսի հաղթողին

Ժամանակն արագ է ընթանում: Հաջողության հասնելու համար պետք է կարևորենք մեր կյանքի յուրաքանչյուր րոպեն: Մենք մեր սիրտը ամբողջությամբ պետք է դնենք յուրաքանչյուր օրվա մեջ և ապրենք «երբեք չհանձնվելու» վերաբերմունքով:

Վերապատվելի Քենեթ Ու. Հեգինի հեղինակած «Ես չեմ կարող պարտվել, և ես չեմ հանձնվի» գիրքը կտվորեցնի և կխրախուսի ձեզ՝ հասնելու այն հաջողությանը, որին միշտ ձգտել եք: Իր կյանքի կարգախոսն օգտագործելով որպես հիմք՝ վերապատվելի Հեգինը շարադրում է անձնական փորձառություններն ու աստվածաշնչյան սկզբունքները՝ օգնելու ձեզ՝ բացահայտելու ձեր ներսի հաղթողին: Նա ներկայացնում է ֆիզիկական և հոգևոր այն քայլերը, որոնք պետք է անեք՝ անցյալը հետևում թողնելու և դեպի ապագան շարժվելու համար:

Եթե դուք հոգնել եք «սովորականից» և ցանկանում եք այն ամենը, ինչ կյանքն առաջարկում է, ապա բաց սրտով կարդացեք այս էջերը: Դուք կբացահայտեք, որ Աստծո օգնությամբ չեք կարող պարտվել, և կհաղթեք, եթե չհանձնվեք:



Քենեթ Ու. Հեգինը *Քենեթ Հեգինի ծառայության* նախագահն է և «Ռեմա» աստվածաշնչյան եկեղեցու հովիվը Օկլահոմա նահանգի Բրոկեն Էրոու քաղաքում: Եկեղեցին ունի նաև առանձին ուսումնական տարածք Օկլահոմա քաղաքում: Վերապատվելի Հեգինն օգտագործում է յուրաքանչյուր հնարավորություն՝ մարդկանց փոխանցելու «Ես չեմ կարող պարտվել, և ես չեմ հանձնվի» վերաբերմունքը: Նա 50 տարուց ավելի է ծառայում է Աստծուն՝ սկսելով որպես հովիվ օգնական և

շրջիկ ավետարանիչ: Վերապատվելի Հեգինը հիմնել և զարգացրել է «Ռեմա» աստվածաշնչյան ուսուցման կենտրոնը ամբողջ աշխարհում: Նա անցկացնում է «Ի զեն» ամենամյա տղամարդկանց կոնֆերանսը և կնոջ՝ Լինետի հետ վարում է «Ռեմա» փառաբանություն ամենշաբաթյա հեռուստահաղորդումը և «Ռեման» այսօր ամենշաբաթյա ռադիոհաղորդումը, որոնք հեռարձակվում են Միացյալ Նահանգներում: Նրանք նաև անցկացնում են «Կենդանի հավատք» քարոզարշավը՝ աշխարհին տանելով հավատքի և բժշկության ուղեծրը:

Արձագանքելով Աստծո հրատապ կոչին՝ պատրաստել եկեղեցին՝ Նրա ներկայության առավել խոր փորձառությանը՝ վերապատվելի Հեգինը կարևոր հոգևոր ճշմարտություններ է շեշտադրում հավատքի, բժշկության և այլ կենսական անհրաժեշտ թեմաների վերաբերյալ: Նա ծառայում է ուժեղ բժշկարար օժուրյամբ, և նրա ծառայությունն օգնում է առաջնորդելու հավատացյալներին Աստծո փառքի առավել հզոր փորձառության մեջ:



Փ/Ա 50126  
Թալսա, Օկլահոմա 74150-0126  
1-888-28-FAITH  
www.rhema.org